1301

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ԳՅՈՒՂԻ ՔԱՂԸՆԹԵՐՑՄԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ, 192

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՈԳՏՎԵԼ ԳՐՔԻՑ

1. Այս գիրքը հատկացվում է քաղընթերցումների և ինքնակրթության կոմյերիտական խմբակներում պարապող ընկերների համար։ Գիրքը կարելի է ոգտագործել նաև քաղգրագիտության կոմյերիտական ստացիոնար դպրոցներում։

2 Քաղընթերցումների խմբակներում ամենից լավ է պարապմունքները կատարել միասնական բարձր ընթերցանության և գրքի առաջին գլուխները վերլուծության ենթարկելու միջոցով։ Բարձր ընթերցանությունը պետք է կատարեն հերթով խմբակի այն անդամները, վորոնք լավ կարդացողներ են։

3. Պետք է կարդալ վոչ թե ամբողջ գլուխը մի անգամից, այլ այն առանձին հատվածների բաժանելով։ Հատվածը կարդալուց հետո պետք է ստուգել թե՝ արդյոք նրա բոլոր անդամները հասկացել են կարդացածը և միասին վերլուծության ենթարկել անհասկանալի տեղերն ու բառերը։

4. Զրույցը վոչ միայն պետք է կարդալ, այլև վերլուծության ենթարկել կարդացածը և համեմատության մեջ դնել այն ամենի հետ, ինչ վոր կյանքից խմբակի անդամներին հայտնի է։ Դրա համար պետք է խմբակի անդամներին առաջադրություն տալ զրույցի համար տեղական նյութեր հավաքել։ Հավաքված նյութերն ոգտագործման են ենթարկվում հաջորդ պարապմունքի ընթերցանության ժամանակ։

ԴԱՍԱԳԻՐՔ

ԳՅՈՒՂԻ ՔԱՂԸՆԹԵՐՑՄԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հանձնարարվում է Համ. ԼԿՅԵՄ-ի Ագիտպրոպ բաժնի կողմից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆ, 1929

Гос Библиотека
ՀԱՍԽ-Арм.ССР
им. А. Мясникяна

Հր. № 1098։ Գրալիազոր № 2818 (բ)։ Տիրաժ 4500։

Պետհրատի առաջին տպարան Կաղարշապատում։ Պատվեր № 161։

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ե՛հ, մեր ապրուստն էլ ապրուստ է՞—մենք էլ պիտի ասենք ապրում ենք. յեզի պես աշխատում, շան ու գիլի չարչարանք ես քաշում, ամխոններով մեջք չես բարձրացնում, գիշեր-ցերեկ քունդ կտրում, վերջ-ներս էլ՝ ես է—վոչ հագուստի փող ունես, վոչ ձեռքդ մի կոպեկ կա՝ գրքի տաս—վոր կողմը դառնաս՝ պակասություն։ Ցանում ես, ցանում, հնձելիս մարդու լացը գալիս է—ենպես է պատահում, վոր վոչ թե չես ուզում հնձել, իսկի չես ուզում յերեսն էլ գնալ—խոտից բացի ուրիշ բան չկա, են էլ չոր փուշ ու տատաշ»։

Այս տրտունջներն անցնում են գյուղից գյուղ՝ բոլոր անբերրի տեղերում։ Բայց հենց բերրի տեղերում էլ կամ չորություն, կամ կարկուտ, կամ վորդ, կամ թե մի ուրիշ փորձանք է գալիս գլխին։ Ա՛յ, որինակ՝ 1928 թ. գարնանը Հյուսիսային Կովկասում և Ուկրայնայում ցրտահարությունից փչացավ մոտ 5 միլիոն դեսյատին աշնանացան։

Այսպես ապրել այլևս հնար չի—ապրուստ չի, այլ տանջանք։ Պետք է թող տանք հին սովորություններն ու վարք ու բարքը։ Մնաս բարով պետք է ասենք զոլակ արտին, փայտե արորին, յեռադաշտին, աղքատ սերմացուին։ Ի՞նչ խոսք, վոր հեշտ բան չի։ Հանաք բան է, չէ՞ վոր մենք աշխարհի մեկ վեցերորդ մասն ենք բռնում, մոտ 27 միլիոն գյուղացիական տնտեսություն ունենք։ Գլխավորն այն է, վոր բազմամիլիոն գյուղացիական մասսան ինքը լավ հասկանա, թե հին ձևով ապրել չի կարելի, վոր հին սովորություններով *այժմյան կյանքը բարելավել չի կարելի։ Այս էլ դեռ քիչ է։ Պետք է միջակներն ու չքավորները վոչ միայն հասկանան, թե անհրաժեշտ է գյուղական կյանքը նոր ձևի փոխել, այլև հենց իրենք բոլոր ուժերով կպչեն այս գործին։ Այն ժամանակ զանազան արգելքներից վոչ վոք չի վախենա։ Ջուր չեն տալ, վոր գեղ կանգնի՝ գերան կկտրի։ Բանվոր դասակարգի ղեկավարությամբ չքավոր-միջակ գյուղը կկարողանա վերակառուցվել նոր ձևով—սոցիալիստական ձևով։*

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Գյուղացիական տնտեսությունը հաջող կերպով վերափոխելու համար նախ պետք ե հասկանանք գյուղի չքավորության, տգիտության և ծանր կյանքի պատճառները: Իսկ յերբ հասկանանք, այն ժամանակ նաև միջոցներ կգտնենք, թե ինչպես նոր կյանք կառուցենք:

Բոլորս ել գիտենք, վոր համեմատած կապիտալիստական առաջավոր պետությունների հետ, ցարական Ռուսաստանը հետամնաց մի յերկիր եր: Առաջավոր պետություններից չափազանց հետ եր մնում Ռուսաստանի արդյունաբերությունը, բայց ավելի վողբալի դրության մեջ եր գտնվում գյուղական տնտեսությունը: Իզուր չե, վոր անցյալում արտասահմանում ասում եյին, թե Ռուսաստանն ամենից հարուստ թագավոր ունի (թագավորը ամենախոշոր կալվածատերն եր ու ամբողջ աշխարհի ամենամեծ հարուստներից մեկը) և ամենաաղքատ գյուղ:

Հաճարի բերքով, ուրիշ յերկրների համեմատությամբ, մենք մոտավորապես 25-րդ տեղն եյինք բռնում, իսկ ցորենի բերքով՝ համարյա 40-րդ տեղը: Նույնիսկ այնպիսի փոքր ու հետամնաց յերկրներ, ինչպես Իսպանիան ու Ռումինիան են, մեզնից առաջ եյին:

Մեր դաշտերի բերքատվությունը մոտավորապես այնքան եր, վորքան Գերմանիան ուներ սրանից 200 տարի առաջ: Իսկ մեր հողերն ավելի արգավանդ եյին, քան Գերմանիայինը: Դժվար թե առաջավոր յերկրներում գտնվեն այնպիսի ծերեր, վորոնք հիշեն յեռադաշտի մասին, այնտեղ արդեն շատ ու շատ տասնյակ տարիներ գոյություն ունի բազմադաշտը: Ցարական Ռուսաստանում բազմադաշտը նույնիսկ գյուղացիական ցանքսերի մեկ հարյուրերորդական մասն ել չեր ընդգրկում: Փայտյա արորն արտասահմանի առաջավոր յերկրներում կարելի յե գտնել միայն հնության թանգարաններում, իսկ մեզնում այժմ 5 և կես միլիոն արոր ե ման գալիս դաշտերում: Վորպեսզի լավ հասկանանք, թե վորքան հետ ենք մնացել այդ ասպարեզում այլ յերկրներից, մի որինակ ևս բերենք: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեկ հեկտար[1] հողին ընկնում ե 31 ռ. գյուղատնտեսական ինվենտար, Գերմանիայում՝ 74 ռ., իսկ մեզնում—ամոթ ե ասել—8 ռ. 60 կ.: Ինչպես տեսնում եք, մեր հողագործի ինվենտարը ամերիկական հողագործի ինվենտարից շատ ու շատ քիչ ե: Ռուսաստանը բռնում եր յերկրագնդի մեկ վեցերորդ մասը, իսկ արհեստական պարարտանյութ (այսինքն՝ այնպիսի նյութ, վոր արդյունաբե-

[1] Հեկտարը հավասար ե 9/10 դեսյատինի: Հեկտարը գրքերում ու լրագրերում նշանակվում ե հ.:

ության միջոցով էր պատրաստվում) գործ էր ածում վողջ յերկրագնդի վրա գործածվող քանակի մեկ հազարերորդականի չափով։

Ինչ՞ու մեծ բերք Ամերիկայում կամ Բելգիայում է ստացվում. Վորովհետև այնտեղ դաշտերը մշակվում են լավ գութանով ու փոցխով, մանրացվում է փշրիչով (дробач)[1], պարարտացվում է քիմիական պարարտանյութով ցելացու հողը շարունակ վարած է պահվում, իսկ վարում են տրակտորով։ Սերմացուն զտվում է քիմիական բաղադրությամբ, տեսակավորվում է լավ տեսակավորիչով—ամեն ինչում մարդուն օգնողը լավ մեքենան է։

Ուրեմն, գյուղատնտեսությունը բարձրացնելու համար պետք է այս գյուղատնտեսական մեքենաներից ավելի շատ շինենք, քիմիական բաղադրություններ ավելի շատ պատրաստենք՝ հողը պարարտացնելու, սերմերը զտելու, վնասատուների դեմ կռվելու համար։ Այս բոլորի համար պետք է զարգացած արդյունաբերություն, պետք է ավելի շատ թուջ, պողպատ, քարածուխ ու նավթ արդյունահանենք։ Ով Գերմանիայում գերի չի ընկած յեղել, նա կարող է պատմել, թե այնտեղ գյուղատնտեսությունն ինչպես են վարում և հողն ինչպիսի բերք է տալիս։ Իսկ 200 տարի սրանից առաջ Գերմանիայում բերքն այնպես էր, ինչպես հիմա մեզնում—դեսյատինից 40-ական, 50-ական փութ։ Յերբ Գերմանիայում սկսեց զարգանալ արդյունաբերությունը, յերբ ավելի առաջ յեկան մետաղներ և քիմիական նյութեր արդյունահանող, գյուղատնտեսության համար մեքենաներ ու գործիքներ պատրաստող ու քիմիական պարարտանյութեր պատրաստող գործարաններ—այն ժամանակ գերմանական հողերի բերքն սկսեց աճել։

Ցարական Ռուսաստանի ֆաբրիկաներն ու գործարանները շատ ավելի վատ եյին, քան արտասահմանինը. Թուջ, պողպատ, քիմիական պարարտանյութեր քիչ եյին պատրաստվում, գյուղատնտեսական մեքենաներ քիչ եյին շինվում։ Կալվածատերերի և ունևոր գյուղացիության տնտեսությունների համար արտասահմանից Ռուսաստան եյին ներմուծվում վոչ միայն գյուղատնտեսական բարդ մեքենաներ, այլև հնձող ու ցանող մեքենաներ։ Նույնիսկ լավ գութանը (Սակկովսկու) պետք է արտասահմանից բերվեր։ Գյուղատնտեսական մեքենաները և գործիքները թանգ եյին ու քիչ։ Այսպես՝ ցարական Ռուսաստանի արդյունաբերության հետամնացությունը հետ էր գցում գյուղատնտեսության զարգացումը։

Պարզ է, վոր այսպիսի պայմաններում մեր գյուղացու դժոխային

---

[1] Հայաստանում փշրիչի փոխարեն գործ է ածվում փայտե մեծ մուրճ, վոր տեղացիները **մեճուր** են ասում։

ծանր ու համառ աշխատանքը շատ քիչ օգուտ էր տալիս (կամ թե՝ ինչպես ասում են՝ գյուղացիական աշխատանքի արտադրողականությունն անասելի չափով ծանր էր)։

Գյուղատնտեսության այսպիսի հետամնաց պայմաններում ցարական Ռուսաստանի գյուղացիությունն ինչպես վոր սովորաբար ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ։

Ահա թե ինչպես էր կյանքը 1901 թվին Վորոնեժի նահանգի Նովոժիվոտինսկոյե գյուղում։

Ամբողջ գյուղում վոչ մի գութան չկար, ժեքենաների մասին խոսելն ավելորդ է։ Վարն արորով էին անում, հունձը՝ գերանդով, քաղը՝ մանգաղով։ Իսկ ժիվոտինսկոյե գյուղի 100 տնից 33-ը արոր ու սայլ չունեյին։

Այս գյուղում 100-ից 25 տնտեսությունը կով չունեյին, 45-ը՝ կթի կով, 38-ը՝ ձի չունեյին, 13-ը՝ վոչ մի անասուն։ Տնտեսությունների մի հինգերորդ մասը բոլորովին թողեց հող մշակելը ու դարձավ կալվածատերերի, կամ կուլակների բատրակ, կամ թե աշխատանքի էին գնում։ 90-ից 85 տան հայը մինչև նոր բերքը չէր բավականացնում, և ստիպված էին գնել։ Թե ինչքան աղքատ ու մուրացիկ էր գյուղը, յերևում է այն բանից, վոր խրճիթներից շատերում նույնիսկ քանդած փայտի փոխարեն (փայտաջիլ) ու նոխի էլ չկար։ Բոլոր ընտանիքների կեսը վոչ միայն մսի, այլև քաչիկի (թթու կաղամբից պատրաստած կերակուր) համ, տաք շորվի յերես չեյին տեսնում [1]։

Պարզ է, թե ինչու այս գյուղի բոլոր տնտեսությունների մի հինգերորդ մասը հողը վայր գցեց—առանց լծկանի, առանց արորի հողն ինչով պետք է մշակեր։ Ասենք հենց 100 տան հողն ընդամենը 33 դեսյատին էր, այնպես վոր գյուղն ստիպված էր հարևան կալվածատեր Վենեվիտովից 700 դես. հող կապալով վերցնել ու մեծ գին տալ։

Ցարական Ռուսաստանի գյուղացիական մանր տնտեսությունը չկարողացավ յերկար դիմանալ։ Այնտեղ աշխատանքը ձեռնտու չեր—աշխատեր-չաշխատեր՝ վոչ կարողանում էր ապրել, վոչ էլ իր անասուններն պահել։

Ուստի և ցարական Ռուսաստանի մանր գյուղացիությունը քայքայվում էր, դառնում կամ բոլորովին բատրակ և կամ գյուղական չքավորություն, վոր բացի իր տնտեսության մեջ աշխատելուց, պետք է ուրիշ տեղ աշխատանք փնտրեր։

---

[1] *Այս գյուղը նկարագրում է կադետ Շինգարյովը, վորը ժամանակավոր կառավարության օրոք հողագործության մինիստր էր, իսկ 1901 թ. այդ գյուղը հետազոտող զեմստվային բժիշկ էր։*

ՀԱՐՑԵՐ ՋՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչն եր ցարական Ռուսաստանի գյուղատնտեսության հետամնացության պատճառը։
2. Ինչպես եյին ապրում ձեր գյուղերում 30 տարի սրանից առաջ։

....

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՕՐՈՎ

Ահա, օրինակի համար, Վորոնեժի նահանգը։ Վերցնենք մեկու-կես դես. վարելահող ունեցող տնտեսությունները։ Սրանք պարզապես չքավոր տնտեսություններ են, վորոնց հացը յերբեք իրենց չեր բավականացնում նույնիսկ կիսաքաղց ապրելու համար։

1884 թ. ամբողջ նահանգում այսպիսի տնտեսությունները կազմում եյին $23^{0}/_{0}$ (գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի մի քառորդից էլ պակաս)։ Իսկ ընդամենը 15 տարի հետո (1899 թ.) այս տնտեսություններն արդեն $55^{0}/_{0}$ եյին կազմում—նահանգի բոլոր տնտեսությունների կեսից ավելին։

Ինչպես տեսնում ենք՝ չքավոր տնտեսությունների թիվն ամբողջ նահանգում, 15 տարվա ընթացքում, յերկու և կես անգամ աճել ե։

Արագ աճում եր ձի չունեցող տնտեսությունների թիվը։ Յեթե վերցնելու լինենք ցարական Ռուսաստանն ամբողջապես, ապա կտեսնենք, վոր ձի չունեցող տնտեսությունների թիվը 1882 թվին մի քիչ ավելի բարձր ե յեղել բոլոր տնտեսությունների մեկ քառորդից, իսկ 20 տարի հետո, 1902 թվականին, ձի չունեցող գյուղացիներն արդեն $35^{0}/_{0}$-ից ավելի եյին կազմում (այսինքն՝ բոլոր տնտեսությունների մի յերրորդից ավելին)։ Գիտնականներից վոմանք հաշվել են, վոր ցարական Ռուսաստանի 46 նահանգներում 45 տարվա ընթացքում (1861 թ.—1905 թ.) վողջ գյուղական բնակչության մի քառորդը հողազուրկ պրոլետար դարձավ։ Ինքնին հասկանալի յե, վոր չքավորությունը յերկնքից չի թափվել—չքավոր տնտեսություն եյին դառնում միլիոնավոր քայքայվող միջակներ։ Միջակների թիվը որ ըստ որե նվազում եր, բայց շատ արագ բարձրանում եր չքավորների թիվը, իսկ մյուս կողմից՝ արագ աճում և ամրապնդվում եյին կուլակները։ Հենց այս ե, վոր կոչվում ե գյուղի շերտավորում կապիտալիզմի որով։ Ցարական Ռուսաստանում գյուղն ավելի ու ավելի յեր բաժանվում յերկու գլխավոր խավերի՝ մի կողմից չքավորների ու բատրակների, իսկ մյուս կողմից՝ կուլակների։

1905 թ. հեղափոխությունից հետո ցարական մինիստր Ստոլիպինը նոր օրենքներ հրատարակեց, վորոնցով գյուղացիները շնչապատկան հող գնելու և ծախելու իրավունք ստացան։ Մինչ այդ, գյուղացիք այդ իրավունքները չունեյին։ Այս օրենքն ավելի ուժեղացրեց գյուղի շերտավորումը։ Չքավորությունն սկսեց արագ կերպով հողազրկվել, վորովհետև նա վոչ մի հնարավորություն չուներ հողը մշակելու։ Ընդամենը 7 տարվա ընթացքում (1907 թ.—1914 թ.) մեկ միլիոնից ավելի գյուղացիական տնտեսություններ ծախեցին իրենց հողն ամբողջապես, կամ մեծ մասը։ Գյուղացիներն իրենք չքավորների ու միջակների գզալի մասի այս քայքայումը ապագյուղականացում (գյուղացիությունից ձեռք քաշել) եյին համարում։ Յեվ իրոք, հողից կտրվող հողագործը, թողնելով հողը, արդեն գյուղացի չեր, թեև ցարական օրենքով գյուղացի յեր համարվում։

Ինարկե, հողը վաճառող տնտեսությունների վողջ միլիոնը չքավորներից չեր, բայց այս միլիոնի խոշոր մասը չքավորությանն է ընկնում։ Այս յերևում է այն բանից, վոր հող ծախող ամեն մի տնտեսության միջին թիվը ընկնում է 2-ական դեսյատինից մի քիչ ավելի։ Այն ժամանակվա ցարական Ռուսաստանում մոտավորապես 11 կամ 12 միլիոն տնտեսություն կար։ Ապա հիմա մի հաշվիվ արեք ու կտեսնեք, վոր 7 տարվա ընթացքում կապիտալիզմը յերկրի յերեսից սրբել է բոլոր գյուղացիական տնտեսությունների 1/12-րդ մասը։ Ապա ինչ յեղավ այն հողը, վոր դուրս եր գալիս գյուղի ստորին խավերի ձեռքից։ Հողը գյուղական բուրժուազիայի ճանկն եր ընկնում։ Կարելի յե ասել, վոր կուլակները գարնան սունկի պես աճում եյին։ Իզուր չե, վոր այսպիսի մի խոսք եյին հնարել—«Մեր յերկիրը աղքատ է, մենք էլ հարուստ ենք ապրում»։[1] Ճիշտ խոսք եւ կուլակն իրոք վոր հարստանում եր գյուղի քայքայումով։ Հարցրեք ձեր գյուղի ծերերին ցարական ժամանակների մասին, այն ժամանակվա կուլակների, գյուղացիական տնտեսությունների արագ քայքայման մասին, և նրանք կպատմեն ձեզ այս մասին։ Կենդանի ու հետաքրքրությամբ կպատմեն և շատ օրինակներ կբերեն չքավորների ու միջակների տնտեսությունների քայքայումից ու վոչնչացումից՝ կուլակի, ապրանքատուրի, կալվածատիրոջ ու ցարական իշխանության դեմ մղված անհավասար պայքարում։

Ցարական կառավարությունը կուլակի վրա նայում եր այնպես, ինչպես իր գյուղական հենարանի վրա։ Ցարական կառավարությունը վոչ միայն վորևէ օրենքով չեր սահմանափակում կուլակի գիշատողա-

1) Ժողովրդական առածն ասում է՝ «Հաց չկա—գաթա կեր»։

ական ախորժակը, այլ ընդհակառակը, ամեն կերպ նպաստում էր գյուղական այդ գիշատիչներին։ Ցարական Ռուսաստանի գյուղը խեղդվում էր կալվածատերերի, կուլակների, վաշխառուների, խանութպանների և նրանց կամակատարների—ցարական չինովնիկների կողմից։ Ցարական իշխանությունն, ամենից առաջ, կալվածատերերով էր պահում իր գոյությունը. ընդհուպ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանք ունեյին մոտ 60 միլ. դեսյատին ընտիր հող, անտառ, մարգագետին։ Կալվածատերն ամեն բանով քամում էր գյուղացուն, նրա կաշին պլոկում էր, ամեն քայլափոխում ճնշում էր։

Հիմա լսեցեք, թե ինչպես եյին Նովոժիվոտինոյե գյուղի գյուղացիներն աշխատում կալվածատեր Վենեվիտովի մոտ և ինչու համար։

Հնձի ժամանակ, վոր որավարձով աշխատելու ամենայեռուն ժամանակն էր, բանվորական օրը տևում էր արևածագից, առավոտյան ժամը 3-4-ից, մինչև յերեկոյան 9-10, 2 ժամվա ընդմիջումով ճաշի համար և կես ժամով՝ նախաճաշի համար, կազմելով օրական 14-16 աշխատանքի ժամ։ Իսկ վարձատրությունն այսպես էր. մի տարով վարձված բանվորն ստանում էր 60 ռ., բանվորուհին՝ 36 ռ. և ուտելիք։ Որավարձով ու իրենց հացով աշխատողները գարնանն ու աշնանն ստանում եյին օրական 25 կոպ., ամառը՝ 35-40 կոպ., իսկ ձմեռը՝ 20 կոպ.։ Որավարձով աշխատող կանայք գարնանը և աշնանը ստանում եյին 20 կոպ., ամառը՝ 30 կոպ., իսկ ձմեռը 15 կոպ..

Հասկանալի յե, թե ինչու գյուղացիք շարունակ պարտ եյին կալվածատիրոջն ու գանձարանին (Նովոժիվոտինոյի 66 տնատեր 3049 ռ. պարտք ունեյին)։

Ահա թե ինչպես է պատկերացնում կալվածատերերի հարևան գյուղացիների կյանքը հայտնի ռուս գրող Սալտիկովը.

«Կալվածատեր Կանոն Լուկիչ Լիկովը այնպես էր դրել գործը, վոր գյուղացին իր հավը բաց թողնելու համար տեղ չուներ։ Հավը հիմար է, չի գիտակցում, թե վորն է իրենցը և վորը՝ ուրիշինը, գնում է այնտեղ, վորտեղ ավելի լավ է,—իսկ այս պատճառով նրան իսկույն գնում են կծուճը։ Խեղճ պառավը վոտնամաշ է լինում հավին մանգալով, իսկ Կանոն Լուկիչը ձայն չի հանում։

—Կանոն Լուկիչ, իմ հավը հո դու չես բռնել,—պառավը բռնում է տիրոջ ոտքը։

—Չեմ իմանում, քիչ առաջ մեր բոստանը մի հավ էր մտել. քոնն էր, թե իմը, աստված իմանա։

—Բա ինչ եղավ։

—Ո՞վ է իմանում, գուցե մեր կծուճն է մտել.—Թող չմտնի բոստան…

Յեվ իր յերկրագործությունը նա հաշվով եր անում։ Յերբ գյուղացիների հողը ցել եր արվում, նա ճանապարհներին էլ եր վարսակ ցանում։ Տավարը տեսնում ե, վոր ցելում ուտելու բան չկա, իսկ այնտեղ—համարյա թե քթի տակ—կանաչը ծով ե. խելք չլինի, խելք չլինի՝ մտնում ե աղայի արտը, իսկ նրան այնտեղից ճիպոտով դուրս են քշում, տիրոջից էլ տուգանք առնում։ Յեթե տավարը մի շահու վնաս ե տվել, մի մանեթ տուգանք են առնում։ «Ուզում եք՝ ամբողջ արտն ուտացրեք, ինձ համար ավելի լավ ե,—ժպտում ե Կանոն Լուկիչը,—վոչ կարկուտից կվախենամ, վոչ էլ կնաննոց՝ պոկհանի[1] փող կտամ։

Այսպես եր ապրում գյուղը մինչ 1917 թ. նոյեմբերը։ Կալվածատիրոջ հետ միասին ճնշում եր նրան նաև կուլակը։ Կուլակները թվով ավելի շատ եյին, քան կալվածատերերը։ Ցարական Ռուսաստանում կային այնպիսի շրջաններ ու գավառներ, որինակ՝ Սիբիրում, ուր բնավ կալվածատեր չկար։ Կուլակները գործում եյին վոչ միայն ամեն մի գավառակում, այլև նույնիսկ ամենախուլ գյուղերն եյին հասնում։

Իզուր չե, վոր նրանց աշխարհն ուտող եյին անվանում,—ճիշտ վոր նրանք լափում եյին գյուղական աշխարհը։

Նույն գրող Սալտիկովն այսպես ե նկարագրում հին գյուղի կուլակին. «Թե խրճիթն ու մառանը, թե արտերն ու խրճիթի ամեն մի չոփը (չքավորի և միջակի),—բոլորի տեղն աշխարհակալը գիտե և բոլորը հաշվի յե առնում... Գեղջուկի խրճիթը կարծես լապտեր լինի։ Ամեն ինչ այնտեղ յերևում ե։ Ահա խրճիթը ցցված ե՝ կողերը մերկացրած. կարծես գազանի կմախք լինի։ Մի տեղ գերանի գլուխն ե կախ ընկել, մի ուրիշ տեղ գերանը բոլորովին բացվել ե—կարի յեղեգը փտում ե, քամին տանում ե, կամ գարնանը, չանգելով, անասուններին ուտեցնելու համար են տարել։ Բայց այս կիսափտած խոտանի (խլամ) կույտից էլ կարելի յե օգուտ քաղել։ Ա՛յ, հրեն, նա սայլի մոտ բզբզում ե։ Հա՛, են ե, յերևում ե՝ ուզում ե մնացածը իրեն համար սայլին գցել...

— Ավդե, այ Ավդե, չլինի՞ խոտ ես տանում քաղաք,—փողոցով մեկ գոռում ե աշխարհակալը։

— Ուզում եյի, Պյոտր Մատվեյիչ,—վախվխելով պատասխանում ե Ավդեյը, զգալով սպառնալիքը։

— Լավ կանես՝ մեր տուն տանես, փողը փող ե, մեկ էլ քաղաք չես գնա։ Թե ուզում ես քաղաքում բան առնել, են ե՝ իմ դուքանում էլ ինչքան ուզես ապրանք կա։

1) Житво—պոկհան, արմատից պոկելը։

Ավդեյը չի հակառակում, խուրձ խրձի հետևից նա խոտը կրում և աշխարհակալի բակն ու հաշիվը տանում։

Քաղաքում խոտն արժե յերեսուն կոպ., իսկ աշխարհակալը քսան կոպ. է տալիս...

— Ես ինչ բան է, Պյոտր Մատվեյիչ, կասես ձեր կշեռքը պակաս ընի։ Իմ խոտը յերեսուն փութ պիտի ըներ, ամա ձեր կշեռքը քսանյոթ է ցույց տալիս...

— Սարսաղ, սարսաղ։ Ինչու, յես եմ կշռում։ Միլն է կշռում, հրեն, մոտիկ արա տես՝ ինչ դուզ կանգնած ա։ Դե վոր դուզն է, ուրեմն ճիշտ է։

— Պյոտր Մատվեյիչի կշեռքը շնչավոր է, ինչքան Պյոտր Մատվեյիչն ուզի, կշեռքն էնքան էլ կկշռի,— կատակով ասում է հարևանը... պատահաբար մոտից անցնելով։

Կապիտալիզմը ճնշում և քայքայում եր գյուղը։ Անողոք կերպով խորտակում եր գյուղի դարավոր կարգերը, սրբում եր յերկրի յերեսից չքավորին, քշում եր միջակին դեպի չքավորություն, ղորացնում եր կուլակին։ Այսպես եր ցարական Ռուսաստանում։

Նույն ճանապարհով էլ ընթանում է գյուղատնտեսության զարգացումը նաև աշխարհիս ամենաառաջավոր (տեխնիկայի և հարստության տեսակետից) յերկրում—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Այնտեղ կալվածատերեր չկան. գյուղատնտեսությունը (այնտեղ ֆերմերություն—ագարակատիրություն է կոչվում) մեր տնտեսություններից խոշոր ու կուլտուրական է։ Այն զարգանում է, այսպես ասած, զուտ կապիտալիզմի հետ—առանց կալվածատիրական խառնուրդի։ Սակայն ամերիկական հողագործների չքավորումը անդուսպ արագությամբ է առաջ գնում։ Ամերիկական բուրժուական գիտնականներն իրենք ասում են, թե ամերիկական բոլոր մանր ագարակատերերի կատարյալ քայքայումն ու վոչնչացումը յոթը սարի յետև չէ։ Ցեվ վոչ մի բան փրկել չի կարող նրանց,— ասում են այս գիտնականները, վորովհետև խոշոր տնտեսությունը մանրից ավելի ձեռնտու է։ Ամերիկական մանր ագարակատերերի մի խոշոր մասն արդեն հիմնովին քայքայվել է։ Շուտով նրանց մնացած մասն էլ աշխարհի յերեսից կվերանա—կապիտալիստական խոշոր տնտեսությունն իր զարգացման ճանապարհին ամեն ինչ սրբում-տանում է։ Ահա այսպես է ընթանում գործը կապիտալիստական բոլոր յերկրներում։ Միայն սոցիալիստական հեղափոխությունը կարող է փոխել գյուղի դրությունը, վորովհետև հեղափոխությունն է թոթափում կապիտալիստական տիրապետությունը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ պատճառով էին գյուղացիներն աղքատանում և հողազրկվում ցարական գյուղում։
2. Ինչու գյուղական չքավորը կախումն ուներ կուլակից։

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏՑՐԵՑ ԳՅՈՒՂՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը արմատապես փոխեց գյուղի դրությունը։

Նախ, Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդմիշտ վերջ տվեց կալվածատերերին։ Համարյա վողջ կալվածատիրական հողը, ամբողջ ինվենտարը կալվածատերերի ամբողջ հարստությունը գյուղացիների ձեռքն անցավ։ Այդ հողերից խորհրդային տնտեսությունների տրամադրության տակ մնաց լոկ չորս-հինգ տոկոսը։

Տեսնեք, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Վորոնեժի նահանգի հենց նույն Նովոժիվոտինոյե գյուղում, վորի մասին կարդացինք։

Ամենից առաջ, գյուղն իրեն հողով ապահովել է կալվածատեր Վենեվիտինովի հաշվին։ 1917 թ. հոկտեմբեր ամսին Նովոժիվոտինոյին ու Մոխովատկային աշխատավորական ոգտագործման համար հանձնված է յեղել ընդամենը 1846 հեկտար հող։

Այս թվից 882 հեկտարը տրված է յեղել կալվածատիրական հողերից, առանց վորևէ փրկանքի, իսկ Գյուղացիական բանկի միջոցով այս գյուղերի կողմից գնված 964 հեկտար հողը, վորի (բանկի) վճարումները, սկսվելով 1907 թվից, կվերջանային միայն 1956 թվին, — ազատված էին վորևէ վճարումից։

Այսպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունը ավելացրեց չնչապատկան հողի քանակը Ժիվոտինոյե և Մոխովատկա գյուղերում 6 անգամ—1901 թվականին ունեցած 350 հեկտարից հասցնելով մինչև 2196 հեկտարի՝ հեղափոխությունից հետո։

Չնայած տնտեսության ու մանավանդ անասունների համար քայքայիչ նշանակություն ունեցող քաղաքացիական կռիվների տարիներին, անասունների թիվը նույնպես զգալի չափով աճել է։ 1901 թ. յեղած 95 բանող ձիերի և 61 կովի փոխարեն, 1926 թվին Նովոժիվոտինոյե գյուղում 103 ձի և 125 կով կար արդեն։ 1926 թվին Նովո-

Ժիվոտինոյե գյուղն արդեն ուներ 52 գութան, 12 քամհար, 4 կալսող, 6 հնձող և 7 ցանող մեքենա։ Այստեղ արդեն մուտք գործեցին նաև ծղոնահատներ, քաղհանիչներ (կուլտիվատոր), Թոխեր (վար դնող— բուկը լցնող մեքենա)։ Նովոժիվոտինոյե գյուղում արորով վար միայն հինգ տուն է արել։ Իսկ ինչ վիճակում է հացի գործը։

Մինչդեռ 1901 թ. Ժիվոտինոյե գյուղի 90 տնից 85-ին իր հացը չէր բավականացնում, 1925 թ. մայիսի 1-ին յերկու գյուղի 231 տնից միայն 20-ն եյին հաց գնում։

Մեր հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխություն է— բուրժուազիայի հետ վերջնականապես իր հաշիվը պետք է տեսնի և ապա դասակարգային սոցիալիստական հասարակություն կառուցի։

Խոշոր բուրժուազիայի հետ մենք վատ հաշիվ չտեսանք – նրա վողջ հարստությունը Խորհրդային պետության ձեռքն է անցել։ Կուլակին էլ չենք մոռացել։ Ճիշտ է, նրան քոքից չենք կտրել, ինչպես խոշոր բուրժուազիային, բայց թևերը շատ լավ խուզել ենք։ Կուլակների հողի յեվ ինվենտարի խոշոր մասը չքավորների յեվ միջակների ձեռքն է անցել։

Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացիներին օգտագործման հանձնեց 60 միլիոն դեսյատին կալվածատիրական ու վաճառականական, $3^1/_2$ միլիոն դեսյատին յեկեղեցապատկան, տասնյակ միլիոն դեսյատին նախկին արքունական և տասնյակ միլիոն դեսյատին կուլակային հողեր։ Ամբողջ Միության մեջ հեղափոխությունը միջին թվով ավելացրել է ամեն մի շնչի համար կես դեսյատինից *ավելի հող։*

Թվերն հենց այս էլ ասում են։ Յեթե վերցնելու լինենք 1905 թ. գյուղացիական հողի բաշխումը, ապա ամեն մի 1000 դեսյատին հողից չքավորներին կընկնի 36 դեսյատին, իսկ կուլակներին՝ 356 դեսյատին։ Հեղափոխությունից հետո կուլակին ամեն մի հազար դեսյատինից բաժին եր ընկնում միայն 95 դես.։ Ուրեմն կուլակի հողատիրությունը կրճատվել է համարյա թե չորս անգամ։ Իսկ մեր Միության շատ շրջաններում (մանավանդ Կենտրոնական մասում և Ուկրայինայում) միջակներն ու չքավորներն իրենց հողատիրությունն ավելացրել են ավելի քան յերկու անգամ։

Յեթե ավելացնենք այն, վոր մեր բոլոր օրենքներն ու հարկերը սահմանափակում են կուլակի աճումը և զրկում նրան քաղաքական իրավունքներից, ապա միանգամայն պարզ կլինի, վոր ցարական Ռուսաստանի և այժմյան գյուղի միջև ահագին տարբերություն կա։

Թե ինչ աստիճան ուժեղ թափով միջակացել է գյուղը հեղափոխության առաջին տարիներում, այդ ցույց է տալիս, օրինակի համար,

հետևյալ պատկերը։ Եթե վերցնելու լինենք ցանքսի տարածության բաշխումը ըստ գյուղացիության առանձին խավերի և համեմատելու լինենք 1917 թիվը 1920 թվի հետ, ապա դուրս կգա, վոր գյուղացիական ամեն մի հազար տնտեսության ընկնում եր՝

	1917 թ.	1920 թ.
Ցանքս չունեցող տնտեսություն	110 տնտեսութ.	50 տնտ.
2 դես. վոչ ավելի ցանքս ունեցող	300 »	480 »
2 դես.—4 » »	300 »	320 »
4 » —10 » »	250 »	150 »
10-ից ավելի » »	40 »	5 »

Ցանքս չունեցող տնտեսությունների թիվը այս տարիների ընթացքում կրճատվել է ավելի քան յերկու անգամ, չքավորների ցանքսերը բավականին ուժեղ կերպով աճել են, մասամբ աճել են նաև միջակների ցանքսերը. ընդհակառակը, ունևոր տնտեսությունների ցանքսերը խիստ կրճատվել են, իսկ բացարձակ կուլակային տնտեսություններում ցանքսերն 8 անգամ են կրճատվել։

Իզուր չէ, վոր Լենինը և ամբողջ մեր կուսակցությունը շատ անգամ շեշտել են, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը միջակացրել է գյուղը—կրճատել է ծայրահեղությունները։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ճնշել ու ճնշում է կուլակին և չքավորին ոգնում է վոտքի կանգնելու։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Իմպերիալիստական և քաղաքացիական կռիվները վատթարացրին մեր գյուղատնտեսության դրությունը։ Քաղաքացիական կռիվների վերջերը գյուղատնտեսությունը համեմատած նախապատերազմյան ժամանակի հետ, իր արտադրությունն ավելի քան մեկ յերրորդով կրճատեց։

Պատերազմից հետո գյուղատնտեսությունն սկսեց վերականգնել։ 1928 թվին ցանքատարածությունը հասավ արդեն 115 միլիոն հեկ., իսկ 1913 թ.—119,1 միլիոն հեկտար եր, այսինքն՝ 4 միլիոն հեկտարով միայն ավելի այժմյանից։ Բայց հացաբույսերի ցանքատարածությունը 1928 թ. դեռ չէր հասել նախապատերազմյան ժամանակվա չափերին։

Հացի արտադրությունը (հացահատիկային տնտեսություն) այժմ մեզնում մեր գյուղատնտեսության ամենակարևոր մասն է հանդիսանում։ 1928 թ. մեզնում հացի բերքը մինչպատերազմյանից քիչ պակաս եր։

Լավ չեր ապրանքային հացի գործը, այն հացի, որ վաճառքի համար շուկա յե հանվում։ Այժմ (նկատի ունենք 1928 թ.) հացը նախապատերազմյանից յերկու անգամ պակաս է վաճառքի հանվում։ Ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը այնքան մտահոգված է հացահատիկային տնտեսության զարգացումով։

Ավելի լավ վիճակում է անասնապահությունը։ Ճիշտ է, ձիերի թիվը մեզնում դեռ մի քիչ պակաս է, քան 1913 թվին եր, սակայն անասունների ընդհանուր թիվը արդեն զգալի չափով ավելի յե, քան մինչև պատերազմը։

Ե՛լ ավելի լավ է դրված տեխնիկական կուլտուրաների գործը (այսպես են կոչվում՝ ծխախոտը, արևածաղիկը, վուշը, բամբակը և այլն, մի խոսքով՝ այն բույսերը, վորոնք վերամշակման են գնում արդյունաբերության մեջ)։ Այս բույսերի ցանքատարածությունը ներկայումս մինչպատերազմյանից մեկ յեվ կես անգամ ավելի յե, բացի վուշից և շաքարի ճակնդեղից, վորոնք դեռ չեն հասել 1913 թ. մակարդակին։

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության մի շարք ճյուղերի, մանավանդ հացի արտադրության աճումը բավարար արագություն չունի։ Այս պատճառով ընկերներից վոմանք սկսեցին խոսել մեր գյուղատնտեսության դեգրադացիայի մասին. „դեգրադացիա—այս խրթին բառը մոտավորապես կարելի յե թարգմանել—քայքայում, նեխում, անկում։ Դժվար չե ապացուցել, վոր գյուղատնտեսության դեգրադացիայի մասին յեղած զրույցները սուտ բաներ են։ Նախ և առաջ՝ գյուղատնտեսությունը, թեև վոչ այնքան արագ, ինչպես մեզ այդ հարկավոր է, սակայն տարեց-տարի անընդհատ աճում է։ Յերկրորդ՝ մանավանդ արագ են աճում տեխնիկական կուլտուրաները, իսկ այս նշանակում է վողջ տնտեսության առաջխաղացում — տեխնիկական կուլտուրաները լավ մշակում են պահանջում, վաճառման համար ավելի արդյունք են տալիս և բարձրացնում են վողջ տնտեսությունը։ Յերրորդ՝ շատ ու շատ է ուժեղացել բազմադաշտին անցնելը, մի բան, վոր առաջ հազվագյուտ եր, իսկ այժմ ամբողջ գյուղացիական վարելահողի մեկ տասներորդական մասն է ընդգրկում։ Խոտացանքն առաջ հազվադեպ բան եր, այժմ մոտ 2 միլիոն դեսյատին է ընդգրկում։ Ուժեղ կերպով ավելանում է գյուղատնտեսական մեքենաների գործածությունը։ Համարյա 40000 տրակտոր ակոսում են մեր արտերը։ 1928—29 թվին գյուղատնտեսությունն ստանում է ավելի քան 200 միլիոն ռուբլու մեքենաներ։ 1913 թ. ստացված մեքենաներից համարյա թե 2 անգամ ավելի յե այս։

Աճում է աշխատավարը։ Հազարավոր գյուղացիական առաջավոր տնտեսություններ իրենց տնտեսություններում կիրառում են մի շարք այլ բարելավումներ։

Չորրորդ՝ (վոր առավել ևս կարևոր է) վերջին տարիներս տրակտոր և մեքենա գործածելու շնորհիվ արագ կերպով զարգանում է գյուղական տնտեսությունների կոլեկտիվացումը։ Իսկ այս նշանակում է մանր, բաժան-բաժան ցրված մանրադրույն ու հետամնաց արտադրությունից խոշոր հասարակայնացած տնտեսության անցնել։ Այսպես, 1928 թ. կոլտնտեսությունների թիվը ավելացավ 140%-ով։ Եվ, վերջապես, հինգերորդ՝ խորհրդային տնտեսությունների թիվը 577-ից աճեց մինչև 701։ Խորհրդային հին տնտեսությունների ընդհանուր արտադրանքը 4 տարվա ընթացքում ավելացել է չորս ու կես անգամ, և 1927 թ. խորհրդային տնտեսությունների արտադրանքը հասնում է համարյա թե 15 միլ. ռուբլու։

Այս բանից հետո ուղղակի անհեթեթություն է խոսել մեր գյուղատնտեսության նեխման և քայքայման մասին։ Այս խոսակցությունները, անկախ տարածողի անձնական դիտավորությունից, կուլակի շահերի պաշտպանություն են հանդիսանում։

Կուլակի համար իրոք վոր մեր յերկրում ապրելը ծանր է, և նա աղաղակում է,—«Հավա՜ր, գյուղատնտեսությունը ձեռքից գնում է, կործանվում է, մի գո՜ւռ բացեք, մեզ ազատեցե՛ք»։ Իսկ կոմունիստներից վոմանք՝ աջ օպոզիցիայի ներկայացուցիչները կուսակցության մեջ, առանց բանն իմանալու, սարսափահար են ցեղել ու նույնպես աղմկում են—կորա՜նք, չկե՛նք մի ճար անենք՝ ազատվենք ու ձեռ ու վոտներս արձակենք... կուլակի ձեռ ու վոտը։ Բայց իսկապես, ինչպես տեսանք, գյուղատնտեսության վոչ մի քայքայում չկա։ Մեր գյուղատնտեսությունը բարձրանում է, բայց շատ դանդաղ։ Դժբախտությունն այն չէ, թե գյուղատնտեսությունն ընդհանրապես հետ է մնում արդյունաբերությունից։ Դժբախտությունն այն է, վոր գյուղատնտեսությունը չափազանց ու սաստիկ հետ է մնում մեր արդյունաբերության զարգացումից։ Գյուղատնտեսության այսպիսի մի զարգացում դանդաղեցնում է սպառնում նաև մեր արդյունաբերության—չէ՞ վոր արդյունաբերության համար հարկավոր է գյուղատնտեսական հումք և հարկավոր են արդյունաբերական ապրանքը գնողներ։ Իսկ գյուղատնտեսական հումքը (որինակ՝ մորթի, բամբակ և այլն) մեր արդյունաբերությանը հիմա արդեն չի բավականացնում։

Իսկ արդյունաբերության զարգացման դանդաղումը արգելում է մեր վողջ ժողովրդական տնտեսության զարգացումը, այս թվում նաև

գյուղատնտեսությունը, վորին, իր հետամնացությունը հաղթահարելու համար, առաջին հերթին գյուղատնտեսական մեքենաներ են հարկավոր։

ԽՈՇՈՐ ՅԵՎ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Ի՞նչ միջոցներ ե նշում մեր կուսակցությունն այս հետամնացությունը հաղթահարելու համար։ Մեր կուսակցության մեջ կան աջ ոպոզիցիա կոչվող ընկերներ, վորոնք ասում են, թե գյուղատնտեսության չափազանց հետամնացությունն արդյունաբերությունից և այստեղից բղխող մեր տնտեսական շինարարության դժվարությունները բացատրվում են մեր սխալներով։ Այս ընկերները չեն հասկանում գյուղատնտեսության հետամնացության բուն պատճառները, նշանակություն չեն տալիս մեր շինարարության մեջ յեղած դժվարություններին, վորոնք առաջ են յեկել, մեր յերկրում կապիտալիզմի հիմքերի իսկ վրա վճռական հարձակում գործելու հետևանքով, սրված դասակարգային պայքարով։

Մենք արդեն գիտենք, թե ինչ խղճուկ վիճակում եր գտնվում մեր գյուղատնտեսությունը հեղափոխության նախօրյակին։ Կալվածատիրական տիրակալությունը դարերով մաշում եր մեր գյուղացիների տնտեսությունը։ Ցարական Ռուսաստանի գյուղը բառի լայն իմաստով կանգնած եր անդունդի յեզրին, կատարյալ քայքայման ու մահվան շեմքին։ Ցարական Ռուսաստանի շատ գյուղերի մանրազնին հետազոտումը ցույց ե տվել, վոր միմիայն հարուստ գյուղացիների տներում ե փայտոջիլ (թախտաբիթի) յեղել։ Մնացած բոլոր գյուղացիների տներում փայտոջիլների համար նույնիսկ ուտելու բան չկար։

Տասնյակ տարիներով գյուղատնտեսությունը հետ եր մնում արդյունաբերությունից, չափազանց հետ եր մնում, այնքան չափազանց, վոր հետ եր պահում արդյունաբերության իսկ զարգացումը։ Իսկ պատերազմն ել ավելի խորացրեց այն։ Իզուր չե, վոր առածն ասում ե. «Ականջները ճակատից բարձր չեն լինում»։ Մի քանի տարում չես կարող վերափոխել այն, վոր հարյուրավոր տարիներում ե հյուսվել։

Օրինակ՝ հացի վիճակը. հացի ընդհանուր բերքը, վերջին տարիների ընթացքում հասել ե մինչպատերազմյան չափերին, իսկ ծախու (ապրանքային) հացը մինչպատերազմյանի կեսից մի քիչ ավելի ե։ Ապա բանն ինչ ե։ Հոկտեմբերյան հեղափոխությունը միանգամայն վոչնչացրեց կալվածատիրական տնտեսությունը և սաստիկ ճնշեց կուլակային տնտեսությունը, իսկ ցարիզմի օրով կուլակներն ու կալ-

կալվածատերերը վաճառքի եյին հանում, համարյա թե մեկ միլիարդ (հազար միլիոն) փութ հաց—յերկու յեվ կես անգամ ավելի, քան տալիս եյին միջակներն ու չքավորներն միասին վերցրած։ Այս բացատրվում է այն բանով, վոր կալվածատիրական ու կուլակային տնտեսությունները խոշոր եյին, իսկ չքավորներինն ու միջակներինը՝ գաճաճ տնտեսություններ։ Կալվածատերերը համարյա թե վողջ բերքի կեսն եյին ծախում, կուլակները իրենց հացի մեկ յերրորդից ավելին եյին ծախում, իսկ չքավորներն ու միջակները՝ մեկ յոթերորդականից պակաս։ Հապա միտք արեք՝ ինչ թվեր են—կես, մեկ յերրորդ և մեկ յոթերորդ մասը։

Չմոռանանք, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը—կալվածատիրական հողերի և կուլակների հողերի զգալի մասը չքավորներին ու միջակներին է տվել։ Հեղափոխության տարիներում գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսությունների թիվը համարյա թե յերկու անգամ ավելացել է (14—15 միլիոնից մինչև 25—27 միլիոն)։

Հապա մի լավ մտածեցեք այս բանի վրա ու ձեզ հասկանալի կդառնա, վոր ծախու հացի քանակը նվազել է, ամենից առաջ գյուղատնտեսական արտադրությունը սաստիկ կտրատելու և մանրացնելու պատճառով։ Անխելքի մեկն այստեղ կարող է ասել. արժե՞ր Հոկտեմբերյան հեղափոխությունն անել։ Սակայն այդպես կարող է ասել կամ թունդ հակահեղափոխականը, կամ իսկապես տխմարը, վոր վոչինչ չի հասկանում։ Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց գյուղատնտեսության խոշոր արտադրությունը։

Այս ճիշտ է։ Բայց ի՞նչ խոշոր տնտեսություն էր այդ։ Կալվածատիրական տնտեսությունն էր այդ, վոր ծծում էր գյուղացու արյունքրտինքը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը կուլակային տնտեսության մեջքը ջարդեց, բայց մի՞թե կուլակը գյուղի արյունախումը չէր։ Չքավոր ու միջակ գյուղացիության համար կալվածատերն ու կուլակը թշնամիներ են։

Կալվածատերն ու կուլակը քայքայում եյին աշխատավոր գյուղացուն, քայքայում եյին հիմնովին, մուրացկանության դուռը հասցնում։ Ուստի և կալվածատերերին ու կուլակներին քարուքանդ անելը բանվոր դասակարգի և չքավոր-միջակ գյուղացիության գլխավոր խնդիրներից մեկն էր հանդիսանում։ Յեթե միջակներն ու չքավորները չեյին ուզում իրենց տնտեսության կատարյալ քայքայման ու կործանման դուռը հասնել, պետք է թոթափեյին կալվածատերերի և կուլակների լուծը։ Յեվ նրանք բանվոր դասակարգի ղեկավարությամբ թոթափեցին այդ լուծը։ Իսկ հնարավո՞ր էր, արդյոք, թոթափել այդ լուծը առանց կործանելու կալվածատիրական տնտեսությունը և առանց թու-

ցանելու կուլակությունը։ Ուրեմն, գյուղատնտեսության արտադրության մանրացումը յեղել է հոգուտ հեղափոխության և աշխատավոր գյուղացիության։

Այսպես ուրեմն, գյուղատնտեսության չափազանց հետամնացության, ապրանքային հացի զգալի պակասության և սրանից բխող պարենավորման դժվարությունների գլխավոր պատճառը գյուղատնտեսական արտադրության անսահման բաժան-բաժանությունն ու մանրացումը, կուլակի ճնշումն է ու գյուղատնտեսության բացարձակ հետամնացությունը։ Սակայն այս բոլորովին էլ չի նշանակում, թե մենք շարունակ պետք է կողմնակից լինենք մանր տնտեսության. ընդհակառակը։ Բոլշևիկները դեմ էին կալվածատիրական և կուլակային խոշոր տընտեսությանը ամենևին վոչ այն պատճառով, վոր տնտեսությունը խոշոր էր, այլ հենց այն պատճառով, վոր տնտեսությունը կալվածատիրական յեվ կուլակային եր։ Բոլշևիկները միշտ էլ՝ ավելի ձեռնտու յեն համարել խոշոր տնտեսությունը։ Բայց մենք պետք է վոչ կալվածատիրական և վոչ էլ կուլակային, այլ կոլեկտիվ, սոցիալիստական խոշոր տնտեսություն կազմակերպեյինք։ Ահա հենց այս պատճառով էլ հեղափոխությունը վոչնչացրեց կալվածատիրական տնտեսությունն ու քայքայեց կուլակայինը։ Իսկ թե ինչպես մենք պետք է սոցիալիստական խոշոր տնտեսություն կառուցենք, կխոսենք հետագայում։

Այսպես ուրեմն, մենք համոզվեցինք, վոր մեր գյուղատնտեսության չափազանց հետամնացության հաղթահարումը հնարավոր է միայն տնտեսությունը խոշորացնելու և նոր տեխնիկայի հիմունքներով վերակառուցելու ու աշխատանքի սոցիալիստական կազմակերպման ճանապարհով։ Բայց այսպիսի մի վերակառուցման համար հարկավոր են մեքենաներ, քիմիական պարարտանյութեր։ Այս նպատակով պետք է կառուցել գործարաններ, ֆաբրիկներ, հանքեր, վառելանյութ, մետաղներ, մեքենաներ, պարարտանյութեր, ելեկտրական եներգիա արտադրող ելեկտրակայաններ։ Ուստի և սպառիչ պատասխան տալու համար այն հարցին, թե ինչպես պետք է հաղթահարել չափազանց հետամնացությունը, պետք է պատասխանենք—առաջին հերթին՝ արտադրության միջոցներ (վառելանյութ, մետաղ, մեքենաներ) արտադրող արդյունաբերության զարգացման ճանապարհով, կարճ ասած՝ մեր յերկրի ինդուստրացման և ծանր արդյունաբերության և գյուղի սոցիալիստական խոշոր տնտեսության—խորհրդային և կոլտնտեսությունների կազմակերպման միջոցով։

ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ՅԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

Մենք արդեն տեսանք, վոր մեր գյուղատնտեսության հիմնական արատն իր տեխնիկական խիստ հետամնացությունն ու չափազանց բաժան-բաժանությունն ու մանր լինելն է։ Մանրագույն տնտեսությունը վարն արորով է անում, ցանքը՝ ձեռքով և հունձը՝ մանգաղով — այս բոլորը վաղուց հնացել են և այլևս ձեռնտու չեն։ Այս բոլորի փոխարեն „պետք է մեքենաներ մտցնել։

Ո՞վ է այս բանը խանգարում,—դուցե հարց տաք դուք։ Հենց մանր տնտեսությունն է խանգարում։ Իսկապես, ձեռք բերել գութան (տրակտորի մասին խոսելն էլ ավելորդ է), հնձող, ցանող մեքենա և այլն, տնտեսության ուժից վեր է ու ձեռնտու չէ այս։ Ինչպե՞ս թե ձեռնտու չէ,—պիտի ասեք,—մի գլուխ մեքենաների ձեռնտու լինելու մասին եք խոսում, իսկ հանկարծ դուրս եկավ, վոր մեքենան ձեռնտու չէ։ Այստեղ հակասական վոչինչ չկա—մեքենան ձեռնտու է ունենալ, յերբ ինքն իր ծախսը հանում է։ Իսկ յեթե, որինակ, հնձող մեքենան մանր տնտեսության մեջ ընդամենը 4—5 որ հունձ անի, իսկ հետո վայր ընկնի ու ժանգոտի, դպրոցական յերեխան էլ կասի, վոր իր ծախսը չի հանում։

Հնձող մեքենան մի կողմ թողնենք։ Վերցնենք ամենափոքր տնտեսության ձին ու հաշվենք՝ ինչքան է աշխատում և ինչքան է ուտում, ու կտեսնենք, վոր բոլոր մանրագույն տնտեսություններում նույնիսկ ձիերն իրենց ծախսը չեն հանում։ Մեր յերկրում մի-քանի միլլիոն այդպիսի տնտեսություններ կան, ուր ձին իր ծախսը չի հանում։ Այս, իհարկե, չի նշանակում, թե ձիերը պետք է մորթել. գյուղացու աղքատ պայմաններն այնպես են, վոր առանց ձիու նույնիսկ ամենափոքր տնտեսությունը մի քայլ անել չի կարող։ Սակայն թողնել հենց այնպես, վոր ձին աշխատածից ավելի շատ ուտի, այս էլ չի կարելի։

Ուրեմն, պետք է մի ուրիշ՝ ավելի խելացի յելք գտնել։ Պետք է խոշորացնել տնտեսությունը—ահավասիկ միակ միջոցը, վոր կարող է գյուղացիական մանր տնտեսությունը ազատել հավիտենական կարիքից։ *Ինչ ուզում ես՝ արա, յելքը մեկ է—յեթե մենք իսկապես ուզում ենք գյուղատնտեսությունը չտեսնված բարձրության հասցնել, ապա պետք է մեքենայացնենք այն (այսինքն՝ ձեռքի աշխատանքը փոխարինենք մեքենաներով) ու խոշորացնենք։ Մեկն առանց մյուսի չի կարելի—*

նոր ու բարդ մեքենաները մանրագույն տնտեսությունների մեջ օգտավետ կերպով գործածելն անհնարին է: *Մեքենան գյուղացիական տնտեսությունը դեպի միացում է մղում, և, ընդհակառակը, միանալով՝ գյուղացիները հնարավորություն են ստանում ավելի ու ավելի ձեռնտու և բարդ մեքենաներ գործածելու:*

Բայց գյուղատնտեսության խոշորացումը հնարավոր է յերկու ճանապարհով: Յեթե մեր պետությունը վերացնի կուլակին կաշկանդող բոլոր սահմանափակումները և կապիտալիզմին կատարյալ ազատություն տա գյուղատնտեսության մեջ զարգանալու, անկասկած արտադրությունը կսկսի արագ կերպով խոշորանալ: Բայց ինչպես: Ամենից առաջ բատրակներին, չքավորներին ու միջակներին գիշատիչ կերպով շահագործելու ճանապարհով: Մեքենա, լավ ձի, լավ սերմացու ունենալով, գյուղացիական միլիոնավոր մանրագույն տնտեսությունները քայքայելով, կուլակն աշխատավոր գյուղացիության ոսկորների և արյան վրա կամրապնդեր իր տիրապետությունը:

Նա կխոշորացներ գյուղատնտեսությունը, բայց թե ինչպես: Ավելի ու ավելի նա կքշեր աշխարհիս յերեսից չքավորներին ու միջակներին՝ նրանց իր գիշատիչ ճանկերում ճզմելով: Ավելի և ավելի կաճեր նրա սեփհական անհատական տնտեսությունը: Ահավասիկ գյուղատնտեսության զարգացման ճանապարհներից մեկը: Այս կապիտալիստական ճանապարհն է: Այս ճանապարհը չքավորական և միջակ տնտեսությունների ճնշող մեծամասնությանը տանում է դեպի անխուսափելի տանջալից կործանում, դեպի կուլակների ամենազորությունը գյուղում և դեպի հեղափոխության տապալումը յերկրում: Չէ՞ վոր կապիտալիստական աղան ինքնապես չի կարող հանդուրժել տեսնելու պրոլետարական իշխանությունը գյուղում: Հասկանալի յե, վոր այս մեր ճանապարհը չի: Այս այն ճանապարհն է, վորով գնացել ու գնում են կապիտալիստական բոլոր յերկրները: Կապիտալիստական յերկրների գյուղացիության համար զարգացման այլ ճանապարհ չկա: Դառնալով տիրող դասակարգ, պրոլետարիատն աշխատավոր գյուղացիության հետ անքակտելի դաշինք է կապում և ամրապնդում: Արդյունաբերությունը, վոր շարունակ վողջ տնտեսության առաջից է գնում, դառնում է սոցիալիստական: Հողը դառնում է բանվորական պետության սեփականություն: Կալվածատերերը սրբվում են աշխարհի յերեսից: Կուլակային տնտեսության զարգացումը սահմանափակվում է պրոլետարական պետության օրենքներով ու տնտեսական պայքարով:

Համախմբելով չքավորներին ու միջակներին, կոոպերացիան սոցիա-

լիստական արդյունաբերության և խորհրդային իշխանության ղեկավարությամբ դառնում է չքավոր-միջակ գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերափոխման միջոց։ Մեր յերկրում չքավորները յեվ միջակները համախմբվելով կոլեկտիվ տնտեսությունների մեջ՝ այլ ճանապարհով—սոցիալիստական ճանապարհով են գնում դեպի խոշոր տնտեսություն:

Խորհրդային գյուղի այս վերափոխումն ընթանում է կուլակի դեմ մղվող կատաղի պայքարի միջոցով։ Կուլակը ցանկանում է գյուղը դեպի կապիտալիստական ճանապարհը դարձնել. նա կատաղի պայքար է մղում իր անհատական տնտեսության մեջ ավելի շատ կուտակելու, ավելի շատ հարստանալու՝ ի հաշիվ գյուղական չքավորների և միջակների։ Մենք արդեն տեսցինք, որ կուլակային տնտեսության աճումը ցարական Ռուսաստանում անխուսափելիորեն ընդարձակվում էր գյուղի շերտավորումով, միջակների աղքատացումով ու չքավորների հողազրկումով։

Այս տեսնենք, թե ինչպես է Խորհրդային Միության մեջ։ Մեր գյուղում ել գյուղացիների այնպիսի շերտավորում տեղի ունի՞, ինչպես ցարական Ռուսաստանում և կապիտալիստական այլ յերկրներում։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք արդեն տեսցինք առաջին գլուխի մեջ, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տեղի ունեցավ գյուղի հավասարեցում։ Գյուղը միջակացավ։

1921 թ. քաղաքացիական կռիվները վերջանալուց հետո՝ խորհրդային իշխանությունը նոր տնտեսական քաղաքականության անցավ։

Պարենավորման մասնատրումը, յերբ գյուղացուց առնում եյին բոլոր ավելորդը, փոխարինվեց գյուղատնտեսական տուրքով։ Գյուղացիները հնարավորություն ստացան ծախելու իրենց ավելորդն ու ստացած միջոցներով զարգացնելու իրենց տնտեսությունը։ Նոր տնտեսական քաղաքականությունն ամրապնդեց պրոլետարիատի և գյուղական չքավորության դաշինքը միջակի հետ և ստեղծեց անհրաժեշտ պայմաններ արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքի ու սոցիալիստական վերափոխման համար։

Բայց պրոլետարիատը վերացրեց մասնատրումը և թույլ տվեց մասնավոր առևտուրը՝ հօգուտ աշխատավոր գյուղացիության. բայց այս բանից օգտվեց նաև կուլակը։ Չնայած մեր բոլոր սահմանափա-

կուլակներին, այդ ժամանակի ընթացքում կուլակն սկսեց ուժեղանալ յեվ ամրապնդել իր տնտեսությունը։ Ճիշտ ե, պետական արդյունաբերությունը, առևտուրն ու կոոպերացիան կուլակից շատ ավելի արագ են աճում։ Կուլակի աճումն այն ե տալիս, — և այդ չպետք ե թաքցնել, — վոր ներկայումս մեր գյուղում շերտավորում ե տեղի ունենում։ Բայց բոլորովին սխալ կլիներ, յեթե մենք ասեյինք, վոր շերտավորումը մեր գյուղում կատարվում ե միանգամայն այն ձևով, ինչ ձևով վոր կատարվում ե գյուղի շերտավորումը կապիտալիստական յերկրներում։

Մեր պետությունը վոչ միայն չի ձգտում քայքայել միջակին և չքավորին, այլ, ընդհակառակը, աշխատում ե զարգացնել նրանց տնտեսությունը, աստիճանաբար փոխելով այդ տնտեսությունը սոցիալիստական ուղղությամբ։

Խորհրդային իշխանությունը ձգտում ե, վոր կուլակային տնտեսությունների աճումն ավելի յեվ ավելի նեղ մնա յեվ վոր այս տնտեսությունները ժամանակի ընթացքում աշխարհի յերեսից իսպառ չքանան։ Ահավասիկ մեր հիմնական անելիքները գյուղում։

Մեր գյուղի շերտավորումը միանգամայն տարբերվում ե գյուղի շերտավորումից՝ կապիտալիզմի որով։ Այնտեղ արագ կերպով ավելանում ե չքավոր տնտեսությունների թիվը, իսկ մեզանում՝ քչանում ե։ Այնտեղ արագ կերպով կրճատվում ե միջակ տնտեսությունների թիվը, իսկ մեզ մոտ՝ ավելանում ե. չքավորների մի մասը տարեցտարի դառնում ե միջակ։ Այնտեղ անասանելի չափով արագ ե աճում կուլակային տնտեսությունը, քան մեզնում։ Կապիտալիզմի որով գյուղում տեղի ունեցող շերտավորման վերաբերյալ թվերը մենք արդեն բերեցինք։ Այժմ մեր յերկրի գյուղի շերտավորման վերաբերյալ մի յերկու թիվ բերենք։

Վերցնենք, որինակի համար, 3 տարի և տեսնենք, թե այդ ժամանակամիջոցում ինչ եր կատարվում մեր գյուղում։ Լավ մտիկ արեք այս թվերին։ Մեր գյուղական բնակչության ընդհանուր թվից կար՝

	1924—25 թ.	1925—26	1926—27
Չքավորներ . .	$26^1/_2$ միլ. մարդ	$23^1/_2$ միլ. մարդ	$22^2/_5$ միլ. մ.
Միջակներ . .	$74^7/_{10}$ » »	$75^1/_5$ » »	$76^7/_{10}$ » »
Կուլակներ . .	$4^1/_2$ » »	$4^7/_{10}$ » »	$4^9/_{10}$ » »

Այստեղ պարզ կերպով ցույց ե տրված, վոր մեր գյուղի շերտավորումը արմատապես տարբերվում ե գյուղի շերտավորումից՝ կապիտալիզմի որով։

Մեր չքավորության զգալի մասը հասնում ե միջակի մակարդակին։ Միջակները կազմում են մեր գյուղի մեծամասնությունը։ Միջակները, Լենինի ասելով, հանդիսանում են «մեր յերկրագործության

կենտրոնական գիծը»։ Արագ քայլերով առաջ է գնում մեր կոոպերացիան, արագ են աճում մեր կոլտնտեսությունները, իսկ կուլակային տնտեսության զարգացումն ավելի և ավելի հետ է մնում։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու մեզնում կուլակներն աճում են։
2. Ինչով է տարբերվում ԽՍՀՄ գյուղի շերտավորումը ցարական Ռուսաստանի գյուղի շերտավորումից։

ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Ինչու, չնայած զանազան սահմանափակումների, կուլակային տնտեսությունները մեզնում այնուամենայնիվ դիմանում են և նույնիսկ ուժեղանում, թեև դանդաղ։

Պատասխանը մեկ է — կուլակային տնտեսությունները խոշոր են չքավոր ու միջակ տնտեսություններից, ուստի յեվ ավելի ձեռնտու յեն։ Մի օրինակ բերենք։ Դնեպրո-Պետրովսկի գավառում հետազոտվել են զանազան տնտեսություններ և այս հետազոտությունը ցույց է տվել, որ փոքր տնտեսություններում, որոնք տարեկից 2000 ռ. մթերք են հավաքում, մեկ դեսյատինից ստացված բերքը հավասար է 18 փթի, իսկ մեկ հազարից մինչև չորս հազար ռուբլու յեկամուտ տվող ավելի խոշոր տնտեսություններում, դեսյատինը տալիս է 55 փութ — յեռակի ավելի։

Ընկ. Յակովլևը «Դեպի կոլտնտեսություններ» վերնագրով գրքում մի շարք օրինակներ է բերում, որոնք ցույց են տալիս, թե խոշոր տնտեսությունն ինչ աստիճան ձեռնտու յե մանրից։

Վերցնենք կաթնատնտեսությունը — մեկ փութ կաթը չքավոր գյուղացուն յերկու անգամ ավելի թանկ է նստում, քան կուլակին, իսկ կով մորթելը խոշոր տնտեսության մեջ համարյա յերկու անգամ գերազանցում է մանր տնտեսության կով մորթելուն։

Վուշի բերքը խոշոր տնտեսություններում ավելի քան մեկու կես անգամ գերազանցում է գյուղացիական մանրագույն տնտեսությունների բերքից։ Ամենից թանկ է նստում վուշը մանր տնտեսությանը, որը չնչին ցանքատարածություն ունենալով՝ արտադրության բավարար միջոց չունի։ Ուստի և դուրս է գալիս, որ կուլակը մեկ դեսյատին վուշից ավելի շատ յեկամուտ է ստանում, քան թե մանր ու մանրագույն տնտեսությունները։

Կուլակը սիրում է ասել, թե իր հաջողությունը բացառապես ձեռք է բերում իր աշխատանքով, թե տեղ կա՝ չքավորը չքավոր է միայն այն պատճառով, վոր նա ծույլ է, *չի ուզում ու չի կարողանում աշխատել: Բավական է միայն մտածենք, թե ինչ առավելություն ունի խոշոր տնտեսությունը, վոր հասկանանք կուլակի ամբողջ սուտը:*

Սահմանափակումներով կարելի չէ և պետք է կասեցնել կուլակային տնտեսությունների աճումը: Բայց այսպիսով կուլակին չես կարող աշխարհի յերեսից սրբել: Ցեխե հիմնիկվանն էլ սրբես, ուրիշները առաջ կգան: Կապիտալիզմի արմատներն այսպես չես կարող պոկել: Իսկ մենք պետք է ձեռք բերենք հենց այնպիսի մի դրություն, վոր կուլակ չծնվի, ուր մնաց թե աճի:

Ինչպես անենք, վոր այսպես լինի: Այս միայն կարելի չէ անել մի ճանապարհով—խոշոր կուլակային տնտեսությունների հանդեպ մենք պետք է էլ ավելի խոշոր և ավելի առաջավոր տնտեսություններ կազմակերպենք, բայց վոչ մասնավոր, վոչ կապիտալիստական, այլ հասարակական, կոլեկտիվ—սոցիալիստական: *Այսպիսի տնտեսություններ մենք կարող ենք ստեղծել չքավոր և միջակ տնտեսությունների կամավոր համախմբման միջոցով:* Մենք մոտենում ենք այնպիսի մի սահմանի, վորից այն կողմ հնարավոր չե գյուղատնտեսության արմատական բարելավում յեվ վճռական վերելք՝ մանր յեվ մանրագույն արտադրությունը պահպանելու պայմաններում:

Ահա թե ինչու մեր կուսակցության XV համագումարն ասել է. «Ներկա ժամանակաշրջանում գյուղացիական մանր անհատական տնտեսությունները խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ համախմբելու յեվ վերակազմելու խնդիրը պետք է դրվի իբրեվ կուսակցության հիմնական խնդիր՝ գյուղի վերաբերյալ». *բայց այս բանն արդեն նշել է նաև Համամիութենական կուսակցական XVI կոնֆերանսը:*

Թե վորքան ճիշտ եր այս վորոշումը, ցույց տվեց ինքը՝ կյանքը: 1928 թ. կոլտնտեսությունների թիվն ավելացավ յերկու ու կես անգամ: Կոլտնտեսություններն ընդգրկում են կես միլլիոն գյուղացիական տնտեսություն: Խոսք չկա, վոր մեր կոլտնտեսությունները շատ թերցեր ունեն: Բայց չպետք է մոռանալ, վոր այս շատ բարդ ու բոլորովին նոր գործ է, ուստի և չպետք է թերցերից վախենալ: Շատ կոլտնտեսություններ այժմ արդեն անցել են կուլակային տնտեսություններից՝ բերքատվության, մեքենաների կիրառման և առհասարակ տնտեսության ձևերի բարելավման տեսակետից:

ՌՍՖՍՀ ութ մարզերում հաշված է, վոր 1928 թ. կոլտնտեսությունների աշնանացանի բերքը բարձր է անհատական տնտեսություն-

ների հաճարի բերքից 28%-ով, գարնանացան ցորենից՝ 33%-ով, իսկ վարսակից՝ 27%-ով։

Լենինգրադի մարզի «Կոլոս II» կոմունայում վարսակի մեկ գեկտարինի բերքը հավասար է 103 փ., իսկ գյուղացիներինը՝ 62 փ., գարինը՝ 108 փ., իսկ գյուղացիներինը՝ 67 փ., կարտոֆիլի բերքը՝ 1925 փ., իսկ գյուղացիներինը՝ 650 փ.։ Կովերի կաթը կոմունայում 2 անգամ ավելի է, քան գյուղացիական տնտեսություններում։ Այս թվերը ցույց են տալիս, վոր չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումն աշխատավոր գյուղացիությանը դարավոր աղքատությունից ու խավարից ազատագրելու միակ ճանապարհն է։

Հենց այս էլ գլխավոր ճանապարհն է, վորով կարելի է հաղթահարել գյուղատնտեսության հետամնացությունը։

Մեր կոմունիստական կուսակցության մեջ կան այնպիսի ընկերներ, վորոնք չեն հասկանում, թե ինչ ճանապարհներով կարելի է վերակառուցել գյուղը։ Այս աջ թեքում ունեցողները բղավում են, վոր իբր մենք չափազանց շատ մեծ միջոցներ ենք սպառում կոլտնտեսությունների վրա, վոր իբր կոլտնտեսությունները — մեր կոլտնտեսությունները — բարեգործական տներ են։

Ո՞վ չգիտե, վոր աջերի բերանով այս դեպքում կուլակն է իր նվիրական միտքն արտահայտում։ Կոլտնտեսություններն են նրա աչքը ծակում, այդ կոլտնտեսություններն են, վոր նրան վերջնական կործանում են սպառնում, նրա վոտքի տակի հողն են քանդում։ Նա պատրաստ է կոլտնտեսությունները սրբել աշխարհի յերեսից։ Նրա դժգոհությունը ներծծվում է նաև կուսակցության մեջ՝ գյուղացիության հետամնաց մասի միջոցով և ավելի հետամնաց բանվորների միջոցով։ Յեվ ահա վորոշ խմբակներ կուսակցության մեջ սկսում են տատանվել, նահանջել կուլակի առաջ։

Սակայն մեր կուսակցությունը բավականաչափ ուժեղ է՝ հաստատ ու համառ կերպով վերակազմելու գյուղն ու վողջ յերկիրը, հաղթահարելով դասակարգային թշնամիների դիմադրությունը և առանձին խմբակների տատանումներն իրենց սեփական շարքերում։ Մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսության կոլեկտիվականացման հետ միաժամանակ, կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն սկսեցին ծավալել գյուղատնտեսական սոցիալիստական խոշոր արտադրությունը, խորհրդային հին տնտեսությունների ամրապնդման ու զարգացման և նորերի ծավալման ճանապարհով։

Այս մասին մանրամասնորեն մենք կխոսենք ուրիշ տեղ — այստեղ մենք միայն նշում ենք այս բանը՝ իբրև հողագործության սոցիալիս-

տական շինարարության բնագավառի հիմնական խնդիրներից մեկը։

Այս բոլորը լավ,—կասի մեկը,—թե կոլեկտիվ տնտեսությունները և թե խորհրդային տնտեսությունները, բայց չէ՞ որ առայժմ գյուղացիների ճնշող մեծամասնությունը անհատական տնտեսություն են վարում—սրանց հետ հապա ինչպես անենք։ Օգնե՞նք նրանց, թե ո՞չ։ Աջերը մեղադրում են կուսակցությանը՝ իբր թե կուսակցությունը մոռանում է անհատական գյուղատնտեսությունը, Այս ճիշտ չէ, պոչով սուտ է․ ճիշտն այն է, որ աջերն անհատական տնտեսության օգնությունն ասելով հասկանում են նաև կուլակի ձեռք ու ոտքն արձակելը։ Աջերից ոմանք այս մասին բացարձակ խոսում են. «մենք չպետք է խանգարենք արտադրությանն ու կուլակների տնտեսությունը»,—ասում են նրանք: Ճիշտ է, քողարկվելու համար նրանք խոսում են նաև կուլակների շահագործման դեմ պայքար մղելու մասին, բայց միայն «ծորացնող» շահագործման դեմ։ «Ծորացնող» շահագործում ասելով հասկացվում է տոանձնապես կուլակային շահագործումը, որինակ՝ հարազատ աշխատանքը, ամառային աշխատանքներում ծորացնելը՝ այն պատճառով, որ կուլակը ձմեռ ժամանակ մի քիչ հաց է տալիս և այլն։

Ծորացում թույլ մի տուր, իսկ մնացած բաներում կուլակին մի սահմանափակիր,—ահա թե ինչ են ասում աջերը։ Կուսակցությունն այս տեսակետը իրավացի կերպով համարում է գիջում կուլակին։

Կուսակցությունն ամեն կերպով օգնություն է հասցնում անհատական գյուղացիական տնտեսություններին, բայց ինչ տնտեսությունների,—չքավոր-միջակ տնտեսություններին, և կուլակների հետագա սահմանափակման ու նրանց վրա հետագայում հարձակվելու պայմաններում։

ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԵՐՔԸ

Չնայած մանր գյուղացիական տնտեսության արմատական բարելավումը հնարավոր է միայն կոլեկտիվականացման միջոցով, այդ անմտություն ու ծիծաղելի կլիներ այս պատճառով հայտարարել, թե անհատական գյուղացիական մանր տնտեսության մեջ արդեն հնարավոր չէ ոչ մի բարելավում։ Կուսակցությունն այսպես չի մտածում։ Ընդհակառակը, նա գտնում է, որ ներկայումս գյուղացիական մանր անհատական տնտեսությունները դեռևս կարող են զգալի բարելավումներ ձեռք բերել։ Տեսակավորված (ընտիր) սերմերի ցանքսը ավելացնում է

բերքատվությունն առնվազն 20%-ով (այսինքն ¹/₅ մասը)։ Սովորական սերմացուների պարզ տեսակավորումը ու վաղ ցել անելը հողի արգասավորությունը շատ ավելով է բարձրացնում։ Արհեստական պարարտանյութերի գործածությունը, ցանքերի վնասատուների դեմ ճիշտ կերպով գրված պայքարը, խոտացանքը, բազմադաշտն ու այլ միջոցները,—այս բոլորը բարձրացնում են բերքատվությունը՝ ավելացնում են տնտեսության եկամուտը և բարելավում գյուղի բարեկեցությունը։

Վերցնենք հողի նեղ զոլակներն ու սառնամներ. հաշված է, որ գյուղից մինչև 5 վերստ հեռու գտնվող հողը մշակելիս՝ աշխատանքի օրը տալիս է 54 կոպեկ եկամուտ, իսկ 5 վերստից ավելի հեռավորության վրա գտնվող դեպքում եկամուտը համարյա կրկնակի անգամ պակասում է—իջնում է մինչև 30 կոպեկի։

Անասուններն այժմ մեզնում այնքան հաց են ուտում, որքան ուտում է ամբողջ երկրի բնակչությունը, իսկ եթե գյուղը խոտ ու պտղարմատ ավելի շատ ցաներ, ինչքա՞ն ավելի միլիոններ ու միլիոնավոր փթերով հաց կարող էր շուկա ղրկել։ Կարդացեք ընկ. Յա. Յակովլևի «Պայքար բերքի համար» վերնագրով գրքույկը և դուք կտեսնեք, թե ինչ մեծ հաջողություններ դեռես կարելի է ձեռք բերել անհատական գյուղացիական տնտեսությունների մեջ՝ ամենապարզ միջոցներ կիրառելով։

Այս գրքում շատ այնպիսի բաների օրինակներ են բերված, որոնք առանձին գյուղացիական տնտեսություններ ու գյուղական ամբողջ հասարակություններ արդեն ձեռք են բերել տեսակավորված սերմացուներ գործածելով, ցելը վաղ անելով և ուրիշ հանրամատչելի միջոցներով, որոնք բարձրացրին գյուղատնտեսությունը։

Հիմա լսեցեք, թե ինչպես են Յարոսլավլի նահանգի Ուգլիչեսկի գավառի Պլիշկի գյուղացիները բարձրացրել բերքը,—ահա թե ինչ են գրում այնտեղից, «Մինչև հեղափոխությունը բերքը շատ աննշան էր—մեկ դեսյատինից վուշը տալիս էր 15—18 փութ թելացու (ծերք), հաճարը՝ 60 փ., վարսակը՝ 80 փ., կարտոֆիլը՝ 700 փ.։ Շատ վեճեր տեղի ունեցան գյուղում, երբ հողաշինարարությունից հետո խոսք բացվեց ցանքափոխության մասին։ Երիտասարդ տնտեսատերերը Վոլոկոլամսկի 8-դաշտյան՝ ամեն տարի կորնգան ցանելու կողմն էին։ 1925 թվից գյուղում այլևս չէր կարելի գտնել մի տնտեսություն, որ կորնգան ցանած չլիներ։ Հասարակությունը որոշում կայացրեց, որ բոլոր քաղաքացիները պահպանեն մտցված ցանքափոխությունը։

1926 թ. գյուղի մի մասը ապսպրեց Պսկովի երկարաթել վուշի

սերմը ու ցանեց կորնգանատեղերը. վուշը լավ բերք տվեց — մի դեսյատինից 40—42 փութ թելացու և 35—40 փ. սերմ։ Բերքի այս մեծ թռիչքը բոլորին ստիպեց բացառապես Պսկովի յերկարաթել վշացանքսի անցնել։ Հենց այդ տարվանից հասարակությունը վորոշում և կայացնում, բոլոր աշնանավար ու գարնանավար արտերը բացառապես տեսակավորված սերմեր ցանել։ Այսպես էլ անում են։

Հասարակությունը մի փոքրիկ փորձնական ցուցադրական հողամաս ունի, ուր վեց տեսակի փորձ է կատարվում, վոր հանձնարարված է գավհողվարչության կողմից։

1926 թվից գյուղը ցելացու չունի։ Ցելացու արտերում մեծ մասամբ վուշ է ցանվում։ Վուշ ցանելուց առաջ մեկ դեսյատինին լցնում են 12—14 փութ սուպեր-ֆոսֆատ. վուշը քաղելուց հետո իսկույն ևեթ գոմաղբ են լցնում և հաճար ցանում։

Վերջին տարիներս Պլիշկի գյուղում միջին թվով մեկ դեսյատինից այսքան բերք է ստացվում.

Հաճար	120 փ.
Վարսակ	130 »
Թելացու վուշ	40 »
Վուշի սերմ	35 »
Կարտոֆիլ	1100 »

Պլիշկեցիները կազմակերպել են սերմնաբուծական ընկերություն, վորին անդամագրվել են բոլոր գյուղացիները։ Ընկերությունն ունի վարձակալյան՝ այսպիսի մեքենաներով ու գործիքներով — կալսհատագտիչ, կլեյտոնի տեսակավորիչ, 2 թոխ (վար դնող — բուդ լցնող) և 3 շարքացան մեքենա։

Ներկայումս մշակվում է կոլեկտիվ յերկրագործության անցնելու հարցը։ Գյուղում այս ձևին անցնելու շատ կողմնակիցներ կան[1]։

Կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը չքավոր և միջակ գյուղացիական անհատական տնտեսություններին ոգնություն ցույց տալու բոլոր հնարավոր միջոցները ձեռք են առնում։

Որինակ բերենք ԽՍՀՄ-ի ԿԳՀ ի դեկրետը՝ բերքատվությունը բարձրացնելու մասին (1928 թ. դեկտեմբերի 25-ի), գյուղատնտեսական հարկի վերաբերյալ՝ 1929 թ. փետրվարի 8 ի որենքը և Համամիութենական XVI կուսկոնֆերանսի վորոշումները՝ ընկ. Կալինինի զեկուցման առթիվ։

Անհատական գյուղացիական տնտեսությունը դեռ յերկար ժամանակ պետք է մնա հացի և, առհասարակ, գյուղատնտեսական մթերքների հիմնական մատակարարող։ Գյուղացիական անհատական տնտե-

[1] Վերցրած է Յակովլևի «Պայքար բերքի համար» գրքից։

սությունը դեռ յերկար տարիներ լինելու է գյուղատնտեսության վարելու հիմնական ձևը։ Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունն այս բանը լավ են հասկանում և հաշվի յեն առնում գյուղում վարած իրենց քաղաքականության մեջ։ Բայց կուսակցությունը միմյանց չի հակադրում չքավորի և միջակի անհատական տնտեսության խնդիրը, նրա և արտադրական կոոպերացման ու կոլեկտիվականացման միջոցով հիշյալ տնտեսության սոցիալիստական վերակազմության խնդիրը։ Ընդհակառակը՝ անհատական *տնտեսությանը ցույց տրվելիք օգնությունն այնպես պետք է լինի, վոր վոչ միայն տնտեսությունը բարձրացնի, այլև կոոպերացման մեջ քաշի այն։*

Օրինակ, վերցնենք կոնտրակտացիան[1]*։ Յեթե պայմանագիրը կնքվում է վողջ գյուղի հետ, ապա այն միևնույն ժամանակ օգնում է անհատական տնտեսություններին և վերջիններս ներգրավում է ամենապարզ միավորությունների մեջ, վորոնք հետագայում դառնում են ավելի բարդ միավորություններ՝ իհարկե, կամավորության սկզբունքներով։*

Գյուղական մանր տնտեսության զարգացման սահմաններն ու վերելքը սահմանափակ են։ Անհնարին է այժմ բարձրացնել անհատական գյուղացիական տնտեսությունն՝ առանց այս կամ այն ձևով այն կոոպերացնելու և առանց մոտեցնելու կոլեկտիվացմանը։ Օրինակ, խելքի մոտ է, արդյոք, զտված սերմեր մտցնել անհատական տնտեսության մեջ։

Վոչ, խելքի մոտ չէ, վորովհետև սերմերն իսկույն ևեթ կաղտոտվեն։ Այս բանի համար պահանջվում է, վոր ամբողջ գյուղը զտված սերմերի անցնի. ուրեմն պետք է սերմանման ընկերություն կազմակերպել։

Մենք պետք է գործ դնենք մեր բոլոր ուժերը՝ լուծելու գյուղատնտեսության մեջ գոյություն ունեցող՝ ներկայիս հարվածային խընդիրները—առաջիկա հնգամյակի ընթացքում 35%-ով բարձրացնել մեր հողերի բերքատվությունը, տասնամյակի ընթացքում՝ կրկնապատկել բերքատվությունը, ընդարձակել ցանքատարածությունը, ամեն կերպ ուժեղացնել կոլեկտիվացումը յեվ ամբողջովին իրականացնել խորհրդային տնտեսությունների շինարարության համար նշված ծրագիրը։

Ցարական կառավարությունը գյուղատնտեսության վրա ծախսում եր տարեկան մոտավորապես 150-ական միլիոն ռուբլի և այն էլ՝ այս

---

[1] *Կոնտրակտացիա կոչվում է այն պայմանագիրը, վոր պետությունը կնքում է գյուղացիության հետ՝ կոոպերացիայի միջոցով, արդյունաբերությանը հաց և հումք մատակարարելու համար։*

միջոցների խոշոր մասը գնում եր հողում կալվածատերերի և կուլակների։

Խորհրդային իշխանությունն արդեն ներկա (28—29 թ.) տնտեսական տարում գյուղատնտեսության մեջ է դնում (յեթե հաշվելու լինենք բոլոր պետական յեվ տեղական ծախսերը) մեկ միլիարդ ռուբլուց ավելի։

Տարեց-տարի այս ներդրումները կավելանան։

Տարեց-տարի մեր գյուղը պրոլետարիատի ու վերջինիս կուսակցության ղեկավարությամբ կվերակառուցի իր տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով, ավելի ու ավելի լայն կերպով կիրառելով մեքենաներ, տրակտորներ և այսպիսով ավելի ու ավելի բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, ուրեմն, բարելավելով նաև գյուղատնտեսության նյութական ու կուլտուրական դրությունը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞վ են ձեռնտու խոշոր տնտեսությունները գյուղում։
2. Ի՞նչպես է ՀամԿԿ գյուղը դեպի խոշոր տնտեսություն տանում։
3. Ինչո՞վ է օգնում Խորհրդային իշխանությունը գյուղացիական անհատական տնտեսությունների բարելավման գործին։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

Ինչպես տեսնում եք, մենք գյուղում ել ենք ձեռնարկել մեր սոցիալիստական խնդրի լուծումը՝ չքավոր—միջակ *տնտեսությունների սոցիալիստական* վերափոխումը։ *Ուժեղ կերպով աճում են կոլտնտեսությունները, գյուղատնտեսական կոոպերացիայի զանազան ձևերն ընդգրկում են արդեն համարյա թե գյուղացիական տնտեսությունների կեսը։ Ծավալվում են խոշոր խորհրդային տնտեսություններ։ Ուժեղանում է չքավորների օգնության գործը, լավանում են խորհուրդներին, կոոպերացիային և այլն կազմակերպություններին կից չքավորական խմբակներ կազմակերպելու աշխատանքները։ Իսկ օգնելով չքավորներին, կոոպերացնելով չքավոր ու միջակ տնտեսությունները և վերջիններիս գյուղատնտեսական ընտիր մեքենաներ մատակարարելով՝ Խորհրդային պետությունն այս միջոցներով ազատագրում է չքավորներին՝ կուլակից կախում ունենալուց։ Վոչնչացնում է այն պայմանները, վորոնց շնորհիվ կուլակը կարող է գոյություն ունենալ։*

Իսկ այն դրությունը, յերբ կուլակի վոտի տակի հողը գնում է, մի՞թե կուլակի դիմադրություն առաջ չի բերում։ Չե՞ վոր կուլակը

հայվան վոչխար չի — նա չի կարող այս գիշատիչը մեզնից շնորհակալ լինել, վոր մենք ավելի և ավելի վճռական կերպով ենք հարձակվում նրա վրա։ Բայց կան այնպիսի կոմունիստներ (աջ ապորտյունիստներ), վորոնք կարծում են, թե դասակարգային պայքարը գյուղում սրվում է այն բանից, վոր խորհրդային մարմիններն ու կուսակցական կազմակերպությունները տեղում վատ են աշխատում։ Աջ ապորտյունիստները գտնում են, վոր կուլակը կարող է չքավորների ու միջակների հետ խաղաղ կերպով սոցիալիզմի հասնել։ Նրանք կարծում են, վոր յեթե կուլակներից կոոպերատիվներ ստեղծվեն, կամա-ակամա կուլակային այս բները պետք է սոցիալիստական դառնան։

Իսկ իրականում բոլորովին հակառակն է ստացվում։

Մեր հարձակումը կուլակի վրա ուժեղացնում է նրա դիմադրությունը. այլ կերպ չեր էլ կարող լինել։

Կուլակը պայքարում է մեր դեմ ամեն տեսակի միջոցներով. նա կամ չքավորների ու խորհրդային իշխանության բարեկամ է ձևանում, կամ խցկվում է կոոպերատիվի ու խորհրդի վարչությունների մեջ, կամ կրոնական զանազան աղանդներ և խմբակներ է կազմակերպում, կամ միջակների ավելի հետամնաց և նույնիսկ չքավորների ամենահետամնաց մասը կաշառում ու խմացնում է։ Նա չի խորշում հրդեհներ, խեղումներ առաջ բերելուց և կոմունիստների, կոմյերիտականների, խորհուրդներում աշխատողների, խրճիթվարների, գյուղթղթակիցների, կոլտնտեսության անդամների և առհասարակ գյուղի սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցների նկատմամբ գազանային բարբարոսություններ անելուց։

Որինակի համար, ահա թե ինչ են գրում Հյուսիսային Կովկասի Սալսկի գավառից. «Պատի թմբին չքավորների մեջ նստած, կարեկցելով նրանց, հասարակական խնդիրներ քննելով՝ կուլակը շեշտակի տանում է իր գիծը։ Խեղաթյուրում է, աղավաղում, բացատրում իր ուզածի պես և խոսակցության ընթացքում, իբր պատահական կերպով, մեկից մի-յերկու դեսյատին հողի չերես է վերցնում, մյուսին մի որով ձին է տալիս (իբր թե հետո կաշխատես, տեղը կհանես), մի ուրիշին ալյուր է առաջարկում։ Ու միաժամանակ գլխները լցնում է. «Եդ կոմունան միայն խոսքով է կոմունա, արածը մի բան չի. իսկ դուք վոնց կայիք, էնպես էլ կմնաք։ Իսկ յես լավ եմ հասկանում ձեր աղքատությունը, ձեր չարչարանքը տեսնելով՝ մեղքս գալիս է, եդ պատճառով էլ տալիս եմ։ Թեև ինձ ինչ վոր կուլակ են համարում, իսկ թե ինչ ասել է՝ յես էլ չեմ իմանում։ Զարչարվում, քրտինք եմ թափում՝ մի բանի տեր դառնալու, վոր մարդիկ մատով ցույց

չտան, թե անփոխան է ման գալիս։ Գիշեր ցերեկ թափճակին եմ անում, ախորժակով ուտում եմ, ուրիշներին ուտացնում, հանրապետությանն օգնում։ Իսկ որս շան որ է դարձել, որս որ չէ, ենքան ա, վոր քաշ ենք տալիս. ելի հենց չենք ուզում մեռնել—ախր պտի սոցիալիզմ տեսնենք»։

Ահա թե ինչ խորամանկ աղվես է կուլակը։ Բուզուլուկի գավառից գրում են—«Սորոչինի գավառում կուլակն ու ունևորը աշխատում են չքավորներին օգնություն ցույց տալով՝ նրանց իրենց ազդեցության տակ գցել։ Բուրդինգա գյուղում կուլակները ձրիաբար ծեծել են չքավորների կալը, իսկ կուլակ Կոպտյեվը ՓՈԿ-ի դրամարկղին 10 ռ. փող է տալիս և տեղն ու տեղը հայտարարում. «Տեսնո՞ւմ եք, դուք ինձ ձայնազուրկ եք անում, իսկ կուլակները փող են տալիս ՓՈԿ-ին»։ Գամալեյեվկա գյուղում մի կուլակ հայտարարում է. «Յեթե դուք ինձ ընտրեք գյուղխորհրդի մեջ, ես ձեզ համար կաշխատեմ. թե չէ, ձեր խորհրդի նախագահն ինչացու՞ չէ։ Մի անհասկացող, չորանի մեկն է»։

Տագանրոգի գավառում կուլակությունն այն տեղն է հասնում, վոր ագիտացիա յե մղում սերմազտման դեմ, իսկ միևնույն ժամանակ ինքը գաղտնի կերպով բանի յե գցում սերմազտիչ մեքենաները (Կալինինի զեկուցումը)։

Գոլոդայեվկայում Ցանովի հողային համայնքի գյուղացիները կուլակների ազդեցության տակ հրաժարվեցին ընդունել ագրո-մինիմումը և ընտրել ագրոլիազորներ։

Տամբովի գավառի Պերեսիպկինի շրջանում յերկու սերմազտիչ գումակ է շրջում։ Չքավոր և միջակ գյուղացիությունն ուրախությամբ զտում են իրենց հատիկը, իսկ կուլակներն ու տերտերները բացարձակ և, գլխավորապես, գաղտնի ագիտացիա յեն մղում սերմազըտման դեմ։

Կրիմսկայա ստանիցայում կատաղի ագիտացիա յեր մղվում գութանները սնոտի և համի շեֆ բանվորներին նորոգության տալու դեմ. «Մեքենաները մի տանեք, ել յետ չեք ստանա, վորովհետև բոլորն ուղարկում են կոլտնտեսությունները» (Կալինինի զեկուցումը)։

Բայց տեսեք, թե ինչ է դուրս գալիս, յերբ կուլակներին հաջողվում է ընկնել գյուղխորհրդի մեջ։

Գոլովիշչենսկի գյուղխորհրդի մեջ խցկվել է կուլակ Դանիլոչկինը և ամեն կերպ աշխատում է ձեռ առնել չքավորներին։ Հուլիս ամսում հաշվա-հարկային հանձնաժողովը հավաքվում է գյուղխորհրդում՝ չքավորներին գյուղմիտհարկից զիջումներ անելու։ Նա-

խագահը հարբած ներս է մտնում, չքավորների ներկայացուցիչներին դուրս է անում ու հայտարարում. «Յես ինքս գիտեմ՝ ում պետք է գիջել»։ Արդյունքը լինում է այն, որ գեղջը անավարտ չի կատարվում։ Մեկ էլ տեսնենք գեղջը նախագահի աներձագին դուրս չեկավ։ Նախագահն իրեն էլ չեր մոռացել, չնայած վոր իր բուրդ գզող մեքենայից տարեկան վոչ պակաս, քան 500 ռուբլի յեկամուտ է ստանում։ Ել ինչ ասես, ամեն ինչ լույսի պես պարզ է։

Կարելի չե սոցիալիստական շինարարության դեմ կուլակների կողմից մղվող պայքարի բազմաթիվ որինակներ բերել, բայց ինչ կարիք կա։ Պայքարը ձեր աչքի առաջ է ծավալվում, և ամեն մի գյուղական կոմյերիտական ինքը կարող է շատ սարսափելի պատմություններ անել կուլակների կողմից սոցիալիստական շինարարության դեմ մղվող դաժան պայքարի մասին։ Միայն 1928 թ. աշնան յերկու ամիսների ընթացքում (ոգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը) լրագրերում զետեղված են 44 սպանության և 38 մահափորձի դեպքեր։ Ո՞վ է սպանում—կուլակը կամ իր վարձկանը։

Դժբախտաբար, գյուղում դեռևս կա միջակների և նույնիսկ չքավորների այնպիսի մի հետամնաց մաս, վոր կուլակի թակարդն է ընկնում, նրա ասածով է բռնում, ճչում, հոգին նրան է ծախում։ Այսպիսի միջակներին ու չքավորներին այլ կերպ չի կարելի անվանել, քան կուլակի լակ լակողներ։ Խորամանկ կուլակը յերբեմն ինքն անձամբ իր ձեռքերը չի ներկում չքավորների արյունով, հարբած ու ծախու հարևաններից մարդասպան վարձելով է բանը տեսնում։ Խոսք չկա, վոր կուլակների պաշտպաններին ամեն մի քայլափոխում մենք պետք է մերկացնենք ու վտարենք կոմյերիտմիության շարքերից, ուր յերբեմն նրանց հաջողվում է խցկվել։ Ո՞ւմ են սպանում կուլակի վարձկանները։ Գյուղխորհրդի նախագահներին ու անդամներին, գըլխավորապես չքավորների ու բատրակների, կուսաշխատավորների ու կոմյերիտականների միջավայրից դուրս յեկածներին։ Կուլակը իմանում է, թե ում պետք է խփի—նա հարձակվում է գյուղական ակտիվի լավագույն մասի իսկական, սոցիալիզմ կառուցողների վրա։ Իր պայքարում կուլակն ոգտագործում է թե ողին, թե կրոնը, թե հրացանն ու ատրճանակը, թե մեր կազմակերպությունների մեջ խցկվելը և թե կոլտնտեսություններ հրդեհելու միջոցը։

Կարելի՞ չե արդյոք այս բոլորից հետո ասել, թե մեզ մոտ գյուղում դասակարգային սուր պայքար չկա, թե կուլակին պետք է թեթևացնենք։

Մեր կուսակցությունը գյուղում պետք է մանրամասն հաշվի

տանի այն, ինչ վոր այնտեղ կատարվում ե, վոչ մի քայլ հետ չնա-հանջի գյուղի սոցիալիստական վերաշինության համար մղվող հա-մառ պայքարից։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յերբեմն գյուղական ժողովներում այսպիսի մի խոսակցություն կարելի յե լսել—«Մենք բոլորս հող ենք ճանկռում, բոլորս տրեխ ենք հագնում և անտեղի չեն իրենցից ինչ վոր կուլակ ու չքավոր հանում։ Մենք բոլորս ել գյուղացիներ ենք, պրծավ գնաց։ Յեվ այս բանը շա-րունակ կուլակները չեն ասում—միջակների և նույնիսկ չքավորների մի մասն ել ե այսպես մտածում։ Բայց վո՞ր չքավորն այսպես կարող ե մտածել, յերբ նրա աչքի առաջ սրվում ե դասակարգային պայքարը գյուղում։ Պարզ ե, վոր այսպես կարող ե ասել միայն չքավորության ամենահետամնաց ու մոռացված մասը, հենց այն չքավորները, վորոնք ընկել են կուլակների կապանքների մեջ։ Յեվ յերբ չքավորներից մեկն ասում ե, թե գյուղում բոլորն ել հավասար են, վորովհետև բոլորն ել գյուղացիներ են, այսպիսով նա օգնում ե կուլակին, կուլակի գործ ե կատարում, դառնում ե կուլակի պաշտպան։

Իսկապես՝ կուլակին շատ ձեռնտու յե թագնվել գյուղական հա-սարակության հետևն ու այնտեղից բղավել—«Մենք բոլորս ել հավա-սար ենք, բոլորս ել մի հաց ենք ուտում, բոլորս ել տրեխ ենք հագ-նում»։ Նրան ձեռնտու յե խցկվել նաև աշխատավորության շարքերը, վոր ֆին-տեսուչը չխանգարի նրան աշխարհում ապրել և վոր խոր-հուրդը նրան ձայնից չզրկի։ Իսկ միջակների և նույնիսկ չքավորների մի մասը ընկնում ե կուլակի այս թակարդը և առանց բանն իմանա-լու, նույնպես բղավում ե. «Մենք բոլորս ել հավասար ենք, մեզ հետ գործ չունենք»։

Բայց գյուղական յերիտասարդության առաջավոր մասը—կոմ-յերիտմիությունը—չի կարող ուժանդակել կուլակների պաշտպաննե-րին։ Ընդհակառակը՝ կոմյերիտականները վճռական [illegible]-մղեն կուլակային դատողությունների դեմ և ան[illegible] ընդունելու համար ու գործնականում կիրառեն կուսակ[illegible] կոոպերացիային և այլ կազ-

Իսկ կուսակցության գի[illegible]ղորական իմբակները ձգտում են այն տեսյալ խոսքերով... «[illegible]ակերպությունների բոլոր աշխատանքներում ցու ենց[illegible]րի շահերն առաջին հերթին բավարարվեն։ Կուլակը զրկվում [illegible]ընտրողական իրավունքից, կուլակը սահմանափակված ե բարդակ-

հաշիվ ունենք—համառ պայքար՝ մինչև նրան կատարյալ կերպով հաղթանակելը, մինչև այն կարգերի կատարյալ փոփոխումը, որոնց շնորհիվ կարող են աճել կուլակները։

Գյուղում քաղաքի բանվորությանն ամենամոտիկը գյուղատնտեսական բանվորներն են (բատրակները, հովիվները, փայտահատները) խորհրդային տնտեսությունների բանվորները և այլք։

Գյուղատնտեսական բանվորին կարելի չէ քաղաքի պրոլետարի գյուղական ցեղբայր անվանել։

Հողատատի բանվորները պրոլետարական փոքրիկ ջոկատներ են՝ ցիրուցան ցրված գյուղերի մի անսահման տարածության մեջ, որոնք դեռևս ամբողջապես բաղկացած են գրեթե մանր սեփականատերերից։ Այս գիրքը նրանց հսկայական նշանակություն է տալիս — խորհրդային տնտեսության բանվորը, բատրակն ու հովիվը այն հաղորդիչն են հանդիսանում, որով քաղաքի պրոլետարի ազդեցությունը հաղորդվում է մեր գյուղին։ Դժբախտաբար, մեր գյուղատնտեսական պրոլետարիատը քաղաքականապես դեռևս շատ թույլ է պատրաստված, թույլ է կազմակերպված, ուստի և չի կարող միանգամայն գլուխ հանել իր առաջ ծառացած խնդիրներից։

Սակայն այս դեռ չի նշանակում, թե մատների արանքով պետք է նայել նրան։ Ընդհակառակը՝ պետք է հենց, տաս անգամ ուժեղացնենք մեր ուշադրությունը գյուղատնտեսական բանվորների վրա և անհրաժեշտաբար ձգտենք այն բանին, որ կուսբջիջներում, կոմյերիտմիության մեջ. խորհուրդներում ու կոոպերացիայում նրանք ավելի ու ավելի ուժեղացնեն իրենց ազդեցությունը։

Խորհրդային տնտեսությունների շինարարության ծավալման հետևանքով գյուղական բանվորների դերը կմեծանա, և մեր բոլոր գյուղական կազմակերպությունները պետք է ձգտեն այն բանին, որ գյուղատնտես բանվորների միությունը դառնա պրոլետարական ազդեցության խոշոր հաղորդիչը գյուղին և իր շարքերից գյուղական լավագույն աշխատավորներ տա։ Չպետք է մոռանաք, որ գյուղատըն-վի լավագույն մասերի թիվը մեզնում հասնում է 3 միլիոնի. մինչև պայքարում կուլակին [illegible] թիվը բատրակության շարքերում հասնում է հացանկն ու առընթանակը, թե մեր կազ[illegible] դառնա պրոլետարական գիկըը և թե կոլտնտեսություններ հրդեհելու մի[illegible]ոնն ու կոմյերիտմիու-

Կարելի՞ չէ արդյոք այս բոլորից հետո ասել, թե [illegible] որ բոլոր[illegible]դում դասակարգային սուր պայքար չկա, թե կուլակին պետք է [illegible]թեացնենք։

Մեր կուսակցությունը գյուղում պետք է մանրամասն հաշվի

Գյուղատնտեսական բանվորներն արդեն գյուղացիներ չեն։ Յեթե նրանցից մեկն ու մեկը մի չնչին կտոր հող ունի, պետք է ասել, վոր այս հողի յեկամուտը շատ չնչին է և աշխատավորական կյանքում մեծ հենարան լինել չի կարող։

Բատրակի ու միջակի միջև կանգնած է չքավորը։ Չքավորը կիսով չափ բանվոր է։ Հողի յեկամուտը նրան չի բավականացնում, նա չի կարող առանց կողմնակի աշխատանքի ապրել։ Առանց բանվոր դասակարգի ոգնության, առանց սոցիալիստական գյուղի, չքավորը վոչ մի դուռ չունի։ Կապիտալիզմի որոք նա մի ճանապարհ ունի—կուլակի առաջ մեջք կռացնել, գնալով՝ հիմնահատակ քայքայվել ու հետո բատրակ դառնալ կամ գնալ քաղաք։ Ուստի յեվ չքավորությունը հանդիսանում է պրոլետարական իշխանության հենարանը գյուղում։ Միջակն իր աշխատանքով է ապրում, բայց նրա տնտեսությունը չքավորի տնտեսությունից ուժեղ է։ Միջակի մասին չի կարելի ասել, թե նա կիսով չափ բանվոր է։ Բայց կուլակը միջակին էլ է ճնշում. ուստի և միջակը բանվոր դասակարգի հետ մի ընդհանուր շահ ունի—ազատագրվել կապիտալի լծից։ Ահա թե ինչու պրոլետարը միջակին իր դաշնակիցն է համարում և ամեն կերպ ամրապնդում է այս դաշինքը։ Այնուամենայնիվ, միջակը մանր սեփականատեր է։ Վաղուց արդեն ասված է, թե մանր սեփականատիրոջ կրծքի տակ յերկու հոգի կա—աշխատավորի հոգի և տիրոջ հոգի։ Իբրև սեփականատեր, միջակը յերբեմն տատանվում է հօգուտ կուլակի։ Ուստի և բանվորա-գյուղացիական Միությունն այն ժամանակ միայն կարող է հասնել իր հիմնական նպատակներին, յերբ այդ Միությանը պրոլետարիատը ղեկավարի։

Յեվ այսպես՝ բանվոր դասակարգն ու իր կոմունիստական կուսակցությունը գյուղում հենվում են չքավորի վրա, դաշինքը միջակի հետ ամրապնդում են և աննկուն պայքար են մղում կուլակի դեմ։

Ի՞նչով է արտահայտվում այս քաղաքականությունը գործնականում։ Վերցնենք, որինակի համար, հարկը. չքավորը բոլորովին ազատ է հարկից, միջակին զանազան արտոնություններ են տրվում, իսկ կուլակները վճարում են ամբողջ հարկի մոտ կեսը։ Վերցնենք հողաշինարարությունը—չքավորինը ձրիաբար է, միջակինը՝ արտոնություններով։ Կոոպերացիան չքավորներին իր մեջ ընդունելու համար հատուկ միջոցներ ունի։ Խորհուրդներին, կոոպերացիային և այլ կազմակերպություններին կից չքավորական խմբակները ձգտում են այն բանին, վոր այս կազմակերպությունների բոլոր աշխատանքներում չքավորների շահերն առաջին հերթին բավարարվեն։ Կուլակը զրկվում է ընտրողական իրավունքից. կուլակը սահմանափակված է բատրակ-

ների աշխատանքի պաշտպանություն, հողի վարձակալության օրենքներով։

Իհարկե, գործնականում այնպես էլ է լինում, որ կուլակն ոգտվում է այն բանից, ինչ որ օրենքով չքավորին է հասնում, և, ընդհակառակը՝ չքավորն ոգնություն չի ստանում։ Հո զուր չեն ասել, թե՝ «վարդն առանց փշի չի լինի»։ Քի՞չ անպիտան, ծախու և անհասկացող մարդիկ կան մեր խորհրդային հիմնարկներում, որոնց առնում ու խաբում են։ Այս բանի դեմ պայքար պետք է մղենք և լավ իմանանք, որ այս բոլորը կուսակցության և Խորհրդային իշխանության գծի խախտումն ու աղավաղումն է։

Իր ամբողջ աշխատանքով բանվոր դասակարգը գյուղում մի հիմնական նպատակի — գյուղատնտեսության սոցիալիստական աստիճանական վերաշինության է ձգտում։ Հենց այս բանի համար էլ անհրաժեշտ է պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքը, որպեսզի պրոլետարիատը կարողանա իշխանությունն իր ձեռքում պահել ու սոցիալիզմ կառուցել։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու այժմ ավելի չի բորբոքվել դասակարգային պայքարը գյուղում։
2. Ինչու կուսակցությունը միատեսակ չի վերաբերվում գյուղի բոլոր բնակիչներին։

ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՀԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

1929 թ. մայիսին Խորհուրդների Համամիութենական համագումարը հաստատեց մեր վողջ ժողովրդական տնտեսության զարգացման առաջիկա հինգ տարվա ծրագիրը։ Այս ծրագրով, համաձայն մեր տնտեսական կյանքի բոլոր կողմերի ուշադիր հաշվառման, ընդգծված է, թե ինչպես պետք է զարգանա մեր գյուղատնտեսությունը, որ մեր յերկիրը վորքան կարելի յե շուտ ազատվի հետամնացությունից ու աղքատությունից։

Այժմ մեզնում ընդամենը 75 միլիոն տոնն հացահատիկ է ստացվում, իսկ հինգ տարուց հետո 100 և նույնիսկ 106 միլ. տոնն կստացվի։ Գյուղը կկարողանա քաղաքին յերկու անգամ և դեռ էլ ավելի հաց ծախել, քան հիմա յե ծախում։

1926—27 թ. ամբողջ ապրանքային հացը 600 միլ. փութ էր, իսկ հնգամյա պլանի վերջում կլինի 1 կամ նույնիսկ $1\frac{1}{4}$ միլիարդ փութ (171—196 միլ. ցենտներ)։

1926—27 թ. խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները տալիս էին ամբողջ ապրանքային հացի միայն $^1/_{17}$ մասը (6%), չերեքքառորդը միջակներն ու չքավորներն էին տալիս, իսկ մնացածը (20%) կուլակների շուկա հանած հացն էր։

Հնգամյա պլանի վերջում խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները կտան ամբողջ ապրանքային (ծախու) հացի համարյա կեսը (43%)։

1926—27 թ. խորհրդային ու կոլ-տնտեսությունները մոտ 38 միլ. (37,8 մ.) փութ ապրանքային հաց, իսկ 1932—33 թ. կտան 67—84 միլ. ցենտներ։

Ավելի ծախու հաց կտան նաև անհատական տնտեսությունները։ 1927—28 թ. նրանք 2,772 միլ. ռուբլու հաց չին ծախել, իսկ 1932—33 թ., նույն գներով հաշված, կարող կլինեն 4,110 միլ. ռուբլու ծախել։

Բամբակի և վուշի բերքը կբարձրանա ավելի քան չերկու անգամ։

Անասունների—բանող ձիերի, կովերի ու վոչխարների թիվը կավելանա մեկ հինգերորդով, իսկ խոզերինը՝ կիսովչափ։

Այժմ մեր չերկրում 36000 տրակտոր է աշխատում, իսկ հնգամյակի վերջում անհամեմատ ավելի շատ կաշխատի։

Շատ կավելանա նաև գյուղատնտեսական մեքենաների թիվը։

Այս հինգ տարվա ընթացքում բերքատվությունը պետք է 30—35%-ով (այսինքն՝ մեկ չերրորդականով) բարձրացնել։ Այս մասին Խորհրդային կառավարությունը 1929 թ. դեկրետ է հրատարակել։ Բերքի այսպիսի մի բարձրացում հնարավոր է այն դեպքում միայն, չերբ բոլոր տնտեսություններն արորը գութանի փոխեն, չերբ բոլոր տնտեսությունները սերմազտում ու տեսակավորում կատարեն, չերբ ամբողջ սերմացուն խտակված, իսկ ամբողջ ցանքատարածությունը մաքրված լինի մոլախոտերից։

Գյուղացիական տնտեսությունները մենատնտեսությամբ այս խնդիրները գլուխ բերել չեն կարող և կմնան այժմյան չնչին բերքատվության հույսով։ Մեր չերկրում 20 միլիոնից ավելի՝ ցիրուցան ընկած անհատական գյուղացիական մանր տնտեսություն կա։ Այստեղ տնտեսությունները պապենական ձևով, հին գործիքներով են վարվում—Խորհրդային Միության մեջ դեռևս 5 միլիոն արոր կ գործածվում, սերմացուն չի տեսակավորվում, չի զտվում, անասունների ցամե-

րը ցուրտ են, անասունները գիտական ձևով չեն կերակրվում, այլ աչքի չափով են կերակրվում։

Անհատական գյուղական մանր տնտեսությունների բերքատվությունն ու յեկամուտը կարելի ե բարձրացնել մի շարք պարզ միջոցներով — սերմացուն զտելով, մեքենաներ, գյուղատնտեսական նոր գործիքներ ու քիմիական պարարտանյութ ձեռք բերելով։ Այս մասին մենք խոսեցինք նախորդ գլուխում։

Խորհրդային իշխանությունը, շնորհիվ մեր արդյունաբերության զարգացման, ոժանդակում ե գյուղատնտեսության այս վերելքին։

Գյուղին հիմա յել արդեն 2¼ անգամ ավելի են մեքենաներ մատակարարվում, քան պատերազմից առաջ։ Ընթացիկ տարում արհեստական պարարտանյութ արտադրված ե 175 հազար տոնն, իսկ պատերազմից առաջ շատ ավելի քիչ եր։

Սակայն, անհատական գյուղացիական մանր տնտեսությունները չեն կարող իրենց արտադրությունը բարձրացնել այն չափով, վոր մեր վողջ տնտեսության զարգացման համար և հարկավոր ե վոր հնգամյա պլանով և նախատեսնվում։ Յեթե գյուղն առաջվա պես մնա 26 միլիոն անհատական մասնավոր տնտեսությունների բաժանված, չի կարող հաղթահարել իր դարավոր հետամնացությունը։

Կոմունիստական կուսակցությունը պայքարում ե՝ վոչնչացնելու քաղաքի և գյուղի միջև յեղած տարբերությունը։ Այս բանի համար քիչ ե այնպիսի մի բարձրացում, վոր կարող են ձեռք բերել գյուղացիական անհատական տնտեսությունները։

Այս բանի համար հարկավոր ե գյուղը վերաշինել, բաժան-բաժան յեղած գյուղացիական մանր տնտեսությունները համախմբել հասարակական խոշոր՝ կոլեկտիվ տնտեսության մեջ։

Թե կոլեկտիվ տնտեսության մասին գյուղացուն հարցնես, նա քեզ կպատասխանի, վոր յերկու յեղբայր ել միասին չեն ապրում — իրարից բաժանվում են, վոր չի ուզում կոլեկտիվի հետ մի ընդհանուր ամանից հաց ուտել։

Բայց խնդիրն ընդհանուր ամանը չի — կոլեկտիվում ել ամեն մարդ կարող ե ուտել ու հագնվել այնպես, ինչպես ինքն ե ուզում։ Ամենագլխավորն այն ե, վոր մանր տնտեսությունները միանան, վորպեսզի կարողանան միասին աշխատել, միասին ինվենտար, մեքենաներ, զտած սերմացու ձեռք բերել։ Իսկ մենակ, մանավանդ չքավոր տնտեսության մեջ, բարդ մեքենա ձեռք չես քցի։ Յեվ վոչ միայն հնարավոր չե անհատական մանր տնտեսության մեջ բարդ մեքենա ձեռք քցել, այլ և այնտեղ հնարավոր չեն կիրառել նաև հողագործությունը

բարելավելու շատ պարզ միջոցներ։ Վերցնենք, օրինակի համար, մելիորացիան, այսինքն՝ մարգագետինների բարելավումը, ճահիճների չորացումը։ Այս մելիորացիայի կատարումը բարձրացնում է անհատական գյուղացիական տնտեսությունները, բայց կատարել մելիորացիան մենատնտեսությամբ, առանձին տնտեսությամբ, անհնարին է։

Ուստի և, իսկապես բարձրացնելու համար, անհատական գյուղացիական տնտեսությանը պետք է այս կամ այն չափով անցնել հասարակական կոլեկտիվ տնտեսությունների ձևի։

ԳՅՈՒՂԻ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

Հարյուրավոր տարիներ ամեն մի գյուղացի մենատնտեսությամբ է աշխատել։ Գյուղացու տնտեսությունը թեև մեծ չի — մի ձի, մի կով, մի սայլ, մի արոր ու մի խրճիթ է, բայց և այնպես գյուղացին վախենում է այս փոքրիկ տնտեսությունից էլ զրկվել։ Դուք արդեն կարդացել եք, թե կապիտալիզմի օրով կուլակները գյուղացիներին թալանելով, ինչպես էին նրանց քարուքանդ անում այն աստիճան, որ զրկվելով հողից ու վերջին անասունից՝ գյուղացին գյուղը թողնում-գնում էր քաղաք կամ կուլակին բատրակության մտնում։ Հենց այն օրից գյուղացին սաստիկ վախենում է տնտեսությունը ձեռքից հանել։ Ահա այս պատճառով Լենինը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սովորեցնում էր, թե՝ որպեսզի գյուղացին կոլեկտիվ խոշոր հողագործության անցնի, պետք է նրան պարզ ու հասկանալի ճանապարհ ցույց տալ։ Պետք է գյուղացուն համոզել, որ կոլեկտիվ-խոշոր տնտեսությունն իրեն ավելի ձեռնտու է, քան սեփական մանր ու խղճուկ տնտեսությունը։

Ահավասիկ հենց այսպիսի ճանապարհ է ցույց տալիս գյուղի կոոպերացիան գյուղացուն։

Օրինակ, վերցրեք սպառողական կոոպերատիվը։ Այստեղ տերերը — անդամները, փայատերերն են։ Գյուղացիները համախմբվելով ու փայեր մուծելով՝ յոլա են գնում առանց դուքանչու — կուլակի, որ իրենց հաշվին է հարստացել։ Սպառողական կոոպերատիվը մասնավոր առևտրականից թե լավ և թե էժան ապրանք է քաղաքից գյուղ տանում։ Ամեն մի գյուղացի տեսնում է, որ առանց խանութպանի կարելի է ապրել, որ գյուղացիներն իրենք կարող են կազմակերպել գյուղի մատակարարումը քաղաքի ընկերների միջոցով։ Իսկ եթե կոոպերատիվում պատահում են էլ հաշվի մեջ խաբելու դեպքեր, զեղծումներ ու պատահում են վատ ապրանքներ, պետք է ասել, որ պատճառն այն

չէ, որ այս գործը գյուղացիներն իրենք չեն կառավարում, այլ այն է, որ կոոպերատիվի աշխատանքներին նրանք դեռ քիչ են հետևում, կոոպերատիվներին քիչ են օգնում իսկ յերբեմն էլ այնտեղ անվստահելի մարդիկ—կուլակներ, նախկին դուքանչիներ, հարբեցողներ են գնում։ Իսկ գյուղի ապրանքի պակասության պատճառն այն է, որ մեր ֆաբրիկներն ու գործարանները դեռևս բավարար չափով ապրանք չեն պատրաստում։

Գյուղացիներին դեպի նոր գյուղ ավելի լավ ճանապարհ է ցույց տալիս գյուղատնտեսական կոոպերացիան։

Այսպես են կոչվում գյուղացիների միավորությունները, վորոնք հիմնվում են արտադրանքը միասին սպառելու, նոր գործիքներ—գութան, հնձող մեքենա, սերզատ գնելու, իրենց գյուղացիական արտադրությունը միասին կազմակերպելու, խոշոր մեքենաներ տարածելու, ընդհանուր աղացներ, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող գործարաններ կառուցելու համար։ Այդ կոոպերացիան օգնում է գյուղացուն իր տնտեսությունը վարել առանց ապրանքառուի—մասնավոր առևտրականի, առանց կուլակի, վոր ճորտացնող պայմաններով մշակում էր անզեն չքավորների հողը։

Գյուղատնտեսական կոոպերացիան նպատակ է դնում վերջ ի վերջո համախմբել գյուղացիական առանձին տնտեսությունները խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ։

Այսպիսի մի կոոպերատիվ կարելի յե փոքր բանով, որինակ՝ վուշով, կանեփով, կարտոֆիլով սկսել։ Իսկ հետո կարող յե անցնել գյուղացիական տնտեսությանն ավելի ու ավելի օգնություն ցույց տալու և տնտեսությունները համախմբելու գործին։ Կարող է, արտադրությունը լավացնելու համար, սերմացու և մեքենաներ գնելու գործ սկսել։ Կարող է կազմակերպել այնպիսի աշխատանքներ, վորոնք անհատական գյուղացիական տնտեսությանն անմատչելի յեն (մելիորացիան չմոռանաք)—աղացներ, գյուղացիական տնտեսությունների արտադրած մթերքներ վերամշակող գործարաններ (որինակ, ոսլայի գործարան) կառուցել։

Ահավասիկ գյուղատնտեսական կոոպերացիան է, վոր չքավոր ու միջակ գյուղացուն անց է կացնում կոլեկտիվ տնտեսության ձևին։

Մեքենաօգտագործական ընկերությունները, ձիաբուծական, սերմնաբուծական, բանջարաբուծական, այգեգործական, միասին հող մշակող ընկերությունները, այս բոլորը գյուղացիների այնպիսի միավորություններ են, վորոնք հիմնվում են այն պատճառով, վոր մեքենաներ արտադրող, ազնվացեղ այգրներ միասին ձեռք բերելն է օգտա-

գործեն, ընտիր տեսակի սերմացուներ բազմացնեն և այլն։ Նրանք արդեն ընդհանուր գույք՝ տնտեսության ընդհանուր մասնիկ ունեն։

Օրինակ, վերցնենք միասին հող մշակող ընկերությունները։ 1928 թ. նրանց ինվենտարի (գութան, տեսակավորող ու հնձող մեքենաներ և այլն) 3/4 մասը ընդհանուր էր, իսկ աշխատող անասուններից՝ 1/3 մասը։

Ահավասիկ, կոոպերատիվը այս ճանապարհն էլ գյուղի զարգացման սոցիալիստական ճանապարհն է։

Բայց գյուղացիների կոոպերատիվ միավորություններ կան նաև արտասահմանում, վորտեղ թե քաղաքում և թե գյուղում տեր ու տիրականը կապիտալիստներն են։ Նրանց կոոպերատիվներից ամենաշատ օգուտը դարձյալ հարուստ գյուղացին ու կապիտալիստն են ստանում։

Կապիտալիստներին են պատկանում ֆաբրիկներն ու գործարանները, բանկերը, առևտուրն ու ընտիր հողերը։ Ուստի և նրանց հաջողվում է կոոպերատիվները թե իրենց յենթարկել և թե իրենց շահերի համար օգտագործել։

Այլ բան է մեր յերկրում։ Լենինը 1923 թ. կոոպերացիայի մասին մի հոդված է գրել, վորի մեջ ասում է, թե պրոլետարիատի դիկտատուրայի օրով, յերբ թե ֆաբրիկները, թե գործարանները, թե բանկերն ու թե հողը պատկանում են բանվորական իշխանության— կոոպերացիան արմատապես տարբերվում է կապիտալիստական յերկրների կոոպերացիայից։ Մեր յերկրում կոոպերացիայի միջոցով չքավորին ու միջակին օգնելով, նրանց տնտեսությունները համախմբելով՝ մենք կարող ենք գյուղը վերակառուցել խոշոր կոլեկտիվ տնտեսությունների հիմունքներով։

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Կուսակցության XV համագումարում ընկ. Մոլոտովը պատմում էր, վոր «Беднота» թերթի խմբագրությունը գյուղացիներից յերբեմն նամակներ է ստանում, վորոնց մեջ գրում են. «Մեր հողը վերցրեք, խոշոր տնտեսություններ կազմակերպեցեք և մեզ բանվորներ դարձրեք։ Բավական է մենք տանջվենք մեր անպետք տնտեսության վրա»։ Իսկապես, գյուղի աղքատությունը հիմնովին արմատախիլ անելու համար գյուղացիական մանր տնտեսությունից, խոշոր, միատեղ տնտեսության պետք է անցնել։ Յեվ այժմ ավելի ու ավելի շատ գյուղացիներ յեն հասկանում անցման անհրաժեշտությունը։ Ավելի շատ

գյուղացիական տնտեսություններ են միանում միասին վարելու գյուղատնտեսական արտադրությունը։ Նրանք միացնում են հողը, բանող անասունը, ինվենտարը, մեքենաներն ու սկսում են միասին աշխատել։ Մի քանի տասնյակ բաժան բաժան չեղած, անպետք տնտեսությունների փոխարեն ստացվում ե կոլեկտիվ (ընդհանուր) խոշոր տնտեսություն, կամ ինչպես կրճատ ասում են՝ կոլտնտեսություն։ 1928 թ. սկզբին՝ Խորհրդային Միության մեջ արդեն $32\frac{1}{2}$ հազար կոլտնտեսություն կար։ Այս տնտեսությունների մեջ միջին թվով մտնում եյին յուրաքանչյուր հարյուր գյուղացիական տնից 2 տուն (2%-ից ավելի)։ Կոլտնտեսություններն իրանց մեջ միացնում եյին մեկ միլիոնից ավելի ուտող բերաններ։

Իսկ 1928 թ. ընթացքում կոլտնտեսությունների թիվը համարյա $2\frac{1}{2}$ անգամ ավելացավ։ Կոլտնտեսություններ են համարվում՝ գյուղատնտեսական կոմունաները, արտելներն ու միասին հող մշակող ընկերությունները։ Այս բոլորը կարելի յե յերկու մասի բաժանել—կոլտնտեսություններ, վորոնց մեջ վողջ գյուղատնտեսական աշխատանքը միասին ե կատարվում, և կոլտնտեսություններ, վորոնց մեջ ամբողջ աշխատանքը դեռևս միասին չի կատարվում։ Կոմունաներում ամբողջ աշխատանքը միասին են կատարում. կոմունայի վոչ մի անդամ առանձին չունի վոչ ինքնուրույն ցանքս, վոչ սեփական անասուն և վոչ էլ սեփական գործիքներ—այս բոլորը գտնվում ե կոմունայի ընդհանուր սեփականության։ Ամբողջ աշխատանքը կատարվում ե կոմունայի վարչության ցուցմունքներով։ Իսկ կոմունայի բոլոր անդամները միանման աշխատանքի համար կոմունայից ստանում են հավասար չափով։

Արտելներում նույնպես ընդհանուր են՝ հողը, բանող անասունները, մեքենաները, գործիքներն ու արտելի անդամների աշխատանքը։ Արտելի անդամների սեփականություն մնում ե այն, ինչով վոր վարում են իրենց տնային տնտեսությունը—կովերը, վոչխարները, թռչունները, շենքերը։ Աշխատանքներից շատը կատարելու համար արտելի անդամները հաճախ մասնակից են արվում նաև տուն-գլուխ, այսինքն իբրև առանձին տնտեսությունների ներկայացուցիչներ։ Հասարակական հողամշակման ընկերությունների մեջ գյուղացիները միացվում են միայն միասին դաշտաբուծության համար։ Ընկերությունների մեջ են միանում հողամասերը, խոշոր գյուղատնտեսական մեքենաներն ու դաշտաբուծական ընկերությունների անդամների աշխատանքները։ Իսկ մնացած ամբողջ գույքը (բանող անասուն, կով, գյուղատնտեսական մանր գործիքներ, շենքեր) մնում են ընկերության անդամների սեփականություն։

Հապա լսեցեք, թե ինչպես է աշխատում Տուլայի նահանգի «Կրասնիկ-Մեչենսկի կոոպերատիվ ընկերություն» կոմունան: Ընկերությունը կազմակերպվեց չորս միջոցներ ու ինվենտար չունեյին, ձիերը հերիք չեյին անում ու հողը վատ եր: Այժմ ընկերությունը 1012 հեկտար (մոտ 900 դես.) հող ունի: Կիրառվում է 9 դաշտային սիստեմը — ցանվում է շաքարի վարսակ, սիսեռ, կորնգան: Սկզբում ընկերության կապիտալը 548 ռ. եր, իսկ 1925 թ. հունվարի 1-ին փայատիրական դրամագլուխն արդեն հասավ 12,250 ռուբլու: Բացի այս՝ անբաժանելի դրամագլուխը 12000 եր, ընդամենը մոտ 25000 ռուբլի:

Ընկերության մեջ մտնողն իր ամբողջ գույքը դնում է ընկերության մեջ, սոսորագրություն է տալիս, վոր վարչությանն յանձնարարում է իր շինչապատական հողը միացնի ընդհանուր հողամասին, պարտավորվում է իրեն համար առանձին հողամաս չպահել ու չենթարկվում է դիսցիպլինային:

Ընդհանուր ժողովում ընկերության ամեն մի անդամ լիակատար տեր է հանդիսանում: Աշխատանքի ժամանակ ամեն մեկը պարտավոր է յենթարկվել նրանց, վորոնց ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված է ղեկավարել տնտեսության այս կամ այն մասը:

Ամեն մեկն աշխատում է ինչպես վարձու աշխատավոր, աշխատավարձ ստանալով հողանտառ աշխատավորների միության 17-րդ կարգի ցանցով: Նա միաժամանակ հանդիսանում է թե տեր և թե աշխատող: Աշխատավարձը հաշվվում է որական 8 ժամվա աշխատանքի համար, ամսական 24-ական որ: Ձմեռն աշխատում են 7-ը ժամ, իսկ ամառն ստիպված են լինում որական 12 և նույնիսկ 14 ժամ աշխատել: 8 ժամից ավելի կատարած աշխատանքի համար մեկ և կես գին է գրվում:

Յուրաքանչյուրի աշխատավարձի այսպիսի հաշվարկում արվում է վոչ թե այն պատճառով, վոր ամեն մեկը ղրանով ստանա այն, ինչ վոր մի ամսում աշխատել է: Յուրաքանչյուրի աշխատանքի չափն է այս: Ամեն մեկն ստանում է գործ դրած աշխատանքի չափով, բայց վոչ անպայման դրամով, այլ մթերքներով, կամ վորևե ուրիշ բանով: Զուտ յեկամուտը տարվա վերջում այսպես է բաժանվում — 1/5 մասը գրվում է անբաժանելի դրամագլխի մեջ (մեքենաներ, անասուն, շենքեր և այլն գնելու համար): Այս անբաժանելի դրամագլուխը վոչ մի դեպքում չի կարող բաժանվել փայատերերի միջ:

Յեկամտի $^1/_{10}$ մասը գնում է պրեմիաների (պարգևներ) վրա՝ [illegible] աշխատանքի համար. Մնացածը բաշխվում է կենդանի միացններ:

Ամեն մի ընտանիք ապրում է բոլորովին ինքնուրույն, առանձին ծախսով և ունի առանձին բնակարան։ Ընկերության անդամների բնակարանը, վառելիքը, լուսավորությունը, բժշկությունը և ուտումը ընդհանուրի հաշվին է լինում։ Ամեն մեկը կարող է օգտվել ընկերության գույքից։ Օրինակ՝ մեկին ձի չե հարկավոր՝ հյուր գնալու համար. նա վերցնում է, իսկ օգտվելու համար նրա վրա գրվում է օրական 90 կոպ։

Ընկերության անդամների յելքն ու մուտքը ավելացել է 3 անգամ՝ հանդեպ շրջապատող գյուղացիների։ Յեթե, օրինակ, մի այրի կին 4 յերեխա ունի, նա գյուղում չի կարող հող մշակել ու պետք է այն վարձով տա։ Իսկ ընկերության մեջ նա դարձել է կով կթող։ Ստանում է ամիսը 21 ռ., ու դեռ մի բան էլ ընդհանուր յեկամուտից կընկնի նրա կողմը։ Այսպիսով դուրս է գալիս, որ նա մի տարում պատրաստի բնակարան, վառելիք, լուսավորություն ու բժշկություն ստանալով՝ կստանա տարեկան մոտ 400 ռ., իսկ գյուղում նրա բոլոր յեկամուտը կլիներ 50—60 ռուբլի։[1]

Շնորհիվ այն բանի, որ խոշոր կոլտնտեսություններում բարդ մեքենաներ են գործածվում և օգտվում են հողի գիտական մշակումով, ուստի և կոլտնտեսությունների բերքը շատ ավելի բարձր է, քան գյուղացիական ոչ միայն չքավոր ու միջակ, այլ և ունևոր տնտեսությունների բերքը։

Ահավասիկ ձեզ մի պատկեր աշնանացան ցորենից։ Մեկ հեկտարից սակավազոր տնտեսությունն ստանում է $7\frac{1}{2}$ ցենտներ (դեսյատինից մոտ 51 փութ), միջակ տնտեսությունն ստանում է 10,8 ցենտներ (դեսյատինից մոտ 74 փութ), իսկ կոլտնտեսությունն ստանում է 12,9 ցենտներ (դեսյատինից մոտ $88\frac{1}{2}$ փութ։)

Այս պատկերն առարկայական կերպով ցույց է տալիս խոշոր կոլեկտիվ տնտեսության ձեռնտու լինելը։

Յեվ բացի այդ, կոլտնտեսության մեջ աշխատողը ժամանակն էլ է քիչ կորցնում, քան անհատական մանր տնտեսության մեջ։

Կոլտնտեսությունն այս բոլոր առավելություններն ունի այն պատճառով, որ այս տնտեսության մեջ միասին են աշխատում, իրենց տնտեսությունը միասին ու ծրագրված ձևով են վարում։

Ձեզ, յերևի, շատ օրինակներ են հայտնի, յերբ կոլտնտեսությունը կամ քայքայվում եր, կամ գործը շրջապատող տնտեսությունների գործից լավ չեր գնում։ Այս բանն ամենից հաճախ տեղի յե ունենում այն պատճառով, որ կոլտնտեսությունները մանր են լինում [illegible]

[1] Մ. Ի. Կալինինի զեկուցումից՝ ԽՍՀՄ-ի Խորհու...

գյուղացիների աշխատանքը քիչ են ընդգրկում, 10—15 տնտեսություն հավաքվում և ընկերություն են կազմակերպում ու միաժամանակ ամեն մեկը պինդ բռնում է նաև իր տնտեսությունը։

Ահա, օրինակ, միասին հող մշակող ընկերությունների անդամների միայն $^1/_3$ մասը բացառապես կոլեկտիվ ցանքս ունի, կեսից ավելին թե կոլեկտիվ ցանքս ունի, թե, բացի այդ, իր անհատական ցանքսը, իսկ $^1/_{10}$ մասը՝ միայն անհատական ցանքս։ Յերբեմն ընկերության առացած վարկերը բաշխվում են անդամների մեջ։ Նույնիսկ այն անասունը, որ կոլեկտիվ օգտագործման համար է ձեռք բերվում, հաճախ գրվում է անհատական տնտեսության մեջ։ Օրինակ՝ Ուկրայնայում ձիերի, կովերի մի յերրորդ մասից ավելին հանձնված է անհատական օգտագործման։

Ուստի և դուրս է գալիս, որ ինչքան խոշոր է կոլտնտեսությունը, որքան այնտեղ աշխատանքը միասին են կատարում, որքան գյուղացիք վճռականորեն են հրաժարվում իրենց անհատական մանր տնտեսությունից, նրանք այնքան ավելի օգուտ են ստանում կոլտնտեսությունից։

Համեմատեցեք, օրինակի համար, 1927 թ. բերքատվությունը.

ԴԻԱԳՐԱՄ

(Ցենտներով՝ մեկ հեկտարից)

	Աշնանացան հաճար,	Գարնան. ցորեն,	Վարսակ
Կոմունաներում	7,6	5,5	6,5
Արտելներում	6,8	4,8	5,7
Միասին հող մշակելու ընկերություններում	5,3	4,6	5,2
Անհատական տնտեսություններում	5,2	4,0	5,0

Ամենից շատ բերքը կոմունաներինն է, իսկ այնտեղ թե արտադրական գործիքներն են միասին բանեցվում և թե աշխատանքն է միասին կատարվում։

Իսկ ընկերությունների բերքը դեռևս քիչ է տարբերվում գյուղացիական տնտեսության բերքից։ Այլ ընկերություններում նույնիսկ պատահում է, որ բերքն ավելի քիչ է լինում, քան շրջակա գյուղացիների հողերի բերքը։

Ուստի և պետք է ձգտել, որ կոլտնտեսություններն ավելի խոշորանան, որպեսզի իրենց անդամների ամբողջ հողն ու գործիքները միացնեն։

Հիմա ավելի ու ավելի յեն մանր կոլտնտեսությունները միանում՝ գյուղատնտեսա պահելու, ընդհանուր ձեռնարկություններ կազմակերպելու, մի ընդհանուր ծրագրով աշխատելու համար։

Չե՞ վոր հասկանալի յե, վոր 15—20 տնտեսություններից կազմված կոլտնտեսությունը չի կարող վոչ գյուղատնտեսա պահել, վոչ էլ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող վորևէ գործարան կառուցել։

Ահա Վոլգայի նահանգի Տիգինսկի շրջանում 1928 թ. համախմբվեցին 18 կոլտնտեսություն, վորոնց մեջ մտնում եյին 2000 բնակչություն ունեցող 300 տուն։ Այս միավորությունը կոչվում է Տիգինսկի կոմբինատ։ Սկզբում այս կոմբինատի նպատակն էր միացյալ ուժերով գյուղատնտեսա պահել, բարդ մեքենաներ ոգտագործել։ Հետո, յերբ գործն սկսեց զարգանալ, այս միացյալ կոլտնտեսությունն սկսեց բոլոր կոլտնտեսությունների սպասարկման համար արդյունաբերական ձեռնարկներ կառուցել՝ յուղհան ու կաշվի գործարան, աղաց, կոշկակարանոց, դերձականոց ու նորոգման արհեստանոցներ։

Այժմ այս միացյալ կոլտնտեսությունը ներգրավել է գյուղացիական տնտեսությունների 40%-ը (համարյա կեսը). այս կոլտնտեսության մեջ մտնում է 24 գյուղ, ուր առաջ 867 անհատական տնտեսություն կար՝ 4600 բնակչությամբ։

ԿՈՒԼԱԿԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ո՞վ է գյուղում ամենից առաջ մտնում կոլտնտեսության մեջ. պարզ է, ամենից առաջ՝ չքավորները։ Դատարկ ձեռքով ինչպես հող մշակեն։ Ստիպված են կամ կուլակին ճորտ դառնալ, կամ համախմբվել ընդհանուր աշխատանքի համար։

1927 թ. կոմունաներում ձիազուրկների թիվը համարյա $^3/_4$ մասն եյին, իսկ բոլոր հետազոտված կոլտնտեսություններում՝ կեսից ավելի (65,6%)։ Մի ձի ունեցողները մի քառորդից ավելի եյին (26,3%), իսկ այնուհետև՝ կոլտնտեսությունների մեջ ավելի շատ չքավորներ և բատրակներ են մտել։

Վերջին տարիներս ավելի շատ միջակներն սկսեցին մտնել կոլտնտեսությունների մեջ։

Կոլտնտեսությունն ոգուտ է չքավորներին ու միջակներին, նույնիսկ նրանց, ովքեր դեռ կոլտնտեսության անդամ չեն։

Հետազոտված է 341 կոլտնտեսություն ու պարզված է, վոր հարևան գյուղացիական տնտեսությունների, գլխավորապես չքավորների համար կատարել են հետևյալ աշխատանքները.

Վարել են 2.800 հեկտար (2000 դեսյատինից ավելի), որի մեկ տասներորդական մասից ավելին՝ անվճար, իսկ կեսից ավելին՝ տարեփային վարձով։ Տեսակավորել են 410 տոնն սերմացու, որի 1/3 մասից ավելին՝ անվճար, իսկ համարյա մի քառորդ մասը՝ տարեփային վճարով։ Հնձել են 3600 հեկտար, որից 3/4 մասն անվճար, իսկ 1/4 մասը տարեփային վճարով։

Պարզ է, թե կուլակն ինչու է պայքարում կոլտնտեսության դեմ. չէ՞ որ կոլտնտեսությունների ամրանալով նա զրկվում է կապալով հող վերցնելու և գյուղի չքավորների ու միջակների ձրին աշխատանքից օգտվելու հնարավորությունից։

Ուստի և կուլակն ամեն կերպ խանգարում է կոլտնտեսությունների կազմակերպմանը։ Ցարսոլյակի նահանգում կուլակները գյուղացիներին վախեցնում են, թե կոլտնտեսություն ասածը մի ցերկլար կալվածատեր է. «Ձեզ, չքավորներիդ, պիտի հավաքեն, մի սայլ տակի բերեն ու կամիսարը ձիպոտը ձեռին հետևներից ու գլխներին կանգնի—հրամայի»։ Սիբիրում կուլակները գյուղացիներին հավատացնում են, թե՝ «մտաք ընկերության մեջ թե չէ՝ կդառնաք կալլոտնի ու ձեռքկապեն ամբին հացին»։

Բայց կուլակին հաճախ արդեն չի հաջողվում գյուղացիներին վախեցնել լուրերով։ Այն ժամանակ նա ձեռքից ընկածը չի խնայում կոլտնտեսությունը վնասելու։ Կուլակն ուտեցնում է կոլտնտեսության ցանքերը, հրդեհում է կոլտնտեսության անդամների շենքերը, կոլտնտեսությունների կազմակերպությունների դեմ ծեծեր է սարքում։

Ցերբեկին կուլակները կոլտնտեսությունների վրա մի շարք հարձակումներ են կազմակերպում—բռնի կերպով թույլ չեն տալիս հողաչափություն կատարել, հրդեհում են կոլտնտեսությունների հացը։

Սեմիպալատինսկի շրջանի «Մայիսի 1-ը» կոլտնտեսության վրա կուլակները ռազմական մի ամբողջ արշավանք են կատարել, քարուքանդ են արել ու թալանել կոլտնտեսության կայքը, բայց կուլակների այս բացարձակ յելույթներն էլ, իհարկե, չեն կարող կասեցնել կոլտնտեսական շարժումը։

Կուլակներն աշխատում են խցկվել կոլտնտեսության մեջ, որպեսզի օգտագործեն կոլտնտեսության շահերն՝ իրենց անհատական տնտեսության համար։ Կուլակները կոլտնտեսության մեջ խցկվելով՝ քայքայում են այն։

Տամբովի նահանգում 1923 թ. կար տաս տնտեսություններից բաղկացած՝ Տիշինսկի «Пахарь—Մաճկալ» ընկերություն, որից 7 տնտեսատեր ազգականներ եյին։

Ամբողջ տնտեսությունը 2 կուլակ էր ղեկավարում։ Երբ ընկերությունը զանազան մեքենաներ ու 10 ուժանոց շարժիչն ստացավ— ընկերությունը քայքայված էր, և շարժիչն ու մեքենաներն ընկան կուլակների ձեռքը։

Վոլոգոդսկի նահանգի Վելիկոդվորսկի գյուղատնտեսական արտելում դարձյալ կուլակներն էյին կառավարում։ Նրանք վարկեր, զանազան արտոնություններ ու մեքենաներ էյին ստանում, իսկ հացը գյուղատնտեսական ընկերությանը հանձնելուց հրաժարվում էյին։ Վարկով գութաններ էյին ստանում և ավելի գնով ծախում շրջակա գյուղացիներին։

Երբ կոլտնտեսություններում կառավարողները կուլակներն են, նրանք կոլտնտեսության մյուս անդամներին էլ են ստիպում իրենց համար աշխատել և մեքենաներն ոգտագործելու համար շրջապատող գյուղացիների կաշին են քերթում։

Հենց այս պատճառով էլ կուլակին չպետք է թողնել կոլտնտեսության մեջ, իսկ այնտեղ, ուր հիմնվում են այնպիսի կոլտնտեսություններ, վորոնց տերն ու տիրականը կուլակներն են լինում—նման կոլտնտեսությունները կամ պետք է զրկել պետական ոգնությունից ու արտոնություններից, կամ կուլակներին այնտեղից դուրս քշել։

ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Ինչպես տեսնում եք՝ կոլտնտեսական շարժումը Լենինի կոոպերատիվ պլանի այն մասն է, վորը վերջավորում է այն և իրոք հանդիսանում է գյուղի սոցիալիստական վերակառուցման պլանը։

Մենք այժմ ամուր կառչել ենք գյուղի վերելքի և վերակառուցման գործին։ Ուստի և մեր գլխավոր նպատակն է զարգացնել կոլտնտեսությունները գյուղում, հիմնել գյուղացիական տնտեսությունների նոր միավորություններ և խոշորացնել այն։

Սակայն կոլտնտեսական շարժումը զարգացնել կարելի յե այն դեպքում միայն, երբ աշխատավոր գյուղացիներն իրենք համաձայն լինեն, իսկ այս բանի համար գյուղացուն պետք է ցույց տալ կոլեկտիվ խոշոր տնտեսության ոգտավետությունը։

Այս ոգտավետությունը գյուղացուն առարկայական կերպով ցույց է տալիս գյուղատնտեսական կոոպերացիան, վոր աստիճանաբար միացնում է գյուղացիական տնտեսության մի մասը մյուսի հետևից։ Բայց վերջին տարիներս մեզնում ավելի ու ավելի յեն զարգանում աշխատավոր գյուղացիության լայն մասսաներին ամբողջ գյուղերով ու շրջաններով համախմբելու նոր միջոցները։

Ավելի ու ավելի մեծ նշանակություն է ունենում մեզնում կոնտրակտացիան: Կոնտրակտացիա կոչվում է այն պայմանագիրը, որ կընքում են գյուղացիները մի որևէ գործարանի կամ տրեստի հետ՝ վերջինիս հումք — ճակնդեղ, բամբակ, վուշ մատակարարելու համար, կամ կնքվում է պետական առևտրական մարմինների հետ՝ ցորեն, հաճար, վարսակ և այլն մատակարարելու համար:

Գործարանին անհրաժեշտ է, որ այս հումքը ժամանակին հասնի իրեն ու լավորակ լինի: Ուրեմն գործարանը շահագրգռված է, որ իրեն հումք մատակարարող գյուղացիական տնտեսությունների հողերը լավ մշակվեն: Ուստի գործարանը կամ գործարանների միավորությունը (տրեստ) պայմանագրի համաձայն գյուղացիներին լավորակ սերմացուներ, պարարտանյութեր, գյուղատնտեսական մեքենաներ մատակարարում ու գյուղատնտեսներ է տալիս: Պայմանագրերով որոշվում են վարի ու բերքը հավաքելու պայմանները՝ այս նպատակի համար գյուղացիական տնտեսություններին մեքենաներ ու տրակտորներ տալու միջոցով:

Այս բոլորը գյուղացիներին մղում է հողի հասարակական մշակման ձևի անցնելուն — չէ՞ որ մի դեսյատին հողի մեջ տրակտոր քշելը ձեռնտու չէ:

Այսպես՝ կոնտրակտացման միջոցով պետական գործարաններն ու ֆաբրիկաները մեր երկրում գյուղացիներին նախապատրաստում են կոլեկտիվ ձևի անցնելուն: 1929 թ. կոնտրակտացիան ընդգրկել է մոտ 15 միլ. հեկտար (մոտ $13^1/_2$ միլ. դեսյատին) գյուղացիական հող:

Կոնտրակտացված ցանքսերի մշակման գործում գյուղացիներին օգնելու համար, կազմակերպվում են մեքենա-տրակտորակայաններ, որոնցից գյուղացիները տրակտորներ ու մեքենաներ են ստանում:

Այսպիսի մի մեքենա-տրակտորակայան, համաձայն գյուղացիների հետ կնքած պայմանագրերի, որ կազմակերպված է լինում կամ որևէ կոոպերացիայի և կամ որևէ պետական խորհրդային տնտեսության կողմից, — գյուղացիների վար ու ցանքսն անում, բերքը հավաքում ու կալը ծեծում է: Համաձայն պայմանագրի՝ գյուղացիները հողը մշակելու համար անհրաժեշտ բանվորական ուժ են տալիս ու մեքենա-տրակտորակայանին վճարում են բերքի մոտ $^1/_4$ կամ $^1/_3$-ը: Առաջին հայացքից թվում է, թե այսպես թանկ է, բայց չպետք է մոռանանք, որ հողը տրակտորով մշակելը բերքն ամբողջ մի չորրորդականով բարձրացնում է: Շնորհիվ մեքենա-տրակտորակայանների աշխատանքի, գյուղացին ազատվում է քիչ արդյունք տվող ժամանակիր աշխատանք-

ներից։ Շնորհիվ մեքենաներ գործածելու, գյուղացին 100 ռուբլու փոխարեն կարգադրով (НАРЯД) ընդամենը միայն 15 ռբ է վճարում և կարող է իր աշխատանքը դնել այգեգործության, բանջարաբուծության ու անասնաբուծության վրա։

Ուկրաինայի այն շրջաններում, ուր տրակտորների ջոկատներ եկին աշխատում, վերջին ժամանակներս նկատվում է խաղողի այգիների զարգացում։

Այսպիսով՝ տրակտորների ջոկատները ևս բարձրացնում են գյուղացիական անհատական տնտեսությունը և ավելի ու ավելի են մոտեցնում կոլեկտիվացման անցնելուն։

Ինչպես բոլոր այս օրինակներն են ցույց տալիս, կոլտնտեսությունների աճումն ավելի ու ավելի է վերաշինում գյուղը, բարձրացնում գյուղացիական տնտեսությունները։ Իսկ այն սոցիալիստները, վորոնց մասին արդեն հիշեցինք, չեն ուզում այս բանը տեսնել։ Նրանք գտնում են, վոր կոլտնտեսությունները գյուղը դեպի առաջադիմություն տանող գլխավոր ճանապարհը չեն հանդիսանում։ Ուստի և այդ սոցիալիստները դեմ են մեր յերկրում կոլտնտեսությունների ուժեղ շինարարությանը։ Պարզ է, վոր այսպիսով նրանք խանգարում են նաև գյուղատնտեսության զարգացմանը։

Ախար, պարզ է, վոր բերքի ավելի—$1\frac{1}{2}$—2 անգամ բարձրացման, գյուղատնտեսության յեկամտի բարձրացման, այս բոլորին կարելի է հասնել միայն գյուղի վերակառուցման ու կոլեկտիվացման հետևանքով։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի կոլեկտիվ տնտեսություններից, գյուղում կան նաև ուրիշ խոշոր տնտեսություններ։ Կուսակցության XV համագումարից հետո մենք սկսեցինք խորհրդային խոշոր տնտեսություններ կազմակերպել։ Կալվածատերերին կամ ցարին պատկանող առաջվա վոչ բոլոր հողերն են Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բաժանվել գյուղացիներին։ Կալվածներից շատերն անցան խորհրդային տնտեսություններին, իսկ հիմա մեր պետությունը խորհրդային տնտեսությունների համար հատկացնում է նոր ու մեծ հողամասեր, գլխավորապես այնտեղ, ուր վերջիններս չէյին մշակվում գյուղացիության կողմից (Հյուսիսային Կովկասում, Սիբիրում և ստորին Վոլգայի շրջաններում)։

Մեր գյուղատնտեսության հետամնացությունն այն տեղն է հաս-

ցնում, որ մեր հացը պակասում է։ Հենց այս պատճառով էլ հիմնվում են խորհրդային խոշորագույն տնտեսություններ, վորոնք գըլխավորապես հացահատիկ—հաճար և ցորեն են արտադրում։

Այս խոշոր տնտեսությունները, վորոնցից ամեն մեկը հազարավոր միքանի հազար դեսյատին հող է մշակում, կիրառում են երկրագործական նորագույն ձևեր։ Այս տնտեսություններում համարյա ամբողջ աշխատանքը մեքենաներով է կատարվում — վարը տրակտորով են անում, հողն աշնանացել են անում, ցանքը զտված սերմերով, ցանող մեքենաներով, հունձը հնձող մեքենաներով են անում։

Ուստի և այս տնտեսությունների բերքն էլ շատ ավելի պիտի լինի, քան շրջակա գյուղացիական տնտեսություններինը։ Այդ տար-գիցիոնները հրամայված են խոշոր տնտեսություններ կառուցելու, նշանակություն չտալով այն բանին, վոր հիշյալ տնտեսությունները օժանդակում են երկրի հացամատակարարման գործին։

Ցել խոսելով, բոլոր խորհրդային տնտեսությունները 1933 թվին կկարողանան պետությանը ապահովել մոտ 36½ միլ. ցենտներ (227 միլիոն փթից ավելի) հացահատիկ։

Բացի հացահատիկից, խորհրդային տնտեսությունները մեր արդյունաբերությանը կտան նաև հումք—բամբակ, մորթի, ձիթահատիկ և անասնապահական մթերք։

Խորհրդային տնտեսություններն օգնում են նաև ամբողջ գյուղի վերակառուցման գործին։ Հիշյալ տնտեսություններն օրինակ են ցույց տալիս գյուղացիներին՝ աշխատանքը մեքենայացման հիման վրա կատարելով՝ տնտեսությունը կուլտուրական ձևով վարել։ Ուստի և առանձնապես անհրաժեշտ է ձգտել, վոր խորհրդային տնտեսությունները իսկապես ցուցադրական ձևով աշխատեն։

Բայց խորհրդային տնտեսությունները վոչ միայն օրինակ են ցույց տալիս, այլ և ուղղակի օժանդակում են գյուղացիական տնտեսություններին՝ անհատական տնտեսությունները բարձրացնելու և կոլեկտիվացնելու գործում։

Ցանելու լավ սերմացու, այգիների համար լավ տնկի,—այս բոլորը խորհրդային տնտեսություններն են դարացնում-հայթայթում։ Խորհրդային տնտեսությունները լավագույն ազնվացեղ արտադրողներ ունեն, վորոնց շնորհիվ լավանում են գյուղացու անասունները։

Վերջապես՝ խորհրդային տնտեսություններն օգնում են գյուղացիներին իրենց տրակտորներով ու մեքենաներով՝ կազմակերպելով տրակտորային ջոկատներ և մեքենա-տրակտորակայաններ։ 1928 թ. արդեն խորհրդային տնտեսությունները շրջակա գյուղացիական տըն-

տեսություններից 20 հազար հեկտար (18000 դեսյատին) հող էին վարել։ Իսկ 1933 թվականին, հնգամյա պլանի վերջում, խորհրդային տնտեսությունները նախատեսնում են 10 անգամ ավելի վարել, այսինքն՝ 200 հազար հեկտար։

Ահա թե ինչպես է աշխատում Հյուսիսային Կովկասի «Խուտորոկ» խորհրդային տնտեսության կից մեքենա-տրակտորակայանը։

Մինչև վերջին ժամանակներս խորհրդային տնտեսությունը գյուղացիությանը զտված սերմացու, ազնվացեղ անասուններ ու տնկիներ էր մատակարարում։ Իսկ յերբ մեքենա-տրակտորակայան կազմակերպվեց՝ խորհրդային տնտեսությունների օգնությունը գյուղացիներին էլ ավելի մեծացավ։ Կազմակերպվեց 49 գյուղացիական կոլտնտեսություն, վորոնք իրենց մեջ էին միացնում 2 հազարից ավելի տնտեսություններ։ Այս կոլեկտիվ միավորությունները կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերով պարտավորված են սահմանել վեցդաշտյան ցանքափոխություն, օգտագործել միայն մաքուր տեսակի սերմացու և արտերը մաքրել քաղից (վնասակար խոտերից)։

Նրանց ամբողջ աշխատանքը կատարվում է խորհրդային տնտեսությունների գյուղատնտեսների հսկողությամբ։

ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Լայն կերպով կոոպերացվում է գյուղացիությունը, աճում են կոլտնտեսությունները, կազմակերպվում է հացահատիկային խոշոր ֆաբրիկ-խորտնտեսություններ։ Ցարական Ռուսաստանից մնացած մեր աղքատ ու անճարակ գյուղը, վերակառուցվում է՝ շնորհիվ խորհրդային արդյունաբերության օգնության ու պրոլետարական պետության ղեկավարության։

Լենինը սովորեցնում էր, վոր սոցիալիզմ կառուցելու համար հարկավոր է շաղկապ։

Առաջ մեր արդյունաբերության և գյուղացիական տնտեսության շաղկապը գլխավորապես այն էր, վոր քաղաքը գյուղին սպառման ապրանք — մանուֆակտուրա, մեխ, կաշի և այլն բաներ էր տալիս։

Այժմ մենք ավելի յենք ամրապնդում մեր շաղկապը գյուղացիության հետ այն բանով, վոր սկսում ենք ավելի ու ավելի օգնել գյուղացիության իսկ արտադրության։ Խորհրդային տնտեսություններ կազմակերպելով, նոր կոլտնտեսություններ ստեղծելով ու հները խոշորացնելով, մեքենա-տրակտորակայանները զարգացնելով, գյուղացիությանը կոոպերացնելով, ցանքերի կոնտրակտացում մտցնելով՝

մեր պետությանը վոչ միայն ոժանդակում է մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունների բերքատվությունը բարձրացնելուն, այլև ոժանդակում է վերջիններիս արմատական բարելավման ու կոլեկտիվականացման գործին։

Արտադրողական այս շաղկապին ապահովելու համար, անհրաժեշտ է մեր ծանր արդյունաբերությունն ավելի արագ կերպով զարգացնել, նոր գործարաններ կառուցել և այս գործարաններում գյուղատնտեսական նոր մեքենաներ ու գործիքներ պատրաստել, վորովհետև առանց վերջիններիս, գյուղատնտեսություն բարձրացնել չի լինի։

Մեր կուսակցության աջ ոպորտունիստները կարծում են, թե գյուղատնտեսությանն ոգնելու համար անհրաժեշտ է դանդաղեցնել ծանր արդյունաբերության զարգացման թափը։ Բայց իրապես, այսպիսի միջոցը կխանգարի գյուղատնտեսության զարգացումը, վորովհետև, կպակասեցնի գյուղատնտեսական գործիքների և մեքենաների թիվը, վորոնք հենց ամենից շատ են հարկավոր գյուղին։

Աջ ոպորտունիստները չեն հասկանում բանվորների ու գյուղացիների շաղկապի նոր ձևերի նշանակությունը։ Նրանք կարծում են, թե հենց հիմա յել բավական է գյուղին միայն սպառման մթերքներ մատակարարել։

Նրանք չեն հասկանում, վոր այժմ հասել է խորհրդային տնտեսության արմատական վերակառուցման ժամանակը։

Իրենց տեսակետներով ու խորհուրդներով աջ ոպորտունիստներն ոգնում են կուլակին, վոր դեմ է գյուղի սոցիալիստական այս վերակառուցմանը։

Կուսակցությունը պայքարում է աջ ոպորտունիզմի տեսակետների դեմ, բոլոր բանվորներին ու գյուղացիներին բացատրում է, վոր սոցիալիզմին կարելի յե հասնել այն ճանապարհով միայն, վորով Համ.ԿԿ-ն է առաջնորդում։

Բանվորները, բատրակները, չքավորները, միջակների լայն մասսաները վերակառուցման այս գործում ոգնում են կուսակցությանը։ Կուսակցությունը գյուղացիությանը տանում է այն ճանապարհով, վորի մասին ասել է ընկ. Լենինը. «Յեթե գյուղացիական տնտեսությունը կարող է հետագայում էլ զարգանալ, անհրաժեշտ է հաստատուն կերպով ապահովել նաև հետագա անցումը։ Իսկ հետագա անցումն անխուսափելիորեն այն է լինելու, վոր ամենաքիչ և ամենաշատ հետամնաց գյուղացիական մանր տնտեսությունն աստիճանաբար համախմբի, հասարակական խոշոր յերկրագործական տնտեսություն կազմակերպի»։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕԳՆԱԿԱՆՆ Է ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ԽՈՀԵՐԸ

Մելիտոպոլի շրջանի գյուղերից մեկում կոմյերիտական Յարկինը տարակուսանքի մեջ ընկավ։ Նրան թվում եր, վոր դժվար է, համարյա թե անհնարին է, վոր գյուղական կոմյերիտականը լինի թե լավ հասարակական աշխատող և թե օրինակելի տնտեսատեր։ «Իսկ չե թե այնպես է,—մտածում եր Յարկինը,—որ եթե գյուղական կոմյերիտմիությունը վոչ մի օգուտ չի տալիս և նրա մեջ մնում են միայն կարյերիստները և մորթեպաշտները»։ Յարկինը վորոշեց խորհուրդ հարցնելու համար դիմել իր կենտրոնական կոմիտեին և գրեց մի ղեկավար նամակ։ Ահա նամակը [1]։

«Թանկագին ընկերներ,

Ամենուրեք խոսում են, վոր կոմյերիտականը պետք է լինի հասարակական աշխատող և միևնույն ժամանակ պետք է օրինակելի կերպով վարե իր տնտեսությունը։ Լենինն ասում եր, վոր կոմյերիտմիությունը պետք է դաստիարակի կոմունիզմի ապագա շինարարներին։ Իսկ կոմյերիտականը պետք է լինի կուսակցության օգնականը, պետք է ժամանակից առաջ ել, ասում եր։ Յեվ ինչեր ասես, վոր նրա վրա չեն բարդում։ Յես զարմանում եմ, թե ինչպես կարելի է այդպես խոսել. յեթե հաշվի առնենք, թե ինչքան պարտականություններ է դրվում կոմյերիտականի վրա, նա պետք է ունենա գերմարդկային ուժ, վորպեսզի այդ բոլորը կատարի։

Նախ և առաջ փորձեցեք դուք ինքներդ ապրել գյուղում և կապել իրար հետ յերկու խնդիր—հասարակական աշխատող և օրինակելի տնտեսատեր։ Այս բանն իրական կյանքում անհնարին է, վորչափ էլ վոր դուք գեղեցիկ բառեր, մեծ-մեծ ֆրազներ, փարթամ ճառեր ասելու լինեք։ Լինել հաջող հասարակական աշխատող, դա նշանակում է՝ թողնել գյուղատնտեսական աշխատանքը։ Յեթե դուք ասելու լինեք, վոր այդ այդպես չե, այդ դեպքում ապացուցեք կյանքի օրինակներով։ Ահա, օրինակ, յես կոմյերիտական եմ, ապրում եմ մորս հետ, յես ունեմ ձի, կով և այլ մանր տնտեսություն։ Յես զբաղվում եմ հա-

[1] Այս նամակը շատ յերկար է, ուստի և մեջ ենք բերում վոչ ամբողջովին, այլ վորոշ քաղվածքներ։

տարակական լավ աշխատող, ինձ ընտրում են մի վարեւ պաշտոնի, օրինակ՝ ՓՈԿ-ի քարտուղար։ Յես այնտեղ պետք է ամեն օր լինեմ։ Հարց է ծագում՝ կարող եմ արդյոք յես այդ դեպքում ինչպես վարել իմ տնտեսությունը։ Յեվ խեղճ կոմյերիտականը չենթարկվում է աշխարհի քաշքշուկների, վոր նիստերի, ժողովների բեռնավորումների, պատասխանատվությունների մրրիկը պոկում է նրան տնտեսությունից և նա դառնում է պրոֆեսիլի մարդ»։

«Ասա թե ինչու գյուղացին չի ցանկանում, վոր իր աղջիկը մտնի կոմյերիտմիության մեջ։ Իսկ յեթե հարկավոր ուշադրություն չես դարձնում գործին, մեղադրում են քեզ գործն ունեցած անփույթ վերաբերմունքի, կոմերիտական պարտականությունների թերացման մեջ, իսկ այս բոլորի մեղքն այն է, վոր զրկվում ես գյուղատնտեսությամբ և կապված ես նրա հետ։

Գյուղատնտեսությունը պահանջում է չափազանց շատ ժամանակ։ Նույնիսկ, յեթե ամբողջ տարին էլ առավոտից իրիկուն աշխատես, ժամանակը հերիք չի անի։ Իսկ դուք ուզում եք այս վրա ավելացնել նաև լավ հասարակական աշխատող լինելու պարտականությունը։ Վոր կողմն էլ վոր շուռ գաս՝ այս յերկու խնդիրն իրար հետ կապել, կրկնում եմ, անհնարին է։

Յես շատ եմ մտածում այդ մասին, կոմյերիտմիության մեջ գըրվեցի սովորելու նպատակով—ուսումնասիրել լենինիզմը, սովորել գյուղատնտեսություն և ուրիշ շատ բաներ, բայց տեսա, վոր ամեն բան ձեռք բերելն անհնար է։ Յերկու նապաստակի յետևից ընկնողը, վոչ մեկին էլ չի բռնի։

Դուք մեզ դատի, ընկերներ, նրանով, վոր համագումարներում պատգամավորները բուռն վոգևորությամբ խոսում են—այդ կատարվում է շրջապատի ազդեցության տակ։ Նմանապես և մեզ դատի նամակներով. ձեզ գրում է առաջավոր կոմյերիտականը, իսկ չե՞ վոր մեծամասնությունը լռում է։

Յեվ այսպես, ընկերներ, յես խճճվեցի, վորովհետև մինչ այդ յես չունեյի լենինյան ուղիղ գիծ։ Յես խնդրում եմ Համ.ԼԿՅԵՄ-ի ԿԿ-ին ընկերաբար ձեռք պարզել ինձ և պատասխանել, թե չե՞ յես կկորչեմ։ Յես միանգամայն համոզված եմ, վոր դուք ունեք վորոշակի գիծ, վորոշակի ճանապարհ նշված նպատակների համար։

Ասեք, թե ինչ անել ինձ, վորպեսզի յես իմ վոտքերի տակ ամուր հող զգամ, վորպեսզի յես համոզվեմ, վոր մենք կարող ենք հասնել սոցիալիզմին։ Տվեք ինձ մեկ ընդարձակ նամակով խորհուրդ, թե այդ առթիվ ինչպիսի գրքեր հարկավոր է կարդալ։ Յես կորցնում եմ

իմ հավատը դեպի սոցիալիզմը, կորցնում եմ հավատս այն բանում, վոր կոմյերիտմիությունը գործնականում լավ բան է։ Բայց առայժմս չես դուրս չեմ գալիս միությունից և խորհուրդ եմ հարցնում ձեզանից, թե չէ ինչ կերպ վարվեմ։ Յեվ ահա մենք պետք է հասկանանք, թե արդյոք իրավացի՞ չէ Ցարկինը, վոր գյուղական կոմյերիտականը գյուղում իրոք վոր վոչինչ չի կարող անել. չի կարող միաժամանակ լինել և՛ հասարակական լավ աշխատող և միևնույն ժամանակ վարել իր տնտեսությունը։

Ի՞նչ է նշանակում՝ լինել լավ կոմյերիտական քաղաքում կամ գյուղում։ Լենինը այս հարցին մեզ պատասխանում է—անհրաժեշտ է, վոր կոմունիստական յերիտասարդության միությունը, իր կրթությունը, իր ուսումը և իր դաստիարակությունը միացնի բանվորների և գյուղացիների աշխատանքի հետ, վոր նա չփակվի իր դպրոցներում և չսահմանափակվի միայն կոմունիստական գրքեր և բրոշյուրներ կարդալով։ Միայն բանվորների և գյուղացիների հետ միասին աշխատելով հնարավոր է լինել իսկական կոմունիստ և կոմյերիտական։

Վերցնենք քաղաքի կոմյերիտականին՝ նա պետք է առաջինը լինի ֆաբրիկայում, նրա գործն է ոժանդակել արդյունաբերության առաջ զարգացման, վորպեսզի ապրանքներն ավելի շատ լինեն, նրանց վորակն ավելի լավ լինի և գներն էլ եժան։ Նա պետք է պայքարի ուշացումների դեմ, բարձրացնի աշխատանքային դիսցիպլինան, կազմակերպի ցուցադրական բրիգադաներ, մի խոսքով՝ պետք է լինի որինակելի, դիսցիպլինայի յենթարկվող բանվոր։ Նրա գործն է՝ պայքարել մեր հիմնարկներում յեղած բյուրոկրատիզմի դեմ, նա պետք է աշխատի, վորպեսզի մասսաներն ավելի լայն կերպով աշխատեն ներգրավվել հասարակական աշխատանքներում և աշխատի բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակը։

Իսկ գյուղական կոմյերիտակա՞նը. Նրա գործն է ոգնել կուսակցությանը, դուրս բերել գյուղը դարավոր չքավորությունից ու տգիտությունից յեվ դնել նոր ճանապարհի վրա, ոգնել գյուղական մասսային, չընկնել կուլակների ազդեցության տակ։ Միլիոնավոր բաժան-բաժան յեղած գյուղացիական տնտեսությունները վերածել մեծ կոլեկտիվների, թույլ չտալ կուլակին խցկվելու խորհրդային կոոպերացիայի մեջ։

Ինչպես տեսնում ենք, այս խնդիրները շատ մեծ են։ Նրանց իրականացնելն իրոք վոր շատ դժվար է և առանձնապես դժվար է այն կոմյերիտականին, վորը միաժամանակ ցանկանում է և պարտավոր է բարձրացնել իր տնտեսությունը, բայց նրա համար տասնյակ անգամ ավելի հեշտ կլինի աշխատել տնտեսությունում և զբաղվել հասարա-

կական աշխատանքով, յեթե հաջողվի անհատական տնտեսությունից անցնելու դեպի կոլեկտիվ տնտեսություն։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Հնարավո՞ր ե արդյոք կոմյերիտական լինել և չմասնակցել հասարակական աշխատանքներին։

2. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾԻ ԱԶԴԱԿ

Մեր նախորդ զրույցներից մեկում մենք խոսեցինք, թե ինչու չքավոր և միջակ գյուղացիները պետք ե համախմբվեն կոլտնտեսություններում։ Չե՞ վոր լավ կյանքի անցնելու համար նրանց համար ուրիշ ճանապարհ չկա։ Մենք ցանկանում ենք մեր չքավոր, խղճուկ և աղքատ յերկիրը վերածել հարուստ և կուլտուրական յերկրի։ Ինչպե՞ս այդ անել։ Հնարավո՞ր ե արդյոք այդ անել այնպես, վոր ամեն մի անհատական մանր տնտեսություն հարստանա։

Վոչ, այս անհնարին ե, վորովհետև նա շատ հետ ե մնացել և դրա համար էլ նրանում տնտեսություն վարելն ավելի անձեռնտու ե, քան խոշոր տնտեսությունում։ Յեթե բոլոր տնտեսություններն ըստ իրենց կարողության բաժանենք վեց խմբակների, կտեսնենք, վոր Պսկովի նահանգի ամենաաղքատ տնտեսությունը մի հեկտարից ստանում ե միջին թվով կես տոնն հաճար, հետևյալ խմբակը արդեն—0,65 տոնն, իսկ 6-րդ խմբակը՝ ամենաուժեղը—1 տոնն։ Ուրեմն, ինչքան վոր խոշոր լինի տնտեսությունը, այնքան էլ ձեռնտու ե։

Տարբեր խոշոր տնտեսություններ չեն կարող լինել։ Խոշոր տնտեսությունը կարող ե պատկանել մեկ մարդու—կուլակին։

Արդյոք պե՞տք ե մենք ոգնենք կուլակային տնտեսությունների զարգացմանը, ինարկե, վոչ։ Կուլակը զարգանում ե նրա համար, վորովհետև ճնշում ե հարևան չքավոր-միջակին, յերբեմն սերմացվի կամ աշխատանքի ժամանակ ձի տալու համար յոթ կաշի յե քերթում։ Յեվ յեթե խորհրդային իշխանությունն ոգներ կուլակային տնտեսությունների զարգացմանը, այդ դեպքում վոչ մի տարբերություն չեր լինի նրա և բուրժուական իշխանության մեջ։ Մենք ցանկանում ենք խոշոր կոլեկտիվ տնտեսության զարգացումը, վորում միասին աշխատեն չքավորները յեվ միջակները։ Այսպիսի տնտեսություններն ունեն խոշորի բոլոր առավելությունները՝ նրանցում չկա միջշերտյան տարածություն և գյուղացին չի կորցնի ավելորդ ժամանակ և եներգիա՝ փո-

խաղրությունների համար։ Նրանցում կարելի յե մեծ չափով օգտագոր-ծել վոչ միայն ձիերը և գյուղատնտեսական մյուս գործիքները, այլև, վորը շատ կարևոր յե՝ կարելի յե կիրառել գյուղատնտեսական բարդ մեքենաներ, վորոնք մեծ չափով բարձրացնում են տնտեսության եկա-մուտը։ Նրանցում ստացվում է շինությունների խնայում, և վերջա-պես կոլեկտիվ խոշոր տնտեսությունում հնարավոր յե աշխատանքի բաժանում կատարել՝ ամեն մեկը կկատարի աշխատանքի միայն վորոշ մասը, վորը նմանապես կնպաստի աշխատանքի ավելի արագ և լավ կատարելուն։

Ահա մի կոլտնտեսություն, վոր հարված յե կուլակներին։ Մինչև մեր գյուղացիները չեն համախմբվի կոլեկտիվի մեջ և ամեն մեկ ա-ռանձին կվարի իր խղճուկ տնտեսությունը, կուլակը, օգտվելով նրա չքավորությունից, կարող յե նրան ճնշել։ Իսկ յերբ չքավորները կոլ-տնտեսությունում միասին աշխատում են՝ նրանք այլևս չեն գնա կու-լակի մոտ փոխառնությամբ մի կիտ հացի կամ ձիու համար։ Կուլակը չի կարող օգտվել նրանց չքավորությունից և հարստանալ ի հաշիվ նրանց։

Ահա թե ինչու կուլակները հակառակ են կոլտնտեսություննե-րին, գյուղացիներին լարում են նրանց դեմ, անկյուններում փսփսում, վոր իբր, կոլտնտեսությունները կողոպտում են գյուղացիներին։

Իսկ ուրիշ անգամ կուլակները փորձում են խցկվել կոլտնտեսու-թյունների մեջ, փորձելով այնտեղ, ներսից քայքայել նրանց, կռվաց-նել կոլտնտեսականներին իրար հետ և ցիրուցան անեն կոլտնտեսու-թյունների գույքը։

Ուրեմն գյուղը կոլեկտիվացնելու համար հարկավոր է համառ յեվ տևական պայքար մղել նրա կուլակային մասի դեմ. իսկ գյուղական կոմ-սոմոլն է, վոր վճռականապես պետք է տանի այս պայքարը։

Կառուցել կոլտնտեսություններ, դա նշանակում է՝ վերակառու-ցել գյուղը սոցիալիստական հիմունքներով, վոչնչացնել շահագործման բոլոր հնարավորությունները։ Աշխատել միասին, խոշոր մեքենաների և գիտության ստուգած ձեռնարկումների միջոցով, միասին ապրել, միասին կառուցել, հենց սա յե, վոր նշանակում է՝ ապրել սոցիալիս-տական ձևերով։ Իսկ վորքան վոր գյուղում և քաղաքում ամուր և զարգանում սոցիալիստական տնտեսությունը, այնքան էլ մասնավորի և կուլակի դրությունը վատանում է։ Միևնույն ժամանակ կոլտնտե-սությունների զարգացումը հանդիսանում է ընդհանուր գյուղատնտե-սության զարգացման ամենահուսալի ճանապարհը։

Ահա թե ինչու կոմյերիտմիությունը գյուղում պետք է վոր հանդիսա-նա գյուղատնտեսության կոլեկտիվացման գործի ազդակը։

Կազմակերպել կոլտնտեսություններ, դա նշանակում է՝ մի կողմից նպաստել գյուղատնտեսության վերելքի արագացմանը, նրա սոցիալիստական ձևերով վերակառուցմանը, իսկ մյուս կողմից — օգնել չքավորին միջակի դաշնակցությամբ պայքարել կուլակի դեմ: Դրա համար էլ լավ է հասկանում և լուծում իր առաջ դրված դասակարգային խնդիրները կոմերիտմիության գյուղական այն բջիջը, վորն աշխատանք է տանում գյուղատնտեսության կոլեկտիվականացման համար:

Զրույցի սկզբում բերեցինք Լենինի խոսքերը, վոր կոմունիստ կարելի է լինել, մասնակցելով բանվորների և գյուղացիների աշխատանքներին: Գյուղական կոմերիտականի համար դա նշանակում է, վոր պայքարելով կուլակի դեմ, օգնելով չքավորին, համախմբելով չքավորների և միջակների տնտեսությունները կոլտնտեսությունների մեջ, նա սովորում է դառնալ իսկական կոմունիստ:

Այս բանն արդեն շատ լավ են հասկացել գյուղի կոմերիտմիության բջիջները: Ահա մի քանի որինակներ նրանց տարած աշխատանքների՝ գյուղի կոլեկտիվականացման նկատմամբ:

Կոմերիտական Զինչենկոն գյուղական յերիտասարդության ամսագրին ուղարկում է մի հետաքրքիր նամակ: Նա թեպետ և ուղղակի չի պատասխանում Ցարկինին, բայց և այնպես նրա նամակը կարող է ծառայել ինչպես պատասխան: Ահա թե ինչ է գրում նա.

«Մի յերկու տարի սրանից առաջ յես էլ վատ եյի տրամադրված, տխրում եյի, մտածում, վոր մենք՝ կոմերիտականներս գյուղում վոչինչ չենք կարող անել: Իսկ հետո վորոշեցի, ամենաամենայնիվ, գործի անցնել: Համաձայնություն յեկա կոմերիտականների հետ, վճռեցի կազմակերպել մեքենաոգտագործական ընկերություն: Համոզեցինք մեր հայրերին, իսկ նրանք էլ իրենց հերթին պարզաբանեցին մյուս գյուղացիներին: Հրավիրեցինք ժողով, այնտեղ լավ քննեցինք այդ հարցը: Մեքենաոգտագործական ընկերությունը կազմակերպվեց: Անդամագրվեցին 17 գյուղացիներ, վորոնցից 10 չքավորներ, և 7 միջակներ: Ընտրեցինք վարչություն: Ընկերությունն անվանեցինք «Խլեբորոբ»: Այդպիսի ընկերություն մեր կողմից առաջին անգամն էր կազմակերպվում Օմսկի գավառաշրջանի, Իսիլկուլսկի շրջանի Բոլնեկա գյուղում: «Խլեբորոբ» ընկերությունը ձեռք բերեց միքանի գյուղատնտեսական մեքենաներ: Առաջ բերինք կուլտուրական ցանքս: Ձեռք բերինք նոր սերմեր: Վողջ չքավորությունը շատ գոհ էր, քանի վոր մեքենաները հեշտացրին դաշտային աշխատանքը և շատ մեծ ոգուտներ ստացվեց. ընկերության բոլոր անդամներն ոգտվում եյին այս մեքենաներից և նրանք ստիպված չեյին լինում խնդրելու կուլակից, վորը այս բանի համար յերեք անգամ թանկ էր վերցնում:

Այժմ «Ալեբորոր» ընկերությունն անցնում է նոր կանոնադրության: Կանոնադրությունը կայանում է նրանում, որ ընկերության անդամների բոլոր տնտեսությունը ընդհանուր պետք է լինի: Կազմակերպվում է միասնական աշխատանքային կոմունա: Ցանքսը ընդհանուր է, նմանապես ընդհանուր են ինվենտարը և ողջ յեկամուտը: Այս բոլորը մեր կոմյերիտականների շնորհքն է: Միթե սա դեպի սոցիալիզմը տանող քայլ չէ»:

Ահա միքանի որինակ ևս:

Դոնի գավառաշրջանում 1928 թ. ընթացքում կոմյերիտականների ուժերով կազմակերպված է 100 տնտեսություն: Կոմյերիտական-կոլտնտեսականների թիվը բարձրացավ 256-ից մինչև 1150 հոգու:

Ստավրոպոլի գավառաշրջանի կոլտնտեսություններում 100 կոլտնտեսականներից 40 կոմյերիտական են, իսկ Կուբանում—25:

Սեմիպալատինսկի շրջանում կոմյերիտմիության նախաձեռնությամբ հիմնվել են 2 կոմունա—Գլուբոկոյե և Ուվարովսկոյե գյուղերում:

Կուբանում, Իլսկայա ստանիցայում յերիտասարդությունը վոտքի կանգնեցրեց հողագործական ընկերությունը:

Չելբասի գյուղում, 4 կոլտնտեսություն-ընկերություն կազմակերպվել են Լադոժսկայա, Կրիմսկայա և Ուստ-Լաբինսկայա ստանիցաներում: Վելիկոլուցկի գավառաշրջանում կոմյերիտականներն անցյալ գարնանը կազմակերպեցին 126 մեքենաօգտագործական ընկերություններ: Իսկ Բրդինսկի կոմունայի կոմյերիտականները—3 նոր կոլտնտեսություն: Գավառաշրջանում առաջ յեկան 3 հատ կոմյերիտական նոր կոմունա:

Ուստ-Մեդվեդիցկի գավառաշրջանում (Ստալինգրադսկի նահանգի) յերիտասարդության մասնակցությամբ հիմնվել են 2 նոր կոլտընտեսություն: Կարելի յե դեռ այսպիսի շատ որինակներ բերել: Բայց այսքանն էլ բավական է, ապացուցելու, թե կոմյերիտականներն ինչպես կարող են մասնակցել կոլեկտիվ տնտեսությունների շինարարության գործում:

Այժմ մենք կարող ենք պատասխանել կոմյերիտական Ցարկինի հարցերին:

Ուրեմն, կարող է արդյոք գյուղական կոմյերիտականը լինել թե լավ հասարակական աշխատող և թե լավ տնտեսատեր: Կարող է, յերբ նա անհատական տնտեսության ձևից անցնում է դեպի կոլեկտիվ տնտեսությունը: Յերբ կոմյերիտականը կառուցում է կոլտնտեսություն և աշխատում է նրա դաշտերում, դրանով նա կատարում է հասարակական

մեծ, կարևոր և ոգտավետ գործ։ Այդպիսի կոմյերիտականը — հասարակական լավ աշխատող է, քանի վոր սոցիալիզմի կառուցման գործում կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվականացումը։ Յեվ միևնույն ժամանակ նա լավ, օրինակելի տնտեսավար է, վորովհետև կոլտնտեսությունը պատկանում է նրան, նրա ընկերներին, այն բոլորին, վորոնք կողք-կողքի աշխատում են նրա հետ կոլտնտեսությունում։ Ուրեմն կոմյերիտականը Յարկինը վոչ թե պետք է հուսալքվեր և միությունից հեռանար, այլ պետք է մասնակցեր կոլտնտեսությունների շինարարության գործին և դրանով իսկ կփարատվեր նրան տանջող կասկածները։

Չկարծենք, վոր այստեղ գործը սահմանափակվում է միայն զուտ տնտեսական աշխատանքներով։ Վորպեսզի կուլակը նրան կուլ չտա, անհրաժեշտ է, վոր իշխանությունը նրան ոգնի։ Ուրեմն, կոլտնտեսության շինարարը պետք է մտահոգված լինի և այն բանով, վոր գյուղխորհրդի և շրջգործկոմների կազմի մեջ չխցկվեն կուլակների պաշտպանները։ Նմանապես պետք է մտածել կոլտնտեսականների լուսավորության մասին, քանի վոր վորքան նրանք լուսավորված լինեն, այնքան նրանք ավելի լավ կըմբռնեն հողի մշակման լավ ձևերը։ Ուրեմն այս աշխատանքը բազմակողմանի է և ամեն մի գյուղական կոմյերիտական իր համար այստեղ կարող է գտնել այնպիսի գործ, վորը նրան ավելի է հետաքրքրում։

Յեվ վորպեսզի գյուղացիությունը հասկանա խոշոր կոլեկտիվ տնտեսության բոլոր առավելությունները և ոգուտները, անհրաժեշտ է նրանց մեջ տանել հասարակական և կուլտուրական մեծ աշխատանք։

Կուլակի համար արտելը կամ կոլեկտիվը մի ցավ է, վորից նա ամեն կերպ աշխատում է ազատվել։ Պակովի գավառաշրջանում մի այսպիսի դեպք պատահեց. հանկարծ արտելի անդամները ցանկացան դուրս գալ արտելից։ Նրանց հարց տվին, թե ինչու չեք փախչում։ Լռում են։ Իսկ յերբ լեզուները բացվեց, պարզվեց, վոր նրանց վախեցրել է ջրաղացպանը։ Նրա ջրաղացը արտելին պետք է անցներ և նա սկսում է լուրեր տարածել, թե «շուտով պատերազմ է լինելու, սպիտակները կգան և ձեզ ցույց կտան, թե ինչպես ուրիշների կալվածքներում բնակվել»։ Յեվ ահա արտելի անդամներն սկսում են վախենալ։

Պակաս չեն դեպքերը, յերբ կուլակներն իրենք խցկվում են արտելի մեջ, իսկ չքավորներին այնտեղից դուրս քցում։ Չերեզովեցկի գավառաշրջանի մի անասնաբուծական ընկերությունում, մի յերկու տարի, սրանից առաջ, 260-ից միայն 20-ն եյին չքավորներ։ Վարկեր և արտոնություններ տալիս եյին նրանց, վորոնց կովը 18 կիլո կաթ եր տալիս. իսկ վորտեղից չքավորն այսպիսի կով գտներ…

Կուլակը խցկված է կոլտնտեսության մեջ և աշխատում նրան իր ձեռքը առնել։ Ահա թե ինչու կոմյերիտականը պետք է աշխատի, վորպեսզի կոլտնտեսությունների շինարարությունը բարձրացնի չքավորին, միացնի նրան չքավորի հետ և վոչ թե կուլակի համար մի վարագույր դառնա։

Կոլտնտեսության ներսում պետք է առաջ քաշել չքավորներին, ղեկավար աշխատանքներում առաջին հերթին պետք է նրանց ընտրել։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Պատասխանիր Յաշկինի հարցերին։
2. Ինչով կարող է կոմյերիտմիությունը օգնել գյուղի կոլեկտիվացման գործին։
3. Ինչու կոմյերիտականը չի կարող համերաշխ ապրել կուլակի հետ։

---

3. ՓՈՔՐԻԿ ԳՈՐԾԻՑ ՄԻ ԽՈՒՍԱՓԻՐ

Ինչ անել կոլտնտեսության կազմակերպիչ կոմյերիտականը։ Ինչի՞ց սկսել։ Սկզբներում, կոմյերիտական շատ բջիջներ այս կերպ եյին վարվում. հավաքվում եյին, քննում և վորոշում, վոր իրենք հիմնեն կոլտնտեսություն. «մենք կկազմակերպենք, իսկ գյուղացիները թող հետո միանան մեզ հետ»—մտածում եյին նրանք։

Կոմյերիտականները կազմակերպում են կոլտնտեսություն, իսկ գյուղացիները քթի տակին ծիծաղում,—մենք դեռ կտեսնենք, թե դրանից ինչ դուրս կգա։ Երբեմն, իրոք վոր հաջողվում է յերիտասարդությանը հասնել իրենց նպատակին։ Այդպես է յեղել՝ Տամբովի, Ստալինգրադի և այլ նահանգներում։ Բայց հաճախ յերիտասարդությունից կազմված կոմունան քայքայվում եր։ Ամառը աշխատում են, իսկ աշնանամուտին կոմունաներից շատերն ստիպված են բանակ գնալ։ Յեվ բացի այդ՝ յերիտասարդությունը անտեսավարության քիչ փորձ ունի և նրանց համար դժվար է կառավարել այդպիսի դժվարին և մեծ գործ, ինչպիսին է կոմունաների և արտելների շինարարությունը։

Ահա թե ինչու. հազիվ թե հաջողվի, յերբ կոմյերիտականները կսկսեն իրենք հիմնել կոլտնտեսություններ։ Նրանց գործն է՝ լինել առաջին նախաձեռնողները, նրանք պետք է սկսեն, նրանք պետք է առաջին հերթին մտնեն կոլտնտեսության մեջ, բայց այս բոլորը պետք է անեն գյուղացիների հետ միասին յեվ վոչ առանց նրանց։

Բայց գյուղացուն կոլտնտեսության մեջ զոռով քաշել չի կարելի։ Ստիպողաբար վոչինչ չես կարող անել, ավելի շուտ կփչացնես կարևոր գործին։ Հարկավոր է համոզել գյուղացուն կոլեկտիվ տնտեսության ձեռնտու լինելու մասին, պետք է տանել նրան հարևան կոլտնտեսությունը և ցույց տալ նրան, թե այնտեղ ինչպես են աշխատում. ամեն օր ժողովներում, հավաքույթներում և պատի թերթերում պետք է ագիտացիա տանել կոլտնտեսության շինարարության օգտին, ապացուցել օրինակներով և փաստերով խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունները։

Արագ, շտապ, հարվածային կարգով գործել չի կարելի։ Ահա թե վորտեղ պետք է ասել՝ յոթը չափիր՝ մեկ կտրիր։

Շատ հեշտ է աղմկել և միանգամից 10 կոլտնտեսություն կազմակերպել, իսկ հետո, յերբ նրանք կքայքայվեն, գյուղացուն արդեն վոչ մի կերպ չես կարող համոզել մտնել նրանց մեջ։ Խիստ հաշվի առնել տնտեսական բոլոր հնարավորությունները, հաշվի առնել միջոցները, լավ ծանոթանալ հողամասերի հետ, մանրամասն պարզել վարկեր և մեքենաներ ստանալու հնարավորությունը և այնուհետև միայն հիմնել կոլտնտեսություն,— ահա այն օրենքը, վորով պետք է ղեկավարվել։

Յեվ բոլորովին անհրաժեշտ չէ սկսել ուղղակի կոմունայի շինարարությունից, կարելի յե խմբավորման ավելի պարզ ձևերից։

Հարկավոր է կազմակերպել և՛ մեքենաօգտագործական ընկերություններ, և՛ հողօգտագործական արտելներ, և ամեն տեսակի այլ նախնական խմբավորումներ։ Մինչև իսկ այնպիսի փոքր գործ, ինչպիսին է գյուղացիների լծկանների միատեղ օգտագործելը, այդ ևս կարող է օգուտ բերել գյուղացիների համախմբման գործին։

Վոչ մի գործից խուսափել հարկավոր չէ։ Կարող է թվալ, վոր մանր խմբավորումներ կազմակերպելը հեշտ գործ է։ Իրականում դա սխալ է։ Ահա հյուսիս-արևմտյան մարզում Դոլսկի բջիջը վորոշում է հիմնել մեքենաօգտագործական ընկերություն։ Գյուղացիներին համոզում են, 8 հոգի անդամագրվում են, սկսում են քննել կանոնադրությունը և այստեղ քարը ապառաժին է կպչում։ Գյուղացիք կանոնադրության մեջ կարդում են տասնապատիկ պատասխանատվության մասին յեղած կետը և հետ են քաշվում։

«Մեզ,— ասում են,— ընկերությունը մուրացկանության կհասցնի, նրա վնասները մենք պետք է քաշենք և մեր անասունները գոմից կտանեն»։

Ցրվեցին գյուղացիք. կարելի չէր դրանով գործը վերջացած հա-

մարել, բայց կոմյերիտականները այլ կերպ մտածեցին։ Սկսեցին ամեն մի գյուղացու առանձին համոզել։ Յեկավ ժամանակը և իրենք՝ գյուղացիները պահանջեցին կոմյերիտականներից, թե «շուտ հիմնենք»։

Այժմ ընկերության գործերը գնում են շատ լավ։ Նրանք թե՛ բամհար ունեն, թե՛ կալսող մեքենա, փոքր վարձատրությամբ մեքենաները տրվում են գյուղացիներին, իսկ չքավորներից վարձ ամենևին չեն վերցնում։

Պետք է ձգտել պարզ խմբավորումներից անցնել ավելի բարդ խմբավորումների՝ արտելից դեպի կոմունա, փոքր կոլտնտեսություններից ավելի մեծ կոլտնտեսություն։ Յեվ ահա դուրս է գալիս, վոր կոմյերիտականների առաջ դրված է յերկու խնդիր՝ նախ և առաջ ամեն կերպ բարձրացնել գյուղատնտեսական խմբավորումները, իսկ յերկրորդ՝ նախնական պարզագույն խմբավորումները վերածել ավելի բարդ խմբավորումների։

Բայց, ինչպես հաճախակի պատահում է յերիտասարդ տղաների հետ, յերբեմն սկզբնական աշխատանքների համար ուժերը բավարարում է, իսկ յերբ կազմակերպվում է կոլտնտեսությունը, գործը ձեռքերից թափվում է։ Յեվ վոչ պակաս են պատահում յերբ հասակավոր գյուղացի կոլտնտեսականի բերանից լսում ես գանգատներ կոմյերիտականի մասին։

Կոմյերիտական կոլտնտեսություններն իրենց թափթփվածությամբ և ծուլությամբ խանգարում են աշխատանքը։

Յերիտասարդությունը չի հետևում գոյություն ունեցող կոլտնտեսությունների դրականության, չի սովորում գործող խմբավորումների գործնական որինակներով։

Մի այլ բջիջ ձևականորեն քննություն է անում կոլտնտեսությունների հարցը։ Քննում են և պրծավ գնաց, միայն թե մի բան արած լինեն. իբրև թե մենք էլ այս հարցով զբաղվեցինք։

Մի այլ տեղում կոմյերիտական կոլեկտիվը ծուլանում է ժամանակին քաղհան անել բանջարանոցը, վորի հետևանքով ստացվում է վատ բերք։

Մի այլ տեղում, աշխատանքի յեռուն ժամանակ, յերբ գյուղացիք շատ սերմացու յեն տանում և պարկեր ճարելու համար դես ու դեն վազում, կոմյերիտմիության բջիջն զբաղված էր թատերական պիեսայի փորձով։

Քիչ չեն այնպիսի կոմյերիտականները, վորոնք խոսքով աշխատում են ագիտացիա անել մասսային, իսկ գործնականում նահանջում

են, կամ թե հայտնաբերում են նախաձեռնություն ՄՈՊՐ-ի, Կորչի անգրագիտության և այլ գծով։ Այստեղ «նախաձեռնություն հայտնաբերելը» հեշտ է՝ ցուցակը պատրաստիր և գնա փողը հավաքիր... Իսկ կոլտնտեսություններում կոմերիտականներն իրենց անփութությամբ վարակում են նաև անկուսակցականներին։

Արժե՞ արդյոք այսպիսի կոմերիտական-կոլտնտեսական լինել, իհարկե, ոչ։ Եթե դու կոմերիտական ես և մտել ես կամ ավելի ես կազմակերպել ես կոլեկտիվ, պետք է աշխատանքներում լինես առաջինը, ինքդ ցույց տաս օրինակելի կարգապահություն, աշխատասիրություն, կոլեկտիվականություն, թե չէ կոմերիտականները կսկսեն աշխատանքից խուսափել, իսկ նրանց հետևից կգնա անկուսակցական չքավորությունը,—աչքդ բաց կանես և մեկ էլ կտեսնես, որ կոլեկտիվից միայն պոզերն են մնացել, ամեն ինչ տանող տանողի կլինի։

Կուլակներին էլ հենց այդ է հարկավոր։ Կսկսեն նրանք այսպիսի կոլտնտեսությանը մատով ցույց տալ, ասելով, թե տեսնո՞ւմ եք տնտեսությունն ինչպես քար ու քանդ արին։ Իսկ գյուղացին, երբ օրինակը տեսնում է աչքերի առաջ, նա իր աչքերին ավելի շատ է հավատում, քան ուրիշների խոսքերին, և այսպիսի դեպքից հետո գյուղացու վզին պարան էլ քցես, կոլտնտեսության մեջ չի մտնի։ Ուրեմն, կոլտնտեսության ներսում կոմերիտականների համար քիչ գործ չկա։ Հարկավոր է և՛ դիսցիպլինա պահպանել, և՛ կոլտնտեսությունների կենցաղը կազմակերպել, որպեսզի թե մսուր, թե լվացքատներ և թե ընդհանուր ակումբ լինի, որպեսզի գյուղացիները կոլտնտեսությունում կարողանան ավելի լավ ապրել, քան թե առաջ էին ապրում։ Իսկ ամենագլխավորը — անհրաժեշտ է, որպեսզի կոլտնտեսությունն աճի և զարգանա, տարեց-տարի ավելանա նրա անբաժան դրամագլուխը, որպեսզի գյուղացիներին օրինակ լինի, թե ինչպես է հարկավոր աշխատել դաշտերում։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Մի՞թե ունի՞ կոմերիտականներին առանձին կոլտնտեսություն կազմակերպելը։
2. Ի՞նչ պետք է անի կոմերիտականը կոլտնտեսությունում։

4. ՊԱՏՐԱՍՏԵՆՔ ԿԱԴՐԵՐ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

Կոմերիտմիությունն իր վրա պետք է վերցնի կոլտնտեսությունների համար նոր աշխատողների պատրաստումը։ Այսպիսի աշխատա-

վորներ շատ կպահանջվի և այն ել զանազան մասնագիտությամբ վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, տրակտորիստներ, արհեստանոցի աշխատավորներ, հաշվետարներ, գրասենյակային աշխատավորներ և այլն։ Յեվ վոչ միայն կոլտնտեսությունների, այլ և խորհրդային տնտեսությունների համար կոմյերիտմիությունը պետք ե աշխատավորներ պատրաստի։ Կառավարությունը վորոշել ե առաջիկա մի քանի տարիների ընթացքում կառուցել այն քանակությամբ խորհրդային խոշոր տնտեսություններ, վորպեսզի նրանք կարողանան շուկա արտահանել մեկ ու կես միլիոն տոնն հացահատիկ։ Արդեն անցյալ տարվանից սկսվեց այս շինարարությունը։

Խորհրդային նոր տնտեսությունների համար շատ մարդ ե հարկավոր։ Նրանց համար կպահանջվի (չասենք դեռ ղեկավար կազմի և գլխավոր ղեկավարների մասին) գյուղատնտեսների ոգնականներ՝ 200, առանձին տնտեսությունների ղեկավար գյուղատնտեսներ՝ 1250, մեխանիկ տրակտորիստներ՝ 2500, տրակտորիստներ՝ 20000 և մշտական բանվորներ՝ 52000 հոգի։ Յեվ բացի այս՝ դաշտային աշխատանքների ժամանակ անհրաժեշտ ե հրավիրել նաև սեզոնային բանվորներ։

Իհարկե, խորհրդային տնտեսությունների բանվորների վոչ բոլոր, բայց զգալի մասը կտա գյուղական կոմյերիտմիությունը։ Բայց այդ գործը պետք ե այնպես կազմակերպել, վորպեսզի ինքնահոսկերպով չընթանա։ Հարկավոր ե լավ, կարգապահ, աշխատասեր յերիտասարդներից ջոկել և ուղարկել կուրսեր, վորպեսզի ավարտելուց հետո այս յերիտասարդները խորհրդային տնտեսությունների արտերում կարողանան ղեկավարել պողպատե ձին՝ տրակտորը։

Պետք ե յենթադրել, վոր գյուղական կոմյերիտմիությունը կկարողանա տալ վոչ միայն շարքային տրակտորիստներ և մեխանիկներ, այլ և գյուղատնտեսներ։ Հաճախ պատահում ե, վոր կոմյերիտականը թողնում ե գյուղը, գնում ե սովորելու և հրաժեշտ տալով իր ընկերներին, խոստանում ե ուսումն ավարտելուց հետո գալ գյուղ և այնտեղ աշխատել։ Բայց վորոշ տարիներ սովորելուց հետո՝ նա չի ցանկանում բաժանվել քաղաքի կյանքից։ Քիչ չեն մեզ մոտ այնպիսի գյուղացիներ, վորոնք խորհրդային արտերի բերքատվությունը բարձրացնելու փոխարեն քաղաքի գրասենյակների դռներն են մաշում.

Տրակտորների կոլոննաներով և մեքենայացրված աշխատանքով խորհրդային ահռելի տնտեսությունների կառուցումը, հացահատիկային ֆաբրիկաների հիմնումը, ահա այն հեշտ և գեղեցիկ նպատակը, վորը գյուղական կոմյերիտմիությունը պետք ե դնի իր այն անդամ-

ների առաջ, վորոնց ուղարկում է քաղաք սովորելու։ Թող այս նոր յերիտասարդ գյուղատնտեսներն իրենց ուժն ու գիտությունը նվիրեն խորհրդային՝ ահռելի տնտեսությունների շինարարության գործին։

5. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարի մեր միության կկ հայտարարեց—խորհրդային արտերի բերքատվության բարձրացման յեվ խորհրդային տնտեսությունների կոոպե-րացման յեվ կոլեկտիվացման արշավ։

Չկա, վոչ մի բջիջ, վոր լսած չլինի այս մասին։ Գյուղական կոմ-յերիտասարդականների մեծ մասը մասնակցեցին այս արշավին։

Ցեվ այս գործը այնքան կարևոր է, վոր չպետք է սահմանափակ-վել լոկ արշավով, այլ բոլոր ժամանակ, վողջ ուժերը և եներգիան պետք է տրամադրել գյուղատնտեսական կոոպերացման և նրա վե-րելքին—ահա թե ինչումն է կայանում մեր խնդիրը։

Հասկանալի յե, վոր կոլեկտիվ և խորհրդային տնտեսություն-ներում մշակվում է մեր վողջ հողի դեռ փոքր մասը։ Դեռ մինչ այժմ գյուղացիական անհատական միլիոնավոր տնտեսություններ իրենց ձևերով, իրենց չնչին գյուղատնտեսական ինվենտարով, մեծ ռիսկով աշխատում են փոքր հողամասերում, մշակում են պապենական ձևե-րով և ստանում չնչին բերք։

Այսպիսի անհատական տնտեսությունը, հաճախակի չի տալիս այն բերքի յերրորդ մասը, վոր նա կտա, յեթե մշակեն ավելի հարմար ձևերով։ Չքավոր գյուղացին և միջակներից ամենաթույլերը իրենց հողա-մասով նույնիսկ չեն կարող կուշտ ապրել։ Ցեվ ահա մեր առաջ հարց է ծագում, թե զարգացնելով կոլեկտիվ տնտեսությունը, մի՞թե մենք այժմ, այս տարի պետք է բոլորովին մոռանանք չքավոր և միջակ անհատ գյուղացուն, օգնել նրան բարձրացնելու իր արտերի բերքա-տվությունը։ Իհարկե, վոչ։ Այդպիսի քաղաքականություն մենք չենք կարող և չպետք է տանենք։ Մենք պարտավոր ենք նրանց ցույց տալ տնտեսական և գյուղատնտեսական օժանդակություն, տալ վարկով մեքենաներ, օժանդակել նրա տնտեսության մթերքը վաճա-ռելու։

Գյուղի զարգացման հիմնական գիծը՝ նրա կոլեկտիվականա-ցումն է, այս պետք է շատ լավ հիշել և գլխավոր ուշադրությունը պետք է ուղղել կոլեկտիվ տնտեսությունների շինարարության գործին, իսկ սրան զուգընթաց՝ պետք է չքավոր ու միջակ անհատական տնտեսություն-ների բերքատվության բարձրացման համար լուրջ ու համառ աշխա-տանք տանել։

Գյուղատնտեսության զանգված աճումը դժվարություններ է հարուցում նաև արդյունաբերության զարգացման նկատմամբ։ Հացի արտադրության բարձրացումը յերկրում՝. պետք է ոժանդակի արդյունաբերական շրջանների հացի մատակարարման գործի դժվարություններից խուսափելուն։ Յեվ վոչ միայն հացի։ Գյուղատնտեսությունը հումույթ է տալիս արդյունաբերությանը։ Վերամշակված ձևով, իբրև ապրանք, նրա մի մասը նորից վերադառնում է գյուղ։ Դեռ մինչև այժմ էլ մեր արդյունաբերության մեջ զգացվում է այս հումույթի պակասը։

Մենք պետք է աջակցենք չքավոր և միջակ անհատ գյուղացուն բարձրացնելու իրենց տնտեսությունների բերքատվությունը և յեկամուտը և՛ այն բանի համար, վոր Խորհրդային իշխանությունը մտահոգված է աշխատավոր գյուղացիության լայն մասսաների բարեկեցությամբ։ Նա պայքարում է կուլակի դեմ, վորը վոչ իր աշխատանքով, այլ ուրիշի քրտինքով է դիզում հարստությունը. միևնույն ժամանակ նա հոգ է տանում այն մասին, վոր չքավոր և միջակ գյուղացիներն այժմ ավելի լավ ապրեն, քան առաջ եյին ապրում։

Ահա թե ինչու մենք մեր առաջ նպատակ ենք դնում վոչ միայն կոլտնտեսությունների և կոոպերացիայի շինարարության, այլ և չքավոր և միջակ անհատական տնտեսությունների ոժանդակության խնդիրը։ Մենք կարող ենք գյուղացիական արտերի բերքատվությունը 5 տարվա ընթացքում բարձրացնել $35^0/_0$-ով։

Այս անհնարին չէ։ Չէ՞ վոր արտասահմանի շատ յերկրներում բերքը մերից յերեք անգամ ավելի չէ։ Յեվ սա վոչ թե նրանից է, վոր այնտեղի գյուղացիների հողը լավ է, այլ վոր նրանք ավելի լավ են մշակում, վորովհետև նրանք կիրառում են՝ տրակտորներ, քիմիական պարարտանյութեր, աշխատում են գյուղատնտեսների ղեկավարությամբ, միշտ նրանց խորհուրդներին են դիմում և կատարում նրանց ցուցմունքները։

Կան մի շարք ձեռնարկումներ, վորոնք առանց զգալի ծախսերի կարող են բարձրացնել գյուղատնտեսության բերքատվությունը։ Թվենք նրանցից մի քանիսը՝ ցանել զտված սերմեր, բոլոր սերմացվի զտումը և տեսակավորումը, պայքար վնասատուների դեմ, շարքային ցանքս, աղբի՝ իբրև պարարտանյութի ավելի ճիշտ և լրիվ ոգտագործումը, ֆոսֆորային փոշու, մոխրի և կրի լայն ոգտագործումը պարարտացման համար, կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների մեջ աշխատող գյուղացիության ինվենտարի ավելի լրիվ ոգտագործումը։ Բերքատվության բարձրացման հիշյալ ձեռ-

նարկումները, փորձի հիմված են ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի փորձման մեջ, պարզ եվ մատչելի յեն բոլոր գյուղացիների համար, բայց մեր թարու-թյունը և պաշտոնական սովորությունները խանգարում են մեզ առայժմ ամենուրեք կիրառել այն։

Այսպիսի ձեռնարկումների կիրառումը այնքան էլ դժվար չէ, իսկ նրանից ստացված արդյունքը շատ մեծ կլինի։ Հյուսիսային Կովկասում կայացավ բերքատվության բարձրացմանը նվիրված համագումար։ Այնտեղ մի շարք գյուղացիներ դուրս յեկան և ասացին, վոր ձեռնարկումների մի մասը պետք է վոր կառավարությունը պարտադիր կարգով անցկացնի։ Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր այս ձեռնարկումների կիրառման գործում մեծ դեր կարող են բերել գյուղական կոմյերիտականները։

Ագիտացիայով, իրենց սեփական տնտեսության մեջ որինակներ ցույց տալով, կոմյերիտականները գյուղացիներին կարող են համոզել հողի մշակումը կուլտուրական ձևերով ավելի շուտ սկսել։

Ահա ինչպես են նկարագրում մի թերթում կոմյերիտական բերքարշավի առաձին արդյունքները։

Կոմյերիտական բերքարշավի առաջին հոտալը վերջանում է։

Ռոսք ունեն Ուլյանովսկի նահանգի կոմյերիտական կազմակերպությունները. այն նահանգի, վոր վաղուց ի վեր հայտնի յէ սակավահողությամբ և գյուղացիական բնակչության չքավորությամբ։

Ուլյանովի կոմյերիտականներն առաջին տեղն եյին բռնում ագքատիկ, գյուղացիական հողի վրա բերքատվության բարձրացման գործում։

Նահանգում աշխատող բոլոր տնտեսկավորող մեքենաներն սպասարկվում եյին կոմյերիտականների և նույնիսկ պիոներների կողմից։ Կոմյերիտական բջիջների նախաձեռնությամբ զտված և տեսնյալ հազար տոնն սերմացու։

Ուլյանովի նահանգի 5 գավառներում, վորտեղ մինչև այժմ սրակ չեն յեկել արորից, կոմյերիտական կազմակերպությունների միջոցով տարածված է 1600 գութան, 16 տեսակավորող, 52 ցանող մեքենաներ, 44 առամնափոցխ և 2 կալսող մեքենա։

Սկոպինսկի գավառում հիմնվել է 15 հատ վերանորոգող կոմյերիտական բրիգադաներ, քաղաքի արտադրողական բջիջները 32 բրիգադա ուղարկել են գուղատնտեսական ինվենտարի վերանորոգման համար։ Վերանորոգման հանրագումարները. վերանորոգված է 111 հատ գութան, 19 հատ տեսակավորող մեքենա և ուրիշ շատ գյուղատնտեսական ինվենտար։

Ռյաժսկի գավառում ձի ունեցող ամեն մի կոմյերիտական մշակել էր ձիազուրկ չքավորների հողերը։ Գավառում կազմակերպված է 77 հոգուց կարմիր վարողների մի խումբ։

Ռյազանի նահանգի բերքարշավի առաջին նպատը նվիրված էր նաև գյուղացիության կոոպերացման և կոլեկտիվականացման աշխատանքներին։ Վոչ լրիվ տեղեկությունների համաձայն՝ կոմյերիտական կազմակերպությունները հիմնել են 168 հատ զանազան կոոպերատիվ արտադրողական խմբավորումներ։

Վերստին կոոպերացման է ենթարկված մոտ 1000 գյուղացիական տնտեսություններ։

Գյուղացիության մեջ տարվել է կուլտուրական խոշոր աշխատանք։ Սկոպինսկի գավառում միայն կազմակերպված է 16 գյուղատնտեսական խմբակ։

Մի շարք մարզերում գոյություն ունեն խմբակներ, վորոնք ուսումնասիրում են գյուղատնտեսական հարկի մասին հրատարակված նոր օրենքը։

Այնտեղ, վորտեղ առաջ աճում էր մեկ հատ, կոմյերիտական գյուղացիները վորոշել են աճեցնել յերեք հատ։ Միջին Վոլգայի կոմյերիտական կազմակերպությունները բերքարշավն անց են կացրել 3 հիմնական խնդիրների իրականացման նշանաբանի տակ՝ ընդլայնում ցանքսի տարածության, բերքատվության բարձրացում, գյուղացիության արտադրողական կոոպերացման և կոլեկտիվականացման ուժեղացում։

Ցանքսի տարածության ընդլայնումը առանձնապես մեծ նշանակություն ունի Միջին Վոլգայի շրջանի համար, քանի վոր ցանքսի տարածությունն այս շրջանում դեռ չի հասել նախապատերազմյան չափերին։

Կոմյերիտական կազմակերպությունների բոլոր ուժերը նվիրված եյին գյուղական աշխատանքների համար։ Գյուղատնտեսական մինիմումն իրականացվում է հաջողությամբ։ Միջին Վոլգյան շրջանում կոմյերիտականների միջոցով մինչ ապրիլ ամիսը կազմակերպված է 167 կոլտնտեսություն և կոոպերատիվ պարզագույն խմբավորումներ։

Կոմյերիտմիության նախաձեռնությամբ իրականացված է գարնանացանքի կամպանիայի մեջ նշված կոլտնտեսական շինարարության մոտ 40%-ը։

Բերքարշավին մասնակցում են նաև քաղաքի կոմյերիտականները։

Պենզայի գյուղում կոմյերիտմիության միջոցով կազմակերպված

և հսկայական կոլտնտեսություն «Կրասնիյե Գորկի», Կրեմինո գյուղում—70 տնտեսություն ընդգրկող խոշոր ընկերություն։ Խրյաշչևկա գյուղում կոմյերիտականները 200 հեկտար գարնանացանի կոնտրակտացիա չեն կնքում։

Առանձնապես պետք է նշել ՀամԼԿԵՄ-ի Բուզուլուկսկի շրջկոմի աշխատանքները։ Գյուղական բջիջները, այս շրջկոմի ղեկավարությամբ կազմակերպում են 8 կոլտնտեսություն, 4 մեքենաօգտագործական և 16 սերմանման ընկերություն։

Շրջանային հողային վարչությունը իր ժամանակին պարտավորություն է տվել Շուլաևսկի բջիջին, կազմակերպել տրակտորային կայաններ։ Կայանները արդեն կազմակերպված և ընդունված է բնակչության կողմից։ Բուզուլուկսկի շրջանում, կոմյերիտականների միջոցով ցանված է 150 տոննից ավելի հացահատիկ։ Կոմյերիտմիության նախաձեռնությամբ մեծ աշխատանք է կատարված կոնտրակտացիայի նկատմամբ։ Կոնտրակտացիայի է ենթարկված 1600 հեկտար։

Օրենբուրգի գավառաշրջանում ամբողջ Պավլովսկի գյուղերը, ի բաց առյալ կուլակային տնտեսությունների, համախմբված են սերմանման ընկերություններում և ցանքսերն ամբողջապես կոնտրակտացիայի են ենթարկված։

Ուլյանովսկի բջիջում կազմակերպված է կոլտնտեսություն։

Առանձնապես ուշադրության է արժանանում Սամարսկի գավառաշրջանի, Ստավրոպոլսկի շրջանի Մուսորսկի բջիջը։ Այս բջիջն իր աշխատանքներն սկսեց գյուղացոց հետ զրույցներ կազմակերպելով· մինչև գարնանացանի կամպանիայի անցկացնելը, Մուսորսկում գոյություն է ունեցել մեկ հատ գյուղատնտեսական արտել, իսկ այժմ բջջի կողմից կազմակերպված է 8 կոլտնտեսություն և ընկերություն։ Նրանք ընդգրկում են մոտ 400 տնտեսություն։ Մուսորսկի բջջի օրինակին հետևեցին գյուղի բոլոր կոմյերիտականները։

Կոմյերիտմիության ուժերով շրջանում հիմնվել են տասնյակ կոլեկտիվ տնտեսություններ։ Միայն Սամարսկի գավառաշրջանում կան 25 կոլտնտեսություն և 35 կոոպերատիվ խմբավորումներ։ Ուֆ գավառաշրջանում կոմյերիտականներն իրենց ուժերով կազմակերպել են 300 կոլտնտեսություններ և կոոպերատիվ արտադրող խմբավորումներ։

Բայց այն ժամանակ, երբ կազմակերպությունների մեծ մասը մասնակցում էր բերքարշավին, կան այնպիսի բջիջներ, որոնք ոչինչ չեն արել, ինչպես, օրինակ, Սիզրանսկի գավառաշրջանի Ժադովսկի բջիջը հրաժարվեց բերքատվության բարձրացման հարցի քննու-

թյունից։ Կուրնեցկի գավառաշրջանի, Լիտվինսկի շրջկոմը մինչև այժմ էլ գարնանացանի կամպանիայի համար վոչինչ չի արել։

—«Մեր մասսան անգիտակից է, սկի նրանց սերմացանի մասին բան կարելի՞ է հասկացնել,—այսպես եյին ասում Պոլյանսկի շրջանի (Միջին Վոլգա) Պեչկերյաշևսկի բջիջի կոմյերիտականները։

Չերեպանովսկի բջիջը (Միջին Վոլգա) գործնական աշխատանքի փոխարեն զբաղված է վիճաբանություններով։ Մոժարովսկի գյուղում (Օրենբուրգի գավառաշրջան) կոմյերիտականները վոչ մի աշխատանք չեն տանում։ Այն ժամանակ, յերբ բնակչությունը զբաղված է սերմերի զտմամբ՝ կոմերիտականներն զբաղված են հարբեցողությամբ։ Իվանովսկի գյուղում (Օրենբուրգ) կոմյերիտականների աչքի առաջ անգործածության է մատնված տրիեր մեքենան։ Բնակչությունը մտահոգված չէ սերմացվի զտման խնդրով, իսկ կոմյերիտականները վոչ մի միջոց ձեռք չեն առնում։

Այս աշխատանքների ընթացքում, ամեն մի բջիջի առաջ կարեվոր և բարդ հարց է ծագում՝ ինչ կերպ վարվել այն կոմյերիտականների հետ, վորոնք բարձրացնելով իրենց սեփական անհատական տընտեսությունը, մտածել անգամ չեն ուզում կոլեկտիվ մտնելու մասին։ Չէ՞ վոր մեր Միության մեջ 80 հազարից ավելի ինքնուրույն տնտեսատերեր կան։ Յեղել են դեպքեր, վոր նրանցից մի քանիսն սկսելով վարել իրենց տնտեսությունը կուլտուրական ձևերով, վերջացնում են նրանով, վոր դառնում են իսկական կուլակներ։

Կան և այնպիսի կոմյերիտականներ, վորոնք ուղղակի հրաժարվում են կոլեկտիվականացումից։ Ահա մի յերկու օրինակ.

Յագվինսկի բջիջի կոմյերիտական-տնտեսատերերի առաջ խընդիր եր դրված—հարկավոր է անցնել կոլեկտիվ տնտեսության։ Այն ժամանակ, ժողովում, քարտուղարին փոխարինողը—նույնպես տնտեսատեր—հայտարարեց,—«Մենք այդ չենք կարող անել։ Մենք չունենք այն, վոր ամեն մի կոմյերիտական-տնտեսատեր ունենա միատեսակ ինվենտար և շինություններ։ Իսկ յես տրամադիր չեմ ուրիշների համար իմ քարաշեն տունը քար ու քանդ անել»։ Մի կոմյերիտականի մասին «Գյուղացիական յերիտասարդության ամսագրում» տղերքը հետևյալն եյին գրել.

«Սմոլենսկի գավառի Պոչինկովսկի մարզում ամենալավ կուլտուրական կոմյերիտական համարվում է կոմյերիտական տնտեսատեր Գուտմանը։ Կոմյերիտ դպրոցից ստանալով հատ ու կենտ գիտությունն՝ Գուտմանը լուրջ կերպով ձեռք առավ միջոցներ բարձրացնելու տընտեսությունը՝ մտցրեց բազմադաշտյան սիստեմ, ճիշտ ցանքաշրջան,

սկսեց ուղիղ կերպով պարարտացնել և մշակել հողը և, իհարկե, ամեն բանում առաջնորդվում եր գյուղատնտեսի խորհրդով։

Կոմյերիտական բջիջն օգնում եր Գուտմանին. բջիջի ժողովում լսելով Գուտմանի զեկուցումը՝ նրան մի շարք ցուցմունքներ և պարտավորություններ տվին՝ զտել սերմերը, հաշվի առնել տնտեսության եկամուտը, անասուններին նորմայով կերակրել, գոմը լուսավորել և առաստաղ քաշել, այնտեղ վենտիլյացիա (օդ մաքրող մեքենա) դնել, արմատապտուղների նկատմամբ փորձեր անել։ Այս բոլոր պարտավորությունները Գուտմանը հաջողությամբ կատարեց։ Այժմ Գուտմանը ունի 2 կթան կով, լծկան յեզ, 2 ձի, մեկը հասարակ, մյուսը ցեղական։ Յերբ Գուտմանը նորմայով սկսեց կերակրել անասուններին, կերի ծախսը պակասեց 2 անգամ, իսկ կաթն ավելացավ 40%-ով։

Գուտմանը շատ եր ցանում արմատապտուղ, համարյա թե մեկ հեկտար։ Արմատապտուղների բերքը լավ եր՝ մոտ 33 տոնն։ Գուտմանի անասուններն այժմ ապահովված են արմատապտուղներով։ Գուտմանն առաջինը՝ իրենց շրջանում սկսեց կիրառել շարքացանմեքենայի գործածումը և ցանեց (ձրիաբար) գյուղացիների արտերը, վորովհետև գյուղացիք մեքենայի հետ վարվել չեյին իմանում։ Այսպիսով նա ցանեց $4^1/_2$ հեկտար հող։

Բայց մենք գտնում ենք, վոր գյուղատնտեսության բարձրացման գործում Գուտմանի սկսած լավ աշխատանքը կանգ առավ իր ընկման կետում, ամենավճռական հարցի առաջ՝ մինչ դեռ աճի կոմյերիտական ինտենսիվնիկը, կուլտուրական կոմյերիտականը։

Գուտմանն ունի ցեղական անասուններ, վորը կարող ե սպասարկել վոչ միայն իրեն տնտեսության։ Գուտմանի տնտեսությունը միջակից բարձր ե, այսուհետև ել դեռ ե աճելու։

Բավականանալ նրանով, վոր նա սպառողական և գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ ե՝ չի կարելի։ Գուտմանի օրինակելի տնտեսությունը, նրա փորձառությունը, պետք ե հանդիսանա կոլեկ գյուղատնտեսական այն կոլեկտիվի, վորի կազմակերպման համար Գուտմանը ու շրջանի բոլոր կոմյերիտականները պետք ե լարեն իրենց ուժերը։ Այնինչ, հողաշինարարության ժամանակ հողօգտագործման կոլեկտիվ ձևերի մասին ծպտուն չհանեց գյուղացիների առաջ»։

Արդյոք իրավացի՞ եյին տղերքն իրենց նամակում, թե վոչ. անտարակույս, իրավացի եյին։ Կոմյերիտական-կուլտուրական տնտեսատերն անպայման պետք ե լինի կոլեկտիվականացման գործի ազդակը, այլապես նա տնտեսապես կսկսի կորցնել իր կոմյերիտական դեմքը։

Ունել անհատական գյուղացիական տնտեսություն, չքավորնե-

րին և միջակներին, բարձրացնել իրենց դաշտերի բերքատվությունը— խորհրդային իշխանության և գյուղական կոմյերիտմիության պարտականությունն է։ Բայց կոմյերիտականը չպետք է վոր շեղվի ուղիղ ճանապարհից։ Հարկավոր է ձգտել, վորպեսզի բերքատվության բարձրացման բոլոր ձեռնարկումները անցկացվեն կոլեկտիվ սկզբունքներով, յեվ ամեն մի կոմյերիտական պետք է ձգտի իր տնտեսությունը համախմբել, կոլեկտիվացնել ուրիշ գյուղացիների տնտեսությունների հետ։ Այս կերպ պետք է լուծի այս հարցը ամեն մի կոմյերիտական բջիջ և միության ամեն մի առանձին անդամ։

Մենք վերջացնում ենք մեր զրույցը։ Մենք տեսանք, վոր գյուղական կոմյերիտականների առաջ ծավալվում է աշխատանքի հսկայական ասպարեզ։ Գյուղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու գործում նրանց առաջ բացվում են լայն հնարավորություններ, միլիոնավոր գյուղացիական մանր տնտեսությունները մեքենաների ոգնությամբ խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ համախմբելու համար։

Այս համախմբումը պետք է վոր կերպարանափոխի գյուղի դեմքը։ Զքավորությունը պետք է փոխարինի լիությունը, կեղտն ու անգրագիտությունը ճանապարհ պետք է տան կուլտուրականության, ծխացող մութ ճրագը—Իլյիչի պայծառ լապտերին։

Այս խնդիրն այնքան արժանավոր է և այնքան մեծ, վոր չի կարող կասկածի նշույլ թողնել առանձին կոմյերիտականների մեջ։ Ցարկինը արդարացի չէ։ Հնարավոր է և պետք է, վոր կոմերիտականն իր վողջ ուժերը և իր ամբողջ կամքը նվիրի գյուղի վերակառուցման գործին։

Սրանումն է կայանում նրա կոմյերիտական պարտականությունը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ կարելի յէ անել ձեր գյուղում բերքատվությունը բարձրացնելու համար։

2. Քաղաքի կոմյերիտականներն ինչով են ոգնում գյուղին բերքատվության բարձրացման գործում։

3. Ի՞նչ է անելու կոմյերիտական տնտեսատերը։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԸ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խորհրդային Միությունում մենք շատ քաղաքներ և գյուղեր ունենք։ Քաղաքում բնակչությունն աշխատում ե ֆաբրիկաներում և գործարաններում, իսկ գյուղում՝ բնակչության մեծամասնությունն զբաղվում ե գյուղատնտեսությամբ։ Վորքան յերկրում ուժեղ ե զարգացած արդյունաբերությունը, այնքան ել ժողովրդի ավելի մեծ մասն ապրում ե քաղաքներում և աշխատում ե ֆաբրիկաներում և գործարաններում։

Մեր յերկրում ապրում ե ընդամենը 148 միլ. մարդ։ Սրանցից 121 միլիոնն ապրում ե գյուղերում և զբաղվում ե մեծամասամբ գյուղատնտեսությամբ, և միայն 27 միլիոնն ապրում ե քաղաքում, վորոնց մի մասը միայն զբաղված ե արդյունաբերության մեջ։

Համեմատեցեք մեր բոլոր ֆաբրիկաների և գործարանների, նրանց մեջ յեղած մեքենաների և դազգյահների արժեքը, գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատող ձիերի, գյուղատնտեսական մեքենաների, գյուղատնտեսական շինությունների, կովերի և գյուղատնտեսության արտադրության այլ միջոցների արժեքի հետ։ Յեթե մեր ամբողջ արդյունաբերության արժեքը վերածենք դրամի, կստացվի 9 միլիարդ 530 միլիոն ռուբլի, իսկ աշխատող անասունների, գյուղատնտեսական մեքենաների և գյուղատնտեսության մեջ գործադրվող ամեն ինչի արժեքը հասնում ե՝ 28 միլիարդ 700 միլիոն ռուբլու, այսինքն՝ 3 անգամ ավելի, քան արդյունաբերությունում։

1927—28 տնտեսական տարում, իսկ տնտեսական տարին համարվում ե հոկտեմբերի 1-ից, գյուղատնտեսությունը զանազան արտադրանքներ ե տվել 11 միլիարդ ռուբլու, իսկ մեր Միության արդյունաբերությունն արտադրել ե 9 միլիարդ ռուբլու։

Այս բոլոր թվերից պարզ յերևում ե, վոր մեր յերկրի համար գյուղատնտեսությունը մեծ նշանակություն ունի։ Մարդու կյանքի համար անհրաժեշտ բոլոր մթերքներն արտադրվում են գյուղատնտեսության միջոցով։ Շատ գործարանների և ֆաբրիկաների համար հումույթ—կաշի, բամբակ, ծխախոտ, կտավատ, վուշ—այս բոլորը բերվում ե գյուղից։

Խորհրդային Միության բնակչության $^{4}/_{5}$ մասն իր գոյության

միջոցները ձեռք է բերում զբաղվելով գյուղատնտեսությամբ, իսկ միայն $^1/_5$ մասն ապրում է այլ յեկամուտներով։ Հենց այս պատճառով Խորհրդային իշխանությունն այսպիսի մեծ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսության զարգացման գործի վրա։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱԽՈՒՄԸ

Գյուղացուն յերբեմն թվում է, վոր նա ապրում է միայն իր աշխատանքով։ Նրա ընտանիքը վողջ որը աշխատում է, մշակում է արտը, խնամում անասուններին և այլն. իսկ յեթե քննելու լինենք, գյուղացին ինքն իրեն վոչինչ անել չի կարող։ Վորպեսզի մենք վարենք թեկուզ ամենահասարակ արորով, անհրաժեշտ է յերկաթե խոփ, տնտեսության մեջ անհրաժեշտ է կացին, իսկ այս բոլորն ինքդ շինել չես կարող—այս բոլորը պատրաստվում է գործարանում պողպատից և յերկաթից։ Գյուղատնտեսության մեջ գործածվող ամեն մի մեքենա և գործիք շինվում է գործարաններում, բանվորների ձեռքերով։

Հյուսիսային Կովկասի գյուղացին հագնում է ֆաբրիկայում բամբակից պատրաստված շապիկը, իսկ այդ բամբակը ցանել է Միջին Ասիայի գյուղացի ուզբեկը, հյուսիսային շրջանի գյուղացին հագնում է բանվորների միջոցով վոչխարի բրդից պատրաստված բաճկոն, իսկ այդ վոչխարները զարգացրել է Հյուսիսային Կովկասի գյուղացին։

Ամեն մի գյուղական տնտեսություն հազար կապերով կապված է այլ տնտեսությունների հետ և գլխավորապես ֆաբրիկաների և գործարանների հետ, վորոնք նրա համար պատրաստում են անհրաժեշտ մթերքներ։

Յեվ ստացվում է, վոր մարդիկ աշխատում են մեկը մյուսի համար, ստացվում է, վոր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը իրար հետ կապված են և մեկը մյուսից կախում ունի։

Յեթե ֆաբրիկաներում և գործարաններում քիչ արտադրեն թուջ և պողպատ, քիչ կպատրաստեն մեքենաներ և գյուղատնտեսական գործիքներ—այդ դեպքում հնարավոր չի լինի մշակել հողը։ Յեթե գյուղում քիչ քանակությամբ արտադրեն՝ հաց և արդյունաբերության համար հումույթ—կաշի, վուշ, բամբակ, կտավատ և այլն, այդ դեպքում շատ ֆաբրիկաներ և գործարաններ նյութ չեն ունենա վերամշակելու, իսկ բանվորներին ուտելիք չի լինի։

Վերցնենք այսպիսի մի որինակ։ Քաղաքացիական կռիվների ժամանակ, մեր ֆաբրիկաների և գործարանների մի մասը կանգ եր

առել, վորովհետև բանվորներից շատերը գնացել էին կռվի, չկար վառելիք և հումույթ, իսկ մյուս մասն աշխատում էր յերկրի պաշտպանության գործում և արտադրում էր համարյա թե բացառապես զենք և ռումբեր։

Գյուղատնտեսական մեքենաների արտադրանքը կանգ էր առել, իսկ այդ անդրադարձավ գյուղատնտեսության վրա։ Գութանների, տափոցխերի և գյուղատնտեսական մեքենաների արտադրանքի կրճատումը հանդիսանում էր ցանքսերի տարածության կրճատման և հացի արտադրանքի անկման գլխավոր պատճառներից մեկը։

Պատերազմից հետո, յերբ մեր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն սկսել էր վերականգնել, շատ քիչ վուշ և բամբակ էր արտադրվում։ Չնայած նրան, վոր մի շարք կտավի ֆաբրիկաներ վերականգնվում էր, մենք հնարավորություն չունեյինք բանեցնելու միայն այն բանի համար, վոր նրանց համար հումույթ չկար։

Դեռ մինչև այժմս էլ, չնայած վոր տրակտորների և նրանց կցվող գործիքների (գութան, ցանող, հավաքող մեքենա) մեծ պահանջ կա, մենք դեռ այդ պահանջի համեմատ չենք կարողանում արտադրել, իսկ այս հանգամանքը դանդաղեցնում է մեր գյուղատնտեսության զարգացումը, դանդաղեցնում է սոցիալիստական հիմունքներով գյուղատնտեսության վերակառուցումը։ Ամեն մի քայլափոխում մենք հանդիպում ենք այդպիսի օրինակների։

Յեվ գյուղատնտեսությունը, և արդյունաբերությունը հանդիսանում են վողջ ժողովրդական տնտեսության յերկու բաղադրիչ մասերը։ Այս յերկու մասերն էլ մեկը մյուսի հետ սերտորեն կապված են և մեկն առանց մյուսի գոյություն ունենալ չի կարող։ Սրա հետ միասին անհրաժեշտ է, վոր արդյունաբերությունը գյուղին տա այնքան գյուղատնտեսական մեքենաներ, զանազան գործիքներ և սպառման առարկաներ (աղ, շաքար, նավթ, չիթ և այլն), վորպեսզի բավականացնի գյուղատնտեսության վերակառուցման համար։ Անհրաժեշտ է նաև, վոր գյուղատնտեսությունն այնքան հաց, միս, յուղ և ուրիշ սննդանյութեր տա, վոր բավականացնի քաղաքի բոլոր բնակիչներին և այնքան կաշի, վուշ, բամբակ և այլ հումույթ, վոր բավականացնի բոլոր ֆաբրիկաները և գործարաններն անընդհատ աշխատեցնելու համար։

Այս պայմաններում վողջ ժողովրդական տնտեսության զարգացումը համաչափ է ընթանում և առանց ընդմիջումների։ Իսկ յեթե արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման միջև չկա անհրաժեշտ կապ և համաչափություն, այդ դեպքում ստեղծվում են շատ դժվարին պայմաններ։

Վերցնենք, օրինակի համար, վերջերս հացի նկատմամբ ծագած դժվարությունները. Նրանք ցույց են տալիս, թե ինչպես գյուղատընտեսական ամենախոշոր արտադրանքներից մեկի հետամնացությունը բացասական ազդեցություն է թողնում մեր վողջ տնտեսության զարգացման վրա։

Մեր արդյունաբերությունն աճում է։ Արդյունաբերության մեջ ծագած հումույթի պահանջի պատճառով, մի շարք գյուղատնտեսական շրջաններում ավելանում է ճակնդեղի արտադրությունը՝ շաքարի գործարանների համար, բամբակի՝ տեկստիլ ֆաբրիկաների համար, իսկ դրանց հետ համեմատաբար պակասում է հացի արտադրանքը։ Նոր բանվորներ են գալիս գործարանները, ֆաբրիկաները, հացի սպառողների թիվն ավելանում է, իսկ նրա արտադրանքը մնում է միևնույն մակարդակի վրա։

Հացերի ցանքսի տարածությունը դեռ 1926 թ. վերջում նախապատերազմյան մակարդակից 8 %-ով պակաս էր։ Այս դժվարությունը առաջացել է նրանից, վոր կուլակները գիտակցաբար հաց չէին տալիս և դրա պատճառով ազատ շուկայի հացի գները գնալով ուռչում էին։ Իսկ այս բոլորի արդյունքն այն է լինում, վոր բամբակի, վուշի և այլ տեխնիկական կուլտուրաների ցանքսերի տարածությունը կրճատվում էր և նրա փոխարեն աճում հացահատիկային կուլտուրաների ցանքսերի տարածությունը։ Տեխնիկական կուլտուրայի արտադրանքի պակասը առաջ է բերում արդյունաբերության համար հումույթի պակասություն և այսպիսով առաջ է գալիս մի նոր դժվարություն։ Յեվ ինչպես վոր շղթայի մեկ օղակը ձգում է մյուսին, այնպես էլ այստեղ այս բոլորն արգելք է հանդիսանում վողջ տնտեսության զարգացմանը։

Ինչպե՞ս կարելի յե ավելացնել մեր յերկրում հացի արտադրանքը։ Դուք արդեն կարդացիք, վոր մեր գյուղատնտեսությունը չափազանց հետ է մնում այն պատճառով, վոր շատ քիչ է ոգտագործում մեքենաներ, վոր նրանում տեխնիկան շատ թույլ է։ Վորպեսզի ավելի շատ հաց արտադրվի, անհրաժեշտ է հողը մշակել մեքենաներով, ցանել մեքենաներով զտված սերմացու, հողը պարարտացնել քիմիական պարարտանյութերով, վորոնք պատրաստվում են քիմիական գործարաններում։ Իսկ սրա համար անհրաժեշտ է ավելի մեծ քանակությամբ մեր գործարաններում պատրաստել այս մեքենաները և պարարտանյութերը։ Հետևաբար, գյուղատնտեսության զարգացումն արագացնելու համար, անհրաժեշտ է մեր արդյունաբերության զարգացումը վոչ թե թուլացնել, այլ ուժեղացնել և առանձնապես այն մասը, վորը

արտադրում է միայն մեքենաների համար և թե գյուղատնտեսական մեքենաներ։

Դրա համար էլ մեր կուսակցությունը, ինչպես մենք նշեցինք առաջին գլուխներում, իր առաջ նպատակ է դրել ինդուստրիականացնել երկիրը, առաջին հերթին զարգացնել ծանր արդյունաբերությունը, այսինքն՝ արդյունաբերություն, որը արտադրում է՝ վառելիք, մետաղ և մեքենաներ։

Պետք է ասել, որ կուսակցության մեջ կան մարդիկ, նրանք աջեր են կոչվում, որոնք կարծում են, թե կուսակցությունը չպետք է այդքան ուժեղ չափով զարգացնի ծանր արդյունաբերությունը, որ հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել թեթև արդյունաբերության զարգացման վրա։ (Սպառման առարկաների արտադրությունը՝ կաշի, ապրանք, նյութեր և այլն)։ Այս ընկերները չեն հասկանում, որ մեր արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցումը կախում ունի առաջին հերթին (այդ մասին մենք շատ ենք խոսել նախորդ գլուխներում)՝ այսպես կոչված՝ ծանր արդյունաբերության զարգացումից։

Այն ընկերները, որոնք թերագնահատում են ծանր արդյունաբերության զարգացման նշանակությունը, ոժանդակում են կուլակին։ Կուլակը, ամենուրեք, որտեղ որ կարող է, խոսում է, թե «հանա բայլշևիկները կառուցում են մեծ գործարաններ, էլեկտրոկայաններ, իսկ հագնելու ոչինչ չկա։ Կուլակը լավ է հասկանում, որ ֆաբրիկաները, էլեկտրոկայանները և տրակտորը — դա մահ է բերում կուլակային տնտեսության համար։ Դրա համար էլ կուլակը դեմ է երկրի ինդուստրիացման մեր պլանին, դեմ է, որովհետև մենք ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում ծանր ինդուստրիայի վրա, թեպետ և մանրի մասին էլ չենք մոռանում, որովհետև հասկանում ենք, որ առանց դգեստի աշխատելն անհնար է։ Իսկ աջերը, հակառակ իրենց ցանկության, կուլակին բարություն են անում, երբ մեղադրում են կուսակցությանը այն բանի համար, որ նա մեծ միջոցներ է տրամադրում ծանր արդյունաբերության զարգացմանը, որի արդյունքները երևան կգան միքանի տարուց հետո։

3. ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ տարում գյուղատնտեսությունը, որում աշխատում էյին· գյուղի հասակառու բնակչության 60 միլիոնից ավելի մարդիկ, տվեց 11 միլիարդ ռուբլու արտադրանք, իսկ արդյունաբերությունը, որտեղ

զբաղված է 8 միլիոն բանվորություն, ավելի 9 միլիարդ ռուբլու ար-տադրանք։ Այն ժամանակ, յերբ արդյունաբերության մեջ մեկ բան-վորական օրվա ընթացքում արտադրվում է 18 ռ. 36 կոպ. ապրանք, գյուղատնտեսության մեջ մեկ օրվա ընթացքում արտադրվում է 1 ռ. 33 կ., այսինքն՝ համարյա թե 12 անգամ պակաս։

Մեր գյուղատնտեսությունում շատ ուժեր և միջոցներ է սպառ-վում, իսկ արդյունքը շատ չնչին է լինում։ Գյուղացիական տնտե-սությունը շատ քիչ յեկամուտ է ստանում։

Մանր-անհատական տնտեսությունը գյուղատնտեսական զար-գացման հիմնական արգելքն է հանդիսանում։ Նա չի կարող կիրառել բարեփոխված մեքենաներ և շնորհիվ դրան՝ հնարավոր չէ մեր գյու-ղատնտեսության մեջ բարձրացնել աշխատանքի արտադրողականու-թյունը։ Չնայած վոր մեր արդյունաբերությունն արտասահմանի հետ համեմատած շատ հետամնաց է (տես հետևյալ զրույցը), այսուամենայ-նիվ նա ավելի շատ է զարգացած, քան մեր գյուղատնտեսությունը և արտասահմանի նկատմամբ մեծ առավելություններ ունի, վորոնց շնորհիվ մենք հույս ունենք վոչ միայն հասնել, այլ և առաջ գնալ արտասահմանի արդյունաբերությունից։ Ինչումն է կայանում առա-վելությունը։ Մեր յերկրում բոլոր ֆաբրիկաները և գործարանները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո — բանվորների կողմից նախ-կին տերերից գրավվեցին և դարձան պրոլետարական պետության սեփականությունը։ Այժմս մեր միության բոլոր խոշոր ֆաբրիկաները և գործարաններն ունեն միայն մի տեր — պրոլետարական պետու-թյունը։ Մեր արդյունաբերությունն այժմս աշխատում է միասնական ծրագրով։ Արդյունաբերությունից ստացված օգուտը գնում է վոչ թե առանձին կապիտալիստների գրպանները, կամ անձնական ծախսերի, այլ արդյունաբերության հետագա զարգացման։

Շնորհիվ արդյունաբերական շահույթի օգտագործման, շնորհիվ գիտնական մասնագետների կողմից վորոշակի լավ մշակված ծրագրա-յին աշխատանքի, Խորհրդային Միության արդյունաբերությունը զարգանում է ավելի ուժեղ թափով, քան վորևէ կապիտալիստական յերկրի արդյունաբերությունը։ Այն ժամանակ, յերբ վոչ մի կապի-տալիստական յերկրում արդյունաբերության աճումը տարեկան 8—10 %-ից ավել յերբեք չի յեղել, մեր խորհրդային սոցիալիստական ար-դյունաբերությունն, սկսած 1923 թվից, տարեց-տարի ծավալվում է և ավելանում է 18,2 %-ով։ Հետևաբար մեր յուրաքանչյուր տարվա աճման տեմպը (այսինքն՝ արագությունը) 2 անգամ ավելի ուժեղ է, քան կապիտալիստական արդյունաբերության աճման տեմպը, նույն-իսկ նրա ամենաբարենպաստ շրջաններում։

Մեր արդյունաբերության զարգացման առաջին տարիներում, դիտելով նրա աճումը, Խորհրդային Միության թշնամիները մեր հաջողությունները բացատրում եյին բացառապես նրանով, վոր մենք վերականգնում ենք հինը: Բայց, ահա 1927 թ. վերջում մենք հասանք և նույնիսկ անցանք նախապատերազմյան մակարդակը, բայց այնուամենայնիվ մեր աճման թափը չի նվազում. 1928 թ. մեր արդյունաբերությունն աճեց 23 %-ով, իսկ 1929 թ. 20 %-ից ավելի: Ընդ վորում տարեց-տարի խորհրդային արդյունաբերության աճման համար ավելի լայն հնարավորություններ են բացվում, քանի վոր մենք մեր ֆաբրիկաների և գործարանների վերասարքավորում ենք անց կացնում. հին և մաշված դազգյահները և մեքենաները փոխարինում ենք ավելի կատարելագործված մեքենաներով և գիտության ու տեխնիկայի վերջին խոսքի համաձայն կառուցում ենք նոր գործարաններ և ֆաբրիկաներ:

Ինչո՞վ են բացատրվում մեր արդյունաբերության այսպիսի հաջողությունները: Մեր հաջողությունների պատճառն այն է, վոր մեր ֆաբրիկաները և գործարանները պատկանում են վոչ թե առանձին կապիտալիստներին, այլ պրոլետարական պետությանը:

Կապիտալիստական յերկրներում ամեն մի կապիտալիստ աշխատում է իր համար, բացառապես իր հայեցողությամբ, ղեկավարվելով միայն իր անհատական շահերով: Միայն իր շահերից յելնելով, կապիտալիստը վորոշում է, թե ինչ պետք է անի, կամ վոչ: Վողջ արդյունաբերության զարգացման կապիտալիստները շահագրգռված չեն: Կապիտալիստները պայքարում են նոր ձեռնարկություն առաջ գալու դեմ, հակառակ են նոր ֆաբրիկաների և գործարանների կառուցմանը՝ այնտեղ նրանք տեսնում են նոր ախոյանի, վորի դեմ հարկավոր է պայքարել: Զավոդները և ֆաբրիկաները վոչ ծրագրված ձևով են կառուցվում: Յեթե տեսնեն, վոր արդյունաբերության այսինչ ճյուղում կարելի յե արդյունք ստանալ, անմիջապես դեպի այն կողմն են ձգտում կապիտալիստները, շտապելով մեկը մյուսից առաջ անցնել: Այնպիսի ապրանքների պահանջը, վոր մեկ գործարան կարող է բավարարել, կառուցում են մի քանիսը, վորից և առաջ է գալիս ապրանքի գերարտադրություն: Ավելի թույլ կապիտալիստները չեն դիմանում մրցման և ստիպված փակում են իրենց գործարանները: Նոր ֆաբրիկաների կառուցման համար սպառված ահագին աշխատանքն անցնում է ապարդյուն: Մեզ մոտ՝ Միությունում, նոր ֆաբրիկաների և գործարանների կառուցման ամբողջ աշխատանքը կատարվում է լավ մտածված ծրագրով: Ամեն մի նոր գործարանի, նոր ֆաբրիկայի

կառուցման ժամանակ հաշվի չեն առնում հումույթի պաշարը և մեր Միության ամբողջ տնտեսության պահանջները։

Կապիտալիստական յերկրներում իրենց ֆաբրիկաներից և գործարաններից ստացված ոգուտի մեծ մասը կապիտալիստները ծախսում են իրենց անհատական հիմար պահանջների և քմահաճույքների բավարարման համար։ Հարյուր հազարավոր և միլիոնավոր ռուբլիներ ծախսում են կապիտալիստները իրենց անհատական ոգտագործման համար, պալատներ կառուցելով, շքեղ կյանքի, հարբեցողության և շռայլության համար։ Մեզ մոտ՝ Միությունում ամբողջ ոգուտը, մինչև վերջին կոպեկն ամբողջովին գնում է բանվորական պետության տրամադրության և ծախսվում արդյունաբերության հետագա զարգացման ու բարելավման համար։

Կապիտալիստական յերկրներում գործարանատիրոջ և բանվորների միջև տեղի յե ունենում անընդհատ կատաղի պայքար։ Կապիտալիստը ձգտում է բանվորի արյունը ծծել և վճարել նրան վորքան կարելի յե քիչ։ Բանվորը պայքարում է շահագործման դեմ, կազմակերպում գործադուլներ, կանգնեցնում է ֆաբրիկների և գործարանների աշխատանքը։ Այս պայքարը նմանապես ազդում է արդյունաբերության զարգացման գործի վրա։ Մեզ մոտ՝ Միությունում արդյունաբերության տերը հանդիսանում է ինքը՝ բանվոր դասակարգը։ Ամեն մի գիտակից բանվոր մտածում է իր ֆաբրիկայի, իր գործարանի աշխատանքի բարելավման մասին։ Իր բոլոր ընդունակությունները, գիտությունը և պատրաստականությունը բանվորը ձգտում է նվիրել իր արդյունաբերության զարգացման գործին։ Բարելավելով արդյունաբերության աշխատանքը, բանվորը դրանով բարելավում է իր դրությունը, բարելավում է Խորհրդային Միության բոլոր աշխատավորների դրությունը։ Մեզնում բանվորներն իրենք են կառուցում իրենց արդյունաբերությունը և իրենք էլ կառավարում այն։ Մեր գործարանների և ֆաբրիկաների դիրեկտորները նշանակվում են պրոլետարական պետության կողմից՝ նախկին բանվորներ։ Մեր Խորհրդային Միության արդյունաբերության մեջ չեղած այս բոլոր առավելությունները ապահովում են, չնայած մեր տեխնիկական հետամնացությանը, մեր արդյունաբերության ավելի արագ աճումը և զարգացումը՝ համեմատած կապիտալիստական արդյունաբերության հետ։

4. ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՅՑ ՏԱԼԻՍ ՅԵՎ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Այս բոլոր որինակներից յերևում է, թե ինչպես մեր գյուղա-

տնտեսության հետամնացությունը դանդաղեցնում է արդյունաբերության զարգացումը և հակառակը, մեր արդյունաբերության վոչ բավարար զարգացումն արգելք է հանդիսանում գյուղատնտեսության զարգացման։ Ուրեմն, յելնելով ամբողջ ժողտնտեսության շահերից, անհրաժեշտ է, վորպեսզի այս յերկու ճյուղերն էլ նպաստեյին միմյանց՝ բոլոր հնարավոր արագ միջոցներով զարգացնելու սոցիալիստական ուղղությամբ։

Մեր արդյունաբերությունը, վորը հանդիսանում է բանվորության սեփականությունը, ավելի հեշտ է ղեկավարելը։

Ավելի դժվար է ղեկավարել գյուղատնտեսության զարգացումը, վորովհետև նա կառավարվում է վոչ թե մեկ տնտեսատերով, այլ 25 միլիոն ինքնուրույն տնտեսատերերի միջոցով, վորոնցից ամեն մեկը վարում է իր տնտեսությունն այնպես, ինչպես նա հարմար է գտնում։ Այստեղ կարգադրությամբ կամ հրամայելով վոչինչ չի կարելի անել։ Գյուղատնտեսության զարգացման ղեկավարությունը պրոլետարական կառավարությունն անց է կացնում արդյունաբերության և գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով։ Վերցնենք, որինակի համար, Սիբիրում, շաքարի մատակարարումը բավարարելու համար, կառավարությունը վորոշեց այնտեղ Բարնաուլսկի շրջանում կառուցել շաքարի գործարան։ Շաքարի արտադրման համար անհրաժեշտ է հումույթ՝ շաքարի ճակնդեղ. Թեպետ և Բարնաուլսկի շրջանի կլիմայական և հողի պայմանները բարենպաստ են ճակնդեղի զարգացման, բայց վորովհետև ճակնդեղ արտահանելու տեղ չի յեղել, Սիբիրի գյուղացիությունը չի զբաղվել նրա մշակությամբ։ Յերբ գործարանի կառուցման համար անհրաժեշտ հողամասը վորոշված էր, շրջակա բոլոր գյուղերում հայտարարվեց, վոր յեկող տարվանից սկսած, այս շրջանում շաքարի ճակնդեղի գնում տեղի կունենա։ Գործարանի կառուցումը կատարող շաքար-տրեստը գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով սկսեց ճակնդեղ ցանելու և գնելու պայմանագրեր կնքել, տրամադրելով գյուղացիներին հարմար գներով ճակնդեղի սերմացու, միևնույն ժամանակ գործուղելով այնտեղ յերկու փորձառու գյուղատնտեսներ, վորոնք իրենց խորհուրդներով և ցուցմունքներով պետք է ոգնեյին գյուղացիության ճակնդեղի մշակման և զարգացման գործին։

Ճակնդեղի գներն այնպես եյին սահմանված, վոր նրա արտադրությունը գյուղացիության համար ավելի ձեռնտու էր, քան այլ կուլտուրաների արտադրությունը։ Այս պայմանները շահագրգռեցին

գյուղացիներին և նրանք սկսեցին զբաղվել ճակնդեղի արտադրությամբ։

Ճակնդեղի արտադրության հետ միասին, գյուղացիներն սկսեցին փոխել ցանքաշրջանը և զարգացնել ուրիշ նոր կուլտուրաներ։ Մեծ քանակությամբ կերի պաշարը, վորը մնում է ճակնդեղից շաքարի արտադրությունից հետո, հնարավորություն է տալիս ավելի եժան կերակրել անասուններին։ Շաքարի գործարանի շրջանում ուժեղ կերպով զարգանում է անասնապահությունը։ Մի խոսքով՝ տնտեսության վողջ սիստեմը արմատապես փոխվում է։ Հացահատիկային շրջանից այս շրջանը վեր է ածվում ճակնդեղա-անասնապահականի։ Գյուղացիական տնտեսությունների եկամուտն զգալիորեն ավելանում է։ Այս օրինակն ակներև կերպով ցույց է տալիս, թե ինչպես արդյունաբերությունը—շաքարի գործարանը փոխում է շրջանի գյուղատնտեսության ուղղությունը և գյուղատնտեսությունը տանում է իր հետևից։ Ահա և մեկ ուրիշ օրինակ։ Տաս գործարանների համար չի բավականացնում հումույթ—վուշ։ Ֆաբրիկաներն աշխատում են առանց լրիվ բեռնավորման և ընդհատումներով, շնորհիվ հումույթի պակասության։ Արտասահմանից գնել հումույթը ձեռնտու չէ, պետք է մեր յերկրում կազմակերպել վուշի արտադրությունը։ Գյուղացիք վուշ չեն արտադրում, քանի վոր նրանց ավելի ձեռնտու յե արտադրել հաց, վորովհետև այն շրջանում, վորտեղ հնարավոր է արտադրել վուշը, հացը շատ թանգ է։ Վորպեսզի զարգացնել վուշի արտադրությունն այն շրջաններում, վորտեղ նա կարող է աճել, անհրաժեշտ է գործն այնպես տանել, վոր այս շրջանների գյուղացիների համար ավելի ձեռնտու լինի արտադրել վուշ, քան թե հաց։ Դրա համար հարկավոր է կազմակերպել այս շրջաններում եժան հացի մատակարարում և մի քիչ բարձրացնել վուշի գինը։

Գյուղատնտեսական կոոպերացիան, վորը պայման է կնքում վուշի ֆաբրիկաների հետ վուշի մատակարարման համար, իրեն հերթին պայմանագիր է կնքում գյուղացիների հետ, վոր նրանք պետք է վուշ ցանեն և արտադրված վուշը վորոշված գներով հանձնեն կոոպերացիային, իսկ գյուղացիներն ապահովված կլինեն հացով, համաձայն սահմանված գների։

Այս պայմանագրի հաշվին՝ գյուղացիներին նախորոք վորոշ գումարներ են տրվում։ Նման պայմանագրի կնքումը կոչվում է՝ կոնտրակտացիա։ Շնորհիվ շրջաններում անցկացրած կոնտրակտացիայի, գյուղացիներն անցնում են վուշի արտադրության։ Այս օրինակները ցույց են տալիս, թե ինչպես արդյունաբերությունն աճում է գյուղատնտե-

ության և տեխնիկական կուլտուրաների զարգացման—ավելացման վրա։ Բայց դեռ սրանում չի կայանում արդյունաբերության դերը գյուղատնտեսության նկատմամբ. մեր սոցիալիստական արդյունաբերությունն արմատապես փոխում է նաև գյուղատնտեսության կառուցվածքը, մտցնելով նրա մեջ նոր տեխնիկա։

Մենք արդեն առաջուց ասացինք, որ մեր գյուղատնտեսությունը շատ հետ է մնացել։ Այս բանը վերջերս գիտակցում է գյուղացիության գերակշռող մասը։ Տեխնիկայի բարելավումը նախ և առաջ կայանում է նրանում, որ ձեռքի աշխատանքը պետք է փոխարինել մեքենաների աշխատանքով։ Մանր տնտեսություններում մեքենաների կիրառումը ձեռնտու չէ. ուստի և այժմս մանր, չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունները համախմբվում են խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Որքան որ խոշոր լինի տնտեսությունը, այնքան էլ ավելի խոշոր գյուղատնտեսական մեքենաների կիրառումը նրանում ձեռնտու է։

Վերցրեք, օրինակ՝ ամերիկական մեքենա կոմբայն. նրան օգտագործում են հացահավաքի ժամանակ։ Այս մեքենան միաժամանակ թե հնձում է և թե անմիջապես կալսում։ Այս մեքենայով կարելի է հավաքել և կալսել մեկ օրում 6—15 հեկտար տարածության ցանքադաշտ ($5\,^1/_2$—17 դեսյատին)։ Հասկանալի է, որ այս մեքենան չի կարելի օգտագործել 5—6 դես. հողամաս ունեցող տնտեսության մեջ։ Տրակտորների, նրանց կցվող գործիքների, գյուղատնտեսական մեքենաների և հանքային պարարտանյութերի արտադրությունը և միանգամայն ակներև օգուտը, որ տալիս է խոշոր մեքենաների կիրառումը գյուղատնտեսության մեջ, կհարկադրի միլիոնավոր անհատական գյուղացիական տնտեսություններին համախմբվել խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ։

Ժողովրդական տնտեսության զարգացման 5 ամյա պլանի մեջ նախատեսնված է 2 տրակտորային հսկայական գործարանների կառուցում, մեկը Ստալինգրադում, մյուսը՝ Ուրալում (Չելյաբինսկ)։ Այս գործարանները մեկ տարում կարտադրեն մոտ 100 հազար տրակտոր և նրանց կցվող գործիքներ։ Գյուղատնտեսության համար այլ մեքենաների արտադրությունը շատ ավելի կբարձրանա։ Ռոստովում կառուցվում է մի հսկայական գործարան, որը պետք է արտադրի այս մեքենաները։ Սիբիրում կառուցվում է մի նոր գործարան, որտեղ պատրաստելու յեն՝ ցանող, հավաքող և սերմազտող մեքենաներ։ Վոլգայի շրջանում—կալսող և ցանող բարդ մեքենաների գործարան։ Ուրալում՝ տրիերների և ցանող մեքենաների գործարան, Ստալինգրա-

ղում՝ կոմբայն մեքենաների գործարան (բարդ մեքենա, որը միաժամանակ թե կալսում է և թե հնձում է), Ուկրայնայում՝ տրակտորներին կցվող գործիքների գործարան։

1927—28 թ. մեր յերկրում գյուղատնտեսական մեքենաներ ընդամենը կառուցված եր 153 միլիոն ռուբլու, իսկ 5 տարուց հետո կկարողանանք արտադրել 700 միլիոն ռուբլու նման մեքենաներ և գործիքներ։ Իհարկե, այս բոլորն անմիջապես կնպաստի անհատական տնտեսությունների կոլեկտիվ տնտեսության անցնելու։ Մեր ողջ գյուղն արմատապես կփոխվի։ 25 միլիոն մանր տնտեսությունների փոխարեն,—մենք կունենանք մեքենա-տրակտորային կայանի շուրջը կազմակերպված միքանի 100 հազար կոլեկտիվ տնտեսություններ։ Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ զգալիորեն կբարձրանա։ Գյուղացիական մասսաների բարեկեցությունը շատ կբարելավվի։

Ահա թե ինչ ճանապարհով մեր սոցիալիստական արդյունաբերությունը տանում է իր հետևից մեր խորհրդային գյուղը։ Ահա թե ինչու մեր արդյունաբերությունը հանդիսանում է ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղը։

5. ԳՅՈՒՂԸ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՈՎ

Գյուղը շահագրգռված է արդյունաբերության զարգացումով ոչ միայն այն բանի համար, որ արդյունաբերությունը նպաստում է գյուղատնտեսության վերակառուցման գործին, այլև նրա համար, որ մեր արդյունաբերության աճումը բարելավում է գյուղացիության ընդհանուր դրությունը, շնորհիվ ապրանքային սովի նվազեցման և արդյունաբերական ապրանքների գների իջեցման։

Այժմ մեզ չի բավականացնում ապրանքների այն քանակը, որ արտադրվում է մեր արդյունաբերությունում, չնայած նրան, որ արտադրվում է ավելի շատ, քան նախապատերազմյան շրջանում։ Ամեն մի գյուղացի պարզ տեսնում է այս պակասը։

Ապրանքային սովը վերացնելու համար մենք պետք է ուժեղ կերպով զարգացնենք մեր արդյունաբերությունը։

Մեր ֆաբրիկաները և գործարանները ոչ միայն պետք է տան ավելի շատ քանակությամբ ապրանք, այլև էժան գներով։ Բայց ապրանքի գների իջեցումը մեր արդյունաբերությունը կարող է անցկացնել այն դեպքում, յերբ նրանց արտադրանքն ավելի էժան կնստի։ Իսկ էժան կնստի այն դեպքում, յերբ մենք կկարողանանք մեր ար-

դյունաբերությունը տալ ավելի կատարելագործված գործիքներ և մեքենաներ, այսինքն՝ այն ժամանակ, երբ մենք մեր արդյունաբերությունը կբարելավենք՝ նրա զարգացման համար ծախսելով նոր միջոցներ։

Ուրեմն, գործարանային ապրանքների գների իջեցման համար մենք պետք է զարգացնենք և բարելավենք մեր արդյունաբերությունը։

Որքան արդյունաբերությունն ավելի զարգանա, այնքան ավելի կբարձրանա քաղաքի բնակչության թիվը, այնքան էլ ավելի կմեծանա սննդամթերքի պահանջը։ Մեր արդյունաբերության ընդլայնումը կավելացնի նաև հումքի պահանջը։

Ուրեմն, գյուղացին շահագրգռված է արդյունաբերության զարգացմամբ և նրա համար, որ նա կարողանա ավելի շատ արտադրել սննդամթերք (հաց, միս, բանջարեղեն) և գործարանների ու ֆաբրիկաների համար հումք (վուշ, կաշի, կտավատ և այլն)։

Որքան որ շատ լինեն գործարանները և ֆաբրիկաները, որքան որ նրանցում բանվորներ շատ լինեն, այնքան էլ ավելի պակաս կլինի գյուղի փակ գործազրկությունը։ Ներկայումս մեր գյուղերում կան 30—40% ավելորդ բանվորական ձեռքեր։ Այս ինչ է նշանակում։ Այս նշանակում է, որ գյուղատնտեսության մեջ զբաղված ամեն մի 100 հոգուց 40 հոգին ավելորդ են։ Յեվ առանց այս 40 հոգու չէլ, մնացածները կարող էին կատարել այն աշխատանքները, որոնք կատարում են այժմ բոլորը։ Գյուղը շահագրգռված է նրանով, որ այս բանվորական ավելորդ ձեռքերն օգտագործվեն։

Մեր արդյունաբերության աճման և զարգացման ընթացքում, այս ավելորդ ուժի քանակը կսկսի պակասել։ Գյուղի բանվորական ձեռքերի մի մասը ներգրավված կլինի արդյունաբերության մեջ, նրա ընդլայնման ընթացքում, մյուս մասը կարող է աշխատել գյուղատնտեսության մեջ, տեխնիկական կուլտուրաների արտադրության գործում, որի պահանջը, արդյունաբերության զարգացման շնորհիվ, զգալիորեն ավելանում է։ Իսկ տնտեսական կուլտուրաների արտադրությունը, որոնք անհրաժեշտ է արդյունաբերության համար իբրև հումք, բանվորական ուժերի ավելի մեծ սպառում է պահանջում, քան հացահատիկի արտադրությունը։

Հաշված է, օրինակի համար, որ այն ժամանակ, երբ հացահատիկային կուլտուրայով զբաղված մեկ հեկտար հողի համար պահանջվում է 20—30 բանվորական օր, տեխնիկական կուլտուրայով զբաղված մեկ հեկտարի համար կպահանջվի ավելի շատ՝ մի հեկտար վուշի՝ 100 բանվորական օր, մեկ հեկտար շաքարի ճակնդեղի՝ բանվորական 120

որ և այլն, հետևապես, տեխնիկական կուլտուրայի զարգացումը գյուղերին կկրճատի գյուղի ավելորդ բանվորական ուժի քանակը և կբարձրացնի գյուղացիության եկամուտը: Իսկ գյուղացիության շահագրգռվածության մասին գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ խոսք լինել չի կարող: Իսկ արտադրության բարձրացումը հնարավոր է միայն մեր արդյունաբերության ընդլայնման դեպքում: Մի խոսքով՝ վոր կողմից էլ վոր մոտենալու լինենք՝ գյուղացիությունը շահագրգռված է նրանում, վոր մեր սոցիալիստական արդյունաբերությունն աճեր ու զարգանար, վորքան հնարավոր և ավելի շատ և ավելի արագ:

Այսպիսի քաղաքականություն են տանում Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը:

Հիմնական խնդիրը, վոր դրված է այժմ բանվորների և գյուղացիների առաջ, հանդիսանում է մեր հետամնաց գյուղատնտեսական յերկրի վերածումն առաջավոր, արդյունաբերական յերկրի: Յեվ բանվոր դասակարգի ու գյուղացիության ամրապնդման համար անհրաժեշտ է զարգացնել մեր արդյունաբերությունը, գյուղատնտեսության համար զարգացնել արտադրական օգնությունը: Յեթե մի քանի տարի սրանից առաջ զոդումը ամրապնդելու համար անհրաժեշտ եր մատակարարել գյուղին գլխավորապես եժան ապրանքներ, ինչպիսին են՝ չիթը, նավթը, կոշիկը,—այժմ ամենագլխավորն այդ չե:

Մեր գյուղի զարգացման գործում ամենահիմնականն այժմ հանդիսանում է գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական նոր հիմունքներով, նոր, ավելի բարձր տեխնիկայով: Իսկ դրա համար մեր արդյունաբերությունը գյուղին պետք է տա վոչ միայն մանուֆակտուրա, մեխ, շաքար, լուցկի և այլն, այլ գլխավորապես այն, ինչ կարող է և նպաստում է գյուղատնտեսությունը վերակառուցելու նոր հիմունքներով. տրակտոր, գյուղատնտեսական խոշոր մեքենաներ: Վորպեսզի այս բոլորը կարողանանք տալ, հարկավոր է մեր յերկրում ավելի շատ տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ կառուցել, իսկ սրա համար էլ պետք է բարձրացնել այն մետաղի արտադրությունը, վորից պատրաստում են տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ: Իսկ բարձրացնել մետաղի արտադրությունը, դա նշանակում է՝ զարգացնել մեր ամենախոշոր արդյունաբերությունը, այսինքն՝ այսպես կոչված՝ ծանր արդյունաբերությունը: Սրանումն է այժմ մեր հիմնական խնդիրը:

Հետևյալ զրույցում մենք ավելի մանրամասն կանգ կառնենք մեր արդյունաբերության դրության և զարգացման խնդրի վրա:

ՎԵՑԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՄՆԱՑ Է

Գյուղական շատ կոմսոմոլներ և ուրիշ ջահելներ հաճախ հարց են տալիս՝ թե ինչու գործարանային ապրանքներն այդքան թանկ են, ինչու գյուղացիական տնտեսության անհրաժեշտ շատ ապրանքներ չկան։

Հասկանալի չե, թե ինչու տղերքն այս մասին հարցնում են, քանի վոր մեզնից ամեն վոք հաճախ ստիպված դատարկ ձեռքով կոոպերատիվից տուն է վերադարձել։

Ինչումն է բանը։ Ինչու դեռ մինչ այժմ էլ, հեղափոխության 12-րդ տարում, յերբ համարյա վողջ ժողովրդական տնտեսությունը իմպերիալիստական և քաղաքացիական կռիվներից և քայքայումից հետո վերականգնել է, մենք դեռ չենք կարողանում լրիվ և էժան գներով Խորհրդային Միության ամբողջ բնակչությանն անհրաժեշտ ապրանքներ մատակարարել։

Այս բոլորն արդյունք է մեր տեխնիկական հետամնացության, այսինքն՝ այն բանի, վոր մեր արդյունաբերությունը թույլ է զարգացած։ *Մենք չունենք հարկավոր քանակությամբ ֆաբրիկաներ և գործարաններ։ Մեզ մոտ վորակյալ բանվորներ քիչ կան։ Մեր արդյունաբերական ձեռնարկությունների մեքենաները հին են և մաշված։*

Համեմատենք մեր Խորհրդային Միության արդյունաբերությունը կապիտալիստական ամենախոշոր յերկրի՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների արդյունաբերության հետ։

ԽՍՀՄ-ում կա մոտ 148 միլ. բնակչություն, իսկ Հ. Ա. Միացյալ Նահանգներում՝ 120 միլ.։ Մեր Միության բնակչության թիվը համարյա թե 30 միլ. ավել է, այնինչ մեր արդյունաբերությունը տասնյակ անգամ ավելի ցածր է, քան Միացյալ Նահանգներում։ Արդյունաբերության հզորությունը չափվում է այն շարժիչ ուժով, վորը շարժման մեջ է դնում ֆաբրիկաների և գործարանների բոլոր դազգյահները և մեքենաները։ Ամեն մի շարժիչի ուժը չափվում է պայմանական կերպով, ձիու ուժի քանակությամբ։ Դրա համար էլ արդյունաբերության ընդհանուր հզորությունը վորոշվում է տվյալ յերկրի արդյունաբերության շարժիչների մեջ յեղած ձիու ուժերի ընդհանուր քանակով։

Հ. Ա. Միացյալ Նահանգների մեջ մշտական սահմանված գործող շարժիչների ընդհանուր հզորությունը 1922 թ. հասնում էր 45½

միլ. ձիու ուժի, իսկ մեր Միությունում մեկ տարուց հետո, այսինքն 1923 թվականին ընդհամենը $3^{1}/_{2}$ միլ. ձիու ուժի, այսինքն՝ 15 անգամ պակաս:

Հ. Ա. Միացյալ Նահանգների էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը 1925 թ. տվյալների համաձայն՝ մեր էլեկտրակայանների ընդհանուր հզորությունից գերակշռում էր 15 անգամ, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության տեսակետից Հ. Ա. Միացյալ Նահանգները ավելի առաջ են գնացել և էլեկտրական էներգիա 22 անգամ ավելի յեն արտադրում, քան մեզնում:

Հենց սրանցից արդեն յերևում է, թե մենք վորքան հետ ենք մնացել: Շարժիչները շարժման մեջ դնելու համար անհրաժեշտ է վառելիք: Ինչպես վոր ձին, վորպեսզի ուժեղ լինի և լավ աշխատի, անհրաժեշտ է կեր, այնպես էլ գործարանի շարժիչը, վորպեսզի աշխատի և շարժման մեջ դնի բոլոր դազգյահները և մեքենաները, կարիք ունի վառելիքի: Ներկայումս արդյունաբերության մեջ կիրառում են 2 տեսակի վառելիք—քարածուխ և նավթ:

Այն յերկրներում, վորտեղ վառելիքը քիչ է, քիչ են լինում նմանապես ֆաբրիկաներն ու գործարանները: Թե ինչպես է դրված վառելիքի գործը մեր Միության և Հ. Ա. Միացյալ Նահանգների արդյունաբերություններում, կարելի յե տեսնել հետևյալից: Համեմատական վերջին տվյալները կան մեզ մոտ 1926 թ. նկատմամբ: 1926 թ. Միացյալ Նահանգներում քարածուխի արտահանումը հավասար էր 602 միլ. տոննի, իսկ նավթի՝ 105 միլ. տոննի, իսկ մեզ մոտ՝ Միությունում քարածուխ՝ 16 միլ. տոնն և նավթ՝ $8^{1}/_{2}$ միլ. տոնն: Դուք տեսնում եք, վոր մեզ մոտ քարածուխ՝ 23 անգամ, իսկ նավթ 13 անգամ ավելի քիչ է արտահանված, քան Միացյալ Նահանգներում:

Յերկաթ, թուջ և պողպատ—ահա այն 3 հիմնական նյութերը, առանց վորոնց անհնար է արդյունաբերության արտադրությունը: Ինչպե՞ս է դրված այս գործը մեզնում և Միացյալ Նահանգներում:

1926 թ. մեր Միությունում արտադրված է յերկաթահանք 3,200,000 տոնն, թուջ՝ 2,400,000 տոնն և պողպատ՝ 3,100,000 տոնն, իսկ Միացյալ Նահանգներում նույն թվականին արտադրված է յերկաթահանք՝ 68,700,000 տոնն, թուջ՝ 39,600,000 տոնն և պողպատ՝ 47,800,000 տոնն: Այս պատկերից պարզ տեսնում եք, վոր բոլոր այս հիմնական նյութերը Հ. Ա. Միացյալ Նահանգներում 16—20 անգամ ավելի շատ են արտադրված, քան մեզնում:

Նմանապես վատ դրության մեջ է մեզ մոտ մեքենաների կառուցման գործը. յեթե մեզ մոտ և Միացյալ Նահանգներում շինված

բոլոր մեքենաների արժեքը վերածենք նախապատերազմյան ռուբլիների, կստացվի, վոր մերոնք 1926 թ. մեքենաներ 20 անգամ ավելի պակաս են շինել, քան Միացյալ Նահանգներում: 1926 թ., յերբ այնտեղ զանազան տեսակի մեքենաներ շինված են 3 միլիարդ 900 միլիոն նախապատերազմյան ռուբլու, մեզ մոտ միայն 187 միլ. ռուբլու:

Այժմ, յերբ մենք համեմատեցինք մեր և Միացյալ Նահանգների արդյունաբերության վերաբերյալ թվերը, հասկանալի յե, թե ինչու մեզ մոտ պակասում ՚են ապրանքները և ինչու մեզ մոտ ավելի թանկ են քան արտասահմանում:

ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆՔ ՄԵՆՔ ԱՅՍՊԵՍ ՀԵՏ ՄՆԱՑԵԼ

Ինչու մենք այսպես հետ ենք մնացել: Ինչու մենք, ապրելով բնական հարստություններ ունեցող յերկրում, ածուխի, յերկաթի, անտառանյութի և՞այլ անսպառ պաշարներով, չենք կարողանում Ամերիկային հավասար ընթանալ: Չե՞ վոր մենք ինքներս ենք տերերը և մենք ինքներս ենք կառուցում մեր արդյունաբերությունը: Միթե մենք չենք կարող գործն այնպես տանել, վոր կարողանանք նույնքան ապրանք արտադրել, վորքան Միացյալ Նահանգներում է արտադրվում:

Իհարկե, մենք կարող ենք և կարտադրենք նույնքան և դեռ ավելին, քան Ամերիկան, բայց դրա համար ժամանակ է հարկավոր: Հին Ռուսաստանից մենք շատ վատ ժառանգություն ենք ստացել: **Մենք դեռ նախապատերազմյան շրջանում ել հետ եյինք մնում Ամերիկայից վոչ պակաս, քան ներկայումս:** Դրանից հետո տեղի ունեցավ իմպերիալիստական ծանր պատերազմը: 3 տարի մենք քաղաքացիական կատաղի պատերազմ եյինք վարում և միջազգային բուրժուազիայի հարձակումներից մենք հազիվ դուրս յեկանք: Յերբ վերջացան քաղաքացիական կռիվները՝ մեր արդյունաբերությունը սարսափելի քայքայված եր: Մեր փաբրիկաների և գործարանների մեծ մասը կանգնած եր: Մեքենաները և դազգյահները մաշված եյին և փչացած. ածխահանքերը քանդված եյին և լցված ջրով, մենք ստիպված եյինք ամեն ինչ նորից սկսել: Առաջին հերթին մենք պետք է վոր վերականգնեյինք քանդվածը, ոգտագործելով նրանից այն, ինչ վոր հնարավոր եր և ապա միայն սկսեյինք նոր շինարարություն:

Ի՞ՆՉՊԵՍ Է ԱՃՈՒՄ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական կռիվների վերջանալուց հետո անցել է 6 և կես տարի: Ի՞նչ դրության մեջ է գտնվում այժմ մեր արդյունաբերությունը: 1927 թ. վերջում, անցյալ տնտեսական տարվա ընթացքում

մեր արդյունաբերությունն արդեն ապրանքներ պատրաստեց այն քանակությամբ և դեռ մի քիչ էլ ավելի նախապատերազմյանից (101% նախապատերազմյանի)։ Իսկ առանձին ճյուղերի նկատմամբ՝ նախապատերազմյանից զգալիորեն ավելի։ Քարածուխի արդյունաբերությունը նախապատերազմյանի 107%, նավթ՝ 108%, բամբակի գործվածքներ՝ 106% և այլն։

Բայց հենց նույն տարում, վորը համարվում է վերականգնման շրջանի տարի, թուջի և մետաղների նկատմամբ մենք դեռ չենք հասել նախապատերազմյան արդյունաբերությանը։

Ավելի առաջ գնացինք հետևյալ տարում։ 1927—28 թ. մեր արդյունաբերությունն արտադրեց 15%-ով ավելի ապրանք նախապատերազմյանից։ Ուրեմն ինչով է բացատրվում զանազան ապրանքների զգացվող պակասը, չե՞ որ մենք դեռ սրանից 2 տարի առաջ վոչ միայն հասել ենք նախապատերազմյան մակարդակին, այլև անցել ենք։ Ինչու, այնուամենայնիվ, մեզնում զգացվում է ապրանքի պակաս։ Այս բոլորը բացատրվում է հետևյալ պատճառներով։ Նախ յեվ առաջ՝ շնորհիվ իրեն տնտեսական դրության զգալի բարելավման, ամեն մի բանվոր, գյուղացի կարող է ավելի շատ ապրանք գնել, քան թե առաջ։ Յերկրորդ՝ մենք այժմս արտասահմանից սպառման ապրանք համարյա թե չենք ներմուծում։ Ներկայումս մենք չենք ներմուծում վոչ կաշի, վոչ մանուֆակտուրա, վոչ էլ մետաղյա իրեր։ Արտասահմանից մենք գլխավորապես ներմուծում ենք՝ մեքենաներ և դազգյահներ մեր գործարանների սարքավորման համար։ Արտասահմանյան գնումների համար մեր բոլոր դրամական միջոցները ծախսում ենք այնպիսի հաշվով, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում կարողանանք ինքնուրույն կերպով մեր արդյունաբերությունը դնել և արտադրել մեր գործարաններում և ֆաբրիկաններում այն բոլորը, ինչ մեզ հարկավոր է։ Ավելի լավ է վորոշ ժամանակ համբերել և յոլա գնալ առանց վորոշ ապրանքների, քան թե ընկնել արտասահմանյան կապիտալի լծի տակ և կախման մեջ լինել նրանից։ Ահա այս յերկու պատճառների շնորհիվ է, վոր չնայած արդյունաբերության զարգացման նախապատերազմյան շրջանն անցել ենք, մենք դեռ մինչ օրս էլ զգում ենք ապրանքների սով։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու մեզ մոտ պակասում են գործարանային ապրանքներ, իսկ մինչ պատերազմը բավականացնում էր։
2. Ինչու հնարավոր չէ մեծ քանակությամբ չիթ և ուրիշ ապրանքներ արտադրել առանց քարածխի և թուջի։

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեզ մոտ ոչ միայն պակասում են բնակչության զանազան կարիքները բավարարելու ապրանքները, այլ և մենք չենք կարողանում ներկայումս մեր ֆաբրիկաներում արտադրել մեր տնտեսության զանազան ճյուղերի, և գլխավորապես գյուղատնտեսության զարգացման համար այն, ինչ անհրաժեշտ է։ Ձեզնից ամեն մեկ գիտե, օրինակի համար՝ տրակտորները և նրանց կցվող գործիքները։ Եթե մեզ մոտ լիներ մի քանի անգամ ավելի տրակտորներ, քան ունեցել ենք այս տարի, մենք կկարողանայինք լիովին բավարարել կոլտնտեսություններ կազմակերպող գյուղացիներին։ Մենք կկարողանայինք զգալիորեն զարգացնել մեր գյուղատնտեսությունը։ Բայց մեր գործարաններն այժմ դեռ չեն հարմարեցված տրակտորների արդյունաբերության, և մենք մեծ դժվարություններով այս տարի հազիվ կարողանանք պատրաստել մի քանի 1000 տրակտորներ։

Մեզ մոտ գլխավորապես շատ են այն գործարանները, որոնք արտադրում են գլխավորապես սպառման առարկաներ՝ մանուֆակտուրա, կոշկեղեն, լուցկի և այլն։ Այսպիսի գործարանները և ֆաբրիկաները կոչվում են թեթև արդյունաբերություն։

Խոշոր մեքենաներ, տրակտորներ, ավտոմոբիլներ, զանազան գազգյաններ մինչ պատերազմը և հեղափոխությունը բերվում էր արտասահմանից։ Մեր գործարաններում նրանք չէին արտադրվում և չէին էլ կարող արտադրվել։ Մեր գործարանների մեծ մասը սարքավորված էր արտասահմանյան մեքենաներով և գազգյաններով։

Ցարական Ռուսաստանը կախում ուներ արտասահմանյան կապիտալիստներից։ Նրանք մեր յերկրում կառուցում եյին իրենց գործարանները և ֆաբրիկաները, իրենց ապրանքները վաճառում եյին Ռուսաստանին և մեզ մոտ ավելի շատ օգուտներ եյին ստանում, քան իրենց մոտ — արտասահմանում։

Ռուսաստանից արտասահման եր արտածվում հումույթ և գյուղատնտեսական մթերքներ, իսկ այնտեղից Ռուսաստան ներմուծվում եր արդյունաբերության ապրանքներ և գլխավորապես լայն սպառման առարկաներ պատրաստող, արդյունաբերական ձեռնարկությունների սարքավորում։ Այժմ շատ բան է փոխվել։ Մեզ մոտ բանվորները գյուղացիների հետ միասին իշխանությունը վերցրին իրենց ձեռքը։ Մեր յերկիրը չի կարող արտասահմանյան կապիտալիստներից կախման մեջ լինել այնպես, ինչպես ցարի ժամանակ, թե չէ տնտեսական կախումը կարող է նորից վերադարձնել մեզ մոտ կալվածատիրոջը և կապիտալիստին։

Մենք չենք ցանկանում և չպետք ե կախում ունենանք կապիտալիստներից։

Իսկ դրա համար հարկավոր ե, վոր մենք մեր արդյունաբերությունը կարողանանք այնպես վերակառուցել, վոր նա լրիվ կերպով կարողանա բավարարել սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող մեր յերկրի բոլոր պահանջները։ Բայց այդ ինչ կերպ անել։ Ինչպե՞ս հասնել այնպիսի դրության, վորպեսզի մենք ինքներս, մեր գործարաններում և ֆաբրիկաներում կարողանանք արտադրել ամեն ինչ այնպիսի քանակությամբ և այնպիսի գներով, վոր մենք իրոք վոր կարողանանք ապահովել մեր բոլոր կարիքները։ Դրա համար, մենք պետք ե վերասարքավորենք գոյություն ունեցող ձեռնարկությունները, մաշված և հին մեքենաները փոխարինենք նոր, լավ աշխատող մեքենաներով, կառուցենք մի շարք նոր ֆաբրիկաներ և գործարաններ, կազմակերպենք միանգամայն նոր արտադրություններ կապիտալիստական յերկրներում կիրառվող և դեռ մեզ անծանոթ նոր տեխնիկայի հիման վրա։

Վորպեսզի հասնենք և մինչև իսկ անցնենք առաջավոր կապիտալիստական յերկրներից, մենք պետք ե ինդուստրացման յենթարկենք մեր յերկիրը, և դրա համար, նախ և առաջ, պետք ե զարկ տանք ծանր արդյունաբերության զարգացմանը, այսինքն՝ այնպիսի գործարանների, վորտեղ շինվում են մեքենաներ ֆաբրիկաների և գյուղատնտեսության համար. այնպիսի գործարաններ, վորոնք արտադրում են ուրիշ ֆաբրիկաների համար՝ թուջ, պողպատ և արտադրության համար անհրաժեշտ այլ պարագաներ։ Միայն այն յերկիրը, վոր ինքն ե պատրաստում իրեն անհրաժեշտ դազգյանները և մեքենաները, կարող ե տնտեսապես կախում չունենալ ուրիշ յերկրներից։ Դազգյաններ և մեքենաներ պատրաստող ֆաբրիկաները և գործարանները սովորաբար լինում են խոշոր և թանգարժեք ձեռնարկություններ։

Այսպիսի ձեռնարկություն կառուցելու և սարքավորելու համար անհրաժեշտ ե շատ ժամանակ և միջոցներ։ Այսպիսի ամեն մի գործարան կառուցվում ե 3—5 տարվա ընթացքում և արժե 40—50 միլիոն ռուբլի։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Ինչպես պետք ե աճի և զարգանա մեր արդյունաբերությունն առաջիկա տարիների ընթացքում։ 1929 թ. մայիսի վերջում Մոսկվայում կայացած Միության Խորհուրդների վերջին համագումարում, Միության

ամեն մի կողմերից հավաքված բանվորների և գյուղացիների ներկայացուցիչները քննեցին և հաստատեցին մեր, վողջ տնտեսության զարգացման հնգամյա պլանը։

Այս պլանը կազմվում եր մի քանի տարիների ընթացքում։ Տասնյակ և, հարյուրավոր գիտնականներ, պրոֆեսորներ, ինժեներներ, տնտեսագետներ, ուսումնասիրում եյին մեր արդյունաբերության դրությունը, մեկնել են արտասահման, ծանոթացել այնտեղ տնտեսության և արդյունաբերության դրության հետ, հաշվի յեն առել մեր ցեխամասերը, կատարել են մի շարք հետազոտություններ և յերկար համառ աշխատանքից հետո, հաշիվների հիման վրա կազմել են մեր արդյունաբերության զարգացման 5-ամյա պլանը։ Այս պլանը քննված է տեղական բոլոր կազմակերպություններում, տեղերի հազարավոր աշխատավորներ նրա մեջ մի շարք ուղղումներ և լրացումներ են մտցրել։ Վերջապես բոլոր հաշիվներից և ստուգումներից հետո՝ նա հաստատվում է պետության և Խորհուրդների Համամիութենական համագումարի կողմից։ Այս պլանի համաձայն ինչպես է նախատեսնվում մեր արդյունաբերության զարգացումը։

Մեր ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության շարժիչների ընդհանուր հզորությունը 1932—33 թ. $6^1/_2$ անգամ ավել կլինի—1913 թ. շարժիչների ընդհանուր հզորությունից, իսկ ելեկտրական եներգիայի արտադրությունը 1913 թ. հետ համեմատած կավելանա ավելի քան 8 անգամ։ Այս բանի համար մենք պետք է կառուցենք նոր, ընդլայնենք և վերջացնենք սկսվածներից ընդամենը 42 ելեկտրոկայան։ Բոլոր այս աշխատանքների համար հնգամյակում նախատեսնված է 3 միլիարդ ռուբլուց ավելի։

Մենք արդեն ասացինք, վոր շարժիչի համար, ինչպես և ձիու համար հարկավոր է կեր վառելիքի ձևով։ Ուրեմն, բոլոր շարժիչների ընդհանուր հզորության ավելացումը կպահանջի նաև վառելիքի արտադրության բարձրացում։ Հնգամյակի վերջում մենք 1913 թվի հետ համեմատած $2^1/_2$ անգամ ավելի քարածուխ յեվ նավթ ենք արտադրելու յեվ 10 անգամ ավելի տորֆ։ Տորֆի 10 անգամ ավելի արտադրությունը պետք է բացատրել նրանով, վոր մեր շատ ելեկտրոկայաններ պետք է շինվեն տորֆի ճահիճներում։ Ցեվ այս կայանների համար գլխավոր վառելիքը պետք է լինի տորֆը։ Քարածխի արտադրությունը 5-ամյակի վերջում պետք է անցնի կապիտալիստական շատ յերկրներից, բացի Միացյալ Նահանգներից, Անգլիայից և Գերմանիայից։ 1932—33 թվականին մենք պետք է արտադրենք 75 միլիոն տոնն քարածուխ և 22 միլիոն տոնն նավթ, 1913 թվականի արտահանած 28 միլ. տոնն քարածխի և 9 միլ. տոնն նավթի փոխարեն։

Ոչ պակաս խոշոր աշխատանքներ են նախատեսնված և պետք ե կատարվեն 5-ամյա պլանի համաձայն, յերկաթի, թուջի և պողպատի արտադրության նկատմամբ։ 1932—33 թ. մենք յերկաթ, թուջ և պողպատ $2^1/_2$ անգամ ավել կարտադրենք 1913 թվի նկատմամբ։ Թուջի արտադրության նկատմամբ 5-ամյակի վերջում մենք պետք ե գրավենք աշխարհում յերկրորդ տեղը և մեզանից առաջ կլինեն Միացյալ Նահանգները և Գերմանիան։ Մենք առաջ կանցնենք այնպիսի հզոր կապիտալիստական յերկրներից, ինչպիսին են՝ Անգլիան յեվ Ֆրանսիան։

Հնգամյակի վերջում ավելի մեծ հաջողություններ կունենանք գյուղատնտեսական մեքենաների կառուցման գործում։ 1932—33 թ. մենք կարտադրենք մեքենաներ 9 անգամ ավելի շատ, քան մինչ պատերազմը՝ 1913 թ.։ Յեթե 1913 թ. արտադրվել ե 67 միլ. ռուբլու մեքենաներ, 1932—33 թ. գյուղատնտեսական մեքենաներ կարտադրենք, նախապատերազմյան գներով հաշված՝ 498 միլիոն ռուբլու։

Մեր մետաղարդյունաբերության և մեքենաշինարարության ծավալման պլանի իրականացումը պահանջում ե շատ մեծ միջոցներ։ Այսպիսի քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ արտադրելու, նախապատերազմյանից $2^1/_2$ անգամ ավելի յերկաթ, թուջ և պողպատ արտադրելու համար, մենք պետք ե ընդլայնենք և վերասարքավորենք մեզ մոտ յեղած գործարանները և կառուցենք նորերը։

Այս բոլորը կարժենա 4 միլիարդ ռուբլի։ Մենք Ուկրայնայում պետք ե կառուցենք 15 հատ նոր դոմենի վառարաններ, վորտեղ ամեն մեկում հալելու յեն 200 հազար տոնն թուջ, և 10 դոմենի վառարան Ուրալում, վորտեղ տարեկան ամեն մեկում 180 հազար տոնն թուջ են հալելու։ Ուրալի և Ուկրայնայի գոյություն ունեցող բոլոր մետաղարդյունաբերական գործարանները մենք պետք ե վերասարքավորենք գիտության վերջին խոսքի համաձայն։ Յեվ այս կերպ արտադրությունը $2^1/_2$ անգամ կավելանա։ Թուջի և պողպատի մնացած աճումը պետք ե տան Ուրալում, Ուկրայնայում, Սիբիրում Կուզնեցկի ածխային շրջանի և Կերչում նոր կառուցվելիք հսկա գործարանները։

Յեթե մենք վերասարքավորենք գործարանները և կառուցենք նորերը, այդ դեպքում լրիվ կերպով կիրականացնենք 5-ամյակում նախատեսնված մետաղի արտադրության ծրագիրը։ Յեվ կգրավենք արդյունաբերական զարգացած յերկրների մեջ առաջին տեղերից մեկը։ Բայց պետք ե դեռ թուջից և պողպատից պատրաստել մեքենաներ, դրա համար պետք ե վերասարքավորվեն՝ Մոսկվայի, Լենինգրադի, Սորմովի, Կոլոմնայի և Ուկրայնայի խոշոր գործարանները։ Նույն 5-ամյակում Ուրալում, Սվերդլովսկ քաղաքում պետք ե ավարտվի խո-

ջոր մեքենաներ պատրաստող գործարանի կառուցումը. այս գործարանը նստելու չէ 50 միլիոն ռուբլի։ Նիժնի Նովգորոդում պետք է կառուցվի ավտոմոբիլներ պատրաստող հսկայական գործարան, 140 միլիոն արժողությամբ, որը տարեկան պատրաստելու է 100 հազար ավտոմոբիլ։ Պետք է կառուցվի յերկու տրակտորային գործարան, մեկը Ստալինգրադում, մյուսը՝ Ուրալում, 70 միլիոն ռուբլու արժողությամբ։ Կատարվելի գյուղատնտեսական մեքենաներ պատրաստող յերկու նոր իսկական գործարանների կառուցումը, մեկը Ռոստովում՝ 46 միլիոն ռուբլու արժողությամբ, մյուսը՝ Ոմսկում։ Բացի այս՝ զգալիորեն կնդարձակվի տրակտորների արտադրությունը Պուտիլովսկի գործարանում, որը կարտադրի տարեկան 20 հազար տրակտոր, և Խարկովի գործարանում՝ տարեկան 3 հազար։ Ընդամենը գյուղատնտեսական մեքենաներ պատրաստող գործարանների ընդարձակման համար պետք է ծախսվի 180 միլիոնից ավել, չհաշված տրակտորային գործարանների կառուցումը։

Այս նոր շինարարությունն արմատական փոփոխություն կմտցնի մեր շինարարության մեջ։ Մենք կլինենք աշխարհիս հզոր արդյունաբերական երկրներից մեկը։ Գյուղատնտեսական ուժեղ մեքենաշինարարությունը փոփոխություն կմտցնի նաև մեր գյուղատնտեսության մեջ։ Հարյուր հազար տրակտորների և նրանց կցվելիք գործիքների յուրաքանչյուր տարվա արտադրությունը կբարձրացնի մեր գյուղը նոր աստիճանի վրա և անսովոր կերպով կարագացնի նրա կոլեկտիվականացումը։ Գյուղատնտեսության համար վոչ պակաս նշանակություն կունենա նաև քիմիական արդյունաբերությունը, որն այժմս մեզ մոտ թույլ է զարգացած, իսկ ցարական հին Ռուսաստանում համարյա միանգամայն բացակայում էր։ Հնգամյակի ընթացքում արդյունաբերության այս ճյուղը մենք պետք է ծավալենք այնքան, որ 1932—33 թ. կարողանանք արտադրել հողի պարարտացման համար գործադրվող 260 հազար տոնն սուպերֆոսֆատի փոխարեն 3 միլ. 400 հազ. տոնն, այսինքն՝ 13 անգամ ավելի, քան այժմս, և $2^1/_2$ միլիոն տոնն ֆոսֆորիտային փոշի, ներկայումս պատրաստվող 65 հազար տոննի փոխարեն, այսինքն՝ 30 անգամ ավել, քան այժմս։ Արդյունաբերության այս ճյուղի նման զգալի ընդարձակումը կպահանջի համարյա $1^1/_2$ միլիարդ ռուբլի։ Քիմիական ձեռնարկությունների մեծ մասը պետք է վերստին կառուցվի, քանի որ առաջներում չկային։ Քիմիական արդյունաբերությունը գլխավորապես մշակում է հումույթներ, որոնք արդյունաբերության այլ ճյուղերի, գլխավորապես ածխային և մետաղային, մնացորդներ են կազմում, դրա համար էլ քիմիական ձեռնարկությունների մեծ

մասը պիտի կառուցվի արդյունաբերական շրջաններում՝ Դոնբասում, Դնեպրոստրոյի շրջակայքում, Ուրալում, Կուզբասում և Մոսկվայի շըրջակայքում։

Այս 5 տարիների ընթացքում կավելանա նայեվ արտադրանքը։

1932—33 թ. բամբակյին գործվածքներ կարտադրվի յերկու և մեկ քառորդ անգամ ավել, քան 1913 թ., իսկ բրդեղենը՝ համարյա 3 անգամ ավել։ 1913 թ. բամբակյին գործվածքներ արտադրվել են 271 միլիոն մետր, և բրդեղեն՝ 95 միլիոն մետր, իսկ 1932—33 թ. կարտադրվի բամբակյին գործվածքներ՝ 620 միլիոն մետր և բրդեղեն՝ 270 միլիոն մետր։ Կասկածից դուրս է, վոր այս քանակությունը կվերացնե մանուֆակտուրայի այն սովը, վորը մինչև այժմ ել դեռ մեզ մոտ զգացվում է, չնայած նրան, վոր այս տարի մենք արտադրել ենք մանուֆակտուրա ավելի շատ, քան պատերազմից առաջ։ Այս չափով ել կընդարձակվի կրկնակոշիկների, աղի, շաքարավազի արտադրությունը։ Կրկնակոշիկների արտադրությունը կավելանա 1913 թ. հետ համեմատած $2^1/_2$ անգամ, աղի՝ $1^1/_2$, շաքարավազի՝ 2 անգամ։ Յեվ այսպես արտադրության մի շարք ճյուղերում։ Ընդհանրապես բոլոր արդյունաբերություններում մի տարում արտադրած պրոդուկտը 1932—33 թ. համեմատած նախապատերազմյանի հետ՝ կավելանա մոտ 3 անգամ։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու անհրաժեշտ է մեզ առաջին հերթին զարգացնել ծանր արդյունաբերությունը։
2. Ծանր արդյունաբերության զարգացումն ինչով է ոգնում գյուղին։

ԳՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱ

Յեթե ականջ դնեք, թե ինչ են խոսում մեր ապրանքների մասին, հաճախ կլսեք դիտողություններ, վոր նրանք թանգ են և վատ վորակի։ Ինչու մեր ապրանքների գները ներկայումս բարձր են։ Մենք արդեն ասել ենք, վոր մեր ֆաբրիկաների և գործարանների ճնշող մեծամասնությունը վերականգնվել են արդյունաբերական հին ձեռնարկություններից։

Մեր գործարաններում մեքենաների և դազգյահների մեծ մասը հին են և մաշված։ Մեր գործարանների և ֆաբրիկաների մեծ մասը այնքան վատ են սարքավորված դազգյահներով և մեքենաներով, վոր այս ձեռնարկություններում աշխատանքների մեծ մասը կատարվում է

վոչ թե մեքենաներով, այլ ձեռքի միջոցով։ Իսկ բոլորին հայտնի յե, վոր ձեռքի աշխատանքն ավելի թանգ ե նստում, քան մեքենայի միջոցով պատրաստվածը։ Մեքենայի օգնությամբ բանվորը կարտադրի տասնյակ անգամ շատ, քան նույն ժամանակամիջոցում բանվորը կարտադրի ձեռքի միջոցով։ Հաշված ե, որինակի համար, վոր մեքենաների օգնությամբ հնարավոր ե արտադրել մեխ 130 անգամ, գութան՝ 32 անգամ, կոշիկ՝ 9 անգամ ավելի շատ, քան ձեռքի աշխատանքով։ Համարյա նույն, իսկ յերբեմն ել ավելի մեծ տարբերություն ե ստացվում, յերբ համեմատենք հին և նոր մեքենայի աշխատանքը, նոր, կատարելագործված մեքենայի աշխատանքի հետ։

Պատերազմի տարիների ընթացքում շատ նոր մեքենաներ են գտնված, վորոնք արտադրում են 10 անգամ ավելի, քան նախապատերազմյան մեքենաները։ Իսկ մեր գործարանների մեծ մասը դեռ մինչև այժմ ել աշխատում ե նախապատերազմյան շրջանի հին, մաշված դազգյաններով։ Յեվ այսպես, յեթե հաշվի առնենք, վոր մեր մի շարք գործարաններում աշխատանքը կիսով չափ տարվում ե մեքենաներով և ձեռքերով, իսկ ուրիշ գործարաններում աշխատում են հին, մաշված դազգյաններ, այս դեպքում ամենքին հասկանալի կլինի, թե ինչու մեր արդյունաբերական ապրանքներն ավելի թանգ են, քան արտասահմանում, վորտեղ բոլոր գործարանները լրիվ չափով սարքավորված են մեքենաներով և այն ել այնպիսի մեքենաներով, վորոնք արտադրում են ապրանք ավելի շատ, քան մեր հին, նախապատերազմյան մաշված մեքենաները։ Յեվ այդպես, յեթե մեր արտադրած ապրանքների թանգությունը գլխավորապես կախում ունի մեր գործարանների մեքենաների և դազգյանների վատ սարքավորումից, արդյունաբերական ապրանքների ինքնարժեքը պակասեցնելու համար մենք պետք ե նախ և առաջ սարքավորենք մեր ֆաբրիկաներն ավելի կատարելագործված, նոր դազգյաններով և մեքենաներով, ուր ամենուրեք, վորտեղ հնարավոր ե, ձեռքի աշխատանքը փոխարինել մեքենայի աշխատանքով։ Այս ինքնարժեքի իջեցման ամենահիմնական և իրական ճանապարհն ե։

Բայց վողջ արդյունաբերությունը միանգամից վերասարքավորել անհնարին ե, նախ՝ մեր միջոցները չեն բավականացնի և յերկրորդ՝ սա շատ բարդ գործ ե։ Կարելի յե նաև մեր ֆաբրիկաների և գործարանների հին մեքենաների վրա փոքր գումարներ ծախսելով, եժանացնել արտադրանքը։ Ֆաբրիկան և գործարանը՝ մեծ և բարդ տնտեսություններ են։ Նրանց կառավարելը շատ դժվար ե։ Աշխատանքի բոլոր մասերն իրար հետ կապված են և մեկը մյուսից կախում ունի։ Յեթե

գործարանի մի մասում մի վորևէ ընդհատում տեղի ունենա՝ ամբողջ աշխատանքը կանգ կառնի։ Դրա համար էլ գործարանում և ֆաբրիկայում ամբողջ աշխատանքն այնպես պետք է կազմակերպված և բաշխված լինի, վոր մեկ աշխատանքը մյուսին արգելք չհանդիսանա։ Հաճախ գործարանների դազգյահների դասավորման փոփոխումը զգալիորեն արագացնում կամ դանդաղեցնում է աշխատանքը։ Իսկ աշխատանքի դանդաղեցումը և արագացումը անմիջապես անդրադառնում է արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքի վրա։ Նույն բանն է կատարվում բանվորական ուժերի բաշխման դեպքում։ Գործարանում և ֆաբրիկայում մի վորևէ ապրանքի արտադրանքը բաժանվում է միքանի տասնյակ բանվորների միջև։ Ամեն մի բանվոր կատարում է աշխատանքի միայն վորոշ մասը, և կատարելով՝ հանձնում է հետևյալին, նա յել իր հերթին կատարելով այն, ինչ հարկավոր է, հանձնում է մյուսին և այլն։ Վորևէ բանվորի աշխատանքի հապաղումը անմիջապես անդրադառնում է մնացած բոլոր բանվորների աշխատանքի վրա։ Հետևաբար, յեթե մի վորևէ աշխատանքի համար հարկավոր են բանվորներ, պետք է նրանց ընտրությունը և աշխատանքի բաշխումը այնպես կատարել, վոր մի բանվորը չկանգնեցնի մյուսին։ Յեթե նպատակահարմար կերպով դասավորել դազգյահները, լավ կազմակերպել բանվորների աշխատանքը, այդ դեպքում էլ նույնիսկ շատ ավելի կբարելավվեն ֆաբրիկաների և գործարանների աշխատանքները և կիջնեն նրանց արտադրանքների գները։

Խոշոր ֆաբրիկաներում և գործարաններում արտադրվում են տասնյակ և հարյուր հազարավոր զանազան առարկաներ։ Ամեն որ գործարան է մտնում հարյուր-հազար փթերով հում նյութ, վորից շինում են պատրաստի ապրանք։ Վերցնենք, որինակի համար, կոշկեղենի ֆաբրիկան։ Այս ֆաբրիկայում ամեն որ մի քանի հարյուր փութ կաշի և այլ նյութեր են մտնում և ամեն որ ֆաբրիկայից պահեստ է գնում 5—6 հազար զույգ պատրաստի կոշիկ։ Ֆաբրիկան ունի յերկու հարկ, կաշիները առաջի հարկից յերկրորդ և պատրաստի կոշկեղենը յերկրորդից պահեստ տանելու համար զբաղված են մի քանի տասնյակ բանվորներ։ Ամեն որ այս աշխատանքի համար 100 ռուբլուց ավելի յե ծախսվում։ Մի տարում այս աշխատանքը ֆաբրիկայի վրա նստում է 30—40 հազար ռուբլի, իսկ սրա փոխարեն հնարավոր է պատրաստել մեխանիկական մատուցում, հատուկ բարձրացնող մեքենաների շնորհիվ, վորոնց սպասարկման համար կպահանջվի 2—3 բանվոր միայն։ Այսպիսի մի մեքենա գնելը կարժենա 25 հազար ռուբլի։ Հենց առաջին տարում ամբողջ ծախսն արդարացվում է և դեռ հե-

տագա տարիների ընթացքում տնտեսվում է տարեկան 30—40 հազար ռուբլի: Իսկ այդ տնտեսումը կիջեցնի ամեն մի զույգի ինքնարժեքը:

Ամեն մի ձեռնարկությունում կան տասնյակ այնպիսի աշխատանքներ, որ կարելի է եժանացնել:

Ահա բոլոր այս ձեռնարկումները — սարքավորման բարելավումը, մեքենաների և գազգյանների ճիշտ դասավորումը, բանվորների աշխատանքի կազմակերպման բարելավումը, վառելիքի ծախսերի կրճատումը, հումույթի մատուցման բարելավումը և այլն, — որոնք նպաստում են գործարանի աշխատանքների ընդհանուր բարելավման, և եժանացնում են ինքնարժեքը, կոչվում է՝ արդյունաբերության ռացիոնալիզացիա:

Արտասահմանում գործարանների և ֆաբրիկաների բարելավման համար աշխատում են նրանց տերերը — կապիտալիստները և նրանց կողմից վարձված դիրեկտորները և ինժեներները: Նրանք բոլորն աշխատում են, որ ֆաբրիկան կամ գործարանն ավելի շատ օգուտ տա գործարանատիրոջը: Իսկ մեզ մոտ Միությունում ձեռնարկության աշխատանքի բարելավմամբ զբաղված են ոչ միայն մասնագետ ինժեներները և գործարանի դիրեկտորը, այլև բոլոր բանվորները, որոնք գիտակցում են, որ իրենք են հանդիսանում արդյունաբերության տերերը:

Ամեն մի գործարանում, ամեն մի ֆաբրիկայում բանվորներից կազմված են հատուկ արտադրական խորհրդակցություններ և հանձնաժողովներ: Ցեխե բանվորը նկատում է գործարանի բացը, աշխատանքը բարելավելու համար մի նոր միջոց է մտածում, գնում է արտադրական հանձնաժողով և հայտնում իր առաջարկները: Արտադրական հանձնաժողովը հրավիրում է արտադրական խորհրդակցություն, որտեղ ներկա չեն լինում բոլոր հետաքրքրվող բանվորները, ինժեներները և գործարանի դիրեկտորը: Այս խորհրդակցությունում քննվում են բանվորների կողմից մտցված առաջարկները և չեթե այս առաջարկներն իրոք որ կարող են բարելավել գործարանի աշխատանքը և իջեցնել ապրանքների ինքնարժեքը, ընդունվում են և կիրառվում կյանքում: Շնորհիվ բանվորների առաջարկների, մի շարք մեր ֆաբրիկաները և գործարաններն զգալիորեն բարելավել են իրենց աշխատանքը, իջեցրել ապրանքների ինքնարժեքը և սապցել են մեծ տնտեսում:

Ահա, լսեցեք, թե ինչպես է գործարանում աշխատում նման մի արտադրական խորհրդակցություն:

Գործարանի պատի վրա, պլակատների և լոզունգների մեջ կախված էր մի պարզ, հասարակ հայտարարություն:

Այսօր կայանալու է ընդհանուր գործարանի արտադրական խորհրդակցությունը։

Հրավիրվում են բանվորները և տեխնիկական պերսոնալը։ Սկիզբը յերեկոյան ուղիղ ժամը 5-ին, առանց ուշացումների։

Հենց վոր հնչեց շչակը, գործարանային ակումբի ուղղությամբ շարժվեցին ծեր վարպետները, հասակավոր և յերիտասարդ բանվորները։ Արտադրական խորհրդակցությունում պետք է քննվեր մեկ հարց։ Կարմիր դիրեկտոր ընկ. Բլագոդատնին համառոտ բացատրեց բոլոր բանվորներին, վոր ռելսների արտադրության ինքնարժեքը շատ բարձր է ստացվում։ Համաձայն ճիշտ հաշվի, մի տոնն ռելսի գինը պետք է լիներ 131 ռ. գործարանն ստիպված է յերկաթգծի վարչությանը մեկ տոնն ռելսը վաճառել 142 ռուբլով։ «Մեր նպատակն է,— ասաց կարմիր դիրեկտորը,— այսօր, միասին, կոլեկտիվ կերպով բոլոր ներկա գտնվող բանվորների և ինժեներների միջոցով պարզել այս աննորմալության պատճառները։ Մեզ հարկավոր է արտադրությունն այնպես դնել, վոր մոտիկ ապագայում իջնի ռելսների գինը։

Դրանով մենք օգնած կլինենք մեր վողջ Խորհրդային պետությանը։ Յերևակայեցեք միայն, թե ինչքան նոր տոնն ռելս կգնի մեզանից յերկաթգծի վարչությունը, յեթե ամեն մի տոնը 15 ռուբլով էժան նստի»։ Վերջացրեց իր զեկուցումը ընկ. Բլագոդատնին։

Վիճաբանությունների համար առաջինը խոսք վերցրեց ձուլող բանվոր ընկ. Բարաբանովը. «Ելեքտրոմոտորը սակավուժ է, դրա համար էլ տաքացած մամուլը (պրես) և սղոցը աշխատում են մեծ ընդհատումներով։ Իսկ այս ընդհատումներից ինքնարժեքը բարձրանում է։ Անհրաժեշտ է նոր ելեքտրոմոտոր դնել։

Մեկ ուրիշ բեռնող բանվոր, ընկ. Մուսկինը պատմում է, վոր ռելսի պահեստի պատը մինչ այժմ էլ սարքված չէ, այս պատի պատճառով փչանում են վագոնները, վնասվում են ձիերը և դանդաղում է վողջ աշխատանքը։

«Իսկ վորքան վնաս են պատճառում աշխատանքից չարամիտ կերպով խուսափողները,— հարցնում է գործարանի ամենածեր փականագործներից մեկը, ընկ. Զալովը։— Ինչու դրանց նկատմամբ վոչ մի միջոց ձեռք չեք առնում։ Ներքին կարգապահության կանոնները ապակյա շրջանակների մեջ է մնացել և վոչ մի օգուտ չկա նրանցից։ Պետք է կանոններին հետևել, իսկ աշխատանքից խուսափողներին հեռացնել։ Գործարանն անկյալանոց չէ...»։

Յեվ այսպես մեկը մյուսի հետևից դուրս եկին գալիս բանվորները և տեխնիկները զանազան առաջարկներով։

Ամբողջ օրվա ծանր աշխատանքից հետո դեռ 2 ժամից ավելի չէր անեց արտադրական խորհրդակցությունը, բայց չէր նկատվում հոգնածություն ժողովականների կողմից։ Ոչ վոք դահլիճից դուրս չեկավ, քանի վոր բոլորն էլ մտահոգված եյին իրենց գործարանի տնտեսական խնդիրներով։ Այս խորհրդակցությունների միջոցով ամեն մի բանվոր մասնակցում է արդյունաբերության ղեկավարման գործում։

Դուք, անշուշտ, բոլորդ էլ լսած կամ կարդացած կլինեք թերթերում սոցիալիստական մրցման մասին։ Սա մի մրցում է առանձին բանվորների, բանվորների առանձին խմբակների, ամբողջ գործարանների միջև, թե ով ավելի շատ ոգուտ կբերի իր սոցիալիստական հայրենիքին, իր բանվորական պետության։

Միատեսակ բնույթ ունեցող արտադրության ամբողջ գործարանները մեկը մյուսի հետ պայմանագիր են կնքում, թե ով ավելի շատ կիջեցնի ինքնարժեքը, ով ավելի քիչ բրակ արտադրանք կունենա, ով վորակով ավելի լավ և արագ կկատարի յեղած պատվերները։ Սկսված այս մրցումը առաջին որերից իսկ նպաստեց աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արտադրանքի վորակի լավացմանը, իջեցմանը։

Բանվորների որինակով մրցումն անց է կենում նաև գյուղում։ Առանձին գյուղերը մրցում են, թե ով ավելի կնդարձակի ցանքսի տարածությունը, ով ավելի կբարձրացնի բերքատվությունը և այլն։

Շնորհիվ թված ձեռնարկումների տնցկացման, 5-ամյակի վերջում, այսինքն՝ 1932—33 թ. մենք կունենանք ինքնարժեքի իջեցում արդյունաբերության բոլոր ճյուղերում, միջին հաշվով 35 %, այսինքն՝ $^1/_3$-ից ավել։

Բայց վաճառման գները մի քիչ ավելի պակաս կիջնեն, ընդամենը 24 %, կամ մոտավորապես $^1/_4$-ով։ Յեթե, որինակի համար, չիթն արժե 40 կոպեկ մետրը, 5-ամյակի վերջում կարժենա 30 կոպեկ և այլն։

Վաճառման գների ավելի քիչ իջեցումը, քան՝ ինքնարժեքի, բացատրվում է նրանով, վոր, նախ և առաջ, մենք ոգուտը պետք է ավելացնենք մեր արդյունաբերության ընդարձակման և նոր գործարանների կառուցման համար, և յերկրորդ, վոր վաճառման գների վրա ազդում է վոչ միայն ինքնարժեքը, այլ և ուրիշ ծախքերը—տրանսպորտը, առևտրական ապարատը և այլն։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես անել, որ արդյունաբերական ապրանքներն էժանանան։
2. Ի՞նչ է նշանակում արդյունաբերության ռացիոնալացում։
3. Ինչո՞վ են բանվորները նպաստում արդյունաբերության աշխատանքների բարելավման։

ՎՈ՞ՐՏԵՂԻՑ ՎԵՐՑՆԵՆՔ ՄԻՋՈՑՆԵՐ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեծ քանակությամբ նոր, հսկա գործարանների կառուցումը, մեր գործարանների և ֆաբրիկաների ընդհանուր վերասարքավորումը և բարելավումը կպահանջի, ինարկե, հսկայական դրամական միջոցներ։ Մասնագետների ցույց տված հաշիվների համաձայն՝ արդյունաբերության համար ծախսվելիք միջոցների ընդհանուր գումարը 5 տարվա ընթացքում կհասնի 16 1/2 միլիարդ ռուբլու։

Նախորդ հնգամյակում արդյունաբերության զարգացման համար ծախսված է 4 1/2 միլիարդ, իսկ այս հնգամյակում կծախսվի 4 անգամ ավել։ Այս գումարից մոտ 4 միլիարդ կգնա սպառման ապրանքներ արտադրող արդյունաբերության վրա և մոտ 13 միլիարդ արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության վրա։

Վո՞րտեղից ենք վերցնելու այսպիսի հսկայական դրամական միջոցներ մեր արդյունաբերության զարգացման համար։ Կապիտալիստները մեզ խոշոր փոխառություններ չեն տա, իսկ յեթե տան էլ, շատ ծանր, մեզ համար անընդունելի պայմաններով։ Հետևաբար մեր արդյունաբերության զարգացման համար միջոցներ մենք պետք է գտնենք մեր յերկրում։ Յեվ այս դրամները կան և կարող ենք գտնել, միայն յեթե մենք շատ խնայողաբար ծախսելու լինենք մեր միջոցները, յեթե Խորհրդային Միության բոլոր աշխատավորները լայն ոժանդակություն ցույց տան մեր պրոլետարական պետությանը։ Այս միջոցների հիմնական աղբյուրը գտնվում է հենց արդյունաբերության մեջ։ Մեր արդյունաբերության տված ոգուտը, շնորհիվ նրա աշխատանքների բարելավման, տարեց-տարի ավելի յե մեծանում։

1924—25 թ. մեր պետական արդյունաբերությունը տվել է 305 միլիոն ռ. ոգուտ. 1925—26 թ. այդ ոգուտը բարձրացավ 477 միլիոն ռուբլու, այսինքն, 1 1/2 անգամ ավել, 1926—27 թ. արդյունաբերության ոգուտը նորից 1 1/2 անգամ ավելացավ և հասավ 695 միլիոն

ռուբլու, իսկ 1927—28 թ. այս ոգուտը հասավ համարյա 900 միլիոն ռուբլու։

Այս բոլոր ոգուտը ամբողջովին գնում է գոյություն ունեցող ֆաբրիկաների յեվ գործարանների վերասարքավորման յեվ նորերի կառուցման համար։

Հետագայում վորքան մենք բարելավենք և վերասարքավորենք մեր արդյունաբերությունը, այնքան էլ նրա ոգուտը տարեց-տարի շատ կլինի։

Արդյունաբերության շինարարության համար նմանապես միջոցներ են հասկացվում մեր պետության այլ յեկամուտներից—ներքին և արտաքին առևտրից, զանազան տուրքերից և հարկերից, այս գումարների մի մասը գյուղատնտեսության, ժողլուսավորության, առողջապահության և այլ ծախսերը ծածկելուց հետո՝ նմանապես գնում է, մեր արդյունաբերության զարգացման համար։

Արդյունաբերության զարգացման միջոցներ տալիս են նմանապես և իրենք բանվորներն ու գյուղացիները պետական փոխառությունների միջոցով։ Պետությունը փոխառություն է կատարում 10 տարով։ Այս փոխառությունների դիմաց պետությունն ամեն տարի տոկոսներ է վճարում և բացի այս, տարեկան մի քանի անգամ կազմակերպում է վիճակախաղ խոշոր գումարներով։ Մի քանի հարյուր միլ ռուբլու ամբողջ փոխառությունը բաժանվում է տասնյակ և 100 հազար առանձին արժեքավոր թղթերի, սկսած 25 ռուբլուց և բարձր։ Այսպիսի թուղթ (ոբլիգացիա) գնող ամեն մի աշխատավոր պետությանը տալիս է փոխարինաբար վորոշ գումար, դրանով աջակցություն է ցույց տալիս յերկրի արդյունաբերության զարգացմանը։

Միևնույն ժամանակ նա վոչ միայն ոգնում է պրոլետարական պետությանը, այլ և բարելավում է իր սեփական դրությունը։ Այս արժեքավոր թղթերը հանդիսանում են աշխատավորության խնայողությունը։ Ուզած ժամանակ, ամեն մի աշխատավոր կարող է, յեթե իրոք վոր այդ նրան անհրաժեշտ է՝ վերադարձնել իր արժեքավոր թուղթը և պետությունից հետ ստանալ իր փոխարինաբար տված գումարը։ Այս թղթերով յուրաքանչյուր աշխատավոր ամեն տարի տոկոսներ է ստանում և մասնակցում մեծ գումարների վիճակախաղերին։

Շնորհիվ բանվորների և գյուղացիների տնտեսապես բարելավվող դրության՝ պետությունը հնարավորություն ունի ամեն տարի կատարել նոր և նոր փոխառություններ։ Ամեն մի նոր փոխառություն տարածվում է ավելի մեծ հաջողությամբ։ Վերջին՝ այսպես կոչված

ինդուստրացման յերկրորդ փոխառությունը, վորը բաց է թողնված 400 միլիոն ռուբլու, տարածվեց ամբողջովին և աշխատավորության պահանջով դեռ ստիպված յեղան ավելացնել։ Հետագայում, աշխատավորության ընդհանուր դրության բարելավման հետ միասին, պետությունը հնարավորություն կունենա կատարել այդ փոխառություններն ավելի մեծ գումարներով, և անկասկած, այս 5-ամյակի ընթացքում յերկրի աշխատավորությունը կտա իր պետությանը մի քանի միլիարդ ռուբլի՝ մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման համար։

Ընդհանուր առմամբ, ստացված հաշիվների համաձայն՝ այս աղբյուրներից հավաքված միջոցները կկազմեն լրիվ այն գումարը, վորը պահանջվում է 5-ամյակում նախատեսնված չափով արդյունաբերության զարգացման համար։ Բայց այս գումարները մենք կարող ենք ստանալ միայն այն դեպքում, յեթե Խորհրդային Միության բոլոր աշխատավորությունը լայն ոգնություն ցույց տա իր պրոլետարական պետությանը։

Կլինեն, իհարկե, նաև դժվարություններ 5-ամյա պլանի անցկացման ժամանակ, բայց այս դժվարությունները մեզ չպետք է կասեցնեն, քանի վոր 5 ամյակով նախատեսնված մեր յերկրի վերակառուցումն է, վոր կարող է մեզ դուրս բերել բոլոր դժվարություններից և ապահովել մեզ սոցիալիստական հասարակակարգի շուտափույթ իրականացումը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու՞ յե բաց թողնված ինդուստրացման փոխառությունը։
2. Ի՞նչ գումարներով ենք մենք վերակառուցում ԽՍՀՄ-ի արդյունաբերությունը։

ԶՐՈՒՅՑ ՅՈԹԵՐՈՐԴ

ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անցած գլխից մենք գիտենք, վոր մեր յերկրի, ինչպես և ուրիշ յերկրների ժողովրդական անտեսությունը կազմված է յերկու մեծ մասերից.—արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից։

Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը կախում ունեն իրարից։ Ֆաբրիկաներն ու գործարանները չեն կարող աշխատել առանց այնպիսի հում նյութերի, ինչպիսին են.—վուշը, բուրդը, բամբակը, հում կաշին, շաքարի ճակնդեղը և ուրիշ գյուղատնտեսական մթերքներ։

Արդյունաբերությունն ապրանքն արտադրում է վաճառքի համար։ Ֆաբրիկային ապրանքների զգալի մասը գնում է գյուղացիությունը։

Վորքան շատ արդյունք է տալիս գյուղական տնտեսությունը, գյուղացին այնքան ավելի արդյունաբերական ապրանք է կարողանում գնել՝ թե տնտեսության, թե իր անձնական կարիքների համար։

Բայց գյուղատնտեսությունը չի կարող ամրանալ, բարվոքվել՝ առանց լավ զարգացած արդյունաբերության։ Յեվ իրոք, գյուղատնտեսությունը բարվոքելու համար անհրաժեշտ են մեքենաներ, գործիքներ, արհեստական պարարտացումն։ Իսկ այս ամենը տալիս է զարգացած արդյունաբերությունը։ Ճիշտ այդպես էլ—վորքան ավելի լավ զարգացած արդյունաբերությունը, նույնքան ավելի պահանջ է զգացվում գյուղատնտեսական մթերքների (հացի, արմտիքի, հում նյութերի)։

Խոշոր արդյունաբերությունը տանում է իր յետևից գյուղատնտեսությունը. օգնում է, վոր գյուղատնտեսությունն անցնի հողը մեքենայով մշակելու ձևին, պարարտանյութեր է մատակարարում նրան, վերամշակում է գյուղատնտեսության արտադրությունները։

Բոլոր կապիտալիստական յերկրներում արդյունաբերությունը հանդիսանում է ժողովրդական տնտեսության գլխավոր ուժը, վոր իրեն է յենթարկում գյուղատնտեսությունը։ Բայց կապիտալիստական արդյունաբերության և պետական, սոցիալիստականի մեջ տարբերությունը հսկայական է։

Կապիտալիստների հոգատարության առարկան վողջ ժողովրդական տնտեսության բարելավումը չէ։ Յուրաքանչյուր կապիտալիստ միայն մի բան է ցանկանում.—վորքան կարելի յե շատ շահ, վաստակ ստանալ։ Կապիտալիստն այն ապրանքն է արտադրում, ինչ վոր իրեն ավելի ձեռնտու՝ շահավետ է թվում. աշխատում է իր ֆաբրիկայում վորքան կարելի յե շատ ապրանք պատրաստել։

Կապիտալիստների մեջ անվերջ պայքար տեղի ունի գնորդի համար։ Վորպեսզի կարողանա իր ապրանքն ավելի արագ ու ավելի մեծ վաստակով վաճառել, յուրաքանչյուր կապիտալիստ աշխատում է միշտ նոր ու կատարելագործված մեքենաներ ունենալ, վորոնցով կարելի լինի ապրանքն արտադրել ավելի արագ ու յեժան։

Շահ ստանալու անհագ ցանկությունն ստիպում է յուրաքան-

չյուր կապիտալիստի՝ որքան կարելի է շատ ապրանք արտադրել: Սրա հետևանքն այն է լինում, որ կապիտալիստական երկրներում քայքայվում է ժողովրդական տնտեսությունը, որովհետև հաճախ շատ ապրանքներ ավելի են պատրաստվում, քան երկիրը պետք ունի: Ֆաբրիկաները, գործարանները ժամանակավորապես փակվում են (մինչև չե պառկած ապրանքի վաճառվելը), բանվորներն արձակվում են, գործազրկությունն աճում է: Իսկ ապրանք գնողների թիվն ավելի է պակասում, որովհետև գործազուրկն ինչով կարող է գնում կատարել: Ֆաբրիկաների մի մասը փակվում է — ուրեմն գյուղատնտեսական մթերքների, հում նյութերի (փայտ, բամբակ, կաշի և այլն) պահանջն էլ է պակասում: Բազմաթիվ մանր գյուղացիական տնտեսություններ կործանվում են: Մի խոսքով — քայքայվում է ողջ ժողովրդական տնտեսությունը:

Ժողովրդական տնտեսության քայքայումից խուսափելու համար պետք է վաղօրոք մտածված հաշվով, ամբողջ ժողովրդական տնտեսության պլան ունենալ: Այսպիսի պլան չկա և չի կարող լինել ոչ մի կապիտալիստական պետության մեջ, ուր ֆաբրիկաները, գործարանները, կալվածները գտնվում են իրար հետ անվերջ թշնամություն վարող անհատ կապիտալիստների ձեռքում, որոնք իրենց ֆաբրիկաներն ու գործարանները կառուցում են իրարից բոլորովին անկախ կերպով:

Ժողովրդական տնտեսության միասնական, վաղօրոք մտածված պլան կարելի է մշակել միայն Խորհրդային Միության մեջ, ուր համարյա ամբողջ արդյունաբերությունը, բոլոր երկաթուղիները, ելեքտրակայանները, բանկերը գտնվում են բանվոր դասակարգի ձեռքում: Հասկանալի է, որ ԽՍՀՄ-ի ողջ տնտեսության համար միասնական պլան մշակելը հեշտ գործ չէ: Մեր պետության տնտեսությունը շատ է մեծ: Բացի դրանից՝ համարյա ամբողջ գյուղատնտեսությունը ոչ թե պետության ձեռքումն է, այլ անհատ գյուղացիների սեփականություն է կազմում: Ինչպես գիտեք ԽՍՀՄ-ում գյուղացիական ծխերի թիվը 24 միլիոնից ավելի է: Շատ դժվար է ճիշտ հաշվել, թե գյուղացին որքա՞ն հող կցանի, ի՞նչ կուլտուրաներ, ի՞նչպիսի բերք կլինի, գյուղացին որքա՞ն գյուղատնտեսական բերք շուկա կհանի և ի՞նչպիսի ու ո՞րքան ֆաբրիկային ապրանք կգնի:

Այս պատճառով ժողովրդական տնտեսության զարգացման այն պլանները, որ կազմում է Խորհրդային պետությունը, դեռ ևս չեն կարող բոլորովին ճիշտ համարվել: Սակայն տարեց-տարի ժողովրդական տնտեսության ավելի մեծ բաժին է անցնում պետության ու կոոպերացիայի ձեռքը և պլաններն էլ ավելի ճիշտ են դառնում:

Բանվոր դասակարգը, վոր Խորհրդային Միության արդյունաբերության տերն է, շահի յետևից չի ընկնում։ Խորհրդային սոցիալիստական արդյունաբերության նպատակն է — յերկրին հարկավոր ապրանքները ավելացնել, նրանց ավելի եժանացնել և այսպիսով ավելի մատչելի դարձնել աշխատավորությանն, այսինքն բանվորներին ու գյուղացիներին։ Իհարկե, արդյունաբերությունը Խորհրդային Միության մեջ էլ վաստակ է տալիս։ Բայց այդ վաստակը գնում է վոչ թե առանձին կապիտալիստների գրպանը, այլ ծառայում է ամբողջ հասարակության օգտին, ժողովրդական տնտեսության զարգացմանը և սոցիալիստական շինարարությունն արագացնելու գործին։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Գյուղատնտեսության զարգացման համար ինչու ամուր արդյունաբերություն է հարկավոր։
2. Ժողովրդական տնտեսության համար ինչու պլան է հարկավոր։

ՄԵՐ ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Ցարական պատերազմը Գերմանիայի հետ, իսկ այնուհետև էլ քաղաքացիական կռիվը ծանր ազդեցին Խորհրդային հանրապետությունների ժողովրդական տնտեսությունների վրա։ Առանձնապես տուժեցին արդյունաբերությունն ու յերկաթուղիները։ Քաղաքացիական կռվի վերջերին — 1920 թվին, մեր ֆաբրիկաներում ու գործարաններում մի քանի անգամ պակաս ապրանք եր պատրաստվում, քան պատերազմից առաջ, 1914 թվին եր։

Օրինակ, 1920 թվին քարածուխ հանվել է չորս անգամ ավելի պակաս նախապատերազմյանից (27%), նավթ — կիսից պակաս (42%), աղ — մի յերրորդը (30%)։ 1920 թվին նախապատերազմյանի հանդեպ պատրաստվել են — գուլպաներ՝ 13%, շաքար՝ 7%, աղյուս՝ 2%, լուցկի՝ 14%, և այսպես՝ համարյա յուրաքանչյուր ապրանքից։

Միայն քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո հնարավոր յեղավ կպչել ֆաբրիկաները, գործարանները, յերկաթուղիները, քարածուխի շախտերը նորոգելու գործին։ Արդյունաբերական (գործարանային) ապրանքների քանակը տարեց-տարի սկսում է ավելանալ։

Այսպես՝ 1923/24 տնտեսական տարում[1]) Խորհրդային Միության

[1]) Տնտեսական տարին սկսվում է վոչ թե հունվարի 1-ից, այլ հոկտեմբերի 1-ից։ Օրինակ՝ 1923/24 տնտեսական տարին սկսվեց 1923 թ. հոկտ. 1-ից և վերջացավ 1924 թ. սեպտ. 30-ին։

ֆաբրիկաները, գործարանները և արհեստանոցները պատրաստել են 2 միլիարդ 441 միլիոնի ապրանք։

1926/27 թվին Խորհրդային Միության ֆաբրիկաներն ու գործարաններն արդեն մի փոքր ավելի ապրանք են պատրաստել, քան պատերազմից առաջ (նախապատերազմյանի 101%)։

1927/28 թվին մեր արդյունաբերությունը տվել է արդեն 14% ավելի նախապատերազմյանից։

Ի՞նչու բանվոր դասակարգն այսպես շուտ կարողացավ վերականգնել պատերազմներից քայքայված մեր արդյունաբերությունը։

Հեղափոխությունից առաջ հսկայական փողեր (տարեկան հարյուրավոր միլիոն ռուբլիներ) էյին գնում կապիտալիստների և կալվածատերերի գրպանը, վորոնք ծախսում էյին քեֆերի, թանգագին քարերի ու զարդերի վրա։ Խորհրդային իշխանությունը կալվածատերերից ու կապիտալիստներից գրավեց հողերը, ֆաբրիկաները, գործարանները, բանկերը։ Ամբողջ յեկամուտը—արդյունքը պետական արդյունաբերությունից, բանկերից, առևտրից—այժմ վոչ թե մի խումբ պարազիտների չեն կերակրում, այլ ծառայում են ժողովրդական տնտեսության բարելավման, գործարանների ու ֆաբրիկաների վերասարքավորման գործին։ Հարյուրավոր միլիոն ռուբլու խնայողությունը, վոր առաջ կալվածատերերն ու կապիտալիստներն էյին վատնում, օգնում է բանվոր դասին՝ արագ վերականգնելու արդյունաբերությունը։

Մեծ օգուտ է տալիս նաև արդյունաբերության պլանային ղեկավարությունը, վորի մասին մենք գիտենք նախընթաց գլուխներից։

Բացի դրանից՝ Խորհրդային իշխանության ժամանակ բանվորները բոլորովին այլ վերաբերմունք ունեն դեպի արտադրությունը, քան ունեյին կապիտալիզմի ժամանակ։ Սոցիալիստական ձեռնարկության մեջ բանվորներն իրենք են ամեն կերպ աշխատում ավելացնել պատրաստվող ապրանքի քանակը, վորովհետև ինքը բանվոր դասակարգն է տեր հանդիսանում ֆաբրիկաների, գործարանների, հանքերի, վորովհետև Խորհրդային Միության մեջ բանվորներն աշխատում են վոչ թե կապիտալիստների, այլ հենց իրենց համար, ամբողջ բանվոր դասի և աշխատավորության օգտին։ Կալվածատերերին ու կապիտալիստներին արտաքսելը, պետական տնտեսության պլանային կերպով վարելը և խնայող ու ուշադիր վերաբերմունքը դեպի արտադրությունը հնարավորություն տվին արագ վերականգնել պատերազմներից քայքայված արդյունաբերությունը։

Բայց այս րոպեյիս էլ մեր յերկիրը գործարանային ապրանքների

մեծ կարիք ունի։ Այս բանը գիտե ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի։ Շուկայում պակաս են ճոթեղենը, մետաղե ապրանքը (մեխ, թիթեղ, մեքենաներ, դազգյա՛ն), շինանյութերը (աղյուս, ցեմենտ) և արդյունաբերական ուրիշ ապրանքներ։ Մեր ֆաբրիկաներն ու գործարաններն առայժմ չեն հասցնում այնքան ապրանք, որքան հարկավոր է մեր յերկրին։ Մեր յերկիրն այժմ ապրանքային սով է ապրում, այսինքն գործարանային ապրանքները պակաս են։

Ինչու յենք ապրանքի այդպիսի կարիք զգում։ Չէ՞ որ պատերազմից առաջ, յեթե ձեռքիդ փող կար, կարող եյիր գնել ուզածդ ապրանքը — ճոթեղեն, մետաղե իրեր, մեքենաներ։

Նախընթաց գլուխներից արդեն գիտենք, որ ապրանքային սովի պատճառն այն է, որ հեղափոխության տարիներում բանվորների և գյուղացիների նյութական դրությունն զգալի կերպով լավացել է։ Այժմ նրանք կարողանում են ավելի ապրանք գնել, քան գնում եյին հեղափոխությունից առաջ։

Արդյունաբերությունը ցարական Ռուսաստանում պատերազմից առաջ էլ հարկավոր չափով զարգացած չեր։ Պակասող գործարանային ապրանքները (մեքենաներ, դազգյաններ, գյուղատնտեսական գործիքներ, ճոթեղեն, ներկեր) ձեռք եյին բերվում արտասահմանում։ Դրա փոխարեն արտահանվում եր ռուսական հացը և գյուղատնտեսական այլ բերքեր։

Ռուսաստանը յերկրագործական յերկիր եր, որ գլխավորապես գյուղատնտեսական մթերքներ եր արտադրում։ Գյուղատնտեսությունը մեկուկես անգամ ավելի ապրանք եր արտադրում, քան արտադրում եր արդյունաբերությունը։

Օրինակ, 1913 թվին Ռուսաստանն արտադրել է 7 միլիարդ 11 միլիոնի արդյունաբերական ապրանք, իսկ գյուղատնտեսական՝ 11 միլիարդ 281 միլիոն ռուբլու։

Համարյա նույնն է նաև վերջին տարիներում։ 1926/27 թ. արդյունաբերական ապրանք պատրաստվել է 7 միլիարդ 974 միլիոն ռուբլու, իսկ գյուղատնտեսական՝ 12 միլիարդ 70 միլիոն ռուբլու։

Կարող են մեզ հարցնել — ուրեմն ամբողջ ցավը նրանումն է, որ մեր յերկրում գործարանային ապրանք ավելի քի՞չ է պատրաստվում, քան գյուղատնտեսական. Յեթե մեր արդյունաբերությունը ևս 12 միլիարդի ապրանք արտադրի, այդ դեպքում մեր յերկիրն այլևս հետամնաց չե՞ր համարվի։

Ո՛չ. միայն այդ չէ։ Մեզ հարկավոր է, որ մեր յերկիրը մեքենաներ և արդյունաբերության, տրանսպորտի ու գյուղատնտեսության

համար սարքավորումը վոչ թե արտասահմանից բերի, այլ իր ֆաբրիկաներում ու գործարաններում արտադրի։ Առանց սրան չի կարելի ԽՍՀՄ արդյունաբերությունն այնպես շարժել, վոր կարողանա հասնել և անցնել կապիտալիստական տնտեսապես ամենազարգացած յերկրների արդյունաբերություններից։

Առանց սրան Խորհրդային Միությունը չի պաշտպանվելու ապրանքային սովից։

Առանց խոշոր արդյունաբերության արագ զարգացման մեր յերկրի տնտեսությունը չի կարող վոչնչացնել իր կախյալ վիճակը կապիտալիստական յերկրների արդյունաբերություններից, վորոնցից առայժմ հարկադրված ենք մեքենաներ ու սարքավորումն ձեռք բերել։

Անհրաժեշտ է, վոր վոչ միայն ամբողջովին վերականգնենք, նորոգենք պատերազմից փչացած ֆաբրիկաներն ու գործարանները, այլև վերասարքավորենք նրանց, նորենք նրանց տեխնիկան։

Շատ ֆաբրիկաների ու գործարանների շենքեր, մեքենաներ, դազգյահներ են մաշվել, հնացել, խոշոր նորոգության կարիք ունեն, յերբեմն էլ բոլորովին պիտի փոխարինվեն նորերով, ավելի ուժեղ, լավ վորակի ու էժան ապրանք պատրաստողներով։

Բայց այս քիչ է։ Արդեն գոյություն ունեցող, աշխատող մեքանի ֆաբրիկաներում ու գործարաններում անկարելի յե ծավալել, ընդարձակել այն բոլոր ապրանքների արտադրությունը, վորոնք պետք են մեր յերկրին։ Պետք է մեծացնել գործարանների ու ֆաբրիկաների թիվը, կառուցել նոր, խոշոր, լավագույն մեքենաներով սարքավորված ֆաբրիկաներ ու գործարաններ։

Մի քանի տարի չէ, ինչ ԽՍՀՄ-ում աշխատում են հին ֆաբրիկաներն ու գործարանները վերանորոգել և նորերը կառուցել։ Մեր յերկրում ավելի ու ավելի ֆաբրիկային ապրանք է մշակվում։ Յեվ մոտ ապագայում Խորհրդային իշխանությունն ըստ ամենայնի պիտի աշխատի նոր ֆաբրիկաների ու գործարանների կառուցումը ծավալել, վոր շուտով վերանա մեր յերկրում ֆաբրիկային ապրանքների պակասը և շուտով մեր ագրարային յերկիրը դառնա ինդուստրիալ (արդյունաբերական) յերկիր։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչումն է խորհրդային տնտեսության առավելությունը։
2. Ի՞նչպես ենք ուզում վերակառուցել մեր տնտեսությունը։

ԳԼԽԱՎՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱՐՁՆԵԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մեր արդյունաբերությունը զանազան իրեր, զանազան ապրանքներ է պատրաստում։ Միքանի գործարաններում ու ֆաբրիկաներում պատրաստվում են այսպես կոչված սպառման ապրանքներ—ճոթեղեն, շաքար, լուցկի, կաշի։ Արդյունաբերության մի այլ մաս զբաղված է արտադրական միջոցներ—ֆաբրիկաների ու գործարանների համար մեքենաներ և հողի մշակության համար տրակտորներ, գութաններ պատրաստելով. այսինքն՝ այնպիսի առարկաներ, վորոնք անհրաժեշտ են արտադրության համար։

Միայն այն յերկիրը կարող է տնտեսապես անկախ լինել, վորը կարողանում է իր սեփական ֆաբրիկաներում ու գործարաններում պատրաստել իրեն հարկավոր արտադրության միջոցները և առաջին հերթին՝ մեքենաները։

Մեր յերկիրն արտադրության միջոցներ պատրաստող ֆաբրիկաներ ու գործարաններ քիչ ուներ։ Յեղածներն էլ պետք է փոփոխել, վերակառուցել, բարեկարգել։

Մեքենաներ, գազգյաններ պատրաստող արդյունաբերությունը բաղկացած է խոշոր, մեծ գործարաններից ու ֆաբրիկաներից։ Այդ գործարանները կահավորելու, մանավանդ նորերը կառուցելու համար շատ ժամանակ ու դրամ պիտի ծախսել։ Մի խոշոր մեքենակառուցական գործարանի կառուցումը 3—4 տարի յե տևում և տասնյակ միլիոն ռուբլիներ է նստում։

Յերբեմն էլ այսպիսի խոսակցություն ես լսում.—միթե ավելի լավ չէ՝ փոխանակ միքանի տարի սպասելու, մինչև նոր գործարաններ կառուցվեն, մինչև նրանք վերադարձնեն իրենց վրա ծախսված գումարը, ավելի լավ չէ՝ ասում ենք—այդ դրամով մեքենաներ գնել գյուղատնտեսության և ֆաբրիկաների համար, վորոնք և կպատրաստեն սպառման նյութեր—ճոթեղեն և այլն։

Վոչ. այդպես վարվել չի կարելի։ Յեթե Խորհրդային կառավարությունն այդպես վարվեր, մեր յերկիրը նորից ոտարերկրյա կապիտալիստների ճորտը կդառնար։ Հեղափոխությունից առաջ ցարական Ռուսաստանում ժողովրդական տնտեսությունը կախում ուներ ոտար կապիտալիստներից հենց նրա համար, վոր այդպիսի ֆաբրիկաներ ու գործարաններ, վորոնք պատրաստեյին արտադրության միջոցներ—մեքենաներ, արդյունաբերության և գյուղատնտեսության համար սարքավորումներ, Ռուսաստանում շատ քիչ եյին։

Բանվորներն ու գյուղացիները չեն ուզում նորից կապիտալիստների ու կալվածատերերի ճորտը դառնալ։ Ճորտանալուց խուսափելու համար պետք աշխատել որքան կարելի է շուտ և շատ ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցել, որոնք կարողանային արտադրության միջոցներ պատրաստել։ Պետք է ավելացնել հողի տակից հանվող մետաղների (յերկաթի, պղնձի, ոսկու) և վառելանյութի (ածուխի, նավթի, տորֆի) քանակը և մետաղները վերամշակելով, դարձնել մեքենաներ, դազգահներ և այլն։

Ահա միքանի տարի է, որ այդպիսի աշխատանք է տարվում Խորհրդային Միության մեջ։ Կառուցվել են մի շարք նոր ֆաբրիկաներ, գործարաններ, ձգված են մի շարք նոր շախտեր։ Վերասարքավորվել, վերակառուցվել են շատ հին ֆաբրիկաներ, գործարաններ։ Որինակ, Ոմսկում (Սիբիր) վերասարքավորված է «Կարմիր դեղձուկ» գործարանը։ Այժմ այս գործարանը տարեկան մոտ 40,000 գութան է պատրաստում, իսկ պատերազմից առաջ նույն գործարանը միայն 13-14 հազար գութան էր պատրաստում։

Ավարտվելու վրա է Կերչի (Ղրիմ) հսկայական մետաղագործական գործարանը։

Յերկրի ժողովրդական տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի ելեկտրականությունը։

Ելեկտրոկայանից տասնյակ ու հարյուրավոր վերստեր հեռու ելեկտրական ուժ է տրվում։ Այդ ուժը շարժման մեջ է դնում մեքենաներ, ֆաբրիկաների, գործարանների, ածխահանքերի ու գյուղատնտեսական դազգահներ։ Ֆաբրիկաներն ու գործարանները չեն կարող յոլա գնալ առանց ելեկտրականության նման հարմար ու եժան ուժի։

Խորհրդային Միության մեջ արդեն միքանի խոշոր ելեկտրոկայաններ եր կառուցվել.—Վոլխովստրոյը՝ Լենինգրադի շրջանի համար, Զեմո-Ավչալյան կայանն՝ Անդրկովկասի համար։

Ո՞վ չի լսել Դնեպրոստրոյի մասին։ Խորհրդային Միության մեջ նա ամենամեծ ելեկտրոկայանը պիտի լինի։ Սա ելեկտրական ուժ պիտի տա Ուկրայնայի ֆաբրիկաներին, գործարաններին, շախտերին, գյուղատնտեսությանը։

Կառուցվել են նոր յերկաթուղագծեր և յերկարացված են միքանի հները։ ԽՍՀՄ-ում ընդամենը 17 հազար կիլոմետրից ավելի յերկաթուղագիծ է շինված։

Ձեռնարկված է Թուրքեստան-Սիբիրյան յերկաթուղագծի կառուցմանը։ Այս գծով Սիբիրից հաց պիտի գնա Թուրքեստան, իսկ այնտեղից — բամբակ, որ այնքան կարևոր է մեր տեքստիլ գործարաններին։

Միաժամանակ նոր ֆաբրիկաներ են կառուցվում՝ սպառման ապրանքներ պատրաստող, վորոնց պակասը մեր յերկրում դարձյալ զգացվում է։

Իվանո-Վոզնեսենսկում, Վլադիմիրում, Մոսկվայում, Տփխիսում, Ուլյանովի նահանգում և Խորհրդային Միության ուրիշ շատ տեղերում նոր տեքստիլ ֆաբրիկաներ են կառուցվում։ Այդ ֆաբրիկաների մեծ մասը խոշորներից են, — 40 հազարից մինչև 130 հազար իլիկ պիտի ունենա յուրաքանչյուր նոր ֆաբրիկան։

Մոսկվայում խոշոր կաշեգործարան է կառուցվում։ Սիբիրում, Ուլյանովի նահանգում և ուրիշ տեղերում յուղ և պանիր պատրաստող գործարաններ են կառուցվում։

Կառուցվում են նաև լուցկու և շաքարի գործարաններ։ Այս ֆաբրիկաների ու գործարանների մի մասն արդեն կառուցված են։ Նրանք արդեն գործում են։

Այսպիսի ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու անհրաժեշտությունն ամեն մինը հասկանում է։ Ծոթեղենի և այլ ապրանքների կարիքը մեծ է և Խորհրդային իշխանության նպատակն է ավելացնել այդ ապրանքների քանակն հենց այժմ, մոտակա տարիներում։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԾԱԽՍՎՈՂ ԴՐԱՄԸ

Նոր ֆաբրիկաներ, գործարաններ, ելեկտրոկայաններ, յերկաթուղիներ կառուցելու և հները նորոգելու և վերասարքավորելու համար մեծ գումարներ են հարկավոր։ Օրինակ, միայն Սիբիր-Թուրքեստանյան յերկաթուղագծի կառուցումը նստելու յե 150 միլիոն ռուբլի։ Դնեպրոստրոյը՝ 200 միլիոնից ավելի։

Յերեք խոշոր մետաղագործական գործարանները նստելու յեն 80-ական միլիոն՝ յուրաքանչյուրը։

Իվանո-Վոզնեսենսկում կառուցվող մանածագործարանը՝ 130 հազար իլիկով, նստելու յե 12 միլիոն ռուբլի։

Խորհրդային Միության մեջ տարեց-տարի մեկը մյուսից մեծ ֆաբրիկաներ ու գործարաններ են հիմնվում, հետևաբար՝ հետզհետե մեծամեծ ել գումարներ են ծախսվում։

Դեռ 1925/26 թվին նոր ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու և հները վերասարքավորելու վրա ծախսված է 780 միլ. ռուբլի։ 1926/27 թ. արդյունաբերության զարգացման վրա ծախսվել է մեկ միլիարդ (հազար միլիոն) ռուբլի։ Հետագայում այդ ծախսը տարեց-տարի ավելանալու յե։

Ոչ տեղից վերցնել մեր՝ առայժմ աղքատիկ յերկրի համար այսքան մեծ գումարները։

Արտասահմանից կամ օտար կապիտալիստներից Խորհրդային Միությունն օգնություն ստանալ չի կարող։ Արտասահմանում մեր կարիքի չափով փոխառություն կնքելը համարյա անկարելի է, վորովհետև կապիտալիստները Խորհրդային Միությանը փոխառություն չեն տալիս, իսկ տալու դեպքում էլ՝ միայն ստրկացնող, վաշխառուական տոկոսներով։ Իսկ Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները այնպես ստրկանալ չեն ուզում։ Մնում է, վոր մեր ժողովրդական տնտեսությունը զարգացնելու համար հարկավոր անհրաժեշտ գումարը մեր յերկրի ներսում գտնենք։

Նոր կառուցումների համար ամենից առաջ ծախսվում է արդյունաբերության տված վաստակից։

Մեր պետական սոցիալիստական արդյունաբերությունը քանի գնում, ավելի ու ավելի լավ է աշխատում, ավելի շատ ապրանք է պատրաստում և ավելի ու ավելի մեծ շահ է տալիս։

1924/25 թ. պետական արդյունաբերությունը տվել է 305 միլիոն ռուբլի շահ, 1925/26-ին՝ 464 միլիոն, 1926/27-ին՝ դրանից էլ ավելի։ Այս շահը ծախսվում է յերկրի ժողովրդական տնտեսության զարգացման, առաջին հերթին՝ ֆաբրիկաների ու գործարանների վերասարքավորման վրա։

Վաստակ է տալիս նաև առևտուրը՝ թե ԽՍՀՄ-ի ներսում, թե արտասահմանում։

Մեր պետությունը յեկամուտ ունի նաև զանազան տեսակի հարկերից, միասնական գյուղատնտեսական հարկից, յեկամտային հարկից—քաղաքում, տուրքերից (փոստային, դատական) և գինու, ծխախոտի և ուրիշ ապրանքների վրա դրած ակցիզից։ Այս յեկամուտներից մի մասը ծախսվում է դպրոցների, հիվանդանոցների պահպանության վրա, աշխատավարձ է տրվում գյուղի ու քաղաքի խորհրդային ծառայողներին։ Իսկ մյուս մասը նույնպես ծախսվում է արդյունաբերությունը, յերկաթուղիները և գյուղատնտեսությունը զարգացնելու վրա։

Ժողովրդական տնտեսության ինդուստրիալիզացիայի մեծ օգնություն են ցույց տալիս նաև պետական փոխառությունները։

Ժողովրդական տնտեսության աճման հետ միասին բարելավվում է նաև բանվորի ու գյուղացու վիճակը։ Աճում է բանվորների, գյուղացիների ու ծառայողների խնայողությունը։

Հենց այս խնայողությունն էլ գյուղացիք(և բանվորները) կարող

են տալ Խորհրդային պետությանը՝ որպես փոխառություն։ Այս գումարները Խորհրդային պետությունը կարող է շրջանառության մեջ դնել, ծսապ կերպով նոր ֆաբրիկաներ ու գործարաններ շինել, գյուղատնտեսությունը վերակառուցել։

Բացի դրանից՝ բանվորի և գյուղացու համար փոխառությունները խթաններ են խնայողություն անելու։ Մաս-մաս վճարելու պայմանով օբլիգացիա գնելը դժվար չէ. մինչդեռ դա խնայողություն է շահում է տալիս։ Ժողովրդական տնտեսությունը զարգացնելու համար բանվորից և գյուղացուց փոխառություն ստանալու նպատակով Խորհրդային պետությունը հատուկ արժեքավոր թղթեր է թողնում (նրանք օբլիգացիա են կոչվում)։

Աշխատավոր դասի խնայողությունը ժողովրդական տնտեսության զարգացման գործին ծառայեցնելու համար են նաև խնայողական դրամարկղները։ Այս պատճառով յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է ագիտացիա անել՝ պետական փոխառությանը գրվելու և խնայածը խնայողական դրամարկղ մուծելու, ներդրելու։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Մեքենաների արտադրության զարգացումը գյուղացուն ձեռնտու է, թե՞ ոչ։
2. Արդյունաբերության կառուցման համար մեր երկիրը վո՞րտեղից է փող վերցնում։
3. Խորհրդային իշխանությունն ինչու՞ է փոխառություններին դիմում։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ

Մեր արդյունաբերությունը բարվոքելու համար զուր չեն հարյուրավոր միլիոններ ծախսվում։ Արդեն տեսացինք, որ արդյունաբերությունը տարեց-տարի ավելի ու ավելի ապրանք է պատրաստում։

Բայց շատ ֆաբրիկային ապրանք ունենալը միայն բավական չէ։ Մեր ֆաբրիկաների և գործարանների գլխավոր նպատակն է—պատրաստել լավ որակի և, որ ամենից կարևորն է, էժան ապրանք։

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ աշխատում է իջեցնել գործարանային ապրանքների գները, որպեսզի բանվորն ու գյուղացին հեշտ կարողանան գնել։ Բայց որպեսզի կարելի լինի ապրանքն

իսկապես *էժան ծախել, պետք է, որ այդ ապրանքն իրենց՝ործարա-նին* **էժան նստի։** *Ամեն մարդ գիտե, որ ֆաբրիկան իր պատրաստած ապրանքը չի կարող ավելի էժան վաճառել, քան իրեն է նստել, կամ ինչպես ասում են,* **ինքնարժեքից** *էժան ծախել։*

Հետևապես ապրանքն էժանացնելու համար անհրաժեշտ է ֆաբրիկաներում և գործարաններում իջեցնել, էժանացնել **ապրանքների ինքնարժեքը։**

Մեր արդյունաբերության մեջ ինչու չի դեռ բարձր ֆաբրիկային ապրանքների ինքնարժեքը։ Ցույց ինչ անել, որ ապրանքների այդ ինքնարժեքն իջնի, պակասի։

Մեր գործարանային ապրանքների ինքնարժեքի թանգության առաջին պատճառը մեր արդյունաբերության վատ, չտամինաց տեխ-նիկան է։ Մեր ֆաբրիկաներում և գործարաններում դեռ բոլոր աշ-խատանքն եր մեքենայով չի կատարվում։ Իսկ ձեռքի աշխատանքն անհամեմատ ավելի ժամանակ է պահանջում։

Հաշվել են, որ միևնույն ժամանակամիջոցում մեքենան ձեռքից ավելի է աշխատում—կոշիկ կարելիս՝ 9 անգամ, դանակ շինելիս՝ 29 անգամ, թուղթ շինելիս՝ 32 անգամ, մեխ շինելիս՝ 129 անգամ։

Ինարկե՝ ձեռքի աշխատանքը գործարանի վրա անհամեմատ ավելի թանգ է նստում, քան մեքենայինը։ Վորովհետև միևնույն ժա-մանակի ընթացքում բանվորները ձեռքով ավելի քիչ ապրանք են պատրաստում, քան մեքենայով։ Ապրանքն էլ—ձեռքի աշխատանքի ժամանակ—և ավելի քիչ է, և ավելի թանգ։

Սա ապրանքների թանգության մի պատճառը։ Սրանից պարզ է, թե ինչու են մեր արդյունաբերությունն աշխատում **մեքենայացնել արտադրությունը,** *այսինքն՝ ֆաբրիկաների և գործարանների* **ամբողջ** *աշ-խատանքը կատարել վոչ թե ձեռքով, այլ մեքենայով։*

Բայց մեքենա չէլ կա, մեքենա չէլ։ Արդեն ասացինք, որ մեր ֆաբրիկաներում և գործարաններում սարքավորման մեքենաների, դազգյահների, գործիքների մեծ մասը մաշվել, հնացել է, վորովհետև տեխնիկան անընդհատ զարգանում է ավելի ու ավելի կատարելա-գործված մեքենաներ է տալիս։ Մեր մեքենաներն ու դազգյահներն այլևս չեն կարողանում ամբողջ թափով աշխատել. նրանց ոգնությամբ քիչ ապրանք է պատրաստվում։ Բացի դրանից՝ հնացած սարքը հաճախ է փչանում, կոտրվում։ Սա չէլ է թանգացնում ինքնարժեքը, վորով-հետև փչացած մեքենան նորոգելու համար ժամանակ ու փող է հար-կավոր. իսկ աշխատանքը կանգ է առնում։ Ցերբեմն մի մեքենայի կոտրուածի պատճառով մի ամբողջ բաժին, չերբեմն հենց ֆաբրիկան է կանգ առնում։

Մեր արդյունաբերության աշխատանքները բարելավելու համար ձեռք առած միջոցները — ձեռքով աշխատանքը մեքենայով փոխարինելը, այնպիսի նոր, լավագույն մեքենաներ գնելը, վորոնցով կարելի յե ավելի եժան ապրանք պատրաստել, այս միջոցները միասին առած կոչվում են արտադրության ռացիոնալիզացիա։

Բայց արտասահմանում նոր մեքենաներ գնելը կամ կառուցելը մեծ փող արժե։ Իսկ բարելավել կամ, ինչպես ասում են, ռացիոնալիզացիայի յենթարկել ֆաբրիկաների ու գործարանների աշխատանքը, հաճախ կարելի յե հին մեքենաներով, միայն թե փոքր ծախսեր կատարելուց հետո։ Մեր արդյունաբերությունը դեռ ամեն ինչ չի արել, վորպեսզի կարողանա հին մեքենաներով ել կարելույն չափ եժան ապրանք ստանալ։

Այս ուղղությամբ գլխավորը և հիմնականը, վոր կարելի յեր և պետք եր կատարել, դա մեքենաներն ամբողջովին ծանրաբեռնելը և նրանց վրա աշխատող բանվորների աշխատանքը կանոնավոր կերպով ոգտագործելն ե։ Խոշոր ֆաբրիկա, գործարան կառավարելը դժվար ե։ Պետք ե նախորոք ճիշտ հաշվել, թե ով ինչ աշխատանք պիտի անի, ժամանակին նորոգել գործիքները, ժամանակին վառելիք ու հում նյութեր հասցնել ֆաբրիկա։ Յուրաքանչյուր բանվոր ընդհանուր աշխատանքի միայն մի մասն ե կատարում. պետք ե հետևել, վոր աշխատանքն ընթանա համաչափ, հարթ, վոր մի բանվորը չսպասի մյուսին, վոր մի վորևե աշխատանքի վրա ավելորդ բանվոր իրոք չլինի, վոր վորակյալ բանվորի աշխատանքը չվատնվի այնպիսի աշխատանքի վրա, վորը վոչ վորակյալ բանվորն ել կարող ե կատարել։ Այլապես կստացվեն անտեղի ընդհատումներ, բանվորի ժամանակի իզուր վատնումներ։ Արտադրության ռացիոնալիզացիան միաժամանակ նաև աշխատանքների ճիշտ կարգ ու կանոն սահմանելն ե գործարանում։

Իսկ այդպիսի մշակված աշխատանք չի կարելի ասել, թե ամեն տեղ կա։

Որինակ, սրանից տարի ու կես առաջ Դոնի ավազանի ածխահանքերից մեկի մի հանքահան փաստորեն իր աշխատանքային ժամանակի միայն $^1/_4$ եր աշխատել։ Մնացած $^3/_4$ ժամանակը կամ չեր ոգտագործվել, կամ յեթե ոգտագործվել ել եր, համենայն դեպս՝ վոչ ըստ մասնագիտության։ Մի ածխահանքում՝ զանազան անկանոնությունների պատճառով (դատարկ վագոնները ժամանակին չեյին մատուցվում, գործիքները կոտրած եյին լինում և այլն) բանվորները չեյին աշխատում ամբողջ $3^1/_2$ ժամ։

Բայց ահա մի այլ որինակ ես, վորից կերևա, թե վորքան բան

կարելի չէ անել ճիշտ հաշված ու ռացիոնալ կարգ ու կանոն ունեցող գործարանում։

Ստալինյան մետաղագործական գործարանի գլանիչ բաժնի բանվորները թիթեղը գլանելիս 8 ժամյա բանվորական օրից 2. ժ. 46 րոպե ընդհատում ունեյին, այսինքն՝ իզուր կորցնում եյին բանվորական օրվա մեկ չորրորդից ավելին։ Յերկաթը գլանող մեքենան օրական 1300 փ. յերկաթ եր պատրաստում։

Այն օրից, յերբ բանվորներն ու ղեկավարները գործարանում աշխատանքի ռացիոնալիզացիա կատարեցին, ընդհատումները $2\frac{1}{2}$ անգամ պակասեցին, և նույն գլանող մամուլն սկսեց օրական յերկու ու կես հազար փթից ավելի յերկաթ պատրաստել։ Հասկանալի յե, վոր արժեքն ել զգալի կերպով իջավ։

Մեր արդյունաբերությունը լավացնելու այլ հնարավորություններ ել կան։ Յերբեմն ել բավական ե լինում միայն մեքենայի տեղը փոխել, դազգյահներն աշխատանքի համար ավելի հարմար դասավորել, և տես՝ աշխատանքը դառնում ե ավելի արագ և եժան։

Պետք ե ապրանքների արտադրումն այնպես կազմակերպել, ձեռնարկություններում (ֆաբրիկաներում, գործարաններում, շախտերում) այնպիսի կարգ ու կանոն սահմանել, վոր բանվորը վորքան կարելի յե քիչ ժամանակ վատնի աշխատանք ստանալու, գործիքներ վորոնելու վրա։

Շատ ձեռնարկություններում կարելի յե և պետք ե մեքենաները (շարժիչները) տաքացնելու ծախսերը պակասեցնել։ Յերբեմն միայն վառարան մաքրելն ել բավական ե լինում, վորպեսզի վառելիքի ծախսերը 15—20 տոկոսով կրճատվեն։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Մենք ինչպես ենք եժանացնում ապրանքները։
2. Ի՞նչ ե նշանակում արտադրության ռացիոնալիզացիա և ինչպես պետք ե այն անցկացնել։

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ Ի՞ՆՉ Ե ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Ի՞նչ ե տալիս, արդյոք, բանվորներին, գյուղացիներին և ամբողջ խորհրդային պետությանը արտադրության ռացիոնալիզացիան։

Ռացիոնալիզացիան իջեցնում ե ապրանքների ինքնարժեքը։ Այս իջեցումից մեր յերկիրը կրկնակի օգուտ ունի։ Առաջին—կարելի

յեն սպառման միջոցների գների իջեցնել և այսպիսով թեթևացնել աշխատավորների դրությունը՝ ֆաբրիկային ապրանքները նրանց ավելի ու ավելի եժանացրած գներով վաճառելով։ Ինքնարժեքն իջեցնելու յերկրորդ ոգուտ ել այն ե, վոր արդյունաբերությունն ավելի շահ ե տալիս, իսկ այս շահը ծախսվում ե ժողովրդական տնտեսության հետագա զարգացման վրա։

Արտադրության ռացիոնալիզացիան բարձրացնում ե ԽՍՀՄ-ի ֆաբրիկային ապրանքների քանակը։ Սրանից շահվում ե և անհատ աշխատավորը և մեր ամբողջ յերկիրը, վորովհետև այդպիսով նա ավելի յե ազատվում և ապրանքային սովից, և ոտար յերկրներից կախյալ վիճակ ունենալու դրությունից։

Այլև լավանում ե աշխատողների վիճակը։ Աշխատանքը կանոնավոր տանելու դեպքում ապրանքն ավելի սակավ ե պակասում, անպետք ճանաչվում։ Յեվ վերջապես՝ արտադրության ռացիոնալիզացիայի դեպքում միջոցների ահագին խնայողություն ե կատարվում։ Փոխանակ նոր, թանգարժեք մեքենա գնելու, կարելի յե կարգի բերել ունեցած հները։ Այսպիսով խնայումն ե ստացվում, վոր այնքան անհրաժեշտ ե մեր ժողովրդական տնտեսության համար, վորովհետև ԽՍՀՄ դեռ ես աղքատ յերկիր ե, և ամեն մի խնայված ռուբլին մեզ հարկավոր ե, վոր ավելի արագ բարձրացնենք ժողովրդական տնտեսությունը, կարելույն չափ շուտ ազատվենք այն մուրացկանությունից, վոր ցարական ռեժիմը մեզ ժառանգություն ե թողել։

Ահա այն գլխավոր ոգուտները, վորոնք բերում ե իր հետ մեր արդյունաբերության արտադրության ռացիոնալիզացիան։

Արդյունաբերության ռացիոնալիզացիա չի կատարվում վոչ միայն մեզնում, Խորհրդային Միության մեջ, այլև կապիտալիստական յերկրներում։ Բայց մեր և կապիտալիստների ռացիոնալիզացիայի նպատակները ու հետևանքները տարբեր են։ Կապիտալիստներն արտադրության ռացիոնալիզացիա չեն անցկացնում միայն ավելի շահ ստանալու համար, վորպեսզի իրենց յեկամուտները մեծացնեն։ Կապիտալիստական ֆաբրիկաներում արտադրությունը վորքան ավելի յե բարվոքվում, ռացիոնալիզացիայի յենթարկվում, կապիտալիստներն այնքան ավելի շահ են ստանում և բանվորներին ել ավելի յեն շահագործում։ Այս, որինակ՝ Գերմանիայի շատ ֆաբրիկաներում մրցանակ են նշանակել շատ ապրանք պատրաստելու համար։ Բանվորները կաշվից դուրս եյին գալիս շատ ապրանք պատրաստելու, վորպեսզի մրցանակ ստանան և գոնե այդպիսով մի փոքր ավելացնեն որավարձը։ Աշխատում եյին ավելորդ ժամեր, մինչև քրտնաթոր լինելու աստիճան։ Իսկ

այնուհետև ստիպում էին բանվորներին՝ նախկին աշխատավարձով նույնքան ապրանք պատրաստել, որքան պատրաստում էին՝ մրցանակ ստանալու համար։ Կապիտալիստներն արձակում էին բանվորների մի մասին, իսկ մնացածներին հարկադրում էին կատարել ամբողջ աշխատանքը։ Մի արհեստանոցում 160 բանվորից 60-ին արձակեցին, իսկ մնացած 100 բանվորին ստիպեցին պատրաստել այնքան ապրանք (նույնիսկ ավելի), որքան առաջ 160 հոգին էր պատրաստում։

Այս պատճառով արտադրության ռացիոնալիզացիան կապիտալիստական երկրներում մեծ գործազրկություն է առաջ բերում։ Բանվորների՝ աշխատավարձը նվազում է։ Յեթե բանվորները չեն համաձայնում պակասեցրած որավարձով աշխատելու, կապիտալիստները նրանց արձակում, նորերն են վարձում։

Այլ կերպ ասած, արդյունաբերության ռացիոնալիզացիան կապիտալիստական երկրներում միայն կապիտալիստներին է հարստացնում։ Կապիտալիստական ռացիոնալիզացիան բանվորների համար միայն գործազրկություն, սով և աշխատավարձի նվազում է առաջ բերում։

Այլ է արտադրության ռացիոնալիզացիան ԽՍՀՄ-ում։ Մեզնում արտադրության ռացիոնալիզացիան կատարվում է վոչ թե շահ ստանալու նպատակով, այլ միայն բանվորների ու գյուղացիների նյութական դրությունը բարելավելու, աշխատելով այդ ձևով մեծ քանակության ապրանք ունենալու՝ ավելի էժան գնով և ավելի բարձր վորակի։ Կապիտալիստական երկրներում բանվորները պայքարում են կապիտալիստական ռացիոնալիզացիայի դեմ։ ԽՍՀՄ-ում բանվորների կենսական շահն է, վոր սոցիալիստական ռացիոնալիզացիան ամենալավ կերպով կիրառվի։ Այս պատճառով Խորհրդային երկրում մասսան ակտիվ կերպով մասնակցում է արտադրության ռացիոնալիզացիային, հաճախ ֆաբրիկաներում ու գործարաններում բանվորներն իրենք են ռացիոնալիզացիայի նախաձեռնող հանդիսանում։

ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության ռացիոնալիզացիայում առանձնապես գնահատելի են նոր հնարումները, վորոնք բարվոքում ու էժանացնում են աշխատանքները։ Յուրաքանչյուր մեքենա կարելի է բարելավել։ Մեքենաների, դազգյահների և աշխատելու յուրաքանչյուր բարելավում էժանացնում է ապրանքի ինքնարժեքը։ Այս շատ լավ են հասկանում կապիտալիստները։ Բոլոր կապիտալիստական երկրներում ֆաբրի-

կաներն ու գործարաններն ամեն կերպ խրախուսում են նոր մեքենաներ, դազգյահներ, տարբեր հնարողներին, վորոնք ապրանքների արտադրանքն եժանացնում են։ Կապիտալիստներն իրենց ֆաբրիկաներին կից նույնիսկ հատուկ հիմնարկներ (լաբորատորիաներ, ինստիտուտներ) են ստեղծում՝ արտադրությունը բարելավելու նպատակով։ Անհամեմատ պակաս ոգուտ այդ գյուտեր անողներն են ստանում։ Ֆաբրիկաներում ու գործարաններում տեղի ունեցած արտադրության բարելավումները և կատարելագործումներն ամբողջ բանվորության համար միայն շահագործման ուժեղացում և առաջ բերում։ Կապիտալիստներն այդ նոր հնարումները գործի չեն դնում վոչ թե բանվորների աշխատանքը թեթևացնելու, այլ միայն այն ժամանակ, յերբ այդ նոր հնարած բանը կապիտալիստների համար ավելի շատ կբերի, յերբ կապիտալիստը հնարավորություն կունենա կրճատել բանվորների թիվը կամ ստիպել, վոր նրանք լարված աշխատեն։

Նույնը չէ Խորհրդային Միության մեջ։ Գյուտերը թեթևացնում են բանվորների աշխատանքը, շատացնում են ապրանքը, լավացնում են նրա վորակը.—մի խոսքով, մեծ ոգուտ են բերում ամբողջ բանվոր դասակարգին։ Ահա մի քանի նոր գյուտերի որինակներ, վորոնք ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսությանը մեծ ոգուտ են բերելու։ Պերմի յերկաթգծի փականագործ ընկ. Միկրյուկովը մի ավտոմատիկ մամուլ և հնարել՝ առանցքակալները (ПОДШИПНИК) սեղմելու համար։ Առաջ 6 հոգի մեկ որում պատրաստում եյին յերկու առանցքակալ, իսկ այժմ ընկ. Միկրյուկովի հնարած մամուլով մի բանվոր որական պատրաստում է ութ առանցքակալ։ Սրա ոգուտը բոլորին հասկանալի է։

Ոդեսայի յերկաթուղային արհեստանոցների վարպետի ոգնական ընկ. Կոտիկովը յերկաթին պողպատի հատկություն տալու միջոց է հնարել։ Ընկ. Կոտիկովի ձևով պատրաստած խարտոցները, յերկաթ կտրելու դանակները և ուրիշ առարկաները վորակով վոչ միայն վատ չեն, այլ շատ լավ են պողպատից շինածներից։

Ատաղձագործ Սավինովը նոր հնձելու մեքենա է հնարել։ Նախկին բոլոր հնձող մեքենաներն իրենց հնձածը կապում եյին մի առանձին տեսակի թելով (շպագատ), վոր մանիլյան թել է կոչվում։ Մանիլյան թելը միայն Ամերիկայում է պատրաստվում և բավական թանգ արժե։ Սավինովի հնարած մեքենան հնձածը կարող է կապել վոչ թե թելով, այլ սովորական ծղոտի կեմով[1]։ Պետք է ասած՝ Սավինովի մեքենան անհամեմատ ավելի պարզ ու աշխատանքը խնայող է։

[1] Կեմ—ծղոտի փունջ, վորով գյուղացիք կապում են խուրձը։ Ծ. Թ.

Արտադրությունը բարվոքող գյուտերի քանակն ամսե-ամիս, տարեց-տարի անվերջ աճում է։

Մեր երկրում Խորհրդային իշխանության օրով բանվոր-դասն արդյունաբերության տերն է։ Բարելավելով պետական սոցիալիստական արդյունաբերությունը, բանվորն ինքն իրեն է օգնում։ Արդյունաբերությունը որքան ավելի լավ աշխատի, այնքան ավելի կբարձրանա բանվորի օրավարձը։

Բանվոր դասակարգն արտադրության ռացիոնալիզացիա անցկացնելով, թեթևացնում է չքավոր և միջակ գյուղացիության դրությունը, էժանացնում է գործարանային ապրանքները, ավելի շատ գյուղատնտեսական գործիքներ է պատրաստում, որոնց շնորհիվ գյուղատնտեսությունն աճում ու ամրանում է։

Իսկ բանվորներն ինչպես են մասնակցում արտադրության բարվոքման գործին՝ ֆաբրիկաներում, գործարաններում և շախտերում։

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտադրության ռացիոնալիզացիային բանվորների մասնակցելու գլխավոր ձևն այսպես կոչված բանվորների արտադրողական խորհրդակցություններն են։ Ցեխի բանվորը որևէ թերություն է նկատում իր բաժին-արհեստանոցում, հայտնում է արտադրողական հանձնաժողովին, որ բաղկացած է տվյալ ֆաբրիկայի, գործարանի բանվորներից։ Արտադրողական խորհրդակցությունների ժամանակ, որին մասնակցում են բոլոր հետաքրքրվող բանվորները, ինչպես նաև ինժեներները, վարպետները, արհեստանոցների վարիչները, գործարանի վերատեսուչը, քննության է առնվում բանվորների յուրաքանչյուր առաջարկը։ Նշանակվում են թերությունները, առաջարկներ են լինում, թե այս կամ այն թերությունն ինչպե՞ս և որտե՞ղ կարելի է վերացնել։ Այդ առաջարկները մեծ խնամքով քննության են առնվում և ապա ուղարկվում են արհեստանոցի պետին կամ գործարանի վերատեսչին, որի կարգադրությամբ էլ գործադրվում են։

Բանվորները միայն թերությունները չէ, որ նկատում են. նրանք մի շարք օգտակար ցուցմունքներ էլ են տալիս՝ արտադրությունը բարելավելու։ Յուրաքանչյուր ֆաբրիկայում, յուրաքանչյուր գործարանում բանվորների նախաձեռնությամբ շատ բան է արվում՝ արտադրությունը բարձրացնելու նպատակով։

Միայն արտադրողական խորհրդակցությունների միջոցով չէ, որ բանվորները մասնակցում են ֆաբրիկաներում, գործարաններում ար-

տադրությունը բարձրացնելուն, ամբողջ ժողովրդական տնտեսությունը բարվոքելուն։ Ամեն տեղ, ամեն հնարավոր միջոցներով բանվորներն աշխատում են լավացնել, ռացիոնալիզացիայի յենթարկել մեր արդյունաբերությունը, հաջողեցնել գործարանային ապրանքների ինքնարժեքն իջեցնելը։ Իսկ արժեքն իջեցնելով, պարզ է, վոր կիջնեն նաև ապրանքների գները։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Բանվորներն ինչպես են մասնակցում ռացիոնալիզացիային։
2. Ի՞նչ տարբերություն կա ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների ռացիոնալիզացիայի մեջ։
3. Ի՞նչ շահ ունի գյուղացին արտադրության ռացիոնալիզացիայից։

ՅՈԹԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

Յուրաքանչյուր գյուղացի գիտե, վոր ինքն որվա մեջ վորքան քիչ ժամ աշխատի, այնքան ավելի աշխուժ կլինի, աշխատանքն ավելի լավ առաջ կգնա։ Յեթե նույնիսկ իր աշխատանքին սովոր մարդն որական անընդհատ 8—10 ժամ աշխատի, նրա գործը վերջում այնքան էլ լավ չի դուրս գալ, պակաս կլինի, հենց վորակով էլ կվատանա։

Բացի դրանից՝ որվա մեջ 10—12 ժամ աշխատանքը մարդու ուժասպառ է անում, նրան վաղաժամ հաշմանդամացնում, աշխատանքի անպետք է դարձնում։ Ցարական Ռուսաստանում կապիտալիստները բանվորներին աշխատեցնում եյին այնքան, վորքան իրենք եյին կամենում։ Բանվորի աշխատանքը պաշտպանող վոչ մի որենք չկար, և բանվորը հարկադրված եր յենթարկվել կապիտալիստին, վորպեսզի անգործ չմնա, սովից մեռնի։

Կապիտալիստական յերկրներում բանվորները մինչև որս էլ որական 9—10 ժամ, յերկրներ էլ կան, ուր ավելի յեն աշխատում։ Կապիտալիստները բանվորների առողջության մասին չեն մտածում։ Յեթե բանվորն ուժից վեր աշխատանքից հիվանդանա, կապիտալիստը նորը կվարձի։

Մյուս բոլոր յերկրների բանվորներն արդեն տասնյակ տարիներ պայքարում են 8-ժամյա բանվորական որվա համար։ Սակայն այդպիսի որ լրիվ կերպով գործադրվում է միայն Խորհրդային Միության մեջ։

Որվա մեջ 8 ժամ—սա այն ժամանակն է (կամ, ինչպես ասում

են, մաքսիմումը), երբ բանվորը պիտի աշխատի, որ կարողանա նաև հանգստանալ, գիրք կարդալ, դասընթացների հաճախել, իր որակը բարձրացնել, լավ աշխատել։ Այն երկրում, ուր ֆաբրիկաների ու գործարանների տերն ինքը — բանվորությունն է հանդիսանում, այն երկրում, ուր իշխանության գլուխ է անցած բանվոր դասակարգը, կարելի է և պետք է ձգտել, որ բանվորական օրվա կարճումը շարունակվի։ Կոմունիստական կուսակցության ծրագրում այսպիսի կետ կա. «ՀամԿԿ իբրև նպատակ պիտի դնի՝ աշխատանքի արտադրողականության հավելման հետ միասին առավելագույն 6-ժամյա բանվորական օր սահմանել»։

Բանվորների աշխատանքի արտադրողականությունը տարեց-տարի աճում, ավելանում է։ Կուսակցության և Խորհրդային իշխանության վճիռը՝ անցնելու 7-ժամյա բանվորական օրվա — կուսակցության ծրագիրն ի կատար ածելու միջոցներից մեկն է։

Բանվոր դասակարգի թշնամիները — կապիտալիստներն ու կուլակները, աշխատում են համոզել գյուղացիներին, թե ֆաբրիկաներում բանվորական օրվա կրճատումը վնաս է գյուղացիներին. իբր թե բանվորները քիչ են աշխատում, դրա համար էլ ապրանքը պակաս է և թանկ է նստում։ Բանվորի գործն, ասում են դրանք, հեշտ է. այդ բավական չէ, ժամանակն էլ կրճատում են։ Իսկ գյուղացին աշխատում է օրական 10—12 ժամ, գործն էլ ծանր է։ Ճի՞շտ են այս կուլակային ասեկոսեները։ Ո՛չ, ամենևին ոչ։ Կուլակները դիտմամբ գրգռում են գյուղացիներին բանվորների դեմ, որպեսզի բանվորի և գյուղացու միությունը խախտեն։

Յուրաքանչյուր գյուղացի, մանավանդ կոմերիտական լավ պիտի հասկանա այս։

Նախ՝ ճիշտ որ գյուղացին երբեմն 8 ժամից էլ ավելի է աշխատում։ Բայց այդպես է ոչ թե ամբողջ տարին, այլ միայն դաշտային աշխատանքների ժամանակ։ Խոտհար, հունձ, կալոց։ Գյուղացին ձմեռը շատ քիչ է աշխատում, այնպես որ միջին հաշվով նա բանվորից շատ չի աշխատում։ Երկրորդ՝ բանվորի գործարանային աշխատանքը գյուղացու աշխատանքից ծանր է և լարված։ Այդ աշխատանքը վտանգավոր էլ է։ Այսպես չզգուշացար, և մեքենան կարող է քեզ խեղել, նույնիսկ սպանել։

Բացի դրանից՝ բանվորն անհամեմատ վատ պայմաններում է աշխատում, քան գյուղացին։ Դաշտում թարմ օդ է, իսկ գործարանում, որքան էլ մաքրես, այն օդը չէ — դաշտային, անտառային չէ։ Սա ավելի է ծանրացնում գյուղացու աշխատանքը և ավելի մեծ հանգստի

իրավունք է տալիս։ Մենք տեսնում ենք, վոր կուլակային ասեկոսեները բանվորի հեշտ կյանքի մասին՝ ճիշտ չեն։ Ճիշտ չեն նաև զրույցները, թե գործարաններում 7-ժամյա բանվորական որի անցնելուց ապրանքը կքչանա, ուրեմն և կթանգի։

Մենք արդեն տեսանք, վոր գործարանային ապրանքների ինքնարժեքի թանգության պատճառը մեր արդյունաբերության ցածր տեխնիկան, հոգնած, մաշված մեքենաները և աշխատանքի վատ կազմակերպված լինելն է։ Բոլոր ֆաբրիկաններում ու գործարաններում 7-ժամյա բանվորական որը մեկեն չպիտի անցկացնել, այլ աստիճանաբար։ Սկզբում այն ֆաբրիկաններում, ուր մեքենաներն ու սարքավորումը նոր են։ Նոր մեքենաներ ու սարքավորություն ունեցող գործարանի արտադրությունը մեծ կլինի։ Այս էլ կա, վոր 7-ժամյա բանվորական որ անցկացնելով, գործարաններից շատերում կարելի յե վոչ թե մի հերթի, այլ յերկու, նույնիսկ յերեք հերթի աշխատել։ Սա, իհարկե, վոչ թե կպակսեցնի, այլ կավելցնի ապրանքի քանակը։

Յեթե բանվորն աշխատել է 8 ժամ և պատրաստել է, ասենք, 80 մետր ճոթ, սա հո չի նշանակում, թե 7 ժամ աշխատելով, կպատրաստի 70 մետր ճոթ։ Ամենևին վոչ։ Մենք արդեն գիտենք, վոր պակաս քանակի ժամեր աշխատելով, բանվորը կարող է ավելի ուշադիր, զգույշ և լարված աշխատել։ Սա արդեն ապացուցված է։ Չէ՞ վոր հեղափոխությունից առաջ բանվորներն աշխատում եյին 10—12 ժամ, իսկ այժմ՝ 8 ժամ։ Յեվ ի՞նչ. մի՞թե արտադրողականությունն ընկել է մեկուկես անգամ։ Իհարկե, վոչ։

Անցնելով 7-ժամյա բանվորական որի, բանվորի աշխատանքն ավելի լարված կդառնա։ Աշխատանքն այսպես դնելուց, մեքենաները, սարքավորումն ու գործիքները լավացնելուց, նորոգելուց հետո մեր ֆաբրիկաներն ու գործարանները վոչ թե պակաս, այլ ավելի ապրանք կարտադրեն, քան արտադրել են մինչև այժմ։

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ 7-ԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

Գործազուրկների թիվը մեզանում, Խորհրդային Միության մեջ դեռ շատ է։ 1927 թվին ամբողջ Միության մեջ գործազուրկների թիվը մոտավորապես $1^1/_2$ միլիոն եր։ Ճիշտ է, այս գործազուրկների միայն $^1/_6$ մասն եր վարժված, վորակավորված բանվորներից։ Մնացածները կամ ծառայողներ եյին, կամ յերբեք աշխատանք չկատարած (նրանց թիվը 400,000 եր) կամ սեզոնայիններ (150,000), վորոնք ամբողջ տարին աշխատել չեն կարող (պատանիներ, քարտաշներ և

այլ կառուցողական բանվորներ, այլև շաքարի գործարաններում աշխատող ու տորֆերը մշակող սեզոնայիններ)։

Մեզնում գործազուրկները շատ են վոչ նրա համար, վոր ֆաբրիկաներն ու գործարանները կրճատում են աշխատանքն ու բանվորներին փողոց նետում։ Ընդհակառակը՝ մեր արդյունաբերությունն աճում է, և պետական ֆաբրիկաներում ու գործարաններում բանվորների քանակը հետզհետե ավելանում է։ Այսպես, 1923—24 թվին խոշոր արդյունաբերության մեջ բանվորների թիվը եր $1^1/_2$ միլիոն, իսկ 1926—27 թվին արդեն $2^1/_2$ միլիոն եր։ Մեր յերկրի գործազուրկների գլխավոր մասսան գյուղից քաղաք աշխատանքի յեկող գյուղացիներն են։ Ինչպես գիտենք, ԽՍՀՄ-ում գյուղացիությունը դեռ ցած մակարդակի վրա յե, ուստի շատ գյուղացիներ աշխատանք են փնտրում քաղաքների գործարաններում։ Իսկ գյուղերից բոլոր յեկողներին մեր ֆաբրիկաներն ու գործարանները միանգամից աշխատանքի ընդունել չեն կարող։

Խորհրդային իշխանությունը գործազուրկներին ամեն աջակցություն ցույց է տալիս։ Միայն 1926—27 թվին պետական օրգանները 80 միլիոնից ավելի յեն ծախսել՝ գործազուրկներին օգնելու համար։ Բացի սրանից՝ արհեստակցական միությունները իրենց գործազուրկ անդամներին 10 միլիոն ռուբլուց ավելի յեն բաժանել։

Բայց, իհարկե, ամենից լավ օգնությունը գործազուրկին գործ տալն է։ Գործազուրկներից արտելներ են կազմում (կոշկակարների, դերձակների, ծխախոտ վաճառողների և այլն)։ Միայն 1926—27 թվին այդպիսի արտելների մեջ են մտել 120 հազարից ավելի գործազուրկներ։

7-ժամյա բանվորական օր մտցնելը զգալի կերպով կկրճատի գործազուրկների թիվը։ 7-ժամյա բանվորական օրին անցնելով, շատ ֆաբրիկաներ ու գործարաններ կանցնեն յերեք հերթի, իսկ յերրորդ հերթին անցկացնելու համար շատ նոր բանվորների պահանջ կզգացվի, վոր կվերցնեն գործազուրկներից։ Այդ ճանապարհով կկրճատվի գործազուրկների թիվը ամբողջ Խորհրդային Միության մեջ։

Վերջապես 7-ժամյա բանվորական օրն այն հետևանքը ևս ունի, վոր բանվորը հնարավորություն կստանա ավելի ուշադրություն նվիրել հասարակական աշխատանքին, ավելի զբաղվել իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործով։ Իսկ սա բարձրացնում է բանվորի աշխատանքի արտադրողականությունը, վորովհետև կուլտուրական բանվորի աշխատանքն ավելի արդյունավետ է։ Իսկ աշխատանքի արտադրողականության բարձրացումը կօգնի ապրանքների ինքնարժեքի իջեցնելուն, ուրեմն գների եժանանալուն։ Վերջապես կուլտուրական և հասարակական աշխատանքին ավելի ժամանակ նվիրող բան-

վորն ավելի լավ կարող է պայքարել բյուրոկրատիզմի դեմ։ Իսկ բյուրոկրատիզմի դեմ հաջող պայքարը կօգնի մեզ՝ ավելի արագ դիմելու դեպի սոցիալիզմը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու Խորհրդային իշխանությունն ուզում է 7-ժամյա բանվորական օր կիրառել արդյունաբերության մեջ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ի՞ՆՉ Է ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ և զարմանալի յե մեր յերկիրը։

Դիտեցեք քարտեզը։ Ահա մեր առաջ, հյուսիսում Ֆինսկի ծոցի ափում տարածվում է Լենինգրադ քաղաքը։ Նրանում կան ահագին գործարաններ, քարե հսկայական շենքեր, համալսարաններ, թատրոններ, հսկայական գրադարաններ։ Բավական է, վոր մի քիչ հեռանաս Լենինգրադից, կընկնես ցուրտ ու աղքատիկ յերկիր Կարելիան, վորտեղ անընակ ցրտապատ տարածությունում տիրում է կարիքը, տգիտությունը։

Ահա, մեր յերկրի կենտրոնում գտնվում է մայրաքաղաք Մոսկվան։ Այնտեղ կան թանգարաններ, տասնյակ բարձրագույն ուսումնական հիմնարկներ, կառավարությունը, Կրեմլը, իսկ բավական է վոր միքիչ հեռանաս այնտեղից, ընդամենը մի քանի հարյուր կիլոմետր և կտեսնես վայրենություն, տգիտություն, վոչ խճուղային ճանապարհ և նույնիսկ հավաբների նման տներ։ Համարյա այսպես է դեռ մեր վողջ յերկիրը։ Համալսարաններին կից—վայրենի սովորություններ, կուլտուրական կենտրոնների շուրջը—ծով գռեհկություն և տգիտություն, սոցիալիզմի իսկական ոճախներ—խոշոր ֆաբրիկաների կողքին տեսնում ենք սնոտիապաշտություն, տգիտություն և անգրագիտություն։

Մեր այս հետամնացությունը, անգրագիտությունը յեվ տգիտությունը հին իրավակարգերի ամենածանր ժառանգություններից մեկն է։ Այս բոլորը քայքայված ֆաբրիկաների, պատերազմից հյուծված յերկրի հետ միասին բաժին ընկավ Խորհրդային իշխանությանը։

Ցարական իշխանությունը չեր ցանկանում մտածել բնակչության մասսաների լուսավորության մասին։ Քաղաքներում, վորտեղ ապրում եր բուրժուազիան և չինովնիկությունը, կառուցվում եյին դպրոցներ և բանվորներին սովորեցնում եյին միայն այն բանի համար, վոր բոլորովին անգրագետը վատ կաշխատի ֆաբրիկայում։ Նրանց տալիս եյին գիտության փշրանքները։

Բայց գյուղում հարյուրավոր արգելքներ հաղթահարելուց հետո միայն մեծ դժվարությամբ եր դպրոց բացվում։ Պետությունն այս կերպ եր մտածում՝ ինչ կարիք կա մարդկանց սովորեցնել։ Յեթե լուսավորվեն, ավելի շուտ կհասկանան իրենց դրության ծանր լինելը, և կարող են հրաժարվել չենթարկվելուց։ Չե, ավելի լավ ե, թող անգրագետ մնան։ Լուսավորության ցարական մինիստրներից մեկն այսպիսի մի որենք հայտարարեց.—գիմնազիաներում (այսպես եյին կոչվում այն ժամանակ միջնակարգ դպրոցները, վորոնք իրենց գիտելիքների մակարդակով հավասար են մոտավորապես մեր 2-րդ աստիճանի դպրոցներին) խոհարարուհիների և նմանների զավակների տեղը չե, քանի վոր նրանք գիտություն ստանալուց հետո սկսում են ապստամբել։

Մինչ հեղափոխությունը «խոհարարուհիների զավակները», բանվորության և աշխատավոր գյուղացիության զավակներն ստիպված եյին կամ բոլորովին անգրագետ մնալ կամ բավարարվել գիտության փշրանքներով։ Վորոշ անհատներ միայն մեծ դժվարություններով, սոված, ստորանալով, տանջվելով, իրենց համար գիտության ճանապարհ եյին բաց անում, բայց սրանք ել իրոք վոր անհատներ եյին։ Մասսան մնում եր տգետ և անգրագետ։

Բայց այն, ինչ վոր ցարական իշխանության գոյության հիմքերից մեկն եր—անգրագիտությունը, անկուլտուրականությունը, բնակչության մասսաների տգիտությունը, նույն բանը դառնում է խորհրդային երկրի շինարարության ճանապարհին ամենագլխավոր արգելակներից մեկը։

Մենք մեր առաջ դնում ենք հսկայական խնդիրներ։ Մենք պետք ե կառուցենք հարյուրավոր հսկայական ֆաբրիկաներ և գործարաններ, կերպարանափոխենք գյուղը, համախմբելով բաժան-բաժան յեղած մանր գյուղացիական տնտեսությունները մեքենաների ոգնությամբ աշխատող խոշոր կոլեկտիվների մեջ։

Բայց ինչ գործ ել վոր մենք սկսում ենք, ամեն տեղ սուր կերպով զգացվում ե մեր գիտությունների խղճուկ լինելը, մեր անգրագիտությունը և անկուլտուրականությունը։ Հարյուրավոր սխալներ

անում ենք այն բանի համար, որ չենք կարող լավ աշխատել, չի բավականացնում գիտության պաշարը։ Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան գրում էր.

«Ամեն մի քայլափոխում մենք տեսնում ենք, որ շինարարության գործին խանգարում է մեր կուլտուրական հետամնացությունը, հին իրավակարգերից ժառանգություն մնացած կուլտուրական ցածր մակարդակը։ Եթե հարցը վերաբերում է գյուղատնտեսության բարելավման, երկրի ինդուստրացման, բանվորական վորակյալ ուժի պատրաստման, կոոպերացիայի, պետապարատի, խորհուրդների աշխատանքների և այլն, մենք տեսնում ենք, որ գրագիտության բացակայությունը, տարրական ընդհանուր զարգացողության գիտելիքների բացակայությունը արգելք է հանդիսանում, խանգարում նրա ճիշտ դասավորման։ Այժմս մենք ընդհուպ մոտեցել ենք այնպիսի դրության, երբ հետագա առաջխաղացումը սոցիալիզմի ճանապարհով անհնարին է, առանց հսկայական կուլտուրական վերելքի, առանց կուլտուրական հեղափոխության»։

Ձեզնից ամեն վոք լավ գիտե, որ վորքան մարդս գրագետ է, այնքան էլ ավելի լավ է վարում իր տնտեսությունը։ Սրանում հեշտ է համոզվելը։ Եթե դիտելու լինենք զանազան երկրներին, կնկատենք, որ բերքատվությունն այնտեղ է բարձր, վորտեղ բարձր է գիտությունը։ Եվ տեհա պարզվում է, որ անգրագետ Ռուսաստանում հողը 3 անգամ ավելի պակաս է բերք տալիս, քան լուսավոր Բելգիայում։ Եվ մենք կարող ենք ուղղակի պլակատների վրա գրել և ամենուրեք իբրև օրենք հայտարարել. «Գրագետի հողն ավելի բարձր բերք է տալիս», «Եթե ցանկանում ես բարձրացնել գյուղատնտեսությունը, պետք է գրագետ լինես»։

Գյուղատնտեսության վերելքը, դա միայն մի խնդիր է, որ առաջ է դրված։ Բայց մենք ունենք դեռ շատ ծանր և դժվարին մեծ խնդիրներ, վորոնց լուծման համար պետք է չարչարվեն բանվորները և չքավոր-միջակ գյուղացիությունը երկար տարիների ընթացքում։ Եվ Վլադիմիր Իլյիչ Լենինը դիմելով նրանց ասում էր.

«Մեր առաջ դրված է վողջ երկրի տնտեսական վերելքի խնդիրը, էլեկտրականության, տեխնիկայի, ժամանակակից տեխնիկական գիտության հիման վրա երկրագործության և արդյունաբերության վերակազմակերպումը և վերականգնումը։ Դուք շատ լավ հասկանում եք, որ անգրագետ մարդիկ էլեկտրոֆիկացիային մոտ չեն գա, և այստեղ դեռ բավական չէ միայն հասարակ գրագիտությունը։ Այստեղ բավական չէ հասկանալ, թե ինչ է էլեկտրականությունը. պետք է իմա-

նալ, թե ինչպես արդյունաբերության և երկրագործության մեջ մտցնել տեխնիկա։ Հարկավոր է, որ մենք ինքներս սովորենք, հարկավոր է, որ սովորեցնենք աշխատավոր աճող սերնդին»։

Յեվ վորովհետև մենք շատ քիչ գիտություններ, շնորհք, փորձառություն ունենք, առանց վորոնց վոր կողմն էլ վոր շուռ գաս, զգում ես քո հետամնացությունը, վորովհետև մեր կենցաղում դեռ պահպանվել է հին, զզվելի շատ սովորություններ, վորովհետև այս ծանր բեռով դժվար է առաջ շարժվել, ահա այս պատճառով է, վոր մեզ մոտ այժմս հայտարարված է կուլտուրական հեղափոխության լոզունգը։

Ի՞նչ է կուլտուրական հեղափոխությունը։ Կուլտուրական հեղափոխություն նշանակում է՝ միլիոնավոր մասսաների մեջ տարածել — գրագիտություն, գիտություն, նոր սովորություններ, աշխատանքի նոր փորձառություն, նոր, առաջավոր կենցաղ։

Այս մեկ ամսվա, մեկ տարվա գործ չէ։ Կուլտուրական հեղափոխությունը պահանջում է շատ երկար և համառ աշխատանք։ Հարկավոր է բարձրացնել հսկայական ամբողջությունը, հարկավոր է միլիոնավոր մարդկանց ցույց տալ գիտության համը, իսկ այս բոլորի համար կպահանջվի տարիների համառ և երկար աշխատանք։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու ցարական կառավարությունը քիչ էր մտածում աշխատավորության կուլտուրականության մասին։
2. Ինչու բանվորներն ավելի կուլտուրական մարդիկ են, քան գյուղացիները։
3. Ի՞նչ կերպ գրագիտությունը կարող է ազդել բերքատվության վրա։
4. Ինչու համար է հարկավոր կուլտուրական հեղափոխությունը։
5. Կուլտուրականության բարձրացումն ինչով կարող է օգնել բյուրոկրատիզմի դեմ պայքարելու խնդրում։ (Հիշեցեք)։

Ի՞ՆՉՊԻՍԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ ԵՆՔ ՄԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Նախ քան այս հարցին պատասխանելը, յեկեք մի քիչ ձեզ հետ մտածենք, թե ի՞նչ է կուլտուրան։ Կուլտուրա է կոչվում այն ամենը, ինչ ստեղծված է մարդկային ձեռքերով, մարդկային աշխատանքով, ի բաց առյալ բնության տվածից։ Յեթե այսպես ենք հասկանում այս բառը, ուրեմն կուլտուրա բառի տակ հասկացվում են վոչ միայն գըրքերը, թատրոնները, համալսարանները, վոչ միայն գիտությունը, այլ և մեքենաները, շինությունները, աշխատանքի գործիքները, մի խոս-

քով՝ այն բոլորը, վորոնցով մարդս աշխատում է իր իշխանությունը տարածել բնության վրա, օգտագործելով բնությունը մարդկային կյանքի բարելավման համար։

Եվ ինչ կա շատ մտածելու,— կհարցնի մի վորևե ընկեր.— չեթե այդպես է՝ օգտագործիր բուրժուազիայից մնացած բոլոր կուլտուրական ժառանգությունը, վերցրու նրան և իշխիր բնության վրա։ Բայց հարցն այնքան էլ հեշտ չի։ Բանն այն է, վոր բուրժուազիան ստեղծում է կուլտուրան վոչ միայն իշխելու բնության վրա, այլև իշխելու բանվորության և ընդհանրապես բոլոր աշխատավորության վրա։ Բանի վոր մի դասակարգը իշխում է մյուսի վրա և նրան շահագործում է, կուլտուրան էլ ծառայում է նրան ամրապնդելու իր իշխանությունը։

Վորպեսզի մեզ համար ավելի պարզ լինի, վերցնենք մի քանի օրինակ։

Ահա մեր առաջ հին դպրոցն է։ Նա սովորեցնում էր չենթարկվել իշխանության, հնազանդվել, այնտեղ տիրում էր ծեծն ու սարսափը։ Դպրոցը ծառայում էր բուրժուազիային ամրապնդելու իր իշխանությունը։

Վերցնենք այնպիսի գիտություն, ինչպիսին է մարդկության կամ մեր յերկրի պատմությունը։ Բուրժուազիան այդ գիտությունը վեր էր ածել՝ թագավորների, նրանց քաջագործությունների և վարած պատերազմների պատմության։ Իսկ միլլիոնավոր ժողովրդական մասսաների, նրանց տանջանքների, կարիքների, իրենց կյանքի բարելավման համար մղված պայքարի, նրանց ապստամբությունների մասին բուրժուական պատմությունը լռում է։ Բուրժուական կուլտուրայի մասերից մեկն էլ հանդիսանում էր կրոնը, վորը հիմարացնում էր ժողովրդին և աշխատավորությանը սովորեցնում էր չենթարկվել հարուստներին։

Մի խոսքով՝ բուրժուազիան այնպիսի կուլտուրա յեր ստեղծել, վորն ամրացնում էր իր իշխանությունը աշխատավորության վրա։ Նպաստում էր մասսաներին պահել հնազանդության մեջ, թմրեցնում էր նրանց յեվ խանգարում աշխատավորության ազատագրման պայքարին։

Արդյոք հարկավո՞ր էր մեզ այս բոլոր կուլտուրան։ Իհարկե, վոչ։

Բայց արդյոք հարկավո՞ր է բուրժուազիայից մնացած կուլտուրական բոլոր ժառանգությունը մի կողմ գցել։ Նմանապես վոչ։

Նրանում կան շատ արժեքավոր բաներ, վոր անհրաժեշտ են պրոլետարիատին սոցիալիզմի շինարարության գործում։

Վերցնենք հենց հին դպրոցը։ Բացի ճիպոտից ու սարսափից այնտեղ դասավանդվում եյին այնպիսի գիտություններ, ինչպիսին՝ մաթեմատիկան, ֆիզիկան և այլ առարկաները, վորոնց պետք է տիրապե-

տեն նաև աշխատավորները։ Առանց նրանց յոլա գնալ, կամ դեն գցել, անհնար է։

Յեվ կամ բուրժուազիայից մնացել են տնտեսական հսկայական արժեքներ՝ շինություններ, մեքենաներ, հեռագիր։ Հարկավո՞ր է և կարելի՞ յե արդյոք դրանք դեն գցել։ Իհարկե, վոչ։

Ուրեմն հին ժառանգության նկատմամբ մենք ունենք մեր վերաբերմունքը։

Մենք նրան ամբողջապես դեն չենք գցում, այլ աշխատում ենք ոգտագործել այն, ինչ նրանում արժեքավոր է, այն, ինչ պիտանի յե մեզ նոր կյանքի կառուցման համար, *ջոկել արժեքավորն այն բոլորից, ինչ բուրժուազիան ստեղծել է իր դասակարգային իշխանության ամրապնդման համար։*

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է նշանակում կուլտուրա բառը։
2. Ի՞նչ ենք մենք սովորելու բուրժուազիայից։

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ «ՓՈՔՐ» ԳՈՐԾԵՐԸ

Բայց կոմյերիտականների մեջ գտնվում են այնպիսիները, վոր դատում են մոտավորապես այսպես՝

— Ինձ այս կուլտուրական աշխատանքը դուր չի գալիս. սա մանր, անհետաքրքիր գործ է։ Ուրիշ բան եր առաջ՝ իշխանության գրավում, քաղաքացիական կռիվներ, չքավորության կոմիտեներ, այ, իսկական, մեծ, քաղաքական աշխատանքը սա չեր, իսկ այժմս մենք մանր-մունր գործերով յենք զբաղվում։

Լինում են և այնպիսիները, վորոնք ավելացնում են՝

Այն ժամանակ, յերբ կոմյերիտմիությունը կռվում եր, նա քաղաքական կազմակերպություն եր, իսկ ներկայումս դարձել է կուլտուրական կազմակերպություն, վոր վոչ մի քաղաքական գործերով չի զբաղվում։

Այն ընկերները, վորոնք այս կերպ են դատում, չեն հասկանում, վոր նույնիսկ ամենափոքր, աննշան գործը մեծ շինարարության մասնիկ կարող է լինել, և կուլտուրական այն փոքր աշխատանքը, վորով զբաղվում է կոմյերիտական այս կամ այն բջիջը, մասնիկն է այն մեծ գործի, վորը կոչվում է սոցիալիզմի շինարարություն։

Առանց մի փոքր վինտի, կանգ է առնում մեծ մեքենան։ Առանց միլիոնավոր աշխատողների փոքր աշխատանքի, չես կարող վոչ մի մեծ գործ անել։

Նաև մեծ հեղաշրջումները կատարվել են ոչ թե միանգամից, այլ պատրաստվել են յերկար տարիների ընթացքում, դանդաղ, ծանր աշխատանքի միջոցով։ Յերկու տասնյակ տարիներ Լենինը քարոզում էր բոլշևիկյան կուսակցության մասին, յերկար տարիներ բոլշևիկները հավաքում էին բանվորների փոքր խմբակներ և սովորեցնում էին, թե ինչպես պետք է աշխատել բանվորական իշխանության համար։ Այն ժամանակ էլ գտնվում էին մարդիկ, որոնք այս աշխատանքը համարում էին մանր, տխուր և անհետաքրքիր, իսկ այժմ ամեն ոք հասկանում է, որ առանց այս նախնական ծանր սև աշխատանքի, հնարավոր չէր հեղաշրջում կատարել, ստեղծել և ամրապնդել բանվորական իշխանությունը։

Յեվ այժմ էլ մեր փոքր աշխատանքը, ամեն մի կոմյերիտականի առօրյա գործունեյությունը մեր յերկրի մեծ շինարարության մասնիկն է։ Յեթե կոմյերիտականը կանգնած է դազգյահի մոտ, նա բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և պայքարում է արդյունաբերական ապրանքների ինքնարժեքի իջեցման համար. յեթե նա ապրում է գյուղում, գյուղացիական ընտանիքները մեկ-մեկ համախմբում է կոլեկտիվների մեջ. յեթե նա աշխատում է խրճիթ-ընթերցարանում, իբրև ուսուցիչ դպրոցում, յեթե ծառայում է մի որևէ հիմնարկության մեջ և պայքարում է բյուրոկրատիզմի դեմ,—ամենուրեք նրա աշխատանքը հանդիսանում է սոցիալիստական շինարարության մի մասնիկը։ **Ամեն մի կոմյերիտական իր անձնական աշխատանքով ավելացնում է յուր աղյուսը այն մեծ շենքի համար, որ կոչվում է սոցիալիզմ։**

«Հարկավոր է հասկանալ,—սովորեցնում էր Լենինը,—որ լուծված խնդրից հետո—աշխարհիս ամենամեծ քաղաքական հեղաշրջումը—մեր առաջ դրվեցին բոլորովին նոր խնդիրներ—կուլտուրական խնդիրներ, որոնք կարելի յե անվանել «փոքր գործեր»։

Ահա հենց այս «փոքր գործերը», այս կուլտուրական աշխատանքը հանդիսանում է այսօրվա քաղաքական խնդիրը։ Յեվ չի հասկանում նա, ով ասում է, որ մենք շեղվում ենք քաղաքականությունից։ Միթե քաղաքական գործը դա ճոճռան ճառեր են։ Իհարկե, ոչ։ Այն բոլորը, ինչ ամրապնդում է բանվորական իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան, այն, ինչ նպաստում է սոցիալիզմի շինարարության, այս բոլորը քաղաքական գործեր են։ Իսկ ամեն մի աղնիվ, մտածված, ջանասեր աշխատանքը, որտեղ էլ որ նա լինի՝ ֆաբրիկում, գյուղում կամ հիմնարկությունում, նպաստում է մեր ընդհանուր գործին։

Բայց այստեղ կարևոր է նշել մի հանգամանք։ Յերբեմն, մի վորևէ ընկեր ազնիվ և ջանասեր աշխատանք է տանում այն փոքրիկ ասպարեզում, վոր նրան հանձնարարված է, իսկ մնացածի մասին,— դատում է նա, յես վոչ մի գործ չունեմ։ Յես վոր իմ գործը լավ եմ կատարում, էլ ի՞նչ կարիք կա մտածել սոցիալիզմի կամ համաշխարհային հեղափոխության մասին։

—Կան այնպիսի կոմունիստներ,—ասում էր ընկ. Ստալինը,— վորոնք նմանվում են նավակի մեջ նստած մարդկանց։ Թիավարում են նրանք, թիավարում յեռանդով, բայց չեն տեսնում, թե դեպի ուր են թիավարում, և ուր է գնում նավակը։

Ահա այսպիսի անհեռատես թիավարներին են նման նրանք, վորոնք կատարում են իրենց փոքր գործը և ընդհանուր արդյունքների մասին չեն մտահոգվում։ Նրանց նավակը կարող է լողալ այնտեղ, վորտեղ ամենևին հարկավոր չէ։

Կոմյերիտականից պահանջվում է, վորպեսզի նա անդուլ յեվ համառ կերպով աշխատի կատարելու իրեն հանձնարարված փոքր գործը յեվ չմոռանա ընդհանուր այն խնդիրների մասին, վոր դրված է մեր յերկրի բանվոր դասակարգի յեվ բոլոր աշխատավորության առաջ։ *Մենք մեզ պետք է դաստիարակենք վոչ թե իբրև լոկ գործիչներ, այլ սոցիալիզմի գիտակից և կարող շինարարներ։ Իսկ այսպիսին կարող են լինել միայն նրանք, վորոնք վորոշակի հասկանում են, վոր նրանց աշխատանքը սոցիալիստական շինարարության մի մասնիկն է։*

Սա առանձնապես կարևոր է այն բանի համար, վոր կոմյերիտմիությունը պետք է կանգնի կուլտուրական հեղափոխության համար պայքարողների առաջին շարքերում։

Միլիոնավոր մասսաների մեջ գրագիտության, գիտելիքների, աշխատանքային նոր սովորության, նոր փորձառությունների տարածման գործը չի կարող լուծված լինել, յեթե այդ գործը իր վրա չվերցնի յերիտասարդ սերունդը—կոմյերիտականները։

Կոմյերիտականները պետք է վոր ջերմ կերպով վերցնեն իրենց վրա այս գործը և նրա համար, վոր նախ և առաջ ինքը՝ յերիտասարդությունը հանդիսանալու յէ ամենակուլտուրականը, ամենագրագետը։ Յերիտասարդության վրա ավելի քիչ են իշխում հին, զզվելի սովորությունները, նրան ավելի հեշտ է սովորեցնել նոր, ավելի խելացի և կուլտուրական կյանքի։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է նշանակում «փոքր գործ» կատարել։
2. Ի՞նչպես պետք է աշխատի կոմյերիտականը, վորպեսզի ավելի լավ oժանդակի սոցիալիստական շինարարությանը։

ՊԱՅՔԱՐ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Այժմ մենք ձեզ հետ միասին քննենք մի քանի օրինակներ կուլտուրական հեղափոխության առաջին ընագավառներում կոմյերիտմիության տարած աշխատանքներից։ Այս զրույցում հնարավոր չե մի քանի խոսքով պատմել բոլոր այն աշխատանքների մասին, վոր մենք կատարելու յենք մասսաների կուլտուրական վերադաստիարակման խնդրում։ Այս մասին կան առանձին գրքեր, և դուք պարտավոր եք կարդալ։ Իսկ այժմս մենք միայն օրինակի համար կպատմենք այս աշխատանքի մի քանի ընագավառների մասին, ամենևին մտադրություն չունենալով զրանով փակել կուլտուրական աշխատանքների բոլոր ընագավառների հարցը։ Ցեվ ամենաառաջին օրինակը—պայքար անգրագիտության դեմ—հանդիսանում է ներկայումս կուլտուրական աշխատանքի ամենակարևորագույն աշխատանքներից մեկը։ Անգրագիտությունն ամենամեծ չարիքներից մեկն է, վորը ժառանգությունն է մնացել հին իրավակարգերից։ Ցարական Ռուսաստանի բնակչության մեծամասնությունն անգրագետ եր։ Չնայած տասը տարվա ընթացքում մեր կողմից անգրագիտության վերացման համար մղված համառ աշխատանքներին, մինչ որս էլ մեր յերկրի հսկայական մասսան դեռ չգիտե վոչ կարդալ, վոչ գրել։

Իսկ անգրագետ մարդուն շատ դժվար է ներգրավել քաղաքական աշխատանքներում։ Լենինն ասում եր. «Քանի վոր մեր յերկրում կա այնպիսի մի յերևույթ, վորպիսին է անգրագիտությունը, քաղաքական լուսավորության մասին դժվար է խոսել։ Սա վոչ թե քաղաքական խնդիր է, այլ մի պայման, առանց վորին քաղաքականության մասին խոսելն անհնարին է։

«Անգրագետ մարդը կանգնած է քաղաքականությունից դուրս, նրան պետք է նախ այբուբեն սովորեցնել։ Առանց այս չի կարող քաղաքականություն լինել, առանց այս կարող են լինել բամբասանքներ, դատարկ լուրեր, հեքիաթներ, նախապաշարմունքներ, բայց վոչ քաղաքականություն»։

Ցեվ դուք ձեր աշխատանքից գիտեք, վոր գյուղում դատարկ լուրերին, բամբասանքներին, նախապաշարմունքներին ամենից շատ յենթարկվում են կիսագրագետները, նրանց ավելի հեշտ է խաբել, մատի վրա խաղացնել։ Նրանք չեն կարող իրենք ստուգել, կարդալ վորև է գիրք կամ թերթ։

Մենք ունենք նաև բավականաչափ անգրագետ յերիտասարդություն։ Մեր յերկրում համարյա թե 5 միլիոն յերիտասարդ բանվորներ և գյուղացիներ անգրագետ են։ Դեռևս չեն իմանում վոչ կարդալ

և վոչ գրել։ Ցեվ սրանք այն մարդիկն են, վորոնց մասին Լենինն ասում եր, վոր նրանց դժվար ե ներգրավել քաղաքականության մեջ, վորովհետև նրանց այբուբեն պետք ե սովորեցնել։

Ամենաշատ անգրագետները գյուղումն են։ 100 անգրագետ յերիտասարդներից 95-ն ապրում են գյուղում, 5-ը քաղաքում։ Ցեվ մեր յերկրում հաշվվում ե, վոր 14-ից մինչև 24 տարեկան գյուղացիական յերիտասարդության ամեն մեկ հարյուրից 45-ը անգրագետներ են։

Սրանք սարսափելի թվեր են և ցույց են տալիս, վոր մեր շուրջը դեռ տգիտության ծովը լայն տարածված ե։ Ահա թե ինչու կոմյերիտմիության առաջնակարգ խնդիրներից մեկը հանդիսանում ե պայքար անգրագիտության դեմ, վորի վրա մինչև այժմ մենք դեռ շատ քիչ ուշադրություն ենք դարձրել։ Պետք է նիշել, որ անգրագետների մեծ մասն ընկնում է գյուղի բատրակ չքավորական մասի վրա։ Այս երևում ե նույնիսկ անգրագետ կոմյերիտականների կազմից։ 100 կոմյերիտական բատրակներից 8-ն արգրագետ են, 100 չքավորից՝ 4-ը և միջակներից՝ 1-ը։

Այս միքանի թվերը ցույց են տալիս, վոր գյուղի անգրագիտության վերացումը պետք ե նպաստի բատրակ-չքավորական ղեկավարող դերի ամրապնդման։

Ի՞նչ կարող ե անել այս ասպարեզում կոմյերիտական բջիջը։

Պետք ե հոգ տանել, վոր անգրագետների շարքերը չխտանան մեծացող յերեխաներով։

Առայժմս դեռ այսպես ե իրերի դրությունը։ Տարրական ընդհանուր ուսուցման կիրառումը պետք ե վոր վերացնի անգրագետների հոսանքը։ Ահա թե ինչու այս ձեռնարկման կիրառման հոգսը հանդիսանում ե կոմյերիտմիության խնդիրներից մեկը։

Կոմյերիտականները պետք ե ամրապնդեն «Կորչի անգրագիտություն» ընկերության աշխատանքները, այս աշխատանքներում ներգրավեն կոմյերիտականների և անկուսակցական գյուղացիների մասսաները, հավաքեն նրա համար միջոցներ և այս աշխատանքի համար տրամադրեն ակտիվ կոմյերիտականներին, ծավալեն կոմյերիտմիության անդամների մեջ յեղած անգրագիտության վերացման աշխատանքը։ Շատ խայտառակ յերևույթ ե, վոր մինչև այժմս կոմյերիտականների մեջ կան զգալի թվով անգրագետներ։ Ահա մենք ձեզ հետ ամեն յերեկո նստում և խոսում ենք քաղաքական հարցերի մասին, այնինչ մեր մեջ կան այնպիսիները, վոր յերկու տող կարդալ չեն կարող։ Սովորեցնել նրանց – ահա ինչումն ե մեր պարտականությունն ու նպատակը։

Հարկավոր է ծավալել լայն աշխատանք լիկկայանների ցանցի ամրապնդման և զարգացման համար, ստեղծել նրանց համար տեխնիկական ամուր բազա, ապահովել գրքերով և անհրաժեշտ ձեռնարկներով։

Ամեն մի կոմյերիտական պարտավոր է սովորեցնել թեկուզ մեկ անգրագետի, վորպեսզի ամեն մեկ կոմունիստ, կոմյերիտական, պիոներ կարողանար ասել՝ Պետրոս Պետրոսյանն անգրագետ եր, չես վերցրի նրա շեֆությունը, այժմս նա գրագետ է, նրա հասցեն հետևյալն է, կարող եք ստուգել փաստը—ասում եր Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան։ Մենք արդեն վաղուց ենք բաց թողել հետևյալ լոզունգը՝ յուրաքանչյուր գրագետ սովորեցնի անգրագետին։ Իսկ թե ինչպես է կիրառվում այս լոզունգը՝ անհայտ է։

Ժամանակ է ստուգելու այս գործը։

Առանձնապես այս աշխատանքներին պետք է ներգրավել կանանց, վորոնք ամենից շատ են հետ մնացել և վորոնց մեջ անգրագիտությունը ավելի շատ է։

Յեվ վերջապես, պետք է հիշել, վոր գրագիտություն սովորեցնելը դա միայն սկիզբն է, վորից հետո միայն գրագետ դարձածը պետք է վոր զանազան գիտելիքներ ձեռք բերի։ Շատ վատ կլինի, յեթե մեկին գրագետ դարձնենք և մոռանանք նրա մասին, իսկ նա մի յերկու տարուց հետո մոռանա գրագիտությունը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ եր ասում Լենինն անգրագիտության մասին։
2. Ձեր բջիջում ի՞նչպես է հարմար դասավորել անգրագիտության վերացման աշխատանքները։

ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Կուլտուրական հեղափոխության ֆրոնտում կոմյերիտմիության աշխատանքի յերկրորդ օրինակը հանդիսանում է՝ պայքար հարբեցողության, ալկոհոլիզմի դեմ։

Վաղուց ի վեր մեր յերկրում այնպիսի տեսակետ կար, վոր իբր ոգին անհրաժեշտ է բանվորի և գյուղացու համար. «բանվոր մարդը չի կարող չխմել», «յերբ հոգնես, պետք է հանգստանալու համար խմես», «մեր կյանքը դառն է, դառն բանով էլ պետք է նրան լցնել», —այսպես եյին վաղուց ի վեր դատում մեզ մոտ։

Յեվ հարբեցողությունն արդարացնելու համար հնարել եյին տասնյակ զանազան առակներ. «Ռուսաստանի ուրախությունը կայանում ե խմելու մեջ», «հարբածը կարթնանա, իսկ հիմարը յերբեք»։

Այս և ուրիշ շատ առակներ եյին հնարել մարդիկ հատկապես այն բանի համար, վորպեսզի կարողանան արդարացնել վնասակար և կործանիչ հարբեցողությունը. իսկ թե մեր յերկրին ինչ աստիճանի հասցրեց այս հարբեցողությունը, կարելի յե գտնել, որինակի համար, նրանով, վոր նախապատերազմյան շրջանում Գերմանիայի գլխավոր քաղաք—Բեռլինում տարեկան ամեն մի հազար հոգուց հարբեցողությունից 3-ն եյին մահանում, իսկ Պետերբուրգում—22-ը, յոթն անգամ ավել։

Արդյոք հարկավոր ե յերկար խոսել հարբեցողության վնասակարության մասին։ Դուք, անշուշտ, թե լսած և թե կարդացած կլինեք այդ մասին։ Հարբեցողի յերեխաները շատ վատ են ծնվում, հարբեցողների մեջ շատ ե տարածված տուբերկուլյոզը (թոքախտ), հարբեցողների սրտերը, յերիկամունքները հիվանդ են լինում, նրանք թույլ կամքի տեր, համարյա թե անպետք մարդիկ են լինում։ Ահա ձեզ մի քանի թվեր հարբեցողների հիվանդության մասին։ Ամեն մի հազար հոգի չխմողներից տուբերկուլյոզից մահանում են յերեքը, իսկ հարբեցող հազար հոգուց —87-ը։ Բացի այս, հարբեցողությունն ամենավնասակար ազդեցություն ե թողնում յերկրի տնտեսության վրա։ Դատեցեք ինքներդ. մեր յերկրում ողու պատրաստման վրա գյուղացիները տարեկան ծախսում են 3.300 հազար տոնն ցորեն։ Այս հացով ահա թե ինչ հնարավոր եր անել.—

Կարելի յեր բաց անել 96 հազար դպրոց, գնել հարյուր հազար տրակտոր, գնել 2.800.000 կով, գնել 300 միլիոն մետր չիթ։

Ահա թե ինչպիսի խոշոր գումարներ են ծախսվում միայն ողի պատրաստելու համար։ Իսկ այդ բոլոր միջոցներն արդյունավետ կերպով կարելի յե ոգտագործել գյուղացիական տնտեսության վերելքի համար։ Դիտելով գյուղական կյանքը, դուք ինքներդ ել կարող եք պատկերացնել, թե ինչպիսի հսկայական վնաս ե հասցնում ողին։ Ինչի՞ց են լինում մեծ մասամբ գյուղական հրդեհները։ Պատճառը—հարբեցողությունն ե։ Սպանությունները համարյա թե միշտ կատարվում են հարբած վիճակում։ Սրիկայություններ անում են համարյա թե միշտ հարբած վիճակում։

Պետք ե հայտարարել վճռական պայքար ողու, ալկոհոլիզմի դեմ։ Հարբեցողին դժվար ե ստիպել կուլտուրական կյանք վարել, պարապել, գիտելիքներ ձեռք բերել։ Նա միշտ ձգտում ե դեպի ողին և գինին։

Եվ հարբեցողությունը պետք է վերացվի նախ և առաջ գյուղի կոմյերիտականների և վողջ աճող սերնդի միջից։

Այս վնասակար սովորությունը նրանց մեջ ավելի թույլ է զարգացած և նրանք ավելի հեշտ կերպով ձեռք կքաշեն նրանից։

Բայց ամենից հաճախ կոմյերիտականը կամ գյուղական յերիտասարդն այսպես է պատասխանում հարբեցողության մասին յեղած հարցերին՝ «Միթե յես խմում եմ. այնպես, յերբեմն մեկ, յերկու բաժակ կխմեմ, իսկ հարբած դրության մեջ յես յերբեք վոչ մի տեղ չեմ ընկել։

Եվ այսպիսի յերիտասարդը չի հասկանում, վոր ամեն մի հարբեցող հենց մի բաժակից է սկսել։ Հարբեցողներ չեն ծնվում, այլ հետագայում են դառնում։ Կամաց-կամաց մեկ, յերկու բաժակից սկսելով, սովորում են խմել։ Իզուր չեն ասում, վոր առաջին բաժակը դու յես քաշում, իսկ յերկրորդը՝ քեզ է քաշում։

Ուրիշներն էլ ասում են. «Մենք գարեջուր ենք խմում, գարեջուրը թույլ է, ի՞նչ վնաս նրանից»։ Եվ խմողները չեն նկատում, վոր գարեջրի միջոցով ավելի պակաս ալկոհոլ չեն ընդունում, քան ողու։

Իսկ ավելի հաճախ քեզ ասում են. «Այդ ինչպե՞ս կարող է լինել, վոր դուք ինքներդ հարբեցողության դեմ պայքարում եք և ինքներդ թույլ եք տալիս ողի վաճառել. ավելի լավ կլիներ, յեթե դուք արգելեիք ողու վաճառքը—հարցը փակված կլիներ»։

Բայց այս այնքան էլ հեշտ գործ չէ։ Միթե, յերբ ողու վաճառքը չկար, հարբեցողությունը պակաս էր։ Դուք գիտեք, վոր հարբեցողություն կար։

Յերբ սկսվեց պատերազմը, ցարական կառավարությունն արգելեց վաճառել ողի, փակեց գինեխանութները. այն ժամանակ քաղաքներում սկսեցին խմել «խանժա»—թունավոր և վնասակար մի հեղուկ, վորով և շատերը թունավորվեցին։ Իսկ գյուղերում սկսեցին ողի պատրաստել, և տարեց-տարի ավելի և ավելի շատ ցորեն եր ծախսվում այդ ողու պատրաստման համար։

Այս հիվանդությունը—հարբեցողությունը—անցավ ներս։ Նրա դեմ պայքարելն ավելի դժվար յեղավ, վորովհետև դրսից վոչ մի բան չի յերևում։

Ցորենից ողի պատրաստելու գործը կասեցնելու համար եր գըլխավորապես, վոր թույլ տվին ողու վաճառքը։

Եվ ներկայումս—յուրաքանչյուրը մեզնից իր գյուղում կարող է տեսնել, վոր ցորենից ողի պատրաստելու դեպքերը թեպետ և բոլորովին չեն վերացվել, բայց զգալիորեն պակասել են։

Իսկ ամեն մի գյուղ, կամ բանվորական ձեռնարկություն կարող

է ընդհանուր ժողովում վորոշում հանել, վոր իրենց շրջանում վերացնեն ողու վաճառքը։ Այնպիսի մի պետական դեկրետ կա, վորի համաձայն՝ գավառաշրջանային գործադիր կոմիտեները պետք է բավարարեն այնպիսի միջնորդությունները և վերացնեն ողու վաճառքը այնտեղ, վորտեղ ցորենից ողու պատրաստման գործը դադարեցվել է։

Միայն սրանից արդեն պարզ յերևում է, վոր թեպետ և կառավարությունը վաճառում է ողի, բայց նա վճռական պայքար է մղում հարբեցողության դեմ։ Հարբեցողությունը պետք է աստիճանաբար կրճատվի։ Այն յեկամուտները, վորոնք պետությունն ստանում է ողու վաճառքից, պետք է փոխարինվեն կինոների և ռադիոների ստացած յեկամուտներով։

ՀԱՐՑԵՐ ՋՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. *Ի՞նչու Խորհրդային կառավարությունը չի վերացնում ողու վաճառքը։*
2. *Ի՞նչ կարող է անել ձեր բջիջը հարբեցողության դեմ պայքարելու համար։*

ՊԱՅՔԱՐ ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ՀԱՄԱՐ

Միայն հարբեցողության դեմ կռվելու խնդիրը չե․ կուլտուրական հեղափոխության նպատակն է՝ աշխատավոր մասսայի կյանքի պայմանների, կենցաղի վերափոխումը։ *Մեր անկուլտուրականությունը, անգրագիտությունը և հետամնացությունը ամենից շատ արտահայտվում է մեր կենցաղում։ Կեղտ, ծուլություն, անփութություն, անշնորքություն, չիմանալ ընկերոջ, կնոջ հարգելը, կոպտություն, հայհոյանք,— այս բոլոր յերևույթները կարելի յե հանդիպել մեր կենցաղի ամեն մի քայլափոխում։*

Յեվ սրանց դեմ պայքարը շատ դժվար է, կենցաղը շատ համառ է և կայուն։ Նա աստիճանաբար փոխվում է, բայց շատ դանդաղ, այնպես վոր այդ փոփոխությունն ակներև չի նկատվում։ Կենցաղային հին սովորությունները կոտրելու համար հարկավոր է թռիչք։ Այսպես, գյուղական կյանքում կենցաղային պայմանները սուր կերպով փոխվում են այն ժամանակ, յերբ անհատ գյուղացին անցնում է կոլեկտիվ տընտեսության ձևին։

Չքավոր և միջակ գյուղացու կենցաղային վերափոխման լավագույն ճանապարհը—կոլտնտեսության ձևերին անցնելն է։ Առանձին խրճիթներում շատ քիչ բան կարելի յե փոփոխել։

Իսկ փոխելու շատ և շատ բաներ կան։ Վերցնենք, օրինակի համար, մեր աշխատանքի պայմանները։ Մենք առանձնապես շատ ենք աշխատում դաշտային աշխատանքների յեռուն ժամանակ։ Աշխատանքից յերբեմն մարդու վոսկորներն են ցավում, բայց և այնպես ցանկալի արդյունքներ չի ստացվում։

Չգիտենք կարճ ժամանակամիջոցում շատ բան անել, չենք կարողանում մեր աշխատանքն այնպես դասավորել, վոր ամեն ինչ ժամանակին կատարված լինի, ահագին դատարկ ժամանակ ենք անցկացնում։ Կուլտուրական հեղափոխությունը պահանջում է կռիվ հայտարարել անփութությանը, թափթփվածությանը, ծուլությանը, ժամանակի իզուր վատնմանը, նա պահանջում է աշխատանքի նոր փորձառություն ձեռք բերել։

Լավ աշխատել չիմանալը նմանապես ժամանակի վատնում է։ Մենք պետք է ինդուստրացման յենթարկենք մեր յերկիրը, մենք ցանկանում ենք կերպարանափոխել մեր գյուղը, միլիոնավոր մանր տնտեսություններ համախմբել հսկայական կոլեկտիվների մեջ։ Այս խոշոր գործերն իրականացնելու համար՝ անհրաժեշտ է այլ կերպ աշխատել՝ հրաժարվել դանդաղկոտությունից, թափթփվածությունից, գործերը հետաձգելուց; անփույթ և դանդաղ աշխատանքից։ Պետք է հրաժարվել աշխատանքի հին մեթոդներից, պետք է սովորել մեքենա կառավարելը, նրան բանեցնելը և տիրապետել տեխնիկային։ Մեր առաջ դրված է մեծ նշանակություն ունեցող խնդիր, այն է՝ գյուղացիական տնտեսությունները համախմբել կոլեկտիվների մեջ։ Դրա համար մենք, առաջին հերթին, կոմյերիտականների առաջ ենք դնում իրենց սեփական տնտեսության կոլեկտիվականացման խնդիրը։ Յեվ ահա այստեղ է, վոր մենք միշտ պատահում ենք այսպիսի արգելքների. կոմյերիտականը չի ցանկանում կոլեկտիվականացման յենթարկել, ամուր է պահում իր անհատական տնտեսությունը։ Ահա թե ինչու մեծ նշանակություն ունի կոլեկտիվականացման վոգով կոմյերիտականի մըշտընջենական դաստիարակումը։ Սովորեցնել նրան աշխատել և ապրել միասին, կոլեկտիվով,—սա նշանակում է՝ դաստիարակել նրա մեջ նոր մարդու գծեր։

Յեվ կամ վերցնենք այնպիսի խնդիր, ինչպիսին է մաքրությունը։ Գետնափոր խրճիթները, բաղանիքի բացակայությունը, նեխված ու պատառոտված ցնցոտիների մեջ փաթաթված յերեխաները, ում հայտնի չէ այս բոլորը։ Չէ՞ վոր ամեն մի գյուղում, համարյա ամեն մի խրճիթում դուք կհանդիպեք այս կեղտին ու նեխվածությանը։ Յեվ սա վոչ թե այն բանի համար է, վոր մենք չունենք, աղքատ ենք, այլ նրա

համար, որ մենք անկուլտուրական ենք, չենք պայքարում մաքրության համար, չենք հեռանում մեզ և կորչում ենք ոջիլների ու կեղտի մեջ։

Իսկ մեր բոլոր տեսակի հիվանդությունները առաջ են գալիս կեղտոտությունից։ Յեվ յեթե մենք ցանկանում ենք պայքարել նոր կենցաղի, կուլտուրայի, գրագիտության համար, պետք է նաև պայքարենք, որպեսզի գյուղացու ձեռքին լինի մի կտոր սապոն, գյուղում լինի մաքուր բաղանիք և խրճիթներում լինի մաքրություն։ Այս բոլորը, չնայած մանր խնդիրներ են, բայց առանց նրանց չես վերափոխի կենցաղը։

Յեվ վերջապես վերցնենք այնպիսի մի խնդիր, որպիսին է վերաբերմունքը դեպի կինը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը կնոջը տվեց տղամարդու հավասար իրավունքներ, բայց դեռ բոլոր կանայք են օգտագործում այս բոլոր իրավունքները։ Նրանք կապված են թոնիրի, պղինձների և օրորոցների հետ, իսկ յեթե կինը ձգտի դեպի հասարակական աշխատանքը, այս ճանապարհին նրան արգելք են հանդիսանում՝ ամուսինը, կեսրարը, տեգրը, «եդ կնկա խելքի բանը չի։ Հավը թռչուն չի, կինն էլ մարդ չի։ Լավ է, վեր ընկի տանը, իլիկ պըտտի»։

Այնինչ կնոջն ազատագրել, նրան հնարավորություն տալ մասնակցելու հասարակական աշխատանքներում, օգտագործել իրեն իրավունքը,— ահա թե ինչ է նշանակում կառուցել նոր կենցաղ։ Առանց կնոջ ազատագրման, առանց այն բանի, որ կինը կյանքում վայելի տղամարդու հավասար իրավունքներ, նա չի կարող հավասար մասնակցություն ունենալ քաղաքական և հասարակական կյանքում։ Ահա թե ինչու մեծ նշանակություն ունի կոմյերիտմիության աշխատանքների մեջ մսուրների կազմակերպումը — առանձնապես ամառային մանկական հրապարակների, կանանց ներգրավումը խրճիթ-ընթերցարաններում և այլն։ Շատ օրինակներ կարելի յե բերել կյանքից, որ անհրաժեշտ է վերացնել հին կենցաղը և մտցնել նոր սովորություններ։

Կոմյերիտմիության համար այստեղ աշխատանքի մեծ ասպարեզ կա։ Ամեն մի կոմյերիտական պետք է որ կենցաղի վերափոխման գործի ազդակը դառնա, գյուղացիներին կենդանի օրինակ ցույց տալով և առաջին հերթին իր ընտանիքում բարելավելով կենցաղը։

Յեվ, իհարկե, կոմյերիտմիությունը մեծ ուշադրություն է դարձնելու գյուղացիական յերիտասարդության բարելավման գործին։ Շատ հիվանդագին յերևույթներ են լինում յերիտասարդության մեջ. ինչպես օրինակ՝ հարբեցողություն, սրիկայություն, սեռական սանձար-

ձակություն,—այս բոլորը շատ հաճախ պատահում ե գյուղացիական յերիտասարդության մեջ։

Այս բոլորի դեմ կոմյերիտմիությունը պետք ե վճռական և համառ պայքար մղի։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ ե նշանակում կենցաղ։
2. Ի՞նչ ե անելու ձեր բջիջը գյուղացիական յերիտասարդության կենցաղի բարեփոխման գործում։

ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յեվ այսպես, մենք խոսեցինք կուլտուրական հեղափոխության բնագավառում կոմյերիտմիության տարած աշխատանքների մասին։ Սա դեռ չի նշանակում, վոր մենք ձեզ հետ խոսեցինք այն ամենի մասին, ինչ հարկավոր ե անել այս ասպարեզում։ Մենք միայն մի քանի որինակներ բերինք։ Յեվ այս որինակները ցույց են տալիս, վոր մասսաների կուլտուրականացման գործում կոմյերիտմիությունը պետք ե վոր գրավի առաջին տեղերից մեկը։ Յեվ սա կարևոր ե առանձնապես այն բանի համար, վոր բուրժուական կազմակերպությունները նմանապես ձգտում են տիրել կուլտուրական այս գործին և ամեն կերպ աշխատում են ուժեղացնել այս աշխատանքը և իրենց ցանկացած ուղղությունը տալ։ Առանձնապես ուժեղ են աշխատում այժմս աղանդավորները, վորոնք ձգտում են աշխատավոր մասսաներին գցել իրենց ազդեցության տակ։ Աղանդավորները քնած չեն։ Նրանք ամեն կերպ աշխատում են մեր թույլ կողմերից ոգտվել՝ իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար։ Նրանց կազմակերպությունները փտած սունկերի նման աճում են այնտեղ, վորտեղ մութ ե և խոնավ։ Յերևակայեցեք, վոր միայն Ուրալի մարզում գոյություն ունեն 2726 կրոնական համայնքներ և մոտ 3500 աղոթատներ։

Արտաքուստ աղանդավորները խոնարհ և հնազանդ են։ Այնինչ այս հնազանդների հետևում թաքնված ե դասակարգային թշնամու իսկական դեմքը։ Այս բանի լավ ապացույց կարող ե լինել հենց իրենց՝ աղանդավորների գործունեությունը։

Ահա, որինակ՝ Կովկասում գոյություն ունի «դուխոբորոնների» աղանդ. նրա ղեկավարներն այս կերպ են մտածում.

«Կուսակցությունը, կոմյերիտմիությունը, չքավորության ղանաղան կազմակերպությունները մի գույցե հարկավոր են ուղղափառ և այլ

ժողովրդների համար։ Իսկ մենք՝ դուխոբորներս միշտ հաշտությամբ ենք գործում։ Մեր հավատը լավ է ամեն մի ծրագրից»։

Իսկ յերբ դուխոբորների աղանդի ներսում բարձրանում է չհավանություն՝ իր իրավունքները պահանջելու, նարոտս, ծերուկ դուխոբորները սովորեցնում են, վոր իբր շատ ծանր մեղք է քայքայել համայնքը։ Յեվ չքավոր աղանդավորն առաջվա նման վիզն է ծռում հարուստ ծերուկի առաջ. չէ՞ վոր այսպես է սովորեցնում հավատը, վոր ամեն մի ծրագրից լավ է։

Յեվ կամ ահա թե ինչ է կատարվում Սալսկի գավառաշրջանի նոր Իզոբիլնայան համայնքում։ Այս համայնքում չքավորությունը շատ եր ճնշված «պապա»-յի կողմից, այս համայնքի ղեկավարը հարուստ Լուբկովն եր։ Նրա մասին նրա աշխատակիցներն ասում եյին. «Նա առեղծագործողն է, իսկ մենք նրա անասուններն ենք։ Մենք իրավունք չունենք նրան վերահսկելու և պահանջելու ընկերության տնտեսական դրության մասին հաշվետվություն»։

Այսպես, առանց հաշվետվության և հսկողության, կարգադրություններ եր անում «պապա» Լուբկովը համայնքում։ Նա ձեռք եր բերել իրեն համար ավտոմոբիլ և զբոսնում եր աղջիկների հետ։ Իսկ այդ ժամանակ, համայնքի չքավոր անդամները ճնշված եյին, սոված, շատերը նույնիսկ կարգին տուն չունեյին և ապրում եյին գետնափորերում։

Ավելի քան մեծ ստախոս, խաբեբա, կեղծավոր, քան Լուբկովը, դժվար թե ճարվի։ Նա հասկանում է, վոր գործերի համար իրան չեն գովի և նա ցանկանում է հարմարվել մեր ժամանակին և հայտարարում է, վոր հեղափոխության, կուսակցության, կոմյերիտմիության կողմնակից է, իսկ կոմյերիտականներին շունչ քաշել չի թողնում, փակում է նրանց բերանը։

Բացի այս՝ յերբ համայնքում յերիտասարդությունը ցանկություն է հայտնում կազմակերպվելու, Լուբկովը չի ընդդիմադրում։ Յերիտասարդությունը կազմակերպվում է, բայց վոչ կոմյերիտմիության մեջ, այլ քրիստոնեյական կազմակերպություններում։ Յեվ իրենց կոչերում այս կազմակերպությունները գրում են։

«Մենք զգում ենք մեր բարոյական ուժերի արտահայտման պահանջը, զգում ենք յերիտասարդ եներգիայի առատություն և մեծ ցանկություն ծառայելու կյանքի բարելավման համար։ Մենք մեզ նպատակ ենք դրել՝ յերիտասարդական կազմակերպված խմբակ հիմնել նրա համար, վորպեսզի սկզբում, կոլեկտիվ կարգով ստանալ հոգևոր դաստիարակություն ու կրթություն մեր ավագ հավատացյալներից»։

Յեվ ավագ հավատացյալները կրթում են փոքր յեղբայրներին, և կրթությունը հետևյալումն ե կայանում. «Համբերի՛ր, խոնարհվի՛ր, ծռիր մեջքդ։ Մեր յեղբայրներիս մեջ չկա վոչ կուլակ և վոչ էլ աղքատ, մենք բոլորս էլ հավասար ենք։ Յեվ դրա համար կարիք չկա չքավորներին առանձին կազմակերպվել յեվ պայքարել կուլակի դեմ».— Ահա աղանդավորների ուսուցման գլխավոր կետը։ Կուլակի դեմ պայքարելը մթագնելու համար են ուղղված նրանց բոլոր ուժերը։

Վոր աղանդավորների շարժումը գործիք ե մեր թշնամու ձեռքին, կարելի յե նկատել նրա ղեկավար կազմից։ Ահա թե ինչպիսի ղեկավարներ ունեն աղանդավորներն Ուրալում։

Ավետարանականների Ուրալի բաժնի նախագահը Սիբիրի յերկաթգծի խոշոր ծառայող եր, մեծ սեփական տուն ե կառուցել Սվերդլովսկում։

Տագիլսկի գավառաշրջանում մի համայնքի ղեկավարը նախկին վոստիկան եր։ Նույն գավառաշրջանում Յեհովիստների աղանդը հիմնել ե նախկին դնդապետը։

Տարոլսկի գավառաշրջանում աղանդավոր ծերուկ Ագապիյը նախկին պրիստավ ե։

Նոր Իզրաիլականների աղանդի ղեկավարը, վորի մասին վերևում խոսում եյինք, Լուբկովն ե, նախկին տնատեր Ռոստովում, այժմս ընկերությունում 10 հազար ռ. փայ ունի, և աղանդավորների վարչության նախագահն ե։

Կրավցովը, նույն ընկերության վարչության անդամ, ունի 4000 ռ. փայ։

Ժիգկովը և Զարեյինը Լուբկովի ազգականներն են։

Այս բոլոր խմբակը կառավարում ե աղանդավորների համայնքի գործերը և ամեն կերպ շահագործում նրա անդամներին։ Յեվ այսպես ամենուրեք, վոր կողմն էլ նայես, աղանդավորների համայնքն ընկած ե հարուստ կուլակների ձեռքը, վորոնք անարգելք և առանց հսկողության ղեկավար են։

Իսկ յեղել են դեպքեր, վոր աղանդավորները փող են ստացել կապիտալիստներից, մեր յերկրում լրտեսական աշխատանք տանելու համար։

Աղանդավորները շատ խորամանկ են, նրանց դեմ պայքարելը հեշտ չե։

Նրանք մի կողմն են քցել յեկեղեցական բոլոր ծիսակատարությունները, վորոնք քցում եյին նրանց վարկը աշխատավորության աչքում։ Հենց հատկապես դրա համար էլ դժվար ե նրանց դիմակա-

զերծ անել և գյուղացիների առաջ պարզել նրանց իսկական էությունը։ Իսկ պարզել անպայման անհրաժեշտ է, որովհետև այստեղ մենք գործ ունենք իսկական դասակարգային բնույթը, որը փորձում է հարմարվել խորհրդային իրավակարգերին։ Աղանդավորները քարոզում են կրոն, համբերություն և հնազանդություն, նրանք թուլացնում են դեպի սոցիալիստական շինարարությունը մղված աշխատավորության կամքը։ Նրանք խանգարում են բացարձակ և խիստ պայքար մղել կուլակների դեմ, նրանք խանգարում են չքավորության կազմակերպվելուն, նրանք ներարկում են աշխատավորության օտար և վնասակար գաղափարներ։

Ահա թե ինչու կոմյերիտմիությունը պետք է վճռական պայքար հայտարարի աղանդավորների շարժման դեմ։

Դեպի աղանդավորները չի կարելի անտարբեր լինել։ Նրանք մեր անտարբերությունն օգտագործում են իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Նրանք ցանկանում են մասսաների մեջ կազմակերպել իրենց սեփական կուլտուրական շարժումը։ Յեվ յեթե կոմյերիտմիությունը ցանկանում է լինել գյուղի աճող սերնդի իսկական առաջնորդը, յեթե նա ցանկանում է կուլտուրական հեղափոխության շարժում հայտարարել, նա պետք է վոր վճռական կռիվ հայտարարի աղանդավորության դեմ։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞ւմ է պետք աղանդավորների շարժումը։
2. Ո՞վ է ղեկավարում աղանդավորների շարժումը։
3. Ի՞նչպես պայքարել աղանդավորների դեմ։

ԻՆՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

ՅԵՐԿՈՒ ՈՒՂԻ

Անցյալ տարի ինձ վիճակվեց քաղընթերցումները ղեկավարել մի գյուղական բջիջում։ Մի անգամ էլ մի կոմյերիտական գալիս է ինձ մոտ ու ասում․ — «Յես քեզ հետ զրուցել եմ ուզում»։ — «Խոսիր» — ասում եմ։

— Մեզ մոտ, — սկսեց նա, — մի քանի տարի առաջ մի ուսուցիչ կար։ Նա յել նոր կյանքի մասին եր խոսում։ «Միայն թե, — բացա-

տրում էր նա,—վորպեսզի այդ նոր կյանքն ստեղծենք, ամենևին էլ անհրաժեշտ չի հեղափոխություն կատարել. Հեղափոխությունը մեծ զոհեր է պահանջում։ Տեսեք, թե վորքան արյուն է թափվել, ինչ տանջանքներ է կրել մեր ժողովուրդը։

Չէ՞ վոր կարելի յե այլ կերպ գործել, կարելի յե կամաց-կամաց ու հեշտ կերպով իշխանությունն առնել իր ձեռքը։ Արտասահմանում ինչպես են կառավարություն ստեղծում։ Այնտեղ գոյություն ունին ընտրված ներկայացուցիչների ժողովներ, վորոնք պարլամենտներ են կոչվում։ Նրանք միքանի տարին մեկ անգամ են ընտրվում։ Յեվ, վոր կուսակցությունը վոր ընտրություններին մեծամասնություն է ստանում, նա յել կառավարություն է ստեղծում։ Դե, պետք է այնպես գործել, վորպեսզի ընտրությունների ժամանակ ժողովրդի մեծ մասը քվեարկի հոգուտ բանվորական ներկայացուցիչների։ Կգա ժամանակը, և ժողովուրդը կհասկանա, թե հոգուտ ում պետք է նա քվեարկի, և պարլամենտում կընտրի այնպիսի մարդկանց, վորոնք սոցիալիզմ կառուցել են ցանկանում։ Այսպես էլ, առանց հեղափոխության, առանց արյունահեղության այդ յերկրները խաղաղ ճանապարհով դեպի սոցիալիզմ կգնան»։

Ահա այսպես է բացատրել մեզ մեր ուսուցիչը։ Դե հիմա ինքդ բացատրիր, արժե՞ վոր մենք հեղափոխություն կատարենք։ Արդյոք ավելի լավ չե՞ր լինի, յեթե խաղաղ միջոցներով գործեյինք։

Ինչ արած, ընկերն իրավունք ուներ հարցն այդ ձևով դնելու։ Յեվ իսկապես, արդյոք պե՞տք էր հեղափոխությունն այդպես կատարել, և պետական իշխանությունն ուժով խլել։ Գուցե՞ թե մի տասը տարի հետո այդ իշխանությունն ինքն իրեն մեր ձեռքը կանցներ։

Սակայն այս հարցի պատասխանն այնքան էլ հասարակ չի։ Վորպեսզի հասկանալ դա, պետք է մտածել այն մասին, թե ի՞նչ է պետական իշխանությունը։ Յեվ ահա հենց այս հարցն էլ տվի կոմյերիտականին.

— Ասա տեսնեմ,—ասացի նրան,—իսկ ի՞նչ բան է պետական իշխանությունը։ Արդյոք այս հարցի մասին մտածել ես, թե վոչ։ Դես ընկավ, դեն ընկավ՝ բայց դե վորոշակի վոչինչ չկարողացավ պատասխանել։

Սկսեցինք միասին քննության առնել այս բանը, և պարզվեց, վոր վորեվե պետության մեջ բոլոր մարդիկ էլ հավասար իրավունքներ չունեն։

Յեկեք միասին տեսնենք, թե ինչպես են ապրում բանվորները կապիտալիստական յերկրներում։ Յուրաքանչյուր բանվոր, բացի տան

նման մի նկուղից, ուրիշ բան չունի։ Բանվորը—վոտից գլուխ մերկ է։ Աշխատում է նա վոչ թե իր, այլ ուրիշին պատկանող ֆաբրիկում։ Նրա գործիքները վոչ թե իրենն են, այլ պատկանում են ֆաբրիկանտ-խաղեյինին։ Ինչ էլ վոր բանվորը չպատրաստի,—թեկուզ մեքենա, թեկուզ կոշիկներ, կամ չթեղեն,—այդ բոլորն իրենը չեն, այլ աղայինը։ Բանվորը միայն իր աշխատավարձն է ստանում։ Աշխատեցիր մեկ, չերկու օր, կամ մի շաբաթ,—և ստացիր քեզ հասանելիքը։ Բանվորները՝ դա ազգաբնակչության մի խմբակն են, կամ ինչպես ասում եյին, մի դասակարգ են—պրոլետարների դասակարգը։

Բոլորովին այլ վիճակում են գտնվում— գործարանատերերն ու ֆաբրիկանտները։ Նրանք ֆաբրիկներ ունեն, մեքենաներ։ Գործարաններում նրանց համար են աշխատում ինժեներները, բանվորները, և այն բոլորը, ինչ այս գործարաններում պատրաստվում է, բոլորը պատկանում է նրանց։ Սա ազգաբնակչության մի ուրիշ խմբակն է, ուրիշ դասակարգը՝ բուրժուական դասակարգը։

Այլ կերպ են ապրում գյուղացիները։ Սրանց գործիքներն— իրենցն է։ Նրանք ունեն գութան, արոր և լծկան անասուններ։ Նրանց արտադրած հացը պատկանում է իրենց։ Բայց և այնպես, առաջին իսկ հայացքից չերևում է, վոր գյուղացու տնտեսությունը—գործարանատիրոջ տնտեսության հետ համասար նշանի տակ առնել չես կարող։ Գյուղացիները — դա մանր սեփականատերերն են, վորոնք իրենք են աշխատում իրենց տնտեսության մեջ։

Գյուղացիներից այլ կերպ էլ կալվածատերերն են ապրում։ Սրանց է պատկանում հողը։ Նրանք հողը կապալով են տալիս, կամ բատրակներ են վարձում, և իրենց հողից ստացված հացի բերքը վաճառում են։

Աշկարա չերևում է, վոր ազգաբնակչության այդ խմբակների շահերը տարբերվում են, և չեթե ճիշտ ասենք,—հակադրվում են միմյանց։ Ի՞նչումն է ֆաբրիկանտի շահը։ Նրանում, վորպեսզի եժան վճարի բանվորի աշխատանքը, և ստիպի վորքան կարելի յե շատ աշխատելու։ Իսկ բանվորի շահերն ուրիշ են,—նա ուզում է ավելին ստանալ իր աշխատանքի համար, և ֆաբրիկանտի համար էլ իր մեջքը քիչ հոգնեցնել։ Իսկ ավելի լավ կլինի այնպես անել, վոր գործարաններում խաղեյիններ ամենևին էլ չլինեն։

Ի՞նչումն է կալվածատիրոջ շահը։ Նրանում, վորպեսզի այն հողը, վոր տալիս է նա գյուղացուն կապալով, իրեն պատկանի միշտ, ամեն ժամանակ, և գյուղացու կաշին էլ վորքան հնարավոր է ավելի քերթի։ Իսկ գյուղացին ուզում է կապալավարձ քիչ վճարել, և ավելի լավ է՝

հողը ամբողջությամբ խլել կալվածատիրոջ ձեռքից։ Յեվ ահա սա նշանակում է, վոր ազգաբնակչության զանազան խմբակների շահերը բոլորովին տարբերվում են միմյանցից—միատեսակ չեն։

Իսկ չէ՞ վոր սրանք միևնույն պետության միևնույն իշխանության մեջ են ապրում։ Հարց է ծագում, թե արդյոք իշխանությունը բոլորի համար էլ նույն կերպ է մտահոգվում։ Պարզ է, վոր վոչ։ Միաժամանակ չի կարելի պաշտպանել և՛ ֆաբրիկանտի և թե բանվորի շահերը, վորովհետև այդ շահերն—ուղղակի հակադրվում են միմյանց։ Միաժամանակ չի կարելի պաշտպանել և կալվածատիրոջ, և թե գյուղացու շահերը, վորովհետև կալվածատերն այլ բան է ուզում, իսկ գյուղացին՝ բոլորովին ուրիշ։ Կուշտը քաղցածին մանր կբրդի։ Յեվ չկա ու չի էլ լինի այնպիսի պետություն, վորը հավասար չափով մտածի բոլորի մասին։ Մեզ սահմանակից հարևան բոլոր յերկրներում, Յեվրոպայի յեվ Ամերիկայի բոլոր պետությունների մեջ իշխանությունը պաշտպանում է կապիտալիստների շահերը, ոգնում է նրանց աշխատավոր մասսաների հյութը քամելու։

Որինակի համար, վերցրեք գործադուլը։ Բանվորները հրաժարվում են աշխատել, առաջադրում են իրենց պահանջները, իսկ գործարանատերերն այդ պահանջների վրա թքել էլ չեն ուզում։ Բանվորները վորոշում են իրենց նպատակին, ասենք թե, աշխատավարձի հավելմանը հասնելու համար գործադուլ անել։

Բայց պետությունն էլ քնած չէ։ Նա ոգնության է շտապում, իհարկե, վոչ թե բանվորին, վորը գործադուլի ժամանակ սովամահ է լինում,—այլ գործարանատիրոջը։ Պետությունը շատ հաճախ գործադուլի ղեկավարին բանտ է նստեցնում։ Յերբեմն պետությունը գործադուլի հետևանքով կանգնած գործարաններն աշխատելու յե ուղարկում իր զինվորներին։ Ցարական Ռուսաստանում իշխանությունները կոզակներին ուղարկում եյին գործադուլներին ծեծելու։ Հենց թեկուզ այս որինակով կարելի յե տեսնել, թե նա ում իշխանությունն է։ Յեթե նա ամբողջ ազգաբնակչության համար հավասար լիներ, կոգներ բանվորներին, չէ՞ վոր բանվորները շատ վատ են ապրում։ Բայց վոչ։ Իշխանության վողջ ուժերը բանվորության գլխին են խորտակվում։

Կամ վերցնենք գյուղացու և կալվածատիրոջ միջև տեղի ունեցող վեճերը։ Նման վեճեր շատ ու շատ են յեղել.—կապալավարձի, արոտավայրերի և այլ հարցերի շուրջը։ Յեվ մի դեպք չի յեղել, վոր ուրյադնիկը կամ հաշտարար դատավորն այդ վիճաբանությունների մեջ հանդես գային կալվածատերերի դեմ՝ գյուղացու շահերը պաշտպանելու։ Նման դեպքեր ձեր պապերն էլ չեն հիշում, հարցրեք նրանց։

Նշանակում ե, պարզվում ե, վոր պետությունն ամենևին էլ հայր չե, վորի համար հավասար լինեն իր բոլոր զավակները։ Նա գտնվում ե կապիտալիստների ձեռքում, կալվածատերերի ձեռքում։ Պետությունը նրանց ձեռքում մի մեքենա ե, վորն ոգնում ե ճնշելու իրենց — բանվորներին և գյուղացիական հիմնական մասսային։ Յեվ այդ մեքենան գործում ե ամեն կերպ. վորտեղ խաբելու անհրաժեշտություն կա, այստեղ նրան ոգնության են հասնում տերտերները, ադվոկատները, գազեթ քցողները, իսկ վորտեղ ուժ ե պետք՝ բաց թող բանակը ու պոլիցիան։

Յեվ այդ մեքենան կառուցված ե այնպես, վոր վոմանց թվում ե, թե այստեղ բոլորն էլ հավասար են։ Մեզ մոտ, — ասում ե կապիտալիստը — դեմոկրատիա ե, այլ կերպ ասած, ժողովրդականություն, ամբողջ ժողովուրդն ե ընտրում իր կառավարողներին, իսկ սրանք էլ բոլորի համար հավասար չափով մտածում են։

Իսկ իրականում, պետությունը, — թեկուզ և առերես, թվում ե ազատ, բայց ծառայում ե կապիտալիստներին։ Յեվ յեթե նրա մեջ բանվորներն սկսում են գործադուլ անել, կամ ավելին, ապստամբել, — պետությունն իսկույն ևեթ ցույց կտա նրանց, վոր նա բոլորի հետ իսկի չել հավասարապես չի վերաբերվում։

Ազատությունն էլ այդ պետությունների մեջ առերես է միայն։ Այդ ազատությամբ բոլորն էլ չեն կարող ոգտվել։

Այս, որինակի համար, կապիտալիստական յերկրներում ժողովների ազատություն ե հայտարարված։ Բայց ժողով անելու համար պետք ե հավաքվել մի վորևե շենքում, իսկ բոլոր խոշոր շենքերը պատկանում են կապիտալիստներին։ Նրանք փող էլ ունեն։ Նշանակում ե, բուրժուական կուսակցությունը կարող ե գումարել մասսայական ժողով, իսկ բանվորական կուսակցության և բանվորների համար դժվար ե կատարել այդ բանը։ Նրանք վոչ խոշոր շենքեր ունեն, վոչ էլ փող, վորպեսզի շենքեր վարձեն։ Հաճախ էլ պատահում ե, վոր բանվորական ժողովը գումարվում ե, և չնայած ամեն տեսակի ազատությունների գոյությանը, — ցրում են նրանց զոռով։

Կամ նայեցեք, թե, իրենից ինչ ե ներկայացնում մամուլի ազատությունը։ Մամուլը - սա մի ուժեղ զենք ե։ Նա շատ բան կարող ե անել, յեթե լայն կերպով ե տարածվում։ Բայց լրագիր հրատարակելու համար պետք ե թղթի, տպարանի համար փող ունենալ, և այն էլ խոշոր գումարներ, վորովհետև հրատարակել լրագիր, դա նշանակում ե հսկայական մի ձեռնարկ բանալ։ Ահա թե ինչու համար բուրժուազիան ունի իր հարյուրավոր մեծադիր եջերով լրագրները, վորոնցից

ամենամեծերը տարածվում են միլիոնավոր օրինակներով։ Իսկ բանվորները մեկ կամ յերկու փոքրիկ թերթ ունեն։

Բուրժուազիան ուրիշ զենք էլ ունի՝ վորպիսին յեկեղեցին է։ Հավատացյալ մարդկանց թիվն ամենուրեք դեռևս շատ է։ Արտասահմանում կապիտալիստները քրիստոնեական կազմակերպությունների մեջ են համախմբում պատանի տղաներին ու աղջիկներին, վորտեղ նրանց սովորեցնում են կապիտալիստների լծի տակ դնել իրենց վիզը։ Յեվ այն օրերին, յերբ բարձրանում են բանվորները, յերբ ճարճատում է կապիտալիստական իշխանության հիմքը, բոլոր ամբիոններից տերտերներն աշխատում են հանգստացնել մասսաներին։

Բուրժուազիան էլի շատ ու շատ զենքեր ունի։ Նա այդ զենքերով օգտվում է ճարպկությամբ, և այդ պատճառով էլ ստացվում է այնպես,— պետությունը, դե, կարծես թե ազատ է, իսկ ազատությամբ օգտվում է բուրժուազիան միայն՝ բանվորներին ու գյուղացիներին ճնշելու համար։ Բոլոր ընտրություններն էլ մի բանով են վերջանում՝ վոմանք գալիս են, մյուսները՝ գնում, իսկ իշխանությունն առաջվա պես կապիտալիստների շահերն է պաշտպանում։ Յեվ փոխանակ դեմոկրատիայի, ժողովրդավարության ու ընդհանուր հավասարության, ստացվում է դիկտատուրա՝ բուրժուազիայի անսահման իշխանությունը։

Բայց, չենթադրենք թե բանվորները, օրինական հիմունքներով, ընտրությունների ժամանակ մեծամասնությունն ընտրեցին իրենց ներկայացուցիչներից։ Կառավարությունն էլ ստեղծեցին բանվորական. Ի՞նչ կարող է անել այդ կառավարությունը։ Կարո՞ղ է նա օրինական հիմունքներով կիրառել սոցիալիզմը, վերցնել ֆաբրիկանտների ձեռքից գործարանները, կալվածատերերից՝ հողը։ Արդյոք կապիտալիստները կենթարկվե՞ն այդ օրինական կառավարությանը։ Իհարկե, վոչ։ Նրանց քսակին սպառնացող վտանգը յերևան գա թե չէ, կապիտալիստները կթքեն կառավարության վրա, թեկուզ վերջինս օրինական հիմունքներով գործի։ Բանակը, գնդացիրները, զինված ուժերը, ահա թե ինչին կդիմի նման դեպքերում բուրժուազիան։ Դե արի ու այս բոլորից հետո ձգտիր կառավարության մեջ մեծամասնություն ձեռք բերել, յերբ այդ բոլորից և վոչ մի օգուտ չունես։

Չէ, կոմյերիտականս սխալ դուրս չեկավ։

Յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում բանվորի առաջ ձգվում են յերկու ուղի.—

Ուղիներից մեկը՝ օրենքներով աշխատելն է. պարլամենտում խաղաղ ու առանց կռվի ներկայացուցիչներ ընտրելը, հուսալով, թե

ծվ գլուխ, ցույց թե չերևա իշխանությունը ինքն իրեն կանցնի քո ձեռքը։ Մենք արդեն տեսանք, թե ինչին կհանգեցնի մեզ դա։ Իրականում այդ ուղին անվերջ է, անվախճան, և միշտ այդ ճանապարհով գնալով, բանվորը պետք է աշխատի կապիտալիստի, գյուղացին՝ կալվածատիրոջ համար։

Կա և մի այլ ուղի.—փշրել հին օրենքները, կապիտալիստների ձեռքից ուժով խլել իշխանությունը, ջախջախել պետական հին մեքենան և ստեղծել իրենը՝ բանվորականը, ստեղծել իր սեփական իշխանությունը և սոցիալիզմ կառուցել։ Այս ճանապարհով էլ գնացին մեր երկրի բանվորներն ու գյուղացիները, երբ 1917 թվի հոկտեմբերին իշխանությունը խլեցին, իրենց ձեռքն առան։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատավորներին ի՞նչու անհրաժեշտ է նվաճել իշխանությունը։
2. Ի՞նչ բան է պետական իշխանությունը։

ԻՆՉՈ՞Ւ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԵՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Շատ վաղուցվանից գյուղացիներից շատերը հասկացել էին, վոր առանց կռվի չի կարելի թոթափել կալվածատիրական լուծը։ Բայց ցավն այն էր, վոր գյուղացիները և՛ ապստամբում էին, և՛ բունտ անում, և՛ կալվածատերերի տունն ու տեղը այրում, և իրենց—կալվածատերերին կոտորում, բայց գործը միշտ միևնույն վախճանն էր ունենում.—բունտերը տապալվում էին, գյուղացիների արյունը գետի պես հոսում, խմբովարար գյուղերն այրվում, իսկ կալվածատերը նորից պինդ նստում էր գյուղացու վզին։

Լսե՞լ եք դուք Ստենկա Ռազինի մասին։ Երևի լսած կլինեք։ Ա՛յնքան, այնքան երգեր են հյուսված նրա մասին։ Միայն թե այդ երգերում ավելի շատ է խոսվում այն մասին, թե նա ինչպես պարսից իշխանուհուն սիրեց։ Բայց նա հայտնի չէ վոչ թե այդ բանի համար։ Ռազինի մասին երգվում է նրա համար, վոր նա գյուղացիական խոշոր ապստամբության առաջնորդ է եղել, ղեկավարել է մի խոշոր բունտ։ Երկար դիմացավ Ստենկան, շատ քաղաքներ անցան նրա ձեռքը, բայց, այնուամենայնիվ, նրա կյանքի թելը կտրվեց գլխատումով։ Բունտը տապալվեց անողոք կերպով։

Այդպես եղավ նաև Եմելյան Պուգաչևի վիճակը։ Նա իր գլուխը տվեց Մոսկվայում, դահիճը կտրեց նրա գլուխը։ Եվ այդ բոլորը նրա

համար, որ գյուղացիության մասսաների, կազակների և բաշկիրների հետ միասին հրի պես անցնում էր ցարական Ռուսաստանով, այրելով կալվածատերերի տները, սպանելով ցարական չինովնիկներին, կոտորելով ցարական բանակները։

Ահա, լսեցեք Պուգաչևի գլխատման պատմությունը։ Պատմությունը կազմված է այն ժամանակվա ազնվականներից մեկի հուշագրերից, որտեղ ցույց է տրվում, թե ինչպես էին վերաբերվում դեպի այդ գլխատումը Մոսկվայում հավաքված ազնվականներն ու հասարակ ժողովուրդը.—

— «Կառափնատեղը շրջապատված էր զորքերի սեղմ, կուռ ճակատով՝ լիքը հրացանները պատրաստ՝ ձեռքներին։ Ճակատի ներսում ընդարձակ հրապարակն էր ընկած, որտեղ հասարակ ժողովրդից և ոչ մեկին ներս չէին թողնում։ Բայց ազնվականներին ու աղաներին ներս էին թողնում առանց արգելքի։

Եվ շատ շուտով այդ շրջանի մեջ հավաքվեց ազնվականների հոծ բազմությունը. այդ տեսարանը—ընդհանուր թշնամու դեմ ազնվականների տարած հաղթության իսկական հրճվանքն էր։ Կառափնատեղի շուրջը, քառասուն մետր հեռավորության վրա՝ դրված էին բարձր միջանի կախաղաններ։ Կախաղաններին արդեն ամրացված էին խեղդելու թոկերը։

Բանտարկյալները, որոնք կրելու էին մահապատիժը, կանգնած էին կամ պառկած՝ հենց կախաղանի տակ։

Դեռ կառափնատեղին չհասած՝ սայլակից դուրս քաշեցին Եմելյանին ու համարյա թե ձեռների վրա տարան, դրեցին կառափնատեղի ափին։

Պուգաչևը կանգնած էր յերկար քուրքով, համարյա թե համր դարձած։

Կախաղանների աստիճանների վրա կանգնած էին արդեն մահվան դատապարտվածները տյուրիկներով, այսինքն գլուխներին տոպրակներ, և վզներին ողակներ անցկացրած։

Զինվորների ճակատի յետևում կուտակված ամբոխը լուռ էր։ Ժողովուրդը կարծում էր, որ Պուգաչևին ներման հրովարտակ կլինի, հենց դրանից էլ վախենում էին ազնվականները։ Բայց հենց որ հրովարտակի ընթերցումը վերջացավ, Պուգաչևի վրայից պոկեցին քուրքը ու շորերը, և քաշեցին դեպի կառափնատը։ Վճռի համաձայն, առաջ պետք է կտրեյին նրա ձեռներն ու վոտները և հետո գլուխը։

Հանկարծ տեղի ունեցավ ինչ-որ անսպասելի մի բան,—դահիճը ուժգին շարժեց իր կացինը, և իսկույն ևեթ կտրեց Պուգաչևի գլուխը։ Արյունը դուրս ցայտեց։

Յեվ նույն վայրկյանին բարձրացավ մյուս կառափների թխկթխկոցը, և մի վայրկյան չքաշած՝ Պուգաչևի գլուխն արդեն գտնվում եր սյունից վերև գտնված կեռմանի վրա, իսկ մարմինն ու նրա կտրված մասերը՝ անիվի վրա։

Ա՜խ ու վախի, հառաչի և այլ բացականչությունների խուլ ու մեծ աղմուկը դուրս թռավ ժողովրդի միջից»...

Գյուղացիներն ապստամբվել են դեռ շատ շուտ,—յերեք հարյուր տարուց ավելի առաջ։ Նրանց առաջնորդում եր փախած ճորտ Իվան Բոլոտնիկովը։ Նա համարձակ մարդ եր, շատ ու շատ բան գիտեր իր ժամանակաշրջանի մասին, արտասահմանում եր յեղել. պատմում են նույնիսկ այն մասին, վոր իտալական քաղաքներից մեկում նա մակույկավարների գործադուլ եր կազմակերպել։ Յեվ Բոլոտնիկովը գյուղացիությանը կոչ եր անում ապստամբվել կալվածատերերի դեմ, խլել վերջիններիս ձեռքից նրանց կալվածքներն ու այն բոլորը, ինչ վոր խլել են նրանք գյուղացիներից։ Բոլոտնիկովին չվիճակվեց հասնել իր փափագին։ Բանը վերջացավ նրանով, վոր գյուղացիական բունտից հետո Ռուսաստանում ցար յեղավ առաջին Ռոմանովը, վորի ընտանիքը 300 տարի թագավորեց։

Սրանից մոտավորապես 70 տարի առաջ, ազատելու անվան տակ, գյուղացիությունից խլում եյին հողը։ Յերևում է, այնքան ել շատ դուր չեկավ գյուղացիությանն այդ ազատությունը, վորովհետև նրանից անմիջապես հետո, 25 նահանգներում գյուղացիական բունտեր տեղի ունեցան։ Իսկ նրանք ել վերջացան միևնույն բանով—գյուղացիությանը ջախջախեցին, արյան մեջ խեղդեցին այդ բունտերը։

Իսկ ա՛յ, յերբ աճեց ու ամրապնդվեց բանվոր դասակարգը, յերբ նա գլուխն անցավ բոլոր այն շարժումների, վորոնք պայքարում եյին հին կառավարության դեմ, այն ժամանակ կռիվն այլ վախճան ունեցավ։ 1917 թ. հոկտեմբերին, Ռուսաստանի բանվորները, գյուղացիության հետ միասին, և վերջինիս գլխավորելով՝ կապիտալիստներին տապալեցին և ստեղծեցին իրենց սեփական իշխանությունը։

Ինչու տեղի ունեցավ այս բանը։ Ինչու գյուղացիներն իրենք չեն կարողանում իրենց պայքարը մինչև հաղթություն տանել։ Ինչու բանվորները,—յերբ նրանք գլխավորեցին շարժումը, սկսեցին ղեկավարել բոլոր նրանց, ովքեր կռվում եյին հին իշխանության դեմ,—գործն առաջ տարան մինչև հաղթությունը։

Վորպեսզի հասկանալ, թե ինչու յե այսպես լինում, յեկեք միմյանց հետ համեմատենք բանվորին ու գյուղացուն։

Գյուղացին,—թեկուզ նա շատ ել չքավոր է,—այնուամենայնիվ

ունի իր փոքրիկ տնտեսությունը, թող նա թանապուր էլ չունենա, թող նա բանվորից էլ վատ ապրի, այնուամենայնիվ նա իր տնտեսությանը կպած է պիրկ։ Մի կտոր հողն ու փոքրիկ խրճիթը շատ պինդ են պահում նրան իրենց թաթերում։ Մեծ չէ նրա տնտեսությունը, խղճուկ է, այնուամենայնիվ գյուղացին դժվար է բաժանվում նրանից։ Շատ գյուղացիների յերազանքն է վոչ թե իր հարևան հարստին գլուխ խոնարհել, այլ «մարդ դառնալ» և ուրիշներին ստիպել իրեն գլուխ տալու։

Իսկ ի՞նչ ունի բանվորը։ Աշխատում է նա վոչ թե իր, այլ ուրիշի,—ֆաբրիկանտ-կապիտալիստի տնտեսության մեջ. աշխատում է նա կապիտալիստի համար, ստանալով որավարձ, կամ ամսավարձ։ Յեվ վոչ մի տեղի հետ նա կապված չէ։ Հարկ յեղավ, նա կթողնի ամեն բան և կգնա այնտեղ, վորտեղ զգացվում է իր ուժի պահանջը։ Ամեն տեսակի պայքարում նա ավելի համարձակ և վճռական կարող է լինել, քան գյուղացին, վորովհետև նա կորցնելու բան չունի, վորովհետև նա բացի իր ուժից, վոչինչ չունի։

Գյուղացիությունն ապրում է ցրված։ Ա՛յ, վորքան շատ են մեր յերկրում նրանք, այդ գյուղակները, հարյուր, կամ այլ քանակությամբ տնտեսություններով։ Կապը գյուղերի մեջ չափազանց վատ է։ Իսկ առանց կապի շատ դժվար է պայքարել։ Այսօր մի գյուղ հանդես կգա, նրան կջարդեն, վաղը մի ուրիշը դուրս կգա, նրան էլ կջարդեն։ Ցրվածության պատճառով գյուղացիական խոշորաքանակ ազգաբնակչությունն իրենից չի կարողանում մի ամրակուռ, համախմբված, կազմակերպված բանակ ներկայացնել։

Բոլորովին այլ են բանվորները։ Նրանք ապրում և աշխատում են խոշոր մասսաներով։ Շատ ու շատ գործարաններում աշխատում են մի քանի հազար բանվորներ, իսկ այդ գործարանները գտնվում են հաճախ միևնույն քաղաքում կամ միևնույն ավանում։ Այսպիսի մի հսկայական մասսա խորտակելն ավելի շատ դժվար է, քան թե ցրված գյուղական ազգաբնակչությունը։

Գյուղացին իր ամբողջ կյանքն անց է կացրել այնպես, վոր սովորել է միայն ինքն իր մասին մտածել, հույս չդնել ուրիշների վրա։ Նա ինքը ցանում է, ինքն էլ հնձում։ Նա սովորել է մտածել միայն իր մասին։

Իսկ բանվորին—աշխատանքային կյանքը միասնական աշխատանքի է սովորեցնում։ Խոշոր գործարանում մենակ մարդ վոչինչ չի կարող անել։ Այստեղ պահանջվում է աշխատել միաձույլ, ընկերաբար, աշխատանքի ընդհանուր ընթացքին յենթարկվել սովորել, այլ կերպ վողջ գործարանը քար ու քանդ կլինի։

Բանվորները համոզվում են, վոր կապիտալիզմի պայմաններում նրանց վիճակված է միշտ ծռել իրենց մեջքը կապիտալիզմի համար, և լավ վիճակի չհասնել։ Միակ յելքը, դա կապիտալիստների իշխանության տապալումն է, նրանց ձեռքից ֆաբրիկաների ու գործարանների, իսկ կալվածատերերից՝ հողի գրավումն է, ու կոմունիստական հասարակակարգի կառուցման անցնելը։ Այլ կերպ ասած՝ բանվորը պայքարում է կոմունիստական կյանքի համար և նրան է ձգտում։

Իսկ շատ գյուղացիներ հին ժամանակ մտածում էին այսպես.— Հարձակվենք կալվածատերերի վրա, վառենք նրանց կալվածքները, հողն ու անասունները բաժանենք, ու պրծավ ամեն բան։ Նման բաժանումը գուցե թե առանձին գյուղացիներին ոգներ հարստանալու, բայց գյուղացիական մասսան առաջվա պես չքավորության մեջ կմնար։

Սրան պետք է ավելացնել և այն, վոր բանվորներն ավելի գրագետ են, քան գյուղացիները, քաղաքներում ապրելով նրանք ձեռք են բերել գիտելիքներ, և հենց գործարանում տարվող աշխատանքն էլ ավելի շատ գիտելիք է պահանջում։

Ահա բոլոր այս պատճառներով՝ գյուղացիությունը, վորը ընդունակ դուրս է յեկել ցարական կառավարության դեմ, ինքը չի կարողացել այդ կռիվը մինչև վերջ շարունակել։ Նրան անհրաժեշտ էր մի ղեկավար։ Յեվ այդ ղեկավարը՝ բանվոր դասակարգը՝ գործը տարավ մինչև հաղթանակը։

Յերբեմն գյուղացի յերիտասարդը, յերբ պատմում ես նրան, թե ինչու հատկապես բանվոր դասակարգն է ղեկավարում հեղափոխությունը, վիրավորվում է. ուրեմն դուրս է գալիս, վոր մենք՝ գյուղացիներս բանվորներից ցածր ենք կանգնած։ Բայց այդ վիրավորանքն անհիմն է ու անտեղի։ Չէ՞ վոր գյուղացին հանցավոր չէ, վոր ապրել է այլ պայմաններում, քան՝ բանվորը։ Այս բանը նրա հանցանքը չէ, այլ նրա դժբախտությունը։ Յեվ այդ դժբախտությունը պատահել է նրան այն պատճառով, վոր հին կենցաղի վողջ կառուցվածքը միանգամայն անպետք էր, գյուղացուն ճնշում, խավարի և մոռացության մեջ էր պահում նրան։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու՞ համար էին կռվում գյուղացիներն անցյալում։
2. Ի՞նչու գյուղացիներն իրենք մենակ չկարողացան խլել հողը կալվածատերերի ձեռքից։
3. Ի՞նչու բանվորներն սկսեցին ղեկավարել հեղափոխական պայքարը։

Ի՞ՆՉ Է ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Ի՞նչ է կատարվում այն բանից հետո, երբ բանվորները՝ աշխատավորական մասսաների գլուխն անցած՝ տապալում են կապիտալիստների իշխանությունը։ Տեսնենք մեր իսկ երկրի օրինակով։

Ի՞նչպես եղավ մեզնում։ Կապիտալիստներն ու կալվածատերերը հեշտությամբ, առանց կռվի անձնատուր չեղան. Նրանք բանակներ ստեղծեցին նոր իշխանության դեմ կռվելու համար։ Բոլորը հիշում են սպիտակ բանակները, ցարական գեներալների գլխավորությամբ։ Խորհրդային երկիրը մի քանի տարի կռվեց, մինչև վոր դեն շպրտեց նրանց հարձակումը։

Մեզ մոտ, Անդրկովկասում էլ շատ հեշտությամբ ձեռք չբերվեց բանվորների և գյուղացիների իշխանությունը։ Բուրժուազիան առանց կռվի անձնատուր չեղավ և Անդրկովկասի բանվորն ու գյուղացին վորքան ջանք գործադրեցին, մինչև կարողացան ջախջախել— դաշնակ-մուսավաթ և մենշևիկական բանդաները, վորոնք ուզում էին բուրժուայի և կուլակի իշխանությունն ստեղծել Անդրկովկասում։

Օտարերկրյա կապիտալիստներն էլ իրենց թաթերը դեպի Խորհրդային երկիրը մեկնեցին։ Խորհրդային իշխանության գոյությունը նրանց համար ուղղակի մահ է։ Նրանք վախենում էին, վոր իրենց բանվորներն ու գյուղացիներն էլ չվարակվեն այս օրինակից և նույն ուղիով առաջ չգնան։ Սրանից բացի, Խորհրդային կառավարությունը հրաժարվեց—բանվորների և աշխատավոր գյուղացիների ռուբլիներով— նրանց վճարել հին ցարական պարտքերը։ Նա չհամաձայնվեց նույնպես այն բանին, վորպեսզի լայն ասպարեզ տրվի արտասահմանի կապիտալիստներին՝ գործելու և իշխելու մեր երկրում։ Ահա թե ինչու օտարերկրյա կապիտալիստները բանվորա-գյուղացիական երկրի դեմ էին ուղարկում իրենց բանակները, ինչպես և օգնում էին մեր հայրենի սպիտակ գվարդիականներին, վորոնց թվում և դաշնակ խմբապետներին ու մաուզերիստներին։

Բացի այս, գյուղացիությունն ամբողջությամբ չէր էլ կարող միանգամից համաձայնվել ի լսել նոր կառավարությանը։ Կալվածատերերի և ֆաբրիկանտների դեմ բանվորը գնում էր ամբողջ գյուղացիության հետ։ Կուլակներն անգամ, հաճախ գնում էին վառելու կալվածատիրական գույքերը։ Խլել կալվածատերերից հողը, դա նրանց վաղուցվա երազանքն էր։ Իսկ այն բանից հետո, երբ հողը խլեցին, այստեղից արդեն նրանք հեղափոխությանը թարս աչքով սկսեցին նայել, վորովհետև հեղափոխությունը հերթը նրանց էլ հասցրեց։ Երբ

Չքավորության կոմիտեներն սկսեցին նրանց հուպ տալ, կուլակն ատամները կրճտացնել սկսեց և անցավ սպիտակ գվարդիականներին օգնելու գործին։ Ռուսաստանում, մանավանդ, բոլորը հիշում են.— գյուղ եր մտնում սպիտակ բանդան, և կուլակները նրանց աղ ու հացով եյին դիմավորում, իրենց համագյուղացի կոմունիստներին ու չքավորներին նրանց դատաստանին հանձնում։

Բայց բանը միայն կուլակները չեն։ Գյուղացիական հիմնական— միջակական մասսան, առաջին տարիներ, քանի վոր դեռ չեր ամրապնդվել նոր իշխանությունը, նույնպես տատանվում եր։ Նա մի կողմից մյուսն եր թեքվում, յերբեմն անցնելով նոր իշխանության կողմը, յերբեմն գնալով կուլակների հետևից։ Յեվ այդ ծանր տարիներին կուլակային ապստամբություններ յեղան, վորոնց յերբեմն մասնակցում եր նաև միջակը։

Վորպեսզի այս բոլոր դժվարությունների հետ կարողանալ գլուխ գնել, պաշտպանվել իր և օտարերկրյա կապիտալիստից, թույլ չտալ կուլակին իր հետևից տանելու գյուղացիության միջակական մասսային, կապիտալիստներին տապալելով բանվորները պետք է ստեղծեն իրենց հաստատուն յեվ ուժեղ իշխանությունը, ուժեղ հաստատուն պետությունը, վորն ամբողջությամբ հենվում է աշխատավորական մասսաների վրա, յեվ պաշտպանում է նրանց շահերը։ Այս իշխանությունն եղ հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան։ Սա մի խորիմաստ խոսք է, վորի նշանակության մասին Լենինը գրել է հետևյալը.

«Դիկտատուրան մի իշխանություն է, վորը վոչ մի օրենքի հետ կապ չունեցող ուժի վրա յե հենվում։ Պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան մի իշխանություն է, վոր նվաճված և հաստատված է բուրժուազիայի վրա պրոլետարիատի կատարված ճնշումով, իշխանություն, վորը և վոչ մի օրենքի հետ չի կապված»։

Այժմ, հասկացաք, թե ինչ է նշանակում «պրոլետարիատի դիկտատուրա» խոսքը։ Սա նշանակում է, վոր բանվորներն ստեղծել են ամուր, յերկաթյա մի իշխանություն, վորը չի սահմանափակվում ոչ ինչ օրենքներով։

Բայց, ահա, Լենինն ասել է, վոր այդ իշխանությունը հենվում է ժողովրդի վրա։ Իսկ ում դեմ։ Բուրժուազիայի և կալվածատերերի դեմ։ Նրանց մենք իշխանությանը մոտ չենք թողնում, մեզ մոտ նրանք ընտրական իրավունքներից զրկված են։ Մեր օրենքներն ամենևին էլ միատեսակ չեն վերաբերվում՝ բանվորին և աշխատավոր գյուղացիությանը մի կողմից, և կապիտալիստներին ու կուլակներին՝ մյուս կող-

մից։ Առաջինների առաջ մեզ մոտ բաց են բոլոր ճանապարհները, իսկ յերկրորդներին ընդհակառակը՝ իշխանությունը ընտրական իրավունքից զրկում է։

Բայց վոմանք կարող են ասել, թե քաղաքացիական կռիվները անցան, և վոչ մի սպիտակ բանակ ներկայումս Խորհրդային իշխանության դեմ չի կռվում, էլ ինչե՞րս է պետք դիկտատուրան, արդյոք չմեղմացնե՞նք նրան։

Վոչ, դեռևս այդ ժամանակը չի յեկել։ Վտանգը մեր յերկրի վրա կախված է և դեռ յերկար ժամանակ կախված կլինի։ Մենք շրջապատված ենք յերկրներով, վորտեղ իշխանությունը դեռևս կապիտալիստներին է պատկանում։ Մինչև վոր այնտեղ բանվորներն իշխանության գլուխը չեն անցնի, մենք հանգստանալ չենք կարող, վորովհետև այդ յերկրների կառավարությունները մեր դեմ պատերազմ են պատրաստում։ Բացի այս, մեզ մոտ, յերկրի ներսում էլ այն ժամանակվանից, յերբ մենք անցանք նոր տնտեսական քաղաքականությանը, վերածնվեցին կապիտալիստական տարրերը, և կուլակն էլ արդեն վորոշ չափով ճարպակալեց։ Նրանք էլ Խորհրդային իշխանության դառնությունը տեսել են և շատ ուրախ կլինեն, յեթե ազատվեն նրա ձեռքից։

Քանի վոր մենք դեռևս շրջապատված ենք թշնամիներով, քանի վոր մեր յերկրում թշնամին հաղթահարված չէ, անհրաժեշտ է բանվորական ուժեղ, յերկաթե իշխանություն, անհրաժեշտ է պրոլետարիատի հաստատուն դիկտատուրա։

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Պատահում է այսպես.— պատմում ես գյուղացու մեկին պրոլետարական դիկտատուրայի մասին, իսկ նա թափահարում է իր գլուխը։— Ի՞նչու համար,— ասում է նա,— միայն պրոլետարիատի դիկտատուրա։ Մենք գյուղացիներս ինչո՞վ ենք պակաս։ Ձե, այստեղ բանը խարար է,— մտածում է նա,— նման պետությունը մեզ ձեռնտու չի։

Այդպես մտածող գյուղացին չի հասկանում մի բան՝— ի՞նչու համար պայքարեցին բանվորները, ի՞նչու համար ստեղծեցին իրենց իշխանությունը։ Այն բանի համար, վորպեսզի սոցիալիզմ կառուցեն, այսինքն՝ մի այնպիսի հասարակություն, վորտեղ մարդիկ ամենևին էլ բանվորների ու գյուղացիների չեն բաժանվելու, և վորտեղ ամենևին էլ պետական իշխանության կարիքը չի զգացվի։ Վերացնել բանվորների և գյուղացիների մեջ յեղած տարբերությունը,— վո՞ր աշխատավոր գյուղացին չի շահագրգռված այս բանով։ Թեև մեզ մոտ պրոլետարիատի

դիկտատուրա չէ, բայց նրա նպատակն այնպիսին է, վոր գյուղացիական հիմնական մասսաները խորապես շահագրգռված են նրանով։

Այդպիսի գյուղացին սխալվում է նաև մի բանում ևս։ Մեր մոտ պետությունը բանվորական է, բայց այդ ամենևին չի նշանակում, վոր գյուղացիները յերկրի կառավարության գործում մասնակցություն ցույց չեն տալիս։ Լենինը սովորեցրել է և իր մահվանից առաջ մի քանի անգամ կրկնել, վոր բանվորները, առանց գյուղացիության հիմնական մասսայի հետ միություն ստեղծելու, իշխանության գլուխ կանգնել յերկար ժամանակ չեն կարող։ Այլ կերպ չի յել լինի։ Չէ՞ վոր մեր յերկրում գյուղացիությունն ազգաբնակչության խոշոր մասն է կազմում, մի՞թե բանվորներն առանց նրանց ոգնության կկարողանային դիմադրել կապիտալիստների հարձակմանը։

Ի՞նչու 1917 թ. հոկտեմբերին բանվորները հաղթեցին։ Վորովհետև նրանք գործում էին գյուղացիության հետ միացած։ Ի՞նչ էր ուզում այն ժամանակ գյուղացին։ Նա հաշտություն էր ուզում, պատերազմը քայքայել էր նրա տնտեսությունը։ Վերջապես նա ուզում էր կալվածատիրոջը քշել հողից։ Յեվ յերբ բանվորական կուսակցությունը,—բոլշևիկները,—խոստացավ գյուղացիությանը հող և խաղաղություն, բանակը, վոր գյուղացիության կողմն էր, պաշտպանեց նրան. իսկ առանց բանակի Հոկտեմբերին հաղթանակ տանել անհնարին էր։

Քաղաքացիական կռիվներից հաղթանակով դուրս յեկանք։ Սպիտակ բանակը մենք հիմնովին ջարդ ու փշուր արինք։ Իսկ մեր թշնամու բանակն այնքան էլ փոքր չէր, և Խորհրդային իշխանությունն էլ այնքան ուժեղ չէր։ Ինչո՞ւ հաղթեցինք։ Այն պատճառով, վոր բանվորները գյուղացիական հիմնական մասսայի հետ դաշնակցած էին կռվում։ Սպիտակ բանակի հետ գնում էր նաև կալվածատերը՝ գյուղացիներից հետ վերցնելու նրանց խլած հողը։ Այդ պատճառով էլ գյուղացիության մեծամասնությունը բանվորներին ոգնում էր սպիտակներին կոտրելու գործում։

Ներկայումս էլ բանվորական պետությունը մտածում է այն մասին, վորպեսզի գյուղացիական հիմնական մասսաների հետ բանվորների միությունն ամրապնդվի։ Այս միության ամրապնդման մեջ է Խորհրդային իշխանության ուժը։ Կթուլանա նա, նշանակում է թուլանում է նաև Խորհուրդների իշխանությունը։ Ահա թե ինչու համար բանվորների և գյուղացիական հիմնական մասսայի ամենամեծ թշնամիները հանդիսանում են նրանք, վորոնք վորոմ են ցանում այս յերկուսի միջև։ Նրանք ուզում են հակադրել գյուղը քաղաքին, մռմռում, փսփսում են ամեն տեսակի առասպելներ, վորովհետև ուզում են պայ-

թեցնել բանվորների և գյուղացիական չքավորության միությունը միջակ գյուղացիության հետ։

Իսկ այդ նշանակելու յե նաև իր՝ Խորհրդային իշխանության կործանումը։ Չե՞ վոր հենց այդ Խորհրդային իշխանության մեջ ե հանդես գալիս բանվորների և գյուղացիների միությունը։ Մեզ մոտ, խորհրդային որգաններում, միայն բանվորները չեն։ Ընդհակառակը, կուսակցությունն ամեն կերպ աշխատում ե գյուղացիական մասսաներին լայն չափերով ներգրավել յերկրի կառավարության յեվ ղեկավարության գործին։

Նայեցեք ապա գյուղխորհուրդների կազմին։ Գյուղխորհուրդը—դա իշխանության ստորին որգանն ե։ Ո՞ւմից են նրանք կազմված։ Համարյա թե ամբողջությամբ՝ բատրակներից, չքավորներից և միջակ գյուղացիներից։ (Ստուգեցեք ձեր խորհրդի կազմը)։

Պարզվում ե, վոր աշխատավոր գյուղացիությունը—չքավորներն ու միջակները—բավական լայն մասնակցություն են ցույց տալիս իշխանությանը։ Գավառային և շրջանային գործադիր կոմիտեներում նրանք ավելի շատ են, քան թե բանվորները։ Ահա այս բանը ցույց ե տալիս, վոր Խորհրդային իշխանությունը բանվորների և չքավորների միջակ գյուղացիության հետ ունեցած միության ձևն ե, վորի մեջ հանդես ե գալիս այդ միությունը։

Բայց յերկրի կառուցման գործին գյուղացիները մասնակցում են բանվորների ղեկավարությամբ։ Յեվ դա հասկանալի յե, թե ինչու։ Մենք արդեն ասացինք, վոր միջակ գյուղացին կարող ե տատանվել։ Նա իր վողջ անցյալ կյանքով չի պատրաստվել հեղափոխություն ղեկավարելու։ Այդ բանից հեշտությամբ կարող են ոգտվել գյուղացիության թշնամիները, կալվածատերերը, և կնստեյին նորից նրանց վզին։ Այս պատճառով էլ բանվոր դասակարգն առաջնորդում եր գյուղացիությանը, յերբ տապալում եյին կապիտալիստների իշխանությունը, և հենց այդ պատճառով ե, վոր հիմա բանվորների և գյուղացիների միության մեջ բանվորները ղեկավար դեր են խաղում։

Վիրավորվել այս ղեկավարության համար ամենևին էլ պետք չե։ Հարցն այնպես չի դրվում, վոր իբր թե բանվորներին դուր ե գալիս գյուղացիության ղեկավարելը, նրանց իբր թե հաճելի յե առաջնորդ լինել։ Յեթե խոսքը վերաբերվեր մեկ հոգու միայն, այն ժամանակ հնարավոր եր այդպես մտածել, իսկ մեր խոսքը վերաբերվում ե ազգաբնակչության մի ամբողջ խմբակին՝ բանվոր դասակարգին։ Յեվ ղեկավարում են սրանք բանվորների և գյուղացիական հիմնական մասսայի միությունը վոչ թե այն պատճառով, վոր նրանք այդպես են ցանկանում, այլ այն պատճառով, վոր այդ անհրաժեշտ ե Խորհրդային

իշխանության ամրապնդման համար։ Բանվորները ցույց տվին, վոր գյուղացիներից ավելի ընդունակ են ղեկավարելու յերկիրը, այդ բանի համար նախապատրաստել եր նրանց իրենց ամբողջ կյանքը — անցյալում։ Իսկ եթե բանվորների ղեկավարությունը սրանց և գյուղացիության միության մեջ ամրապնդում ե Խորհրդային իշխանությունը, նշանակում ե, վոր այդ ղեկավարությունն անհրաժեշտ ե և ձեռնտու յե գյուղացիության մեծամասնությանը։ Չլիներ այդ ղեկավարությունը, յեվ յերկար չեր կարողանա իր գոյությունը պաշտպանել խորհրդային իշխանությունը, գյուղացիության վզին նորից կնստեր կալվածատերը։

Պատահում ե, և կան ընկերներ, վորոնք մոռացության են մատնում բանվորների և գյուղացիների միությունը։ Նրանք կարծում են, վոր գյուղացիության նկատմամբ՝ ձևականություններն ավելորդ են։ «Գյուղը,—դատում են նրանք,—շատ անգամ ե տապալել բանվորներին հեղափոխության ժամանակ, ավելի լավ ե նրա վրա հույս չդնել։ Բանվորների համար ստեղծված ծանր պայմաններում գյուղն անպայման կխաբի, կտատանվի, չի օգնի բանվորներին»։ Համարյա թե այսպես եյին դատում տրոցկիստները։ Նրանց գլխավոր սխալն ել կայանում եր նրանում, վոր նրանք մոռանում եյին լենինյան ուսմունքը բանվորների և գյուղացիների միության մասին, առանց այս բանի Խորհրդային իշխանությունը չեր լինի։

Բայց կա և մի ուրիշ, ուղղակի սրան հակառակ մի սխալ կարծիք։ Պատահում ե, վոր ուրիշ ընկերներ ել հիշում են բանվորագյուղացիական դաշինքը, բայց մոռանում են, վոր այդ միության մեջ ղեկավարությունը պետք ե բանվոր դասակարգին պատկանի։ Նման ընկերներ լինում են նաև գյուղական կոմյերիտականների մեջ։ Նրանց թվում ե, թե բանվորներն ու գյուղացիները — սրանք պայմանագիր կնքող յերկու կողմեր են ու համաձայնության են գալիս նրանք հավասարազոր հիմունքներով, և ով վոր այդ համաձայնությունից շատ բան ե ստանում, նրա բանն ել ավելի լավ կլինի։

Այս ընկերները մոռանում են լենինյան ուսմունքի հակառակ կողմը։ Նրանք մոռանում են, վոր այդ միությունը հաստատուն և ամուր կլինի, և դրանով ել Խորհրդային իշխանությունը կամրապնդվի միայն այն դեպքում, յեթե այդ միության մեջ ղեկավարությունը կպատկանի բանվորներին՝ գյուղացիության բատրակային-չքավորական և միջակային մասսային երկրի կառավարման գործում լայն չափերով ներգրավելու պայմանով։

Յեվ միայն գյուղական այն կոմյերիտականը կարող ե իրեն իսկական լենինյան համարել, ով լավ հիշել և հասկացել ե, վոր մեր իշ-

խանությունը հաստատուն և ամուր է այնքան ժամանակ, վորքան դեռ ամուր ու հաստատուն է բանվորների և գյուղացիության հիմնական մասսայի դաշինքը, և վորքան դեռ այդ միության մեջ ղեկավարությունը բանվոր դասակարգին է պատկանում։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչու հեղափոխությունից հետո հաստատուն իշխանություն է պետք։
2. Ի՞նչ է նշանակում «պրոլետարիատի դիկտատուրա» խոսքը։
3. Գյուղացիներն ի՞նչպես են մասնակցում մեր յերկիրը կառավարելու գործին։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

(Շարունակություն)

ՄԵՐ ՈՒԺԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ Է

Գիտեք, թե ո՞վ է Միխայել Իվանովիչ Կալինինը։ Նա ներկայումս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահն է։ Նա տաս տարուց ավելի յե, վոր ղեկավարում է պետությունը։ Ախր, նա ինքը գյուղացի յե, Տվերի նահանգից և Լենինգրադի բանվոր։

Հնա՞ր բան է, վոր մի ուրիշ պետության մեջ, բանվորը կամ գյուղացին կանգնած լինեն իշխանության գլուխը։ Իհարկե, վոչ։ Միայն մեզ մոտ, Խորհրդային յերկրում հնարավոր է այս բանը։

Յեվ բանը միայն Միխայիլ Իվանովիչը չէ։ Նայեցեք ձեր շուրջը․ ո՞վ է ձեզ մոտ Գործադիր Կոմիտեյի Նախագահը։ Բանվորներն ու գյուղացիները։ Իսկ մնացած բոլոր յերկրներում, կառավարության գլուխը կանգնած են կապիտալիստներն ու նրանց կամակատարները։

Այս հանգամանքի մասին մի՛ լավ մտածեք։

Ա՛խր, բոլոր յերկրներում բանվորներն ու գյուղացիներն ազգաբնակչության մեծամասնությունն են, իսկ կապիտալիստներն ամեն տեղ էլ ավելի փոքրաքանակ են։ Յեվ դուրս է գալիս այն, վոր մեզ մոտ կառավարում է ազգաբնակչության մեծամասնությունը, իսկ ուրիշ յերկրներում՝ փոքրամասնությունը։

Սրա մեջ է յեվ մեր ուժը։ Խորհրդային իշխանությունն ուժեղ է

նրանով, որ նա հենվում ե մասսաների վրա յեվ յերկիրը կառավարում ե ազգաբնակչության մեծամասնության շահերից յելնելով։

Մեր յերկրում—դիկտատուրա յե։ Անցյալ անգամ մենք ձեզ հետ խոսեցինք, որ դիկտատուրան—դա մի այնպիսի իշխանություն ե, որը հենվում ե ուժի վրա, իշխանություն, որ վոչնչով չի սահմանափակվում։ Այդ բանի վրա այժմս պետք ե ավելացնել և այն, որ դա ազգաբնակչության մեծամասնության իշխանություն ե, և այդ մեծամասնությունը ճնշում ե կապիտալիստների փոքրաթիվ խմբակին։

Մեր իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին վոչ միայն չի ճնշում, այլ ընդհակառակը, ամեն կերպ ներգրավում ե կառավարելու գործի մեջ։ Յուրաքանչյուր բանվոր, կամ չշահագործող աշխատավոր գյուղացի կարող են ընտրվել և աշխատել խորհրդում։ Սա սոսկ մի իրավունք չե, այլ իրական ե, իսկական։

Խորհրդային իշխանության գոյության տասը տարվա ընթացքում միայն ՌՍՖԽՀ մեջ քաղաքային և գյուղական խորհրդների կազմում ընտրվել են մոտ 10 միլիոն մարդիկ, գործկոմների կազմում՝ 700 հազար հոգի։

Մեր յերկրում ե միայն, որ յերբ բանվորները, գյուղացիները և բոլոր աշխատավորները գումարում են իրենց համագումարները, նրանից հատկացվում են ամենալավ և ամենախոշոր շենքերը։

Միայն մեր յերկրում գոյություն ունեն բանվորական և գյուղացիական լրագրեր, բանթղթակիցների և գյուղթղթակիցների հսկայական բանակով, վորոնք կապում են այդ լրագրերը մասսաների հետ։

Մեզ մոտ միայն աշխատավորներն օգտվում են ընտրական լայն իրավունքներով, վորպիսիք կապիտալիստների մոտ գոյություն չունեն։

Իսկ ի՞նչպես ե կապիտալիստական յերկրներում։ Նրանք պարծենում են, թե իրենց մոտ լիակատար ազատություն ե բոլորի համար, բոլորը, ովքեր ուզում են՝ ընտրում են և դրանով իսկ անցնում իշխանության գլուխը։ Մեզ մոտ, դե, դեմոկրատիա յե, ժողովրդավարություն։ Բայց մենք ձեզ հետ միասին տեսանք, վոր նրանց ազատությունը դատարկ հնչյուն ե։ Իրականում այդ ազատությունը բուրժուազիայի համար ե՝ բանվորներին և գյուղացիներին խաբելու։

Ի՞նչ իրավունքներ ունի ընտրողը բուրժուական հանրապետության մեջ։ Ահա թե ինչ.—մի քանի տարին մեկ անգամ նա իր ձայնը տալիս ե վորևե մեկին և հետո մի քանի տարի լռում։ Նրա կարծիքը հաշվի չեն առնում։ Նրա ընտրած ներկայացուցիչը կարող ե պարլամենտում անել այն, ինչ վոր ցանկանում ե։ Ընտրողը չի կարող ազդել նրա վրա։ Իսկ մեզ մոտ գոյություն ունի այնպիսի իրավունք,

ինչպիսին է ընտրողների կողմից իրենց պատգամավորներին հետ կանչելու իրավունքը։ Խորհրդի մեջ ընտրել են մեկին, վեց ամիս անցած տեսնում են, որ անհամապատասխան է, դեպի իրեն տածած վստահությունը չարդարացրեց, կամ պարզապես ավարա մարդու մեկն է,—կարելի չէ հետ կանչել և նրա փոխարեն ուրիշին ընտրել։

Կապիտալիստական յերկրում կառավարության որգաններում մեջ ընտրված մարդիկ հաստ պարիսպներով անջատվում են իրենց ընտրողներից, իրենց համար պարլամենտում ժողովներ են անում, խոսում և պարզապես շատախոսներ են դառնում։ Նրանք հավատարիմ և խոնարհ կերպով ծառայում են մի բուռն կապիտալիստներին։ Մեզ մոտ խորհրդի անդամ ընտրվածներն ընտրողներից բաժանված չեն, այլ գտնվում են հենց այնտեղ՝ գործարանում, ֆաբրիկայում, գյուղում։

Ուզում եմ սկզբից մինչև վերջ ձեզ կարդալ ծերունի գյուղացու պատմությունը, մեր կառավարության ղեկավար Միխայիլ Իվանովիչ Կալինինի հետ ունեցած զրույցի մասին։ Ահա այդ պատմությունը.—

«Յեկա յես Միխայիլ Իվանովիչ Կալինինի մոտ և ասում եմ.—

— Բարև, Միխայիլ Իվանովիչ,—ձեռք եմ տալիս, իսկ նա պատասխանում է. «Ձեռք տալով բարևել չի կարելի, տուգանք 20 կոպեկ»։ «Մի մանեթ կտամ, Միխայիլ Իվանովիչ, մենակ թե ձեռքդ տուր»։ Տվեց։ Խոսեցինք։ Հյուրասիրեց թեյով, բուլկիներով։ Նա մի բուլկի յեր ուտում, ես՝ յերեքը, նա՝ մեկը, յես՝ յերեքը։ Իսկ Միխայիլ Իվանովիչը դեռ ելի հյուրասիրում էր.—«Կեր, ասում է նա, շատ կեր»։ Ահա թե ինչ է նշանակում սա—մենք ներկայումս տեր ենք»։

Բայց բանն այստեղ բուլկիները չեն։ Դրանք մանր-մունր բաներ են։ Բանն այն է, որ մինչև անգամ ծերունի գյուղացին զգաց, որ «մենք ներկայումս տեր ենք»։

Այժմս մենք կարող ենք հետևյալ յեզրակացությունն անել.—

Դեմոկրատիան,—ինչպես կոչվում է կապիտալիստական յերկրներում կառավարելու ազատությունը,—գործնականում բուրժուազիայի դիկտատուրա յե դարձել, ազգաբնակչության փոքրամասնության—կապիտալիստների ճնշումը մեծամասնության,—բանվորների և գյուղացիների և ընդհանրապես աշխատավորության վրա։

Դիկտատուրան մեր յերկրում,—պրոլետարիատի դիկտատուրա յե, ճնշում փոքրամասնության— կապիտալիստների վրա, և իսկական, իրական, պրոլետարական դեմոկրատիա. ազատություն՝ աշխատավորական լայն մասսաների համար։ Մասսաների հետ կապված, նրանց շահերով միշտ շահագրգռված, և յերկրի առաջ կանգնած խնդիրների լուծման համար միշտ մասսաների համախմբում—սրանում է Խորհրդային իշխանության ուժը։

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր իշխանությունը կառուցվում է այնպես, որպեսզի երկրի կառավարման գործում ավելի մեծ չափով ապահովվի լայն մասսաների մասնակցությունը։

Իշխանության ստորին օրգանը—գյուղում գյուղխորհուրդն է, քաղաքում՝ քաղխորհուրդը։ Խորհուրդն ընտրում են բոլոր ընտրողները։ Վերընտրական յուրաքանչյուր կամպանիայի ժամանակ մենք ձգտում ենք, որպեսզի բոլոր ընտրողները մասնակցեն ընտրություններին։ „

Յուրաքանչյուր գյուղ հանդիսանում է գավառակի մի մասը։ Գավառակում իշխանությունը խորհուրդների համագումարն է հանդիսանում։ Հրավիրվում է նա մեկ կամ յերկու տարին մեկ անգամ, լսում է հաշվետվություն, որոշում է, թե ինչպես առաջ տանել տնտեսական և կուլտուրական կյանքը գավառակում, և գործադիր կոմիտե յե ընտրում։

Յուրաքանչյուր գավառակ մտնում է գավառի կազմում։ Այստեղ իշխանությունը հանդիսանում է խորհուրդների գավառային համագումարը, և սա յել գործադիր կոմիտե յե ընտրում։

Գավառը հանդիսանում է մարզի, կամ ազգային հանրապետության մի մասը։ Այստեղ յել իշխանությունը հանդիսանում է մարզային և կամ հանրապետական համագումարը, որն իր միջից ընտրում է մարզային կամ հանրապետական գործկոմ (կենտգործկոմ)։

Յեվ վերջապես, մարզը, ազգային հանրապետությունները յերկրային համագումարների (ինչպես մեզ մոտ Խորհուրդների Անդրկովկասյան համագումարի) միջոցով, կամ պարզապես ուղղակի կերպով—միանում են ԽՍՀ Միության—Խորհուրդների Համամիութենական Համագումարում, որը հանդիսանում է գերագույն իշխանությունն ամբողջ ԽՍՀՄ-ում։ Այստեղ յել ընտրում են Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, որն իր կազմից ընտրում է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, նշանակում առանձին կոմիսարներ աշխատանքի այս կամ այն բնագավառների համար (կազմել սխեմա)։

Ազգային հանրապետությունների խորհուրդների համագումարում ընտրված կենտգործկոմներն ևս իրենց կազմից նշանակում են ժողկոմների խորհուրդ և ժողկոմներ՝ աշխատանքի այս կամ այն բնագավառի համար։

Ահա այսպես է կառուցված Խորհրդային իշխանությունը։

ՋԱՆԱԶԱՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐՆ ԱՐԴՅՈՔ ԹՇՆԱՄԻ՞ ՑԵՆ ԻՐԱՐ

Անցնում ենք մի դժվարին խնդրի։

Դեռևս շատ ու շատ կոմյերիտականներ ԽՍՀ Միությանը Ռուսաստան են ասում։ Իսկ դա հարցի ճիշտ պատասխանը չէ։ Ռուսաստան կոչվում էր նախկին ցարական պետությունը։ Իսկ մենք հենց քիչ առաջ կարդացինք, վոր մեր յերկիրը կոչվում է ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

Միություն է կոչվում այն պատճառով, վոր նրա մեջ են մըտնում չորս հանրապետություններ և յերկու միություններ (ֆեդերացիաներ)։

Պետության այսպիսի կառուցվածքը՝ Հոկտեմբերյան հեղափոխության ամենախոշոր նվաճումներից մեկն է, վորովհետև մեր յերկրում յուրաքանչյուր ազգություն ազատ է, ինքնուրույն կերպով է մասնակցում յերկրի կառավարությանը և սոցիալիստական տնտեսություն է կառուցում։

ԽՍՀՄ-ում ազգությունները հարյուրից ավելի յեն։ Այստեղ կան ռուսներ, ուկրայնացիներ, բելոռուսներ, ուզբեկներ, վրացիներ, հայեր, չերքեզներ, Ադրբեջանի թուրքեր, հրեաներ, լեհեր և այլ ազգություններ։ Հին ժամանակ իշխող ազգը—դա ռուսներն էյին միայն։ Հիմնարկներում խոսում էյին միայն ռուսերեն լեզվով, դպրոցները ռուսական էյին, ռուսներին էլ իրավունքների առավելություն էր տըրվում՝ մնացած բոլոր ազգությունների նկատմամբ։

Յերևակայեցեք մի Թուրք գյուղացու։ Ռուսերեն նա յերկու խոսք էլ չի կարող կապել միմյանց։ Նրա կյանքն անտանելի յեր.—բոլորը, ով ուզենար, կարող էր խաբել նրան։ Գանգատվել նա չէր կարող, վորովհետև խնդիրը պետք էր ռուսերեն գրել, իսկ նա այդ լեզուն չգիտեր։ Յերեխաներին կրթություն տալ էս նա չէր կարող, վորովհետև նրանք չէյին հասկանում, թե ինչ են խոսում ռուսական դպրոցում։

Ցեվ ստացվում էր այն, վոր վոչ ռուս աշխատավորին ճնշում էյին յերկուստեք,—*ինչպես ճնշում էյին ամեն աշխատավորի,*— յեվ ավելի խիստ, *վորովհետև հետամնաց էր,* շահագործվում էր իր համազգի հարուստի կողմից, յեվ այս բանի հետ զուգընթաց կրում էր ազգային ճնշումի ծանր լուծը:

Ցարական կառավարությունը ճնշված ազգությունների հաշվին կերակրում էր կալվածատերերին էլ։ Այսպես էր արվում այդ բանը.—կիրգիզներից, բաշկիրներից, ինչպես և մյուս ազգություններից կա-

ռավարությունը խլում էր հողը,—իսկ չրբեմն էլ հոտերը,—և բաշխում էր այդ հողն իր խնամի ու ծառա կալվածատերերին և կամ այդ հողի վրա բնակեցնում էր ռուսներին, իսկ նրանց նախկին հողը տրվում էր կալվածատերերին։

Կովկասում շատ փոքրիկ ազգություններ կան.—չեչեններ, չերքեզներ, ադիգեյցիներ և այլն։ Մոտավորապես հարյուր հիսուն տարի առաջ նրանք ստիպված չեղան թողնել իրենց տուն ու տեղը, անցնել Տաճկաստան, Պարսկաստան և ուրիշ չերկրներ։ Ռուսաստանում միայն անհնարին էր։ Ցարական կառավարությունը նրանց զոռով էր քշում չերկրից դուրս։

Ցեվ այդ ճնշված ազգությունների հողերում բնակվեցին ռուս գյուղացիները, վորոնց կոռ ու բեգյառով տանջում էին կալվածատերերը։ Պարզ է, վոր վոչ գյուղացիներն էին սիրում բնիկներին, և վոչ էլ նրանք չեկվորներին, վորոնց զոռով արտաքսել էին իրենց խրճիթներից։

Ցեվ մի ազգի աշխատավորության ատելությունը մյուս ազգի աշխատավորության հանդեպ՝ ցարական կառավարությունը բորբոքում էր ամեն կերպ։ Նա աշխատում էր ռուս աշխատավորության մեջ ատելություն զարգացնել բոլոր մյուս ազգերի նկատմամբ։ Ցեվ գործածության մեջ մտան մի շարք խայտառակ դարձվածքներ։ Պատահում էր, վոր ռուսը վրացուն ուրիշ կերպ չեր կարող կանչել, չեթե վոչ «կնյազ», հրեային—«ջհուդ», հային—«արմյաշկա» (շուն հայ) կամ ուզբեկին—«սարթ» ծաղրականչով։

Ցեվ չերբ ճնշված ազգերը փորձում էին տրտնջալ, ինքնուրույնություն պահանջել, այդ դեպքում ցարական կառավարությունը նրանց գլխին էր իջեցնում իր ամբողջ ուժը, կախում, գնդակահարում, աքսորում էր նրանց, ովքեր կռվում էին իրենց ազգի ազատության համար։

Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն ազատություն բերեց բոլոր այն ազգություններին, վորոնք ճնշվում էին ցարական կառավարության կողմից։ Խորհրդային իշխանությունը հայտարարեց, վոր յուրաքանչյուր ազգություն պետք է ինքը վորոշի, թե պետական ինչպիսի կառուցվածք է իրեն հարկավոր,—և վոչ վոք նրան ստիպելու չի,—կուզես, մտիր Խորհրդային Միության մեջ, չես ուզի՝ կարող ես անջատվել։ Այս բանի հետևանքով էլ—այն ազգությունները, վորոնք բնակվում են մեր չերկրում, կազմեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, վորը հիմնված է վոչ թե նախկին կռտորածների, այլ դեպի միմյանց տածած հաստատուն վստահության վրա։

Աշխատավորը—ինչ ազգից էլ լինի, լինի նա բելոռուս, թե ուկրաինացի գյուղացի, լինի նա թուրքմեն, հայ կամ վրացի, լինի նա գերմանացի, թուրք կամ հրեա,—կարող է այժմս իր չերեխաներին սովորելու տալ իր մայրենի, հասկանալի լեզվով. կարող է դիմել խորհրդին, վորտեղ նրան կպատասխանեն իր մայրենի լեզվով։ Ավելի խոշոր հանրապետությունների մեջ նա նույնիսկ կարող է համալսարանում իր մայրենի լեզվով սովորել։ Մեր Միության մեջ է մտնում Բելոռուսական հանրապետությունը։ Մինչև հեղափոխությունը այնտեղ և վոչ մի բարձրագույն ուսման հիմնարկ չկար։ Նա մոռացված ու չետամնաց չերկիր եր։ Իսկ այժմ այնտեղ 4 բարձրագույն դպրոցներ կան, 4 բանֆակներ, 30 տեխնիկումներ և նույնքան էլ պրոֆդպրոցներ։ Շատ հեռու չգնանք և վերցնենք Հայաստանի որինակը։ Մինչև հեղափոխությունը և Հայաստանի խորհրդայնացումը այստեղ վոչ միայն համալսարան, այլ կարգին միջնակարգ դպրոցներ էլ չկային։ Ներկայումս Հայաստանում բարձրագույն ուսուցման 3 հիմնարկներ կան (պետհամալսարան, կոնսերվատորիա, իսկ մեկը Անդրկովկասյան մաշտաբով՝ տնտեսագիտական ինստիտուտը), 2 բանֆակներ, 18 տեխնիկումներ, 4 փաբզործուսներ, 42 գյուղյերիտ դպրոցներ, մի շարք II աստիճանի դպրոցներ և յոթնամյակներ։

Խորհրդային իշխանությունը հսկայական ջանքեր է թափում այն բանի համար, վորպեսզի տնտեսապես բարձրացնի հետամնաց ազգություններին, ազգային հանրապետություններում արդյունաբերություն ստեղծի և ամեն կերպ զարգացնի նրանց։ Այնուամենայնիվ, մինչև հիմա չել նրանք դեռևս շատ հետ են։ Ահա թե ինչպես է նկարագրում ռուս հայտնի պրոլետ-գրող Մաքսիմ Գորկին մեր որերի հայկական գյուղակը.

«Կոշտ հողին, անկարգ, և համարյա թե այդ հողից բոլորովին չտարբերվելով, կպել են ցածրիկ, անտաշ քարերով կառուցված շենությունները. անծխնելույզ ու առանց պատուհանի. Նրանք մարդկային բնակարան չեն հիշեցնում քեզ. մինչև անգամ Մոզդոկի տափաստանի վոչխարի փարախները կառուցված են ավելի գեղեցիկ, քան թե սրանք։ Վատ տեղերում, լերկ հողի վրա ծեփվել են հայկական այդ խղճուկ ու խոնջացած գյուղերը։ Ինչ վոր ամոթ ես զգում, անհարմար նայել նրանց։ Այստեղ-այնտեղ, նրա շուրջը՝ որորվում են չեգիպտացորենի ցողունները և գարու ցանքսերի կանաչ բծերը։ Հաղվագյուտ դեպքում չերևում են կիսամերկ մանուկները և մթության մեջ կանայք, վորոնք հյուծվել են անսովոր ծանր աշխատանքից։ Ծանր ձըմռանը, լերկ լեռների մեջ,—վորտեղ թաղնվում են հանգած վուլկան-

ները,—ընկած այս նախապատմական բնակավայրերում ցուրտ և տաղտկալի պետք է լինի։ Այս բարձրության վրա ձմեռը չերկար է տևում, լինում են ուժեղ սառնամանիքներ»։

Այսպես են ապրում հիմա չէ։ Եվ այդ բոլորն այն պատճառով, որ հին ժամանակները նրանց մարդ չէին համարում։

Իսկ չէ՞ որ հրեաներին ամեն տեղ ապրել չէր թույլատրվում։

Եվ այն ատելությունը, որը ցարական կառավարությունը ցանում էր զանազան ազգերի աշխատավորների մեջ, դեռ մինչև հիմա չէլ ամբողջությամբ վերացված չէ։ Ցարական կառավարությունից հետո Անդրկովկասում ժամանակավորապես տեր ու տնօրեն դարձան մենշևիկները՝ Վրաստանում, մուսավաթները՝ Ադրբեջանում և դաշնակները՝ Հայաստանում։ Սրանք սկսեցին ավելի խայտառակ կերպով շարունակել ցարիզմի քաղաքականությունը, և միմյանց դեմ սկսեցին արդեն բացահայտ կերպով նիզակներ ճոճել։ Շնորհիվ այս կուսակցությունների վարած քաղաքականության, մի շարք կռիվներ տեղի ունեցան հայերի և վրացիների, վրացիների և թուրքերի, թուրքերի և հայերի միջև։ Բացի այս կռիվներից, տեղի ունեցան նաև կոտորածներ, Ադրբեջանում՝ հայերինը, Հայաստանում՝ թուրքերինը։ Անցյալի այդ տխուր ժառանգության մնացորդներն այժմս էլ արտահայտվում են անդիտակից խավերում, որպիսին օգտագործում են մեր դասակարգային հակառակորդները։ ԽՍՀՄ մեջ մտնող մի շարք հանրապետությունների մեջ էլ աչքի չի ընկնում այժմս անտիսեմիտիզմը, այսինքն ատելությունը դեպի հրեաները։

ՀՐԵԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա՛յ, լսեցեք մի դեպքի մասին։ Բելոռուսիայի «Կարմիր-Հոկտեմբեր» գործարանի բանվորուհի Բարշայան հետամնաց էր։ Միշտ վախենում և խուսափում էր մարդկանցից ու մռայլ հոնքերը կիտում։ Գործարանում էլ բանվորներից և վոչ վոք չէր հետաքրքրվում նրա վիճակով։

Իսկ հետաքրքրվել պետք էր, որովհետև միքանի վարպետներ ու բանվորներ հանգիստ չէին տալիս նրան.—ծեծում էին, պատառոտում շորերը, ջուր ածում վրան և ամեն կերպ ծաղրի ենթարկում։

— Դու ջհուդ ես, մեզ համար անպետք։

Երկար տևեց այդ ծաղրուծանակը։ Անփույթ, մատների արանքով էին նայում այս բանի վրա նաև կոմյերիտականներն ու միքանի կոմունիստները, մինչև որ բանը չհրապարակվեց լրագրում։ Բանը հասավ դատարան և այնտեղ խուլիգանները, որոնք ծաղրում էին հրեա հետամնաց բանվորուհուն, ստացան իրենց արժանի պատիժը։

Դատը վերջացավ, բայց բանն այդպես չվերջացավ։ Այդ գործն տխրում է մեզ մի լավ գլխի ընկնել, թե ինչպես այդ չարիքը՝ ատելությունը դեպի հրեաները, կամ ինչպես գիտական լեզվով ասում են—անտիսեմիտիզմը վերացնենք, պոկենք արմատից։ Վորտեղ զգույշ ու խորամանկ, վորտեղ էլ բարձրաձայն հակասեմիտը փսփսում է բանվորի կամ գյուղացու ականջին.

— «Հրեաները խորամանկ են։ Դժվար է հրեա գյուղացի կամ բանվոր ճարել։ Նրանք բոլորն էլ հարուստներ են, բուրժույներ, արյունխումներ»։

Յեկեք միասին քննության առնենք և տեսնենք, թե մի կաթիլ չափ ճշմարտություն կա այս խոսքերի մեջ։

Ամբողջ ԽՍՀՄ-ում հրեաների թիվը 2.800 հազար է, վորոնցից 400 հազար ընտանիք ապրում են վարձու աշխատանքով։ Յեթե միջինը թվով յուրաքանչյուր բանվորի կամ ծառայողի ընտանիքը համարենք 3 հոգուց բաղկացած, այդ դեպքում ստացվում է, վոր վարձատրվող աշխատանքով—աշխատավարձով ապրում են 1.200 հազար հրեաներ։

Գյուղատնտեսությամբ ներկայումս զբաղվում են 180 հազար հրեաներ, ըստ վորում այս թիվը աստիճանաբար աճում է, և տարեցտարի հրեաները կապվում են հողի հետ։ Դեռ 200 հազար հրեաներ էլ ապրում են զանազան արհեստներով, վորոնք շատ չքավոր վիճակ են ապրում և հաճախ հազիվ են կարողանում իրենց ընտանիքի գոյությունը պահպանել։ Արհեստավորներն ու գյուղացիները միասին իրենց ընտանիքներով՝ մոտ 1.000 հազար հոգի չեն։

Ուրեմն պարզվում է, վոր 2.200 հազար հրեաները—աշխատավորներ են, այնպես, ինչպես մնացած ազգությունների աշխատավորները, և միայն մնացած չնչին մասը մանր առևտրականներ և նեպմաններ են։

Խորհրդային իշխանությունը հրեա նեպմանի հետ այնպես է վարվում, ինչպես բոլոր բուրժույների հետ։ Ընտրական իրավունքից զրկում է, յերկրի կառավարելու գործին թույլ չի տալիս և հարկերով էլ ճնշում է նրան։ Բայց հրեա բանվորին յեվ գյուղացուն Խորհ. իշխանությունը ներգրավում է յերկրի կառավարմանը այնպես, ինչպես՝ ռուս, ուկրայնացի և կամ բելոռուսական բանվորին կամ գյուղացուն։

Բայց խառնակիչ-փսփսողները սրանով էլ չեն բավականանում։ Նրանք նորից ճառում են թունավոր թուքը բերաններին.—

— «Իշխանությունը, — բայց ում ձեռքին է նա — ասում են նրանք,—հրեական է։ Ձեր կոմիսարներն ժվքեր են։ Հրեաները։ Կենտ-

գործկոմում ո՞վ է նստել։ Հրեաները։ Սովնարկոմում՝ ո՞վ։ Նորից հրեաները։ Իսկ բանակում հրեա չկա, ցերեկը ճրագով էլ ման գաս, չես գտնի»։

Տեսնենք ճի՞շտ է այս բանը։ ԽՍՀՄ կենտգործկոմի կազմում ահա ընտրված են 531 հոգի։ Այս թվում հրեաներն ընդամենը 31 հոգի յեն։ Ժողկոմների Խորհրդի կազմը բաղկացած է 15 հոգուց, վորոնցից միայն մեկն է հրեա։ Դե, լսեք ու այս բոլորից հետո դատեցեք, թե մեզ մոտ իշխանությունը հրեաների՞ ձեռքումն է, թե վոչ։

Իսկ ի՞նչպես է բանակի բանը։ Ահա տեսեք։ Ամբողջ ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր 1000 բնակչից 20 հոգին հրեա յեն, իսկ բանակում հազար բանակայիններից հրեա յեն 22-ը։ Նշանակում է, վոր բանակում հրեաների թիվը քիչ չէ յել նույնիսկ ավելի շատ է, քան պահանջվում է։

Ձե, այստեղ էլ սուտ են խոսում մեզ բամբասողները։ Ինչո՞ւ յեն սուտ խոսում, ի՞նչ են ձեռք բերում դրանով նրանք։ Փսփսողներն ո՞վքեր են։

Դրանք այն մարդիկն են, վորոնք դժգոհ են նոր կարգերից, ովքեր ուզում են դեպի հինը հետ դառնալ, ովքեր ուզում են կալվածատերերին նստեցնել հողի վրա յել գործարանները ֆաբրիկանտներին վերադարձնել։

Այժմ հետ դառնանք դեպի Բարշայի գործը։ Դատարանը պարզել է, վոր հալածողները—դրանք իսկական բանվորներ չեն։ Նրանցից մեկը կուլակային ընտանիքից է, գյուղից հենց նոր է յեկել, իսկ մյուսը կուլակների հետ սերտ կերպով կապված է յեղել։

Խորհ. իշխանության թշնամիներին միշտ ուղղակի կերպով գործել չի հաջողվում։ Գնա ու բանվորին՝ ասա, թե՛ «կորչի Խորհրդային իշխանությունը»։ Նա քեզ այնպիսի պատասխան կտա, վոր քո յեկած ճամբեն էլ կմոռանաս։

Յեվ ահա, մեր թշնամիները գործում են զարտուղի ճանապարհներով.—

«Արի, մի կռվի բռնեցնել տամ զանազան ազգի աշխատավորներին, գուցե թե նրանց միությունը թուլանա, և այդ դեպքում ինձ համար հեշտ կլինի հաղթել նրանց։ Յեկեք.—ասում են փսփսողները,—բանվորական և գյուղացիական շրջանում հրահրենք ատելությունը դեպի հրեաները. բանվորներն ու գյուղացիները կկուրանան սրանով, և նրանք կմոռանան սոցիալիստական շինարարությունը, այն խնդիրները, վորոնց լուծմանն է կոչում նրանց կոմկուսակցությունն ու Խորհուրդների իշխանությունը»։

Նշանակում է, որ անտիսեմիտիզմը և ընդհանրապես ազգայնականությունը ձեռնտու են միայն Խորհրդային իշխանության թշնամիներին, բանվորների և գյուղացիների թշնամիներին։

Յեվ ահա անգիտակից բանվորը կամ աշխատավոր գյուղացին, վորն ընկնում է նման խարդախ տրամադրությունների ազդեցության տակ, ամեն կերպ ատում է հրեաներին և ոգնության ձեռք է մեկնում իր թշնամիներին, խորհիշխանության թշնամիների գործունեությանը։

Ահա թե ինչու յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր յերիտասարդ բանվոր ու գյուղացի պետք է դատի այսպես.

—«Աշխատավոր հրեան, ինչպես և ամեն ազգի աշխատավորներն իմ բարեկամն են։ Յես նրանց հետ միասին կկառուցեմ սոցիալիզմը, նրանց հետ միասին յես կրծքով կպաշտպանեմ Խորհրդային իշխանությունը։ Իսկ հրեա բուրժույը, ինչպես և մնացած ազգերի բուրժույները, ինչպես և ռուս կամ հայ կապիտալիստն ու կուլակը—իմ դասակարգային թշնամիներն են, իսկ իմ պարտականությունն է նրանց դեմ պայքարել ամեն միջոցներով»։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞վ և ինչու համար է լարում մի ազգությունը մյուսի դեմ։
2. Վո՞ր թուրքը, հրեան և կամ վրացին մեզ բարեկամ են և վո՞րոնք—թշնամի։

ՄԵՐ ԹՇՆԱՄԻ—ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ մեծ յերկիր է։ Ճանապարհները մեզ մոտ այնքան էլ կարգին չեն, նրա առանձին մասերի միջև հաղորդակցությունը դեռես թույլ է։ Յեվ պատահում է, վոր յերբեմն կենտրոնում, մայրաքաղաքում հրատարակում են մի շատ լավ դեկրետ, ու թվում է, վոր դրանից շատ մեծ ոգուտ պետք է ստացվի։ Իսկ մինչև կհասնի եդ դեկրետը,—ասենք թե Թորոսի գյուղը, սատանան գիտի,—չես ճանաչի նրան։ Յեվ ոգուտի փոխարեն, չարիք է ստեղծվում։

Այս բանը լինում է այն պատճառով, վոր յերբեմն մեր սեփական հիմնարկները այնպես չեն աշխատում, ինչպես մենք ենք ցանկանում, այլ յերբեմն պատահում է՝ ի վնաս մեզ յեվ մեր դեմ են աշխատում։ Այս բանի մասին ամենից շատ մտածում էր Լենինը։ «Մեր մարդիկը,—ասում էր նա,—իշխանության գլուխն են անցել, նրանք ղեկավարում են մեքենան, բայց, ահ, մեքենան միշտ այնտեղ չի գնում, ուր վոր հարկն է։ Յերբեմն բոլորովին այլ կողմ է թեքվում»։

Դե, իհարկե, ձեզնից շատերին էլ վիճակվել է այդպիսի դեպքերի հանդիպել: Պատահում է, վոր դատվում են կուլակն ու չքավորը: Կուլակն ուզում է չքավորին նորից շահագործել: Պարզ է, վոր Խորհրդային իշխանությունը պաշտպանելու յե չքավորի շահերը: Իսկ յերբ սկսում են նրանք կողք-կողքի նստել ու դատվել, յերբեմն կուլակի ձանն առջեւ յե կանգնում: Նա գրագետ է, ամեն մուտք ու յելքի հետ ծանոթ, նա օգտվում է օրենքներով, իսկ չքավորն իր հինգ մատը հազիվ է ճանաչում:

Պատահում է, յերբեմն մի ճիշտ բանի համար բջիջն ու կոմյերիտականներից մեկը հարց են բարձրացնում, իսկ մինչև վոր պահանջված վորոշումը ձեռք բերեն, յերբեմն յերկար ժամանակ պետք է սպասել, և բավական շատ ուժեր վատնել: Քշում են մի հիմնարկից մյուսը, թուղթ-թղթի յետևից գրում, իսկ գործն առաջ չի գնում:

Մի այսպիսի դեպք է պատահել: Մի պառավ կին կենսաթոշակ է ուզում ստանալ: Յեվ ըստ օրենքի—կենսաթոշակ հասնում էր նրան: Պահանջված բոլոր թղթերն էլ նա ուներ, բայց նրան վիճակվում է յերկու տարի հիմնարկների դռները մաշել: Յեվ այդպես էլ կենսաթոշակը դեռ չստացած խեղճ կինը մեռնում է:

Ահա այս յերևույթը—յերբ կենդանի գործը փոխարինվում է թղթով: յերբ նրանք, վոր նստած են հիմնարկներում, չեն ուզում տեսնել մասսաների կարիքը, չեն ուզում լսել նրանց պահանջները, յերբ նրանք թղթի կույտերով բաժանված են իրական կյանքից, յերբ մեր իշխանության ապարատն աշխատում է վոչ աշխատավոր մասսաների համար,—հենց սա բյուրոկրատիզմ է կոչվում:

Մինչ հեղափոխությունը, ցարական իշխանության վողջ ապարատը բյուրոկրատական էր: Մասսաների կարիքներով նա ամենևին չէր հետաքրքրվում: Մենք փշրեցինք այդ ապարատը, ստեղծեցինք մերը, նորը, և նրա մեջ հիմնականը, իհարկե, այն չէ, ինչ վոր հնի մեջ:

Այնուամենայնիվ մեզ մոտ դեռ բյուրոկրատական շատ բաներ կան: Հաճախ, շատ հաճախ, չքավորն ու միջակը գանգատվում են մեր բացերի մասին: Ինչու յե այդպես լինում: Վորտեղից է Խորհրդային իշխանության օրգաններում այդ բյուրոկրատիզմը, վորը կառուցվում է այնպես, յերբ բանվորների և գյուղացիների ամենալայն մասսաներն են մասնակցում նրա մեջ:

Առաջին պատճառը,—դա մեր անկուլտուրականությունն է, կառուցել և տեր ու տնօրեն դառնալու անկարողությունը: Ապարատը քանի վոր շատ լինի կապված մասսաների հետ, Խորհուրդների մեջ բանվորներն ու աշխատավոր գյուղացիները վորքան շատ լինեն, այն-

քան ավելի քիչ կլինի այնտեղ բյուրոկրատիզմը։ Զի՞ որ լայն մասսաների պահանջները բանվորին ու գյուղացուն ավելի հարազատ են ու հասկանալի։ Բայց ահա մեր անկուլտուրականությունը, մանր արտադրողի ցրվածությունը, խանգարում են բանվորների յեվ գյուղացիների լայն շերտերը խորհուրդների աշխատանքների մեջ ներգրավելու։

Մյուս պատճառն այն է, վոր մեր հիմնարկներում դեռևս շատ հին մասնագետ չինովնիկներ կան։ Մեր մասնագետները քիչ եյին, չկար, հիմա յել նրանք քիչ են, ստիպված եղանք օգտագործել հներին։ Ցարական հիմնարկների կաբինետներից ուղղակի նրանք անցան աշխատելու խորհրդային հիմնարկները։ Յեվ իրենց հետ նրանք բերին աշխատանքի անցյալ սովորույթները։

Դեռ չինովնիկությունն ինչ է վոր։ Հենց ձեռնարկեցինք մենք մեր հիմնարկները դնելու գործին, տեսանք, վոր այնտեղ քիչ չեն նախկին կալվածատերերը, սպաներն ու նույնիսկ վոստիկանները, վորոնք պայքարում եյին Խորհրդային իշխանության դեմ։ Ել վո՞րտեղից կարող ենք մենք նման մարդկանցից սպասել, վոր մտահոգվեն նրանք բանվորների և գյուղացիների պահանջներով։

Նստել են նրանք և խորհրդային օրենքները պետք կիրառեն կյանքում։ Իսկ այդ օրենքները նրանք հասկանում են,—հին առածի նման,—«սելը ուր վոր քշես, են կողմն էլ կերթա», և ահա նրանք մեր օրենքների սայլակը յերբեմն թարս կողմն են քշում, այսինքն ուղղում են նրան հաճախ բանվորի դեմ և հօգուտ կուլակի՝ չքավորի դեմ։

Իսկ բյուրոկրատիզմը մեզ համար վտանգավոր է հենց նրանով, վոր նա անջատում է Խորհրդային իշխանությունից մարդկանց այն մասսային, վորի վրա վերջինս պետք է հենվի։ Յերևակայեցեք մի գյուղացու, վոր մի չնչին բանի համար յերկար ժամանակ խորհրդային հիմնարկների դռներն է մաշել։ Ի՞նչ է մտածում նա։ Դե, մտածում է նա այսպես.—«Ել վո՞րտեղից է սա իմ իշխանությունը։ Չե, սա իմը չե, սա չինովնիկական իշխանություն է. էլ ինչի՞ պիտի յես նրա մասին մտածեմ վոր, թքել եմ նրա վրա»։ Ահա այս պատճառով էլ համբերությամբ և համառ կերպով և միշտ պետք է պայքարել բյուրոկրատիզմի դեմ։

Իսկ ի՞նչպես անել այդ։ Ամենից առաջ պետք է խորհուրդները աշխուժացնել, լայն չափերով նրանց աշխատանքի մեջ ներգրավել աշխատավորներին, կապել խորհուրդներն ազգաբնակչության մասսաների հետ։ Վատ է այն խորհուրդը, վորը փակվել է իր սենյակներում, իր ընտրողների ձայնը չի լսում և միայն չինովնիկական ձևով կառավարում է։ Յեթե խորհրդի սեկցիաներն աշխատեն աշխույժ կերպով, յե-

թե նրանք ուշադրությամբ հետևեն ամեն բանի, ինչ վոր կատարվում և նրանց շրջանում, բյուրոկրատիզմի արմատանալու համար շատ քիչ հնարավորություններ կլինեն։

Միքանի տարի յե, ինչ հայտարարված ե խորհուրդների աշխուժացման լոզունգը։ Պետք ե ուղղակի ասել.—շատ բան ենք ձեռք բերել մենք այդ ասպարեզում։ Վերընտրական կամպանիաներն սկսել են անցնել ավելի աշխուժորեն։ Ընտրական ժողովներին ավելի ու ավելի մեծ քանակությամբ մարդիկ են հաճախում, և խորհուրդներն ել ավելի գործունյա յեն դարձել, ավելի մեծ չափերով կապվել մասսաների հետ։

Բայց այդ դեռ բավական չե։ Դեռ շատ գյուղխորհուրդներ և շրջգործկոմներ կան, վորոնք դեռևս հին ձևով են աշխատում՝ նայում են թղթերին, իսկ մարդկանց չեն տեսնում։ Յեվ յուրաքանչյուր կոմյերիտականի խնդիրն այն ե, վորպեսզի այդ խորհուրդներն աշխուժացնի, կազմակերպի նրանց սեկցիաների աշխատանքը, այդ աշխատանքի մեջ ներգրավի աշխատավորությանը։

Պետք ե լայն ծավալել ինքնաքննադատությունը. յերբ մեր հիմնարկների բոլոր բացերի մասին բանվորը կամ գյուղացին կարող ե և պետք ե բարձրաձայն և ի լուր ամենքի հայտարարի։ Հիմնարկներում պետք ե առաջ քաշել նոր մարդկանց՝ բանվորներին և գյուղացիներին, վորոնք սերտ կերպով կապված են մասսաների հետ։ Իսկ ամենից առաջ խորհրդի անդամ կոմյերիտականներին պետք ե ստիպել աշխատելու ակտիվ կերպով։ Ընտրել ենք քեզ, դե, դու յել հոգա այն մասին, վորպեսզի խորհուրդը չմոռանա աշխատավորության կարիքները, այլ հիշի նրանց մշտապես, այլապես քեզ զուր տեղն ենք ընտրել։ Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու հուսալից միջոցն ե. բանվորներին, բատրակներին, չքավոր և միջակ գյուղացիներից այնպիսիներին,—վորոնք կարող են պայքարել սոցիալիստական շինարարության համար,—առաջ քաշել խորհրդային հիմնարկներում աշխատելու։ Յեվ պետք ե վոր առաջքաշվածները լինեն ամենից ակտիվը և ամենից գործունյա աշխատողները, ավելի նվիրված մարտիկներ՝ բյուրոկրատիզմի դեմ. և պետք ե ել, վորպեսզի առաջքաշվածին ոգնել, ուշադիր լինել դեպի նա, ոժանդակություն ցույց տալ նրան բյուրոկրատական խոցերի դեմ պայքարելու գործում։ Պետք ե խնդիր առաջադրել, խորհուրդների մեջ վճռական կերպով առաջ քաշելու կանանց ու աղջիկներին, վորոնք դեռևս շատ չնչին մասնակցություն են ցույց տալիս խորհրդային աշխատանքներում։

Մեր մյուս խնդիրը—բյուրոկրատին յերևան հանելն ե։ Պետք ե բռնել նրա ականջից ու մեյդան բերել, վորպեսզի հնար լինի նրան

խորհրդային հիմնարկներից դուրս շպրտելու։ Սա մի դժվարին գործ է, վորովհետև յերբեմն բյուրոկրատն սկսում է հալածել նրան, ով մերկացրել է իր արարքները։ Բայց վախկոտություն կլինի,—այս բանի համար,—գործը մինչև վերջ չհասցնելը։ Պետք է գործել ամբողջ բջիջով միասին, բյուրոկրատների հարցը գաղեթ գցել, խոսել ժողովներում և նրանց մասին գրել Բանվորա-Գյուղացիական Տեսչությանը։ Բյուրոկրատն ամբողջ բջիջի դեմ դժվար թե կարողանա լավ կռվել։

Այս խնդիրների կատարման գործը հեշտացնելու համար, մի շարք բջիջներ իրենց կից «Թեթև հեծելազորային» խմբակներ են կազմակերպել։ Այսպես յեն կոչվում կոմյերիտական այն խմբակները, վորոնք վորոշել են անընդհատ պայքարել բյուրոկրատիզմի դեմ։ Նրանք առանձին և վոչ մի իրավունք չունեն, բայց նրանք կարող են շատ գրել, լսել, հայտնել ԲԳՏ և այս ձևով ոգնել բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարին։

«Թեթև հեծելազորից» մեկն ու մեկը կոոպերատիվ խանութն է մտնում։ Յեկել է նա վոչ թե քննիչի, հրահանգչի իրավունքներով, այլ պարզապես՝ վորպես սովորական գնորդ։ Բայց, գնելիս նա նայում է, թե արդյոք ուշադի՞ր են գործակատարները դեպի գնորդները, չափի կամ կշեռքի մեջ չեն խաբում և այլն։ Յեվ նկատելով թերությունները, կամ պատմում է այս բոլորը կոոպերատիվի վարչությանը և կամ,—յեթե այս բանն էլ չի ոգնում,—բողոքում է Բանգյուղտեսչությանը։

«Թեթև հեծելազորայիններից» մեկը գավհողբաժին է մտնում։ Այստեղ էլ նա սովորական հաճախորդ է, բայց միաժամանակ նա նայում է, լսում ամեն բան, թե արդյոք այստեղ չքավորներին չե՞ն վիրավորում, իմիջի այլոց չե՞ն նայում նրանց վրա, արդյոք ուշադի՞ր են դեպի նրանք։

Յեվ «Թեթև Հեծելազորն» ամենուրեք մտածում է այն մասին, վորպեսզի բյուրոկրատիզմն ու քաշքշուկը հեռանան խորհրդային իշխանության հիմնարկները։ Քաղաքներում «Թեթև Հեծելազորի» ջոկատները վաղուց ի վեր գոյություն ունեն և բավական աշխատանք են տարել զանազան խայտառակություններ վերացնելու ուղղությամբ։ Իսկ գյուղերում այս գործը հենց նոր է սկսվում յեվ ժամանակն է, վորպեսզի յուրաքանչյուր գյուղ-բջիջ մտածի «Թեթև Հեծելազոր» կազմակերպելու մասին։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչու խորհրդային հիմնարկներում բյուրոկրատներ կան։
2. Ի՞նչ միջոցներով կարելի է պայքարել բյուրոկրատիզմի դեմ։
3. Մեր գյուղում ի՞նչ կարող է անել «Թեթև Հեծելազորը» և ի՞նչպես կազմակերպել նրան։

Բյուրոկրատիզմը մեզ համար ավելի վտանգավոր է այն պատճառով, վոր ձեռնտու չե մեր թշնամուն՝ քաղաքի նեպմանի և գյուղի կուլակի համար։ Նրանք էլ հո քնած չեն։ Նրանց ցնորքն է բոլորովին կործանել Խորհրդային իշխանությունը։ Բայց չհուսալով սպասելով այդ բանին և՛ նեպմանը և՛ կուլակը փնտրում են մեր թույլ կողմերը, մեր հիվանդությունները ու խոցերը, վորպեսզի օգտագործեն այդ բոլորն իրենց դիրքերն ամրացնելու և դեպի Խորհրդային իշխանությունը տածած վստահությունը խորտակելու համար։ «Իհարկե, — մտածում է յուրաքանչյուր կուլակ, — լավ կլինի, յեթե Խորհրդային իշխանությունը բոլորովին տապալենք և նստեցնենք մեր կուլակական իշխանությունը, վորպեսզի հնարավորություն ստեղծվի թե բատրակին, թե չքավորին վոչխարի հոտի պես քշել, ուր մեր քեֆն ուզի են, մինչև վոր չոր առուն ջուր գա, գորտի աչքն էլ հո դուրս կուգա։ Յեվ ով գիտի, գուցե թե այս Խորհրդային իշխանությունը հավիտյանս հավիտենից պիտի նստի մեր գլխին։ Եկեք յես մի փորձեմ, այդ իշխանությունն ինձ հարմարեցնել»։

Յեվ կուլակը փորձում է։ Առանձնապես յեռանդ է գործադրում նա խորհուրդների ընտրությունների կամպանիայի ժամանակ՝ իշխանությունն իր ձեռքն առնելու։

Մեր վողջ աշխատանքի համար խորհուրդների յուրաքանչյուր վերընտրական կամպանիա խոշոր նշանակություն ունի։ «Ընտրությունները մեզնում, — ասել է Միխայիլ Իվանովիչ Կալինինը, — դա մի խոշորագույն քաղաքական դպրոց է, վորը բացառիկ նշանակություն ունի։ Ընտրությունների միջոցով մենք աշխատում ենք ակտիվ շինարարական աշխատանքների ներգրավել վոչ միայն բանվորներին, այլև հսկայական բազմամիլիոն գյուղացիական մասսաներին։ Աշխարհիս յերեսին և վոչ մի կառավարություն մասսաների մեջ այդպես խորացված ու լայնածավալ աշխատանք չի կազմակերպում։ Իսկ մեր կառավարությունը մասսաների ծոցից է դուրս յեկել, մենք մասսաների վրա յենք հենվում, մեր ուժը մասսաների մեջ է, և վորքան այդ մասսաները քաղաքականապես գիտակից են, վորքան բարձր է նրանց կուլտուրական մակարդակը, այնքան ամուր է Խորհրդային իշխանությունը։ Բայց մենք մասսաների վրա վոչ միայն հենվում ենք, այլ շարժում ենք առաջ նրանց, հրհրում ենք, և մենք էլ ստանում ենք ուժ, կարողություն, սնունդ։ Վերընտրական կամպանիան ահա հանդիսանում է այն լայնածավալ հսկայական ասպարեզը, վորտեղ կոչվում են մասսաները»։

Բայց կուլակն էլ այդ ժամանակ հավաքում է իր ուժերը։

Նա ուզում է խորհուրդների մեջ իր մարդիկն ունենալ, վորոնք սարի պես կանգնեն իր թիկունքում։ Հազար ու մի խորամանկության է դիմում կուլակը, իր այդ նպատակին հասնելու։ *Օրինակները շատ ու շատ են, բերենք նրանցից մի քանիսը թե Հայաստանի իրականությունից և թե ՌՍՖՍՀ-ից, ցույց տալու համար թե ինչպիսի խարդախ միջոցների չեն դիմում նրանք։*

Կուլակները չքավորի բարեկամ.—*«Դիլիջանի գավառի գյուղերից մեկում հասարակական ժողովում կուլակը դուրս է գալիս չքավորության շահերի պաշտպան ու հայտարարում է.—«Դուք շարունակ ճառում եք չքավորին նյութական օգնության մասին. բա ինչու մեր վորբերին ու բատրակներին չեք հավաքում տանում մի գործարանում տեղավորում և այդ ձևով նրանց շահերը պաշտպանում»։ Ընտրությունների նախօրյակին Յերևանի գավառի Ղամարլուի շրջանում կուլակներից մեկը, արձակելով իր բատրակին, ասում է. «Տեսնում ես, քեզ հոր պես եմ պահում, բայց* ձեր կառավարությունը *չի ուզում, ասում է դուրս արա»։ Մի քանի գյուղերում կուլակները չքավորներին ցորեն են տալիս (Վարանցովկա, Լոռու-Փամբակի գավառ)։*

Նման դեպքեր կատարվում են նաև ուրիշ հանրապետություններում, օրինակ, ՌՍՖՍՀ-ում, Կրասնոյարսկի օկրուգի մի քանի շրջաններում ընտրությունների նախօրյակին կուլակներն սկսում են ձրիաբար կալսել չքավորների կալը։ Յեվ ինչքան բարի չեն դարձել, վոր փող էլ չեն վերցնում։ Նույն օկրուգի Բալախանի շրջանում կուլակ Լոպատինը կարմիր օբոզ էր կազմակերպել և հացի կոլեկտիվ հանձնման գլուխն անցել, նվիրելով Մոպրին, Պաջը ավյաքիմին չնչին գումարներ։

Յեվ այն, ինչ անում է ՌՍՖՍՀ Կրասնոյարսկ օկրուգի կուլակ Լոպատինը, մոտավորապես նման մի քայլի յել դիմում է նրա հայաստանցի ցեղբայրը.—Լենինականի գավառի I գավառակի Բյափոնակ գյուղի կուլակ Գեորգը գյուղի խրճիթ-ընթերցարանին է նվիրում Լենինի մեծադիր նկարը։

Նույնպիսի օրինակներ կարելի է բերել նաև Ադրբեջանի ու Վրաստանի գյուղերից։ Բայց ինչումն է բանը, ինչու չեն կուլակները չքավորի այդքան սրտացավ բարեկամը ձևանում և ինչ են ուզում։ Նրանք մտածում են այսպես. «Դե, խորհուրդների ընտրությունները մոտեցել են, մեր բանը բուրդ է. մենք պետք է աշխատենք ցույց տալ, վոր Խորհրդային իշխանությանը բարեկամ ենք, չքավորին էլ օգնում ենք», դե, սրանք էլ խորհրդում կմտածեն և մեր օգտին ձայն կտան»։

Կուլակը դասակարգային շերտավորման դեմ.—Յերբ խորհուրդների ընտրությունները մոտենում են, կուլակներն ամեն կերպ աշխատում են մթագնել դասակարգային պայքարը, ցույց տալ, որ բոլոր մարդիկ և բոլոր գյուղացիները եղբայրներ են ու միմյանց հավասար:

Փամբակ-Լոռու գավառի Կուրթան գյուղում տերտերների նախաձեռնությամբ,—ընտրությունների նախապատրաստական շրջանում,—մի ժողով է գումարվում, որի օրակարգի խնդիրը լինում է «գյուղացիական միության» հարցը: Ժողովին ներկա չեն լինում մոտ 200 հոգի: Այստեղ տերտերները ելույթ են ունենում և հայտարարում հետևյալը.—«Յեթե մեր գյուղը համերաշխ լինի, մենք կհրաժարվենք տերտերությունից, միրուքներս կխուզենք և ձեզ հետ միասին կաշխատենք»: Այդ ժողովում կուլակներից մեկը չքավորությանը համոզելու համար նվիրում է 8 ռուբլի, և այդ գումարով կաղին ու չամիչ են գնում, բաժանում ժողովականներին:

Այսպես է գործում կուլակն ընտրությունների նախօրյակին: Նա ինքը հրապարակ չի գալիս, բայց առանձին անգիտակից չքավորներին ու միջակներին առնում է իր ազդեցության տակ և հրահանգներ տալիս նրանց ժողովներում խոսելու: Յեվ քիչ չեն դեպքերը, երբ նման չքավորն ու միջակը դուրս են գալիս շերտավորման դեմ ու հայտարարում. «Ասացեք, ուր է թե մեր գյուղում կուլակ կա: Ցույց տվեք, տեսնեմ»: Կամ.—«Ունևորներն ամենից շատ են տուրք տալիս, պետությունը նրանք են պահում. դե, էլ ինչպես կարելի չէ նրանց ձայնից զրկել»: Մի ուրիշ տեղ միջակն ասում է. «Ինչու չեն մեզ բաժանում: Մենք բոլորս էլ մեկ ենք. պետությունը մենք միջակներս ու հարուստներն ենք պահում, և ոչ թե՝ չքավորները»:

Անցյալ տարվա խորհուրդների ընտրությունների ժամանակ կուլակների ազդեցության տակ ընկած մի շարք չքավորներ ու միջակներ նման քայլի դիմեցին:

Բարանայի շրջանի գյուղերից մեկում չքավորը հայտարարել է. «Կուլակը վճարում է հարկի մեծ մասը, և այդ պատճառով էլ մենք ազատվում ենք հարկից, յեթե մենք նրան ընտրական իրավունքից զրկենք, նա մեզ թշնամի կդառնա»:

Կուլակը կազմակերպվում է ընտրություններին.—Շատ ու շատ վայրերում կուլակը կազմակերպվում է ընտրություններին: Ախտայի շրջանի գյուղերից մեկում կուլակները հրավիրում են ժողով, լսում են ինֆորմացիա խորհուրդների վերընտրության և Ն.-Բայազետի գավգործկոմի փոխ-նախագահի սպանության մասին և վորոշում են շարունակել իրենց պայքարը գյուղ-ընտրական հանձնաժողովի և

կուսբջիջի դեմ և ամեն կերպ աշխատել խորհրդում իրենց մարդկանցն անցկացնելու։ Լենինականի գավառի II և VII գավառամասերի Նորաշենիկ, Արախվալի և Գյուղալդարա գյուղերում կազմակերպվել էին կուլակային հատուկ խմբակներ, վորոնք ամեն կերպ աշխատում էին իրենց կողմը գրավել չքավորությանը։

Ահա նույնպիսի մի օրինակ ՌՍՖՍ Հանրապետությունից։

Գոլոմնչչինսկի ռայոնի Կոլմոգորովո գյուղում կուլակներն սաեղծել էին «խորհուրդների վերընտրական» իրենց հանձնաժողովը։ Հանձնաժողովը կուլակների ժողովներ եր գումարում և նախապատրաստվում ընտրություններին։ Կուլակներն այդ հանձնաժողովում քննության են առել տեղական կուսբջիջի դեմ կռվելու միջոցները։

Կուլակների ազդեցության տակ.—*Ահա այս ձևով են աշխատում կուլակներն իրենց ազդեցության տակ առնել չքավորությանը և միջակներին՝ դասակարգային պայքարը բթացնելու համար։ Այդ ազդեցություններն չերևան են գալիս վոչ միայն անհատների կողմից, այլ և անցնում են վորոշ կազմակերպությունների վրա և հարվածում մեր դասակարգային քաղաքականությանը։*

Ընտրությունների ժամանակ անցյալ տարի վորոշ տեղերում առանձին ընտրական հանձնաժողովների մեջ սողոսկել էին բավական թվով կուլակներ և նրանց կողմնակիցները, և խեղաթյուրում էին մեր քաղաքականությունը։ Այդ բանն աչքի յեր ընկնում Մեղրի շրջանի Կալեր գյուղում, վորտեղ ընտրական հանձնաժողովն այն տեսակետին եր կանգնած, վոր իբր թե իրենց գյուղում կուլակ չկա։ Յերևանի գավառի Նոր-Արեսիկ գյուղում գյուղխորհրդի նախագահն ընկել եր կուլակների ազդեցության տակ և պաշտպանում եր կուլակների շահերը։ Կուլակների ազդեցության տակ ընկնելու շատ տիպիկ երևույթ կարող է համարվել Լենինականի գավառի Դաշքերտ գյուղի խորհրդի և վերընտրական հանձնաժողովի նախագահի հայտարարությունը, թե՝.—

«Յես գավառական գործկոմի ցուցմունքների հետ համաձայն չեմ, վոր պետք է ինչ վոր դասակարգային գիծ անցկացնել։ Յես թույլ չեմ տա, վոր մեր գյուղի բնակիչներից վորև է մեկը վերավորվի գյուղվերընտրական հանձնաժողովից կամ ինձնից։ Ինձ համար մեկ են բոլորը, և՛ կուլակները, և բատրակները, և՛ միջակները, և չքավորները։ Նրանք հավասարապես պետք է մասնակցեն խորհուրդների վերընտրություններին»։

Շատ տեղերում նման տեսակետներ արծարծելով, ընտրական

հանձնաժողովները չեյին զրկում կուլակներին, վորից և առաջանում էր դժգոհություն չքավորության մեջ։ Այսպես և յեղել Աղին գյուղում (Լենինականի գավառ)։ Մի քանի տեղ ընտրական հանձնաժողովները կուլակների ձեռքն են անցել ամբողջությամբ։ Լենինականի գավառի Բյալալի գյուղի վերընտրական հանձնաժողովը, վորի անդամներից մի քանիսն առևտրականներ են յեղել և իրենք յենթակա ձայնազրկման։ Նույն գավառի 7-րդ գավառամասի Ջարջարիսի ընտրական հանձնաժողովի կազմը բաղկացած է յեղել 7 հոգուց, վորոնց թվում և վոչ մի չքավոր բատրակ չի յեղել։

Այդ յերևույթների դեմ կռվելու համար կենտրոնական վերընտրական հանձնաժողովի կողմից հրահանգ է տրվել տեղերին՝ վերանայել գյուղընտրական հանձնաժողովի կազմը։

Ահա և մի քանի որինակներ ՌՍՖԽՀ-ից։ Տոցկի ռայոնի Վորոբյեվկոյե գյուղխորհուրդը վերականգնել է ընտրական իրավունքից զրկված 32 հոգու ձայն, իսկ չքավորների դիմումն այդ բանի դեմ քննության էլ չի առել։ Նրա հարևան Սոսնովոլոնեցկի գյուղընտրական հանձնաժողովը հասարակական աշխատանք տանող գյուղացուն ձայնից զրկել է, իսկ կուլակներին ու նախկին ոֆիցերներին վերականգնել։

Յեվ քիչ չեն եղել ու հիմա էլ քիչ չեն գյուղխորհուրդներում այն անդամներն ու նախագահները, վորոնք կուլակների պարկապըզուկի յեղանակով են պարում։

Պայքարի մարտական ձեվերը.— Յերբ այս միջոցներն էլ չեն ոգնում, կուլակներն հաճախ կանգ չեն առնում ամենածայրահեղ միջոցների՝ սպանության և տեռորի առաջ։

Յերևանի գավառի Թեղխարարա գյուղում չքավորները վախենում են կուլակներից, և վերընտրական հանձնաժողովը նրանց ընտրական իրավունքներից չի զրկել։ Գյուղ-վերընտրական հանձնաժողովի անդամը հայտարարել է.— «Կուլակներն այստեղ շատ ուժեղ են, նրանք հարձակվում են ընտրական հանձնաժողովների անդամների վրա, ծեծում։

Բացարձակ տեռորի դեպքերն էլ քիչ չեն, վորոնք տեղի յեն ունեցել Վորանցովկայի շրջանում և Նոր-Բայազետի գավառում։

Ահա և որինակ ՌՍՖԽՀ-ից։ Ամբետել-Մախի գյուղում կուլակներն սպանել են հանձնաժողովի անդամ կոմյերիտական Սուգայեվին, վորն իր շուրջն էր համախմբել չքավորությանը։ Մարտովսկոյե գյուղում ընտրությունների ժամանակ ծանր վիրավորվել է կոմյերիտական Ստեփան Բոնդուրովը, վորը տեղական կուլակների արարքները մերկացրել էր «Սովետսկի Պախար» թերթում։

Ելի շատ ու շատ դեպքեր կարելի յե բերել, յերբ կուլակը կանգ չի առնում և վոչ մի բանի առաջ՝ միայն թե խորհրդում իր մարդկանց անցկացնի։

Ահա թե ինչու յուրաքանչյուր կոմունիստ և կոմյերիտական պետք ե հետևի, վորպեսզի կուլակները խորհուրդի մեջ չանցնեն, մտահոգված լինի նրանով, վորպեսզի խորհուրդներում ընտրվեն չքավորները, բատրակներն ու միջակները։ Ընտրությունների ժամանակ կրծքով պետք ե պաշտպանել խորհուրդները կուլակների սողոսկումներից։

Կուլակը կփորձի պաշտպանվել իր դեմ սկսած մեր հարձակումից։ Ի պատասխան դրան պետք ե լայն չափերով և լրիվ կերպով խորհուրդների աշխատանքների մեջ ներգրավել բատրակությանը և չքավորներին, ամրապնդել միջակի դաշինքը պրոլետարիատի հետ և ծավալել լայն, յեռանդուն և նոր հարձակում կուլակի դեմ։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. *Ինչո՞ւ կուլակները ձգտում են խորհրդի մեջ անցնել։*
2. *Ձեր գյուղում ի՞նչպես կռվեցիք կուլակների դեմ խորհուրդների վերջին ընտրությունների ժամանակ։*

ՏԱՍՄԵԿԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Ե

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Ե

Բանվորները բոլորն ել մեկ չեն։ Կան հեղափոխական բանվորներ, և բանվորներ—վորոնք սակավ ընդունակ են պայքարելու։ Այդպես եր քաղաքացիական կռիվների ժամանակ.—բանվորների մեծամասնությունը կատաղի կերպով կռվում եր Խորհրդային իշխանության թշնամիների դեմ, բայց կային այնպիսիները, վորոնք քմծիծաղ եյին տալիս, խուսափում և չեյին հավատում մեր հաղթանակին։ Յեվ բանն այստեղ, ինարկե, առանձին մարդկանց բնավորությունը չի, բանն այն չե, վոր ասենք, թե Կիրակոսը շատ քաջ մարդ ե, իսկ Մարկոսը՝ մի վողորմելի վախկոտ։

Համեմատենք այժմ Պուտիլովի գործարանի (խոշոր մեքենագործական գործարան է Լենինգրադում) բանվորին տեքստիլ գործարաններից մեկի, թեկուզ հենց Լենինականի տեքստիլ գործարանի բանվորներից մեկի հետ։ Առաջինը մանուկ հասակից յեղել է գործարանում, նա իր ամբողջ կյանքում աշխատել է խազեյինի համար, և վոչ միայն նա, այլև նրա հայրը, և նույնիսկ նրա պապը։ Պուտիլովյան այդ բանվորը սեփականություն ըսկի չի ունեցել։ Նա վոչ մի տնտեսություն չի ունեցել։

Իսկ հիմա նայեցեք Լենինականի տեքստիլ բանվորին։ Նա հենց նոր է յեկել գյուղից կամ մանկատնից։ Մանկատնից յեկածը իր հետ բերել է վորոշ չափով «վորբական» հոգեբանություն, նա նոր է ընկել արդյունաբերության մեջ, այն նրա համար բոլորովին նոր աշխարհ է, և նա դեռևս չի դաստիարակվել, չի կոփվել պրոլետարական հոգեբանությամբ։ Իսկ գյուղից յեկածը—այնտեղ՝ գյուղում տնտեսություն ունի, խրճիթ, հող։ Նրա կինը, հայրը կամ ընտանիքի անդամներից մեկը այդ հողը կապալով է տալիս, կամ ինքն է մշակում։ Դե եկ ու զի-չուզի, հողը, տունը, քաշում են սրան։ Յերբեմն փող է հավաքում, ուղարկում գյուղ ու մտածում է.—«Գուցե թե տնտեսությունս բարձրացնեմ, նորից գյուղ գնամ»։ Պատահում են բանվորներ էլ, վորոնք թեև գյուղից կտրվել են ընդմիշտ, բայց էլի դատում են նույն ձևով։

Նման բանվորի հայացքին ասում և շատ ճիշտ են ասում, վոր նա յերկու «հոգի» ունի.—մեկը—գյուղացիականը ձգում է նրան դեպի հողը, դեպի իր սեփական անկյունը, տնտեսությունը, իսկ յերկրորդը—բանվորականը ձգում է նրան ավելի պինդ կերպով ձուլվել իր բանվորական մասսայի հետ։

Կամ համեմատեցեք մի վորևէ խոշոր հսկայական գործարանի,—վորտեղ մինչև տաս հազար բանվորներ են աշխատում,—բանվորին, թեթև փոքրիկ տնայնագործական-ձեռնարկի,—վորտեղ ընդամենը մեկ կամ յերկու տասնյակ բանվորներ կան,—բանվորի հետ։ Առաջինը սովորել է աշխատել խմբված, խոշոր մասսայով, և կամ, ինչպես հիմա յեն ասում, կոլեկտիվ կերպով և համերաշխ, վորպեսզի մեկը բոլորի հետ միասին ապրեն, աշխատեն և պայքարեն իրենց վիճակի բարելավման համար։ Այս բանին սովորեցրել է նրանց միասին ընթացող աշխատանքը՝ մեքենան համաձայնեցրած գործողություններ է պահանջում։ Իսկ փոքրիկ գործարանի բանվորը սովոր է այլ բանի։ Նրա գործարանը հազիվ հազ քաշ է տալիս իր գոյությունը, նրան մեկ էլ տեսար խոշոր գործարանները կուլ տվին։ Այս գործարանում խոշոր մասսա չկա, այստեղ բանվորն արդեն բոլորովին ուրիշ մարդ է, իսկ խոշոր գործարանում—ուրիշ։

Տարբերությունը խոշոր է նաև հին արմատական բանվորների և մարդկանց այն նոր մասսայի միջև, վորոնք նոր են ընկել գործարան։ Մի գրող, վոր ինքը նախկին բանվոր է, այսպես է նկարագրում Լենինգրադի խոշոր գործարաններից մեկի բանվորներին.

«Նայում ես բանվորների յերեսին, աչքերին, շարժումներին և խելուցն սկսում ես հասկանալ.—այո, սրանք նոր բանվորներ են։ Սրանք նրանք չեն, վորոնք այն ժամանակ կային։ Շատերի դեմքը չգիտես թե ինչու, ճերմակ է, քայլերը ծույլ, շարժվածքը՝ դանդաղ։ Գործարան են գնում նրանք դանդաղ, թափթփված ու ցրիվ։ Այո, սրանք նոր բանվորներ են։ Նախկիններն այդպես չեյին քայլում։ Հին բանվորներն ավելի թուխ եյին։ Նրանց շարժումները յեռանդուն եյին։ Նրանք ավելի կարգին եյին հագնվում և վոտնամաններն էլ վաքսով մաքրած էր փայլում.—իսկ սրանց կոշիկները փոշոտ են, կեղտոտ»։ Այսպիսի բանվորը թափթփված է քայլում։ Գործարանն այնքան էլ չի սիրում, սերտ կերպով նրա հետ կապված չի, ծուլանում է, գլուխ է պահում։ Ահա թե ինչու այնտեղ, ուր գործարանում մեծ քանակությամբ նոր բանվորներ են յեկել, թուլացել է աշխատանքային դիսցիպլինան։

Իսկ սրանից հետեվում է այն, վոր բանվոր դասակարգն իր գիտակցությամբ, հեղափոխականությամբ յեվ քաղաքական պատրաստականությամբ միատարր չի յեղել, չե, յեվ յերկար ժամանակ էլ միատարր չի լինելու։ Նրա մեջ կան և շատ հեղափոխական խմբեր, ինչպես և՝ ավելի հետամնացներ։ Բանվորներից վոմանք պարզ տեսնում են, թե ինչպես պետք է պայքարեն իրենց իշխանության, նրա ամրապնդման, սոցիալիզմի կառուցման համար, բայց պատահում են և այնպիսինները, վորոնք ձգտում են այլ բանի, ընդհանուր շահերի մասին շատ քիչ են մտածում, իսկ ավելի շատ՝ իրենց մասին։ Որինակ բերելու համար շատ էլ դես ու դեն ընկնել պետք չե։ Զանազան բանվորներ ինչպես ըմբռնեցին հեղափոխությունը։ Զանազան տեսակ։ Չե՞ վոր կային այնպիսինները, վորոնք այսպես եյին դատում.—«Յեթե մեր՝ բանվորական իշխանությունն է, նշանակում է շատ հավելացում տուր, շուտ արա, ինձ այս տուր կամ այն տուր, վորպեսզի յես աղայի պես ապրեմ։ Էլ ուրիշ և վոչ մի բանի մասին լսել յես չեմ ուզում. իմ իշխանությունն է, կյանքս էլ պետք է մեղրի պես քաղցր անցնի»։ Այսպիսի բանվորը չեր ուզում լսել այն մասին, վոր տերը պետք է մտածի իր տնտեսության զարգացման մասին։ Նա չի յել ուզում հասկանալ, վոր աշխատավարձի բարձրացման անհրաժեշտությունը կապված է աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ։ Այս բանվորը վաղ-

վա որվա մասին մտածել չգիտի և միայն այսօրվա մասին է մտածում։ Բանվոր դասակարգի շահերն ամբողջությամբ վերցնել, վերցնել յերկրի շահերն ամբողջությամբ, նա չգիտի։ Նա թքել է այդ բոլորի յել վրան։

Բանվոր դասակարգն այդպես դատել չի կարող։ Նա պետք է տեր ու տնօրենի պես մտածի, մտածի այն մասին, վոր նա սոցիալիզմ է կառուցում գյուղացիական լայն մասսայի հետ, նա պետք է մտածի վոչ միայն իր վիճակի, այլև այն մասին, վորպեսզի գյուղացիությունը մասնակցի սոցիալիստական շինարարությանը։ Բանվորը պետք է ոգնի գյուղացիությանը—գյուղատնտեսությունը վերակազմելու, կոլեկտիվացման յենթարկելու։ Նա պետք է մտածի վոչ թե իր այսօրվա մի կտոր հացի մասին միայն, այլև իր յերկրի ապագայի մասին։ Նա պետք է մտածի այն մասին, վորպեսզի տնտեսությունը չուտվի, կուլ չգնա, այլ ամրապնդվի ու զարգանա։ Նա պետք է մտածի և այն մասին, վոր ԽՍՀՄ սահմաններից դուրս՝ բանվորները դեռևս չեն ազատվել բուրժուական լծից, նրա ճնշումից։ Եվ նրա՝ Խորհրդային յերկրի բանվորի պարտականությունն է մտածել միշտ ամբողջ աշխարհի բանվորության հաղթանակի մասին։

Իհարկե, հետամնաց բանվորների հանցանքն այն չէ, վոր նրանք դեռևս պարզ կերպով չեն պատկերացնում այն ուղիները, վորոնցով պետք է առաջ ընթանա բանվոր դասակարգը։ Միթե հանցավոր են նրանք այն բանում, վոր աճել և ապրել են այնպիսի պայմաններում, վորոնք նրանցից կախված չեն յեղել։ Վոչ, սա նրանց հանցանքը չէ, այլ՝ դժբախտությունը։ Այնուամենայնիվ, յեթե նրանց այս բանի համար մեղավոր էլ չհամարենք, չենք էլ կարող Խորհուրդների յերկրի,—կամ յեթե ապրեյինք մինչ հեղափոխությունը,—աշխատավորության պայքարի ղեկավարությունը տալ այդ հետամնաց բանվորների ձեռքը։ Անհնարին է, վոր հետամնաց բանվորները ճամբա ցույց տան վողջ բանվոր դասակարգին։ Այդ բանը պետք է անի նրա գիտակից մասը։

Ահա թե ինչու, վորպեսզի բանվորներին տանել իր հետևից, պայքարել ցարի, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ, վորպեսզի հաղթությունից հետո յել ղեկավարել սոցիալիստական շինարարությունը, ավելի գիտակից ու առաջավոր բանվորները,—բանվոր դասակարգի ավանգարդը, համախմբվում է իր կոմունիստական կուսակցության մեջ։

Յեթե բանվոր դասակարգը միատարր լիներ ամբողջությամբ, յեթե նրա բոլոր հատվածները գործեյին վորպես մի ամբողջություն, այդ դեպքում կարիք էլ չէր լինի կոմունիստական կուսակցության

ունենալ: Այդ դեպքում բոլոր բանվորները միասին կղեկավարեյին աշխատավորության մղած պայքարը: Բայց այս բանը դեռևս չկա, դեռևս բանվորների շրջանում հետամնաց խմբակները գոյություն ունեն, դեռևս նրա շարքերն աղտոտվում են բանվորության անհարազատ մարդկանցով, և միայն կոմունիստական կուսակցությունը—բանվոր դասակարգի առաջավոր կազմակերպությունը—կարող է ղեկավարել այդ պայքարը:

Ուրեմն, կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի ավելի գիտակից մասի միությունն է, վորը պարզ կերպով զգում յեվ պատկերացնում է վողջ աշխատավորության ազատագրության համար մղվող պայքարի ուղիները: Կուսակցության նպատակը — սոցիալիստական հասարակակարգի կառուցումն է, բոլոր աշխատավորների ազատագրումը յեվ ամեն տեսակի շահագործման վոչնչացումը:

Բայց այս նպատակին կարող են համակրել ու ձգտել վոչ միայն բանվորները: Սա դուր է գալիս շատ ու շատ գյուղացիների, վորոնք այդ նպատակի իրագործման համար ցանկանում են տալ իրենց ուժերը, գրավում է վորոշ ինտելիգենտների, վորոնք գիտեն պարզ և հասկանում են, վոր այն նպատակը, վորին ձգտում է բանվոր դասակարգի կոմունիստական կուսակցությունը ճիշտ է, և վոր հաղթությունն անպայման բանվոր դասակարգինն է լինելու: Ահա թե ինչու բանվոր դասակարգի առաջավոր մասի կոմունիստական կուսակցությունը ձգում է դեպի իրեն վոչ միայն բանվորներին, այլև բազմաթիվ գյուղացիների և ինտելիգենտների: Կուսակցությունը սրանց թույլ է տալիս մտնելու իր շարքերը, բայց ընտրություն է կատարում: Նա ձգտում է իր շարքերը մեծ մասամբ ապահովել բանվորներով:

Յեթե լավ հիշենք այն, ինչ վոր քիչ առաջ խոսեցինք, պարզ կլինի, թե ինչու պետք է կուսակցությունը հենց այդպես էլ վարվի: Նա հանդիսանում է դասակարգի այն առաջավոր և գիտակից մասը, վորը միացած բոլորից ավելի լավ է պատրաստված վճռական հեղափոխական պայքարի համար: Վորպեսզի նա ամրակուռ լինի, իր շարքերում ըստ խոշոր մեծամասնության նա պետք է ունենա՝ կոփված, տոկուն, գործարանային կաթսայում յեփված՝ բանվորներից, վորովհետև՝ բանվորները—աշխատավորության ավելի վճռականորեն, հետևողականորեն և մինչև վերջ պայքարելու պատրաստ մասն են կազմում: Միայն նրանք կարող են, ղեկավարելով աշխատավորական մասսաներին, պայքարել մինչև՝ վերջ:

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Բանվորների մեջ ի՞նչու հետամնաց խավեր կան:
2. Ի՞նչ բան է կոմկուսը:
3. Վո՞ր գյուղացիներին պետք է կուսակցության մեջ ընդունել:
4. Ի՞նչու կուսակցության մեջ մեծամասնությունը պետք է բանվորները լինեն:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Դուք՝ կոմունիստներդ հասկանո՞ւմ եք, թե ինչ եք անում: Վո՞րտեղից է ձեզ այդքան ուժը: Կարո՞ղ եք տակից դուրս գալ: Ի՞նչքան եք դուք: Ընդամենը միլիոն ու կես, իսկ մեր յերկրում հարյուր հիսուն միլիոն ժողովուրդ կա: Ի՞նչ են կոմունիստները եդքան ժողովրդի դիմաց, մի բուռն մարդիկ: Յեվ այդ մի բուռն մարդկանցով դուք ուզում եք աշխարհը շուռ տալ, սոցիալիզմ կառուցել: Դատարկ ու անօգուտ աշխատանք է: Այդպիսի մի բուռն մարդկանցով չի կարելի հսկայական յերկիրը վերակառուցել, միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ճանապարհի վրա հանել: Կայծը աշխարհ չի վառի:

Նման խոսքեր լսե՞լ եք դուք: Իհարկե, լսած կլինեք: Յեվ բավական հաճախ: Կամ այս, կամ այն ծերունին, կամ կուլակային կող ունեցող գյուղացին կսկսի խոսել այն մասին, վոր կոմունիստներն իրենց խելքից դուրս գործ են բռնել, վոր դրա տակից դուրս գալ չեն կարողանա և մարդկանց ձեռք են առել:

Ճի՞շտ են նրանք: Նրանք ճիշտ կլինեյին այն դեպքում, յեթե կոմունիստները միայն ու միայն իրենց ձեռքերով ցանկանային կոմունիզմ կառուցել: Կոմունիստներն իրենք ել շատ լավ գիտեն, վոր այդ բանը կատարելը միայն իրենց ուժերով—անհնարին է: Լենինը միշտ ասել է. «Միայն կոմունիստների ձեռքերով, սոցիալիստական հասարակություն կառուցել չի կարելի: Այդ բանի համար պետք է աշխատավորների միլիոնավոր մասսաներին համախմբել այն խնդիրների շուրջը, վորոնք առաջադրում է նրանց կուսակցությունը, առաջ մղում նրանց պայքարելու հանուն սոցիալիզմի յեվ վողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար»:

Հենց այսպես ել գործել է կուսակցությունն իր գոյության առաջին որվանից: Յերբ տապալում եյին ցարին, կապիտալիստներին և կալվածատերերին, մի՞թե միայն կոմունիստներն եյին կատարում այդ: Վո՛չ: Նրանք համախմբում եյին բանվորներին, պայքարի եյին

կանչում գյուղացիությանը, և յերբ հաջողվեց բարձրացնել միլիոնները, միայն այն ժամանակ հաստատվեց Խորհուրդների իշխանությունը։

Հետո սկսվեցին քաղաքացիական կռիվները։ Այդ պայքարում հաղթանակը մենք տարանք։ Ինչու՞։ Մի՞թե միայն այն բանի համար, վոր կոմունիստները հերոսաբար և անձնվիրաբար էին կռվում ֆրոնտում։ Վոչ, միայն կոմունիստների ուժով դժվար էր հաղթանակը տանել։ Կոմունիստները ղեկավարում էին պայքարը, մասսաների առջևից գնում, բայց հաղթանակը տարանք այն պատճառով, վոր կուսակցությունը կարողացավ սպիտակ բանակի դեմ պայքարելու հանել ժողովրդի միլիոններին և ցույց տալ, վոր սպիտակ գվարդիականների դեմ մղվող պայքարը—դա նրանց հարազատ գործն է։

Այժմ մենք սոցիալիստական շինարարության շրջանն ենք ապրում։ Յերկրի առաջ դրված են թե մեծ և թե ավելի փոքր խնդիրներ։ Պետք է մեր տնտեսությունն առաջ մղել արագ թափով։ Պետք է փոխել գյուղի դեմքը, գյուղացիությանն համախմբել կոլեկտիվներում, հիմք ընդունելով մեքենաներն ու հողի մշակման նոր ձևերը, հաղթահարել խավարը, տգիտությունն ու սնահավատությունը։ Մի՞թե կարող է այդ խնդիրներն իրագործել միայն ինքը—Կոմկուսը։ Վոչ։ Մի՞թե կոմունիստական կուսակցությունը կարծում է, վոր ինքը մենակ պետք է լուծի այդ խնդիրները։ Դարձյալ վոչ։ **Բոլոր այդ խնդիրները նա կարող է լուծել միայն այն դեպքում, յերբ միլիոնավոր մասսաները, տասնյակ միլիոն աշխատավորները կլծվեն այդ գործին, յերբ նրանք կհասկանան, վոր դա իրենց սեփական ու հարազատ գործն է։**

Ինչ խնդիր էլ վոր կուսակցությունը յերկրի առաջ դնի, նա այդ գործին միլիոնավոր մարդիկ է լծում։ Կուսակցությունը միայն բանվոր դասակարգի շահերը չի պաշտպանում։ Նա աշխատում է բարձրացնել յերկրի բոլոր աշխատավորների կյանքի մակարդակը։ Յեվ նա աշխատում է տնտեսությունը վերակազմելու գործում իր հետևից տանել բոլոր աշխատավորներին։

Այդ պատճառով էլ կոմունիստ պետք է համարել վոչ միայն նրան, ով կուսակցության խնդիրները լավ է հասկանում,—սա դեռ քիչ է։ Կոմունիստը պետք է կարողանա այդ խնդիրների շուրջը հավաքել աշխատավորական մասսաները, բացատրել այդ խնդիրները բանվոր և գյուղացի մասսաներին և կռները քշտած կատարել այդ բոլորը մասսաների հետ միասին։

Ահա, հենց այս պատճառով էլ **կուսակցությունը աշխատավորական մասսաների հետ պետք է կապված լինի առ միշտ։** Նա չի կարող այդ մասսաներից իր միջև պատ շարել։ Այդ բանը մահացու կլիներ կուսակ-

ցության համար։ Նա իր շոշափուկները պետք է ունենա ամենուրեք, վորտեղ մասսաներն են ապրում, լսի նրանց տրամադրությունները, մտորմունքները, սպասումներն ու պահանջները, բացատրի նրանց պայքարի ուղիները, և նրանց իր հետևից տանի։ Այս խնդիրն իրագործում են և՛ այն կազմակերպությունները, վորոնք կատարում են կուսակցության և մասսայի միջև կապող փոկերի դերը։

Բանվորների, Կարմիր բանակայինների, գյուղացիների պատգամավորների խորհուրդները—կուսակցությանը կապում են աշխատավորության ամենալայն մասսաների հետ։

Պրոֆմիությունները համախմբում են մեր յերկրի բանվորներին համարյա թե ամբողջությամբ։ Սրանց միջոցով կուսակցությունը կապվում է բանվորական մասսային։

Կոմյերիտմիությունը — բանվոր և աշխատավոր գյուղյերիտասարդության առաջավոր կազմակերպությունն է։ Սրա միջոցով կուսակցությունը կապվում է մեր յերկրի յերիտասարդների հետ։

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովները—միացնող փոկի դեր են կատարում կուսակցության և մեր յերկրի միլիոնավոր աշխատավոր կանանց միջև։

Ահա սրանց և էլի ուրիշ շատ ու շատ կազմակերպությունների միջոցով կուսակցությունը կապվում է աշխատավորական լայն մասսաների հետ։ Այդ կազմակերպություններում աշխատող կոմունիստները կապում են կուսակցությանը նրանց հետ։ Այդ կազմակերպություններում կոմունիստները պետք է ցույց տան պայքարի պատրաստ լինելու, դիսցիպլինարության և աշխատունակության որինակը։

Այդ մասսայական կազմակերպությունների մեջ տարվող աշխատանքը վողջ կուսակցության համար խոշորագույն նշանակություն ունի։ Այստեղից է նա լրացնում իր շարքերը։ Այս կազմակերպությունների մեջ աշխատելով է, վոր դաստիարակվում են տնտեսության, խորհրդային աշխատանքի և պրոֆեսիոնալ շարժման ղեկավարները։ Այդ կազմակերպությունները կոմունիզմի իսկական դպրոցներ են հանդիսանում, վորտեղ յուրաքանչյուր անկուսակցական բանվոր կամ բանվորուհի, գյուղացի կամ գեղջկուհի սովորում են հասկանալ կոմունիստական խնդիրներն ու նպատակները յեվ սոցիալիզմ են կառուցում։

Առանց մասսաների հետ կապված լինելու, կոմունիստ չկա և չի էլ կարող լինել։ Վերջին տարիների ընթացքում ամեն տեսակի գործեր շատ են հայտնաբերվել՝ բարոյալքված, հարբեցող, այլասերված, պետական փողերը վատնող՝ կոմունիստների մասին, վորոնք խորտակել էին աշխատավորների վստահությունը դեպի իշխանու-

թյունը։ Նման դեպքեր շատ են պատահում թե քաղաքներում և թե գյուղական կազմակերպություններում. կոմունիստը, վորն անցել է իշխանության գլուխը, փոխանակ բատրակների և չքավորության շահերը պաշտպանելու, հարբում է, քեֆ անում և կապվում է արդեն կուլակ-հարուստների հետ, իսկ մասսայի մասին մոռանում է, իրեն և մասսայի միջև մի հաստ պատ է քաշում։

Լսել եք Լուղորվայսկոյե գյուղի դեպքերի մասին։ Ահա թե ինչումն է յեղել բանը։ ՌՍՖՍՀ Վոտսկի նահանգի յերեք գյուղերում (այդ գյուղերից մեկը Լուղորվայսկ է կոչվում) կուլակները ծեծել են մի քանի հարյուր գյուղացիների։ Այս բոլորի պատճառը հողն եր։ Հողային բաժանում քառասուն տարուց ավելի չէ, վոր չեր յեղել։ Յեվ յերբ Լուղորվայսկ գյուղի չքավորությունը բարձրացրել է հողաշինարարության խնդիրը, կուլակները՝ ընդհանուր գյուղական ցանկապատերի փչացման պատրվակի տակ՝ ծեծել են չքավորներին։ Իսկ տեղական իշխանությունը վոչ միայն այս բանի դեմ չի կռվել, այլ ուղղակի կերպով թագցրել է կուլակներին։

Յեվ Լուղորվայսկի գործում, և թե ուրիշ այլ տեղերում պարզվել է մի բան.—կոմունիստներն ու կոմսոմոլներն այստեղ աշխատավոր մասսաների հետ կապված չեն յեղել։ Փոխանակ մասսաների կյանքով ապրելու, նրանով հետաքրքրվելու, մասսաների մեջ աշխատելու, կոմունիստներն ու կոմյերիտականներն ամփոփվել եյին իրենց նեղ շրջանակում, կտրվել մասսաներից։ Այս խզվածությունը հասցրել եր քայքայման, սկսվել եր հարբեցողությունը, վոխակալությունը, իսկ սրանից դեպի կուլակներին ծառայելու ստորճանին հասնելը քիչ բան եր մնում։

Իսկ մասսաներից կտրված այդ տիպի կոմունիստների թիվը կուսակցության մեջ քիչ չէ։ Մեր կուսակցությունը ղեկավարող է, նա ղեկավարում է պետությունը, և պարզ է, վոր նրան կպել են ամեն տեսակի թափթփուկներ.—մորթեպաշտներ, կարյերիստներ, բյուրոկրատներ, մարդիկ, վորոնք մասսաների շահերի մասին չեն մտածում, այլ՝ իրենց անձնական շահի։ Նրանք աղտոտում են կուսակցության շարքերը և խորտակում են բանվորների և գյուղացիների վստահությունը դեպի նա։ Ահա թե ինչու համար է, վոր կուսակցությունը ժամանակ առ ժամանակ զտում է իր շարքերը, դուրս շպրտում բոլոր նրանց, ովքեր բյուրոկրատացել են, կուլակների հետ խնամիացել յեվ մոռացել մասսաների շահերը։ Այդպիսի զտում անցկացվեց նայեվ այս տարի։

Մասսաների վստահությունը դեպի Կոմկուսը հաստատված է և այն բանով, վոր կոմունիստական կուսակցության յերսուն տարվա գոյու-

թյունը նրանց համոզել է, վոր միայն նա յե ճիշտ ցույց տվել աշխատավորության պայքարի ուղին, վոր միայն նա յե պայքարը տարել մինչև վերջ, վոր միայն նա յե — իր գործունեյությամբ — ղեկավարվում աշխատավորական լայն մասսաների շահերով: Բանվորները գիտեն, վոր յեթե կուսակցությանը կպել են ամեն տեսակի թափթփուկներ, կուսակցությունն առաջին հերթին ինքն է ուզում մաքրվել այդ կեղտից: Յեվ այս բանն ամրացնում է բանվորների դեպի իրենց կուսակցությունը տածած վստահությունը:

Բայց այն բանի համար, վոր կուսակցությունը բոլոր աշխատավորների ղեկավարն է հանդիսանում, յերբեք չի կարելի յեզրակացնել, վոր նա պետք է անպայմանորեն պաշտպանի նրանց առաջադրած բոլոր պահանջները: Չե, մենք արդեն պարզեցինք, վոր բոլոր բանվորները հավասար չափով չեն հասկանում, թե ինչ կարելի յե պահանջել, և ինչ տվյալ մոմենտին՝ վոչ: Իսկ այս բանն ավելի վատ են հասկանում գյուղացիներից շատերը:

Ահա գյուղացիների մի խումբ պահանջում է.— Մեզ և վոչ մի գյուղատնտեսական միասհարկ պետք չի: Նման պահանջներ յերբեմն լինում են: Արդյոք ճի՞շտ կլիներ, յեթե կուսակցությունն ընդառաջեր այդ պահանջներին: Իհարկե, վոչ: Այդպիսով նա կամրապնդեր կուլակին, վորն իրեն կզգար ազատ ու անկաշկանդ: Կուսակցությունն այլ ճանապարհով է գնում. նա գյուղացիության մեկ երրորդին ազատել է գյուղատնտեսական հարկից. չքավորությունը հարկից ազատ է, բայց դրա փոխարեն գյուղի կուլակային վերնախավը յենթարկվում է ուժեղ հարկադրման՝ անհատական կարգով: Միջակային խավերի նկատմամբ՝ գյուղատնտեսական հարկի վերջին օրենքը միաժամանակ մի շարք նոր արտոնություններ է նախատեսում:

Կամ յենթադրենք, վոր բանվորներից վոմանք ցանկանալով օգնել նոր գործարանի կառուցմանը, մի այսպիսի առաջարկություն անեյին, թե՝ «յեկեք ավելացնենք գործարանային ապրանքների գները»: Գյուղացիությունը պետք է շատ վճարի, պետությունն այսպիսով շատ փող կունենա, և մենք կկարողանանք նոր գործարաններ ավելի շուտ շինել:

Այս պահանջն ել անընդունելի յե: Սա առաջադրում եյին տրոցկիստները: Միայն թե նրանք հաշվի չեյին առել այն, վոր առաջին շրջանում, ճիշտ է, պետությունը փող շատ կստանա, բայց դրա համար ել գյուղացիության վստահությունը դեպի բանվոր դասակարգը կխախտվի: Իսկ չէ՞ վոր այդ միության վրա յե հիմնված մեր իշխանությունը:

Ել ինչ, ճիշտ կվարվե՞ր արդյոք կուսակցությունը, յեթե նա բանվորների խմբակի այդ պահանջները բավարարեր: Իհարկե, վոչ:

Չե, աշխատավորների առանձին խմբակների պահանջները կուսակցությունը պաշտպանել չի կարող։ Նա չի կարող յեվ չպետք է քաշ գա բանվորների պոչից, այլ պետք է ղեկավարի նրանց։ Յեթե նա կիրառի այն բոլորը, ինչ վոր պահանջում են բանվորների և գյուղացիների յուրաքանչյուր խմբակները, նա ղեկավար դերից կվերածվի խվոստիստական, յերերուն մի կազմակերպության։ Այդ դեպքում նա այլևս հեղափոխություն ղեկավարելու ընդունակ առաջավոր կազմակերպություն չի լինի։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու պետք է կոմունիստը մասսաների հետ կապված լինի։
2. Ինչու Կոմկուսը դաստիարակում է մասսաներին սոցիալիստական շինարարության համար։
3. Աշխատավորների ինչպիսի պահանջները կուսակցությունը պետք է պաշտպանի։
4. Կուսզտումն ինչու անհրաժեշտ էր։

ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՈՒՄ

Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը միայն իրենք չեն յերկրում։ Նրանց շուրջն է գտնվում բազմամիլիոն գյուղացիությունը, վորը միատարր չէ, յերերուն է, և ինչպես մենք պարզեցինք, ընդունակ է տատանվելու պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Բանի հաստատուն է յերկրի դրությունն ու բանվոր դասակարգի իշխանությունը, այնքան ավելի հաստատուն է գյուղացիության վստահությունը դեպի կուսակցությունն ու դեպի պրոլետարիատը։ Յեվ, ընդհակառակը՝ մեր ճամբին ծառացած յուրաքանչյուր դժվարություն առաջացնում է գյուղացիության մեջ նոր ու նոր տատանումներ։

Բանվոր դասակարգը հազարավոր թելերով է, վոր կապված է իրեն շրջապատող այդ մանր-արտադրողների մասսաների հետ։ Շատ բանվորներ այդ շրջանից դեռ չեն խզվել և տատանվում են քաղաքի ու գյուղի միջև։ Այնտեղից՝ գյուղից գյուղացիական տրամադրությունները բազմաթիվ առուներով հոսում են բանվորական զանգվածի մեջ և հաճախ տատանումներ են առաջացնում առանձին բանվորների շրջանում։ Պատահում է, վոր բանվորների բերանից ուղղակի կուլակային պահանջներ են լսվում։

Իսկ բանվոր դասակարգի մեջ տեղի ունեցող այս տատանումները Կոմկուսի անդամների մեջ ճիշտ գծից առանձին շեղումներ են առաջացնում։ Այսպիսով դժվարություններից վախեցող յեվ բանվորների ու

բուրժուազիայի մեջ տատանվող մանր-արտադրողից, բանվորական հետամնաց խավերի միջոցով, կուսակցության մեջ են թափանցում նրան անհարազատ ազդեցությունները:

Հասկանալի յե, վոր յեթե կուսակցությունը ցանկանում ե սոցիալիստական հասարակության համար մղվող պայքարում հաղթանակ ձեռք բերել, պետք ե անխնա և վճռական կերպով պայքարի այդ թեքումների դեմ։ Այլապես նա կուսակցությունը ճիշտ ճանապարհից կշեղի։ Դրանով ել բացատրվում ե բոլշևիկների անողոք և անհաշտ վերաբերմունքը թեքումների և լենինյան ճիշտ գծից շեղումների դեմ։

Լինում են նաև այնպիսի «բարյացակամ» մարդիկ, վորոնք այսպես են դատում.—Ինչու համար եք դուք՝ կոմունիստներդ միմյանց դեմ կռվում։ Ապրեցեք ձեզ համար խաղաղ ու հաշտ։ Ձեր մեջ ինչ տարաձայնություն կարող ե լինել.—դե, Մաթոսյանը կռվել ե Թաթոսյանի հետ, այսինքն կուսակցական մի ղեկավար—մյուսի հետ ու պրծավ գնաց։ Ապրեցեք, յեղբա՛յր, ենպես, ինչպես որենքն ե.—դու յել ապրի, ու թող վոր քո ընկերն ել ապրի։ Յեթե ձեզնից վորևե մեկը այլ կարծիքի յե, եդ ել իր գործն ե, նա իր համար, դու՝ քեզ։ Ել կարիք չկա տարաձայնություններ առաջացնել, պետք ե համբերող լինել։ Այսպես են դատում սովորաբար ամեն տեսակի ու ռանգի հաշտվողականները։

Այսպիսի խոսքերով, յերբեմն, դուրս ե գալիս կուսակցական քաղքենին, վոր ուզում ե կռիվ չլինի, վորովհետև կռվի մեջ տանձ ու խնձոր չեն բաժանում։ Բայց հաճախ այդ խոսքերը բոլորովին այլ իմաստ ունեն։ Դրանցով հենց ուզում են զինաթափ անել կուսակցությանը, նրա ուշադրությունը թեքումների դեմ ուղղված պայքարից հեռացնել, վորպեսզի թույլ տան խաղաղ ու հանդարտ կերպով զարգանալու այն հայացքները, վորոնք հակադրում են իրենց կուսակցության ընդհանուր գծին։

Հենց այս բանն ե, վոր կուսակցությունը թույլ տալ չի կարող։ Նա կատաղի կերպով պայքարում ե դեպի թեքումները նման հաշտվողականության ցուցահանման յեվ իրենց թեքումների դեմ։ Կուսակցությանը վիճակված ե կռվել թեքումների յերկու հիմնական տեսակների դեմ։

Թեքումներից առաջինը—ինչպես ինքն ե իրեն անվանում,—«ձախն ե»։ Դրան եյին պատկանում տրոցկիստները, վորոնք այժմ դուրս են շպրտվել կուսակցությունից։ Տրոցկիստները միքանի անգամ բազմապատկում են Խորհրդային իշխանության թշնամիների ուժը, կապիտալիստների ուժը։ Նրանք մեր յերկրում տեսնում են միայն այն վոր հնարավորություն կա կապիտալիզմի վերականգնման համար, իսկ իրենց աչքերը փակում են և չեն տեսնում, վոր մենք հաջողությամբ

կառուցում ենք սոցիալիզմը։ Տրոցկիզմը ամենևին ել չի հավատում, վոր մենք կարող ենք մեր յերկրում սոցիալիզմ կառուցել։ Յեվ ինչպես կկառուցես. միջակ գյուղացիությունը մեր յետևից չի գնա, նրա հետ դաշինք կնքելու կարիք չկա, վորովհետև նա կդավաճանի։ Չե, ավելի լավ է գյուղացիությանը շատ հույս տալ, հանել նրանից յեղած միջոցները, վորպեսզի այդ միջոցները դրվեն յերկրի արագ ինդուստրացման մեջ։

Իսկ ինչ կպատահեր, յեթե հանկարծ տրոցկիստները կուսակցության մեջ հաղթանակ տանեյին։ Կպատահեր այն, վոր բանվոր դասակարգը կանջատվեր աշխատավոր գյուղացիությունից, իսկ դա պրոլետարական դիկտատուրայի անխուսափելի պարտությունը կնշանակեր։

Դրա համար ել կուսակցությունը յերկար ու համառ կերպով պայքարում եր տրոցկիզմի դեմ և իր շարքերից արտաքսեց նրա կողմնակիցներից նրանց, ովքեր մինչև այսօր ել չեն հրաժարվել իրենց սխալից և սոցիալիստական շինարարության համար վնասակար տեսակետներից։ Յերկար ժամանակ չպահանջվեց այն բանի համար, վորպեսզի տրոցկիզմը լիովին մերկացներ իրեն և իր իսկական դեմքը ցույց տար։ Սկսելով շատ թունդ, կեղծ հեղափոխական ֆրազներով, տրոցկիստները վերջացրին՝ ուղղակի կերպով կոչ անելով գործադուլ հայտարարել Խորհրդային իշխանության դեմ։ Տրոցկիզմը կուսակցության մեջ թեքում լինելուց դադարեց, վերածվեց հակահեղափոխական կազմակերպության։

Ահա թե ինչ է պատմում իր հայտարարության մեջ մի տրոցկիստ, վորը շարքային չի յեղել, այլ Դնեպրոպետրովսկի տրոցկիստական անլեգալ կոմիտեյի անդամ.

«Յես, վորպես տրոցկիստ, հանձնարարություն ստացա զարգացնել տեխնիկան, այսինքն՝ ձեռնարկել ընդհատակյա փաստաթղթերի բազմացման և նրանց տարածման գործը։

Ինձ հանձնարարեցին Դնեպրոպետրովսկի գործարաններում ծավալել աշխատանքը, ըստ վորում, մեր աշխատանքի առանցքը հանդիսանալու յեր այն, վոր իբր թե բանվոր դասակարգը ճնշված է ղեկավարության կողմից, վոր բանվորական մասսաների մեջ պետք եր տարածել մի այսպիսի լոզունգ, թե՝

«Կուսակցությունը վերասերվել է մանր բուրժուական գյուղացիական կուսակցության»... Գյուղում ինձ հանձնարարեցին օգտագործել գյուղացիների վորոշ մասի դժգոհությունները՝ դեպի տրոցկիզմը համակրանքի զգացում կազմակերպելու ուղղությամբ։

Հունիսից սկսած Դնեպրոպետրովսկում կազմակերպվեց շրջանային ընդհատակյա կոմիտե, վորն ուղղակի կերպով Խորհրդային իշխա-

նության դեմ գործի անցավ։ Բացարձակ յելույթները հետաձգվեցին ինդուստրիացման փոխառության բաժանորդագրման գործի կազմակերպման ժամանակի համար։ Կոմիտեներին հրահանգ էր տրված բաժանորդագրության դեմ դուրս գալ։

Կուսակցության դեմ կազմակերպված յելույթներում մենք կանգ չէյինք առնում մինչև իսկ գործադուլի առաջ։

Կոմիտեյի ղեկավարությամբ Պետրովսկու անվան գործարանի ցեխերից մեկում տրոցկիստներից մեկը նախապատրաստություն էր տանում գործադուլի համար, իսկ ընդհատակյա կոմիտեն ակտիվ կերպով պատրաստվում էր վիժեցնելու Հոկտեմբերյան հեղափոխության 11-րդ տարեդարձը»։

Այդ հայտարարության մեջ էլ պատմվում է այն մասին, թե ինչպես ընդունեցին նրանց բանվորները։ «Մոսկվայի կենտրոնը հրահանգ տվեց մեզ դեմ դուրս գալ կուսակցությանը, խորհիշխանությանը, օգտագործելով այդ բանի համար բոլոր միջոցները։ Սրանով էլ տրոցկիստական օպոզիցիայի ղեկավարները բացին մոլորված—բանվոր կոմունիստների աչքերը և իրենցից հետ հրեցին բոլոր նրանց, ովքեր այնքան հեռու չէյին գնացել կուսակցության և խորհիշխանության դեմ պայքարելու գործում։ Տրոցկիստների աշխատանքը ուրախացնում էր հակահեղափոխական էլեմենտներին։ Դնեպրոպետրովսկի շրջանի գործարանների ու ֆաբրիկների, ինչպես և ուրիշ քաղաքների բանվորներն իմացան այդ տրոցկիստական բազմաթիվ թռուցիկների իսկական արժեքը, բողոքում էյին աշխատանքի նման հակահեղափոխական մեթոդների դեմ։

1928 թվի դեկտեմբերի 28-ին և 29-ին Դնեպրոպետրովսկու գործարաններում թռուցիկներ յերևան յեկան, վորոնք բանվորների կողմից կատաղի դիմադրության հանդիպեցին։ Համարյա թե բոլորը,— ում էլ վոր տալիս էյինք թռուցիկը,— հայհոյում էյին մեզ։ Յեվ միայն բացարձակ կերպով հակահեղափոխական տարրերն ուրախանում էյին»։

Իսկ ինքը՝ Տրոցկին մինչև ուր հասավ։ Յերբ նրան գործադուլների կոչեր ուղղելու համար արտաքսեցին արտասահման, հակա-խորհրդային իր մի շարք հոդվածները տպագրեց բուրժուական լրագրներում։ Բուրժուազիան ուրախությամբ վճարեց նրա գրածների համար միքանի տասնյակ հազար ռուբլի։ Դե, իհարկե։ Նման դաշնակից ունենալու համար, վորն անցյալում հեղափոխական էր,— արժեր վճարել։ Բայց չեթե այդ մարդը չամաչեց իր հոդվածները տպագրել այնպիսի լրագրներում, վորոնք Խորհրդային իշխանության դեմ են կռվում, և իր հոդվածների մեջ էլ բամբասանքներ էր ուղղել Խորհրդային իշխա-

նության դեմ, նշանակում է, շատ, շատ է ստորացել։ Սրանից ցածր գնալ էլ չի լինի։ Ահա այն մարդու ուղին, որը պայքարի չեր դուրս եկել լենինյան կուսակցության դեմ։

Մյուս թեքումը, որի դեմ կուսակցությունը պայքարում է— աջն է։ Նա չի տեսնում մեր թշնամիների ուժը, թերագնահատում է այն, նա չի հասկանում, որ չնայած նրան, որ խորհիշխանությունը 12 տարի չե ինչ գոյություն ունի, կապիտալիզմը կարող է վերածնվել, եթե մենք քաղաքական սխալ գիծ բռնենք։ Այդ պատճառով էլ աջ ուկլոնիստները կապիտալիզմի ուժերի դեմ տոկուն և վճռական պայքար չեն տանում։ Ինչու դուք ինդուստրիացումը այդքան առաջ եք քշում,—հարցնում են աջ թեքման կողմնակիցները,—ավելի լավ չե՞ր լինի, եթե առաջ գնանք դանդաղ և հանդիստ։ Ինչու եք այդպես պինդ հուպ տալիս կուլակին,—հարցնում են նրանք,—մեր կուլակային տընտեսություններից էլ մենք հաց ենք վերցնում քաղաքի համար։ Ինչու եք կոլտնտեսությունների և խորտնտեսությունների շինարարության համար այդքան միջոցներ ծախսում։ Ավելի լավ չե՞ր լինի, եթե այդ միջոցները մենք տանք ոգնելու անհատական, թեկուզ և ուժեղ տնտեսությանը։ Այսպես են դատում աջ թեքման կողմնակիցները։

Կուսակցության մեջ եթե հաղթեն աջերը, հետևանքն ինչ պետք է լիներ։ Կհասցներ մեզ այն բանին, որ մեր յերկրում կուժեղանար կապիտալիզմը, գլուխ կբարձրացներին գյուղում—կուլակը, և քաղաքում՝ նեպմանը և կսկսեյին իշխանությունը խլել բանվորներից ու գյուղացիներից։ Աջ թեքման հաղթանակը կուժեղացներ մեր յերկրում կապիտալիզմի վերածնման հնարավորությունները։

Ժողովներում, ուր խոսվում է նրանց մասին, հարց է տրվում— թե դրանցից վո՞րն է վատը։ Նման հարցին պատասխանել դժվար է։ Իհարկե, յերկուսն էլ վատ են։ Յերկուսն էլ տանում են մեզ դեպի բանվորների դիրքերի թուլացումն ու կապիտալիստների դիրքերի ամրացումը։

Բայց ավելի հեշտ է պատասխանել այն հարցին, թե ներկայումս դրանցից վո՞ր մեկի դեմ կռիվն ավելի կարևոր է, վո՞ր կողմը պետք է թեքել բոլշևիկյան կրակը։ Այստեղ էլ պետք է ամենավճռական կերպով պարզել,—ներկայումս կուսակցությանը սպառնացող հիմնական վտանգը աջից է. և գլխավոր պայքարը պետք է ուղղել աջ թեքման դեմ, չդադարեցնելով, իհարկե, նաև տրոցկիզմի դեմ մղվող պայքարը։

Ինչու այժմ ավելի կարևոր է պայքարն աջ թեքման դեմ։ Նախ, այն պատճառով, որ տրոցկիզմն զգալի չափերով մերկացված է։ Մի քանի տարի շարունակ կուսակցությունն ու կոմսոմոլը բացատրել են

տրոցկիզմի սխալները, բանվորներին ու գյուղացիներին ցույց ենք տվել նրա իսկական դեմքը: Այս միքանի տարիներում տրոցկիստների ազդեցությունը համարյա վոչնչացված ե: Տրոցկիստների դեմ խոշոր պայքար ե մղվել, և նա տվել ե մեզ իր արդյունքները:

Այս բանը չի կարելի վերագրել աջ թեքման: Սրա վտանգավորությունը դեռես այնքան ել պարզ չի: Ավելի հանգիստ ու առանց կռվի ապրելու ձգտումը շատ շատերի մեջ կա: Յեվ այնքան ժամանակ, մինչև աջ թեքման վտանգը չի պարզվի բոլորի համար, այնպես, ինչպես տրոցկիզմի վտանգը, կուսակցության ամենահերթական խնդիրներից մեկը—աջ թեքման դեմ մղվող պայքարը կլինի:

Աջ թեքումը մյուս կողմից առանձնապես վնասակար ե մեզ համար ներկայումս յեվ այն պատճառով, վոր նրա մեջ արտացոլում են կուլակի, նեպմանի ու խորհրդային իշխանության կողմը չանցած մասնագետի հույսերն ու պահանջները: Ազգաբնակչության այդ խմբակներն այժմս ել զգում են Խորհրդային իշխանության բեռը իրենց ուսերի վրա: Կուսակցության 15-րդ համագումարը կուլակի վրա ուժեղացած հարձակման անցնելու լոզունգը տվեց: Ուրեմն, կուլակը պետք ե կծկվի, իսկ նա չի ուզում արեվի տակ իր տեղը կորցնել: Նա պայքարում ե, աշխատում ե ազդել պրոլետարիատի վրա, տասնյակ ճանապարհներով աշխատում ե կասեցնել սոցիալիզմի հարձակումն իր վրա:

Իսկ բանվոր դասակարգի և մեր կուսակցության մեջ այնպիսի մարդիկ կան, վորոնք կուլակի ճիչը,—վոր իրեն ճնշում են,—գյուղացիական հիմնական մասսայի ձայնի տեղն են ընդունում: Յեվ նրանք ուզում են թուլացնել հարձակումը կուլակի դեմ, դանդաղեցնել գյուղը սոցիալիստական ձևով վերակազմելու ուղղությամբ տարվող մեր աշխատանքները: Այդ մարդիկ խանգարում են մեր կուսակցությանը հաջողությամբ կենսագործելու իր կարևորագույն խնդիրները: Ահա թե ինչու նման աջ տրամադրությունների դեմ պայքարելը—ամենահրատապ խնդիրն ե:

Յեվ վերջապես, նշաններ կան, վոր աջերը ցանկանում են կուսակցության մեջ իրենց խմբակն ստեղծել, առանձնանալ վողջ կուսակցությունից, յեվ վերջինիս մեջ պայքար մղել հանուն իրենց գծի: Նման խըմբակը պետք ե պայքարի կուսակցության ներկա ղեկավարության դեմ, բամբասի և աշխատի թուլացնել նրան: Այդպես են վարվել անխուսափելիորեն, անցյալում կուսակցության մեջ յեղած բոլոր խմբակները: Յեվ պարզ ե, վոր կուսակցությունը նրանց նկատմամբ շատ խիստ պետք ե լիներ: Նա չի կարող թույլ տալ քայքայելու իր շարքերը: Դրա համար ել նույնպես խիստ դիրք կբռնի կուսակցությունը աջերի նկատմամբ, վորոնք ուզում են ստեղծել իրենց խմբակը:

Ահա այս բոլոր պատճառներն ինկատի ունենալով՝ ճիշտ է մեր կուսակցության գլխավոր քարտուղար ընկեր Ստալինը, յերբ նա ասում է.—

«Խնդիրն այն է, վորպեսզի չթուլացնելով ձախ տրոցկիստական վտանգի դեմ մղվող պայքարը, շեշտ դնել աջ թեքման դեմ մղվող պայքարի վրա, և բոլոր միջոցները ձեռք առնել այն ուղղությամբ, վորպեսզի այս թեքման վտանգն էլ կուսակցության համար նույնքան պարզ լինի, վորքան վոր պարզ է նրա համար տրոցկիստական վտանգը»։

Յուրաքանչյուր կոմունիստի և կոմյերիտականի համար մի բան պարզ պետք է լինի, վոր աշխատավորության իր հետևից խելացիորեն տանելու համար ճիշտ գծից չպետք է շեղվել, պետք է սովորել, յուրացնել Լենինի ուսմունքը, հասկանալ պայքարի ճիշտ ուղիները։ Հեղափոխական թեորիային—լենինիզմին պետք է տիրապետեն յուրաքանչյուր կոմունիստ և կոմյերիտական։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Վորտեղից են կուսակցության մեջ թափանցում նրան խորթ տրամադրությունները։
2. Ի՞նչու տրոցկիզմը հակահեղափոխական կազմակերպություն դարձավ։
3. Ի՞նչ տարաձայնություններ ունեյին տրոցկիստները կուսակցության հետ։
4. Ի՞նչ են ուզում աջ ուկլոնիստները։
5. Ի՞նչու ներկայումս աջ թեքումն ավելի վտանգավոր է։

ԴԻՍՑԻՊԼԻՆԱ

Լսե՞լ եք դուք ցախավելի մասին յեղած պատմությունը։ Յեթե չեք իմացել, լսեցեք։

«Կանչեց ծերունի հայրն իր զավակներին՝ խելք ու խրատ տալու։ Յեկան։ Հայրը նրանց ցախավելը տվեց ու ասաց.—«Ապա, փորձեցեք ջարդել»։ Փորձում է առաջին վորդին, չի ջարդվում։ Փորձում է յերկրորդը՝ նույնպես։ Յերրորդը նույնպես չարչարվում է, բայց բան դուրս չի գալիս։ Այն ժամանակ հայրը վերցրեց ցախավելը, բաժանեց առանձին-առանձին ցախերի, և յուրաքանչյուր ցախն առանձին-առանձին ջարդեց։ «Նու,—ասացին տղաները,—այդպես մենք էլ կարող եյինք»։ «Իհարկե, կարող եք,—ասում է հայրը,—ամեն մարդ էլ կարող

է։ Ամեն ցախն առանձին վերցնելով յերեխան էլ կարող է ջարդել, իսկ յերբ նրանք միասին են, հսկան էլ չի կարող ջարդել»։

Պատմվածքը մի առանձին բան չէ, բայց պարզ լեզվով ապացուցում է, վոր ուժը միության մեջ է։ Յուրաքանչյուր կոմունիստ առանձին վերցրած հերոս չէ։ Դե, ինչ կարող է անել մեկ մարդը։ Իսկ, այ, բոլոր կոմունիստները միասին—ուժ են, և այնպիսի մեծ ուժ, վոր ուզում են վողջ աշխարհը վերափոխել։

Այո, միասին լինելը—նշանակում է միասին էլ գործել։ Առանձին աշխատելն—օգուտ չունի։ Մեր կուսակցության ուժը այն է, վոր նա գործում է վորպես մեկ մարդ, յեվ յուրաքանչյուր անհատ կոմունիստ յենթարկվում է ընդհանուր վորոշումներին։ Այսպիսի կարգն էլ դիսցիպլինա յէ կոչվում, յերբ ընդհանուր վորոշումը յուրաքանչյուր անհատի համար օրենք է, և նա այդ օրենքին յենթարկվում է առանց հակաճառելու, յերբ փոքրամասնությունը յենթարկվում է մեծամասնության վորոշմանը։

Մեր կուսակցությունը կազմված է կամավոր հիմունքներով։ Զոռով նրա մեջ վոչ վոքի չեն քաշում։ Կուսակցությունը դեպի իր շարքերն է գրավում բանվորներին, բատրակներին և չքավորներին, բայց զոռով չի քաշում։ Կուզես—արի, չես ուզում դու գիտես քո բանը։ Բայց, քանի վոր դու կուսակցության մեջ ես անցել, դե բարի յեղիր նրան լսելու, նրա վորոշումներին յենթարկվելու, և գործելու այնպես, ինչպես նա յե հրամայում քեզ։ Իսկ յեթե կուսակցության վորոշումների վրա թքելու յես, յեթե այդ վորոշումներին այնպես ես նայելու, վոր կարելի յե և կատարել և չկատարել, այդ դեպքում շատ շուտով կուսակցության դռնից դուրս կմնաս։

Պետք է ուղղակի ասել, վոր դիսցիպլինան այնքան էլ հաճելի բան չէ։ Շատերի համար նա մի վզնոց է թվում, վորը կախված է վզից ու պոկ գալ նրանից չես կարող։ Այս բանը հատկապես վերաբերվում է յերիտասարդ կոմունիստներին մի կողմից, և գյուղացիական շրջանից դուրս յեկած կոմունիստներին, մյուս կողմից։

Հին, ընդհատակյա անցյալի տեր կոմունիստին դիսցիպլինայով չես վախեցնի։ Նա վերջինիս հետ միասին համաճել է պատպոլիայում։ Այն ժամանակ ղալմաղալ անել չէր կարելի, ականջը պետք էր միշտ ձենի պահել։ Կուսկոմիտեների վորոշումները պետք է վոր կատարվեյին արագ ու ճշտիվ կերպով։ Այլ կերպ՝ շատ հեշտությամբ կարելի յեր ինքն իրեն մատնել ցարական վոստիկանության առաջ, բանտ նստել, և միաժամանակ իր հետ դեպի բանտ քաշել կուսակցական ընկերներին։

Դիսցիպլինան բանվոր կոմունիստի համար էլ սարսափելի չէ.

գործարանային կյանքը, մեքենայի մոտ ընթացող աշխատանքը սովորեցնում է նրան հարմարեցնել իր բոլոր գործողությունները ու յուրաքանչյուր քայլը ամբողջ գործարանի կոլեկտիվի աշխատանքի հետ։ Նրա վողջ աշխատանքը դիսցիպլինայի յե յենթարկում նրան, ուղղում է, և նա հասկանում է, վոր ինքն այստեղ շատ քիչ նշանակություն ունի, իսկ գործարանի կոլեկտիվի հետ միասին—ուժ է։

Յերիտասարդ կոմունիստներին պետք է սովորեցնել դիսցիպլինայի։ Նրանք պետք է հասկանան, վոր կուսակցության համար դիսցիպլինան ոդի չափ անհրաժեշտ է այն պատճառով, վոր նա մեծ քանակությամբ թշնամիներ ունի, և սրանց դեմ էլ պետք է կատաղի կերպով պայքարել։ Իսկ առանց դիսցիպլինայի կճաղքվես կռվում։

Յուրաքանչյուրն իր անձնական փորձից գիտե. պատահում է, կուսակցությունը կամ կոմսոմոլը քեզ մի վորևե գործ են հանձնարարում, իսկ դու այդ բանը կատարել չես ուզում, կամ չես ուզում պարզապես, կամ ժամանակ չունես, կամ սիրտդ չի ուզում։ Յեվ այստեղ կոմունիստին ու կոմսոմոլիստին տանջում են յերկու ցանկություն.— և՛ պետք է կուսակցության վորոշումը կատարել, լինել դիսցիպլինար, և՛ թե պետք է իր անձի մասին մտածել։ Իսկական կոմյերիտական-լենինիստ կարող է կոչվել նա, ով իր ցանկությունները, իր շահերը, իր ձգտումները յենթարկում է կուսակցությանը, բանվոր դասակարգի պայքարի շահերին։

Ահա ձեզ որինակ.—մենք խոսում ենք, վոր գյուղի կոմունիստն ու կոմյերիտականը կոլեկտիվ տնտեսության շինարարության ասպարեզում, գյուղում որինակելի պետք է լինեն։ Նա պետք է առաջին հերթին իր տնտեսությունը հանի կոլեկտիվացման ճանապարհի վրա և իր հետևից տանի իր համագյուղացիներին։ Բայց բոլոր կոմունիստներն ու կոմյերիտականները չեն ցանկանում յենթարկվել մեր այս ընդհանուր վորոշումներին։ Նրանք յերբեմն դեմ չեն նույնիսկ ագիտացիա մղել հոգուտ կոլեկտիվացման, կոմունայի, դեպի այն կոչել իր հարևանին, բայց իրենք մտնել չեն ուզում։ Մեզ մոտ մոտավորապես հարյուր հազարի չափ տնտեսատեր-կոմյերիտականներ կան, և նրանց մեծամասնությունը դեռևս իր տնտեսությունը վարում է անհատական հիմունքներով։ Սա նրանք են, վորոնք դեռևս իրենց անհատական շահերն ու ձգտումները չեն յենթարկել ընդհանուրի շահերին։

Կան և նույնպիսի կոմունիստներ։

Հաճախ գյուղական կոմունիստն ու կոմյերիտականը խախտում են կուսակցության դիսցիպլինան և նրա դիծը—կրոնական հարցերում։ Պետք է ասել ուղղակի, վոր մեզ մոտ շատ քիչ մարդիկ կան,

վորոնք հավատում են աստծուն: Իսկ պատահում են հաճախակի դեպքեր, յերբ կոմունիստը կամ կոմյերիտականը ծածուկ,—վորպեսզի ուրիշները չտեսնեն—թագուն ամուսնանում են յեկեղեցում, կնքում են յերեխային և կամ կատարում են կրոնական այս կամ այն ծիսակատարությունը: «Դե, կուսակցությունն ինչ ի՞մանա,—մտածում է նա,—յեթե յես յեկեղեցի չեմ հաճախում, իսկ տանը հո հանգիստ կլինեմ և իմ ականջիս չեն հասնի կանացի վոռնոցները»:

Լավ կոմունիստ է սա: Ձե, չափազանց վատ: Փոքրոգություն է արել, վախեցել է, գնացել է ամենալայն ուղիով, հակառակ նրան, վորպեսզի համառորեն և հաստատուն կերպով իրենց տանեցիներին ցույց տար աստծու և կրոնի անհեթեթությունը:

Մի ժամանակ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմն ստանում եր շատ ու շատ նամակներ, մոտավորապես այս բովանդակությամբ.—«Յես կոմյերիտական եմ, միքանի տարի չե՝ տանում եմ միութենական պարտականությունները և կատարում եմ ամեն բան կարգին: Հիմա ժամանակն է ամուսնանալու, առանց ամուսնության անտեսությունս քայքայվում է, իսկ վոչ մի աղջիկ առանց ժամի ինձ հետ ամուսնանալ չի ուզում: Դե, ի՞նչ կարող եմ անել. կամ պետք է կոմսոմոլից դուրս գամ և տերտերով պսակվեմ, կամ անտեսությունս պետք է քայքայվի: Դե, մի խորհուրդ տվեք ինձ»:

Ի՞նչ խորհուրդ կտայինք նման կոմսոմոլիստին: Մենք նրան կասեյինք, վոր կայուն կոմյերիտական լինի մինչև վերջ, չընկնի սնահավատությունների գիրկը, այլ նրանց անհեթեթությունը ցույց տա, բացատրի: Յեվ այժմս արդեն այդ բովանդակությամբ նամակներ Կենտկոմում շատ քիչ են ստացվում: Ճիշտ է, դեռևս կոմյերիտականներ ու կուսակցականներ ել կան, վորոնք կուսակցությունից թագուն և նրան խաբելով, կրոնական ծեսեր են կատարում: Սակայն դրան հակառակ, այժմս ավելի շատ են նրանք, ովքեր սովորել են արդեն հաստատուն լինել այնպիսի խնդրում, ինչպիսին կրոնականն է:

Կարդացել եմ մի այսպիսի դեպքի մասին. մի հասակավոր բանվորուհի դիմում է նովել կուսակցությանը: Յեվ հանկարծ բջիջի ժողովում նրա վորդին դեմ է դուրս գալիս: «Նա ամեն բանով ել լավ է,—ասում է տղան,—բայց հավատում է աստծուն, տանը սրբերի պատկերներ է պահում, իսկ յերբ Վլադիմիր Իլյիչը մեռավ, յեկեղեցի գնաց և աղոթեց նրա հոգու փրկության համար»: Հարցնում են. ճի՞շտ է. «Ճիշտ է,—պատասխանում է նա,—ծեր եմ, սովորել եմ և յես ցանկանում եյի, վոր Վլադիմիր Իլյիչին լավ բան արած լինեմ»:

Ճի՞շտ է վարվել այդ վորդին, վոր դեմ է դուրս յեկել իր մորը

կուսակցության մեջ ընդունվելուն։ Իհարկե։ Նա փոքրոգություն չարեց, իսկ հետևանքը լավ դուրս չեկավ։ Շատ ժամանակ չանցած մայրն էլ իր սրբերը հանեց։

Կրոնական հարցը — դա մեկն է բոլոր այն հարցերից, վորտեղ կոմունիստն ու կոմյերիտականը պետք է կայուն լինեն։ Իսկ նման խնդիրները շատ են,՝ և բոլոր այդ հարցերի նկատմամբ պետք է լինել հաստատուն, դիսցիպլինար կոմունիստ։

Դիսցիպլինան առանձնապես կարևոր է ներկուսակցական վիճաբանությունների ժամանակ։ Նման հարցեր խոշոր և յերկիր կառավարող կուսակցության մեջ լինում են։ Չե՞ վոր վիճակվում է լուծման յենթարկել մեծ քանակությամբ խոշոր և դժվարին հարցեր։ Յեվ հնարին բան է, վոր բոլոր կոմունիստներն էլ նույն կարծիքին լինեն բոլոր այդ խնդիրների նկատմամբ։ Իհարկե, վոչ։ Բայց վիճել կարելի է ամեն կերպ, և վեճն էլ այս կամ այն կերպ փակել։

Դեռ Վլադիմիր Իլյիչի կենդանի ժամանակ մի այսպիսի կարգ էր սահմանվել, վորպեսզի կուսակցության մեջ ծագած բոլոր վեճերը լուծումն ստանային ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքներով։

Ներկուսակցական դեմոկրատիա — նշանակում է բոլոր ղեկավար օրգանների ընտրվածություն, ստորադաս օրգանները վերադասներին անմիջականորեն յենթարկման հիմունքով։ Նա պահանջում է, վոր կուսկոմիտեները սերտ կերպով կապված լինեն մասսաների հետ, և հաշվետու լինեն նրանց առաջ։

Ներկուսակցական դեմոկրատիա նշանակում է և այն, վոր վիճաբանությունների ժամանակ յուրաքանչյուր կոմունիստ կարող է համարձակ կերպով հայտնել իր կարծիքը, իր տեսակետը, յեթե, իհարկե, այդ տեսակետը կուսակցության ծրագրին չի հակասում։ *Սակայն ներկուսակցական վիճաբանությունների ժամանակ պետք է պահպանվեն յերկու կանոն։*

Առաջինը — վիճել կարող ես ինչքան ուզում ես, մինչև վոր կոկորդդ ցավի, բայց միայն այն դեպքում, յերբ կուսակցությունը տվյալ վիճելի հարցի մասին իր վորոշումը դեռևս չի հանել։ *Իսկ յերբ արդեն վորոշումն ընդունված է, համաձայն ես թե՝ չէ, յենթարկվիր։ Այստեղ արդեն քո անհատական կարծիքի մասին խոսք լինել չի կարող։ Կա կուսակցության կարծիքը, և նա պարտադիր է բոլորի համար։*

Յերկրորդ պայմանը, վորի պահպանմամբ պետք է ընթանան ներկուսակցական վիճաբանությունները, դա այն է, վոր յուրաքանչյուր կոմունիստ արտահայտի իր աշխարհայացքը, իր տեսակետը այս կամ այն խնդրի մասին, և վոչ թե կուսակցության մեջ վերջինից

առանձնացած այս կամ այն խմբակի տեսակետը։ Կարող են պատահել և պատահել են դեպքեր, երբ ջոկվել են կոմունիստների առանձին խմբեր, վորոնք համաձայն չեն յեղել կուսակցության գծի հետ և աշխատել են իրենց տեսակետների համար պայքարել կուսակցության դեմ։ Այդ կոմունիստները խախտել են մեր պրոլետարական դիսցիպլինան։

Նման խմբակների, ֆրակցիաների հետ կուսակցությունը շատ խիստ է վարվում։ (Բա ինչպես կուզեյիր)։ Ի՞նչ կլիներ, յեթե կուսակցությունը բաժանվեր տասնյակ խմբակների, յուրաքանչյուրն իր տեսակետն ունենար, իր գիծը, և այդ տեսակետների ու գծի համար պայքարեր կ՚ուսակցության ներսում։ Սա մի կատարյալ շիլափլավ կդառնար, և վոչ թե՝ կուսակցություն։ Եվ ով ականջ կդներ նման կուսակցությանը, ով կմտներ նրա շարքերը։ Վո՛չ վոք։ Կուսակցությունը յերկիր ղեկավարել չեր կարողանա, նրա մեջ յեղած խմբակներն ավելի կառանձնանային, կդառնային մի շարք առանձին փոքրիկ-փոքրիկ կուսակցություններ, իսկ այս բոլորից վերջին հաշվով ուժեղու յեր պրոլետարիատի դիկտատուրան։

Համամիութենական յուրաքանչյուր համագումարից առաջ, կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջադրում է ի քննություն վողջ կուսակցության այն բոլոր խնդիրները, վորոնք վերաբերվում են յերկրի ղեկավարման և ներկուսակցական կյանքին։ Այդ բանը քննության է առնվում վողջ կուսակցության կողմից։ Յուրաքանչյուր կոմունիստ պետք է ակտիվ կերպով մասնակցի այդ քննությանը։ Բայց այդ քննության առնելը պետք է կատարվի առանց խմբակայնության, այլ գործնականորեն։ Իսկ յերբ գումարվում է համագումարը, կասի իր հատու խոսքը, վողջ կուսակցությունն առանց վիճաբանությունների, թևերը քշտած պետք է ձեռնարկի նրա վորոշումների իրագործմանը։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու կուսակցությանը դիսցիպլինա յե պետք։
2. Ինչով պետք է արտահայտվի կոմունիստի դիսցիպլինարությունը։
3. Կոմունիստն ինչպես կարող է կուսակցության ներսում արտահայտել իր կարծիքը։

ՏԱՍՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Մինչ ցարի տապալումը, Ռուսաստանի բանվորագյուղացիական յերիտասարդությունն իր կազմակերպությունը չուներ։ Շատ դժվարին ու ծանր ժամանակներ եյին։ Այժմյան կոմյերիտականներից շատ քչերը կարող են հիշել այն։ Չ՞ վոր այն ժամանակ, յերբ տապալեցին ցարին, մեզնից շատ շատերն իրենց քիթն անգամ սրբել չեյին կարողանում։

Պատահում է, վոր բանվորն ու գյուղացին հաճախ գանգատվում են իրենց վիճակի մասին. չե, սա չէ մի բան չէ, սա չէ բանի պետք չէ։ Բայց փորձեցեք համեմատել, թե ինչպես եյին ապրում առաջ աշխատավորները և ինչպես՝ հիմա։ Այժմյան ապրուստը, հավատաս, վ՞որ դրախտ կթվա։

Մենք չենք խոսում հարուստների, կուլակների, կալվածատերերի և ֆաբրիկանտների մասին։ Նրանք, իհարկե, ներկայումս ավելի վատ են ապրում։ Բայց բանվորի և գյուղացու չքավոր և միջակ խավերի տանջանքներին վերջ է տրվել։ Հենց այս բանն է, վոր պետք է հիշենք միշտ։

Ի՞նչպես եր ապրում այն ժամանակ գյուղացի յերիտասարդությունը։ Ապրում եր այնպես վատ, վոր դրանից դենը պատկերացնել չի լինի։ Աշխատել սկսում եր մանուկ հասակից։ Գրել-կարդալ սովորում եր գյուղյերիտասարդության կեսից քիչը, և այն էլ ավելի ուժեղ տնտեսության զավակները։ Իսկ մնացածը խավար, ծանր և միապաղաղ աշխատանքով ծանրաբեռնված՝ «այբ» ու «բենն» անգամ չեյին կարողանում սովորել և իրենց ամբողջ կյանքում անգրագետ եյին մնում։

Քիչ-քիչ ջահելն սկսում եր զգվել, իսկույն վրա եր հասնում սալդատությունը։ Այն ժամանակ բանակում պահում եյին վոչ թե մեկուկես կամ յերկու, այլ չորս տարի։ Ցարական բանակում, զորանոցում ծեծում եյին անխնա, ատամներ ջարդում, պատահում եր, վոր այս կամ այն հանցանքի համար անց եյին կացնում մի ամբողջ շարքի միջով և ամեն կողմից հարվածում, իսկ յերբեմն էլ իր յեղբայր գյուղացուն կամ բանվորին գնդակահարել ստիպում։

Իսկ յերբ չորս տարվա ծառայությունից հետո տուն եյին վերա-

դառնում, տնտեսությունդ վողջը քայքայված եր լինում։ Ի՞նչպես կարող եր յերբեմն նույնիսկ մատղաշ յերեխաներով ծանրաբեռնված կինդ տնտեսությունդ քաշ տալ, առաջ տանել։ Դե, ելի լծվիր, լուծը ուսդ առ, քաշիր, պարտքի տակ ընկիր, սնանկացիր, իսկ թե կսկսես տըրտնջալ, ուրյադնիկը հենց պատրաստ ե ու հաղիր. կհրամայի ծերուններին ծեծել քեզ, և կամ թե չե՝ դատի կտա։

Լավ եր ապրում արդյոք բանվոր յերիտասարդությունը քաղաքներում։ Վոչ, լավ չեր ապրում։ Մանուկ հասակից աշխատանքը բանվոր յերիտասարդի բաժինն եր։ Իսկ այն ժամանակվա և ներկա գործարանի բանվորի աշխատանքը միմյանց հետ համեմատել ել չի կարելի։ Աշխատում եյին 10 ժամից ավելի։ Վարպետներն այնքան աշխատել չեյին սովորեցնում, վորքան ծեծում եյին, աշակերտներին ծաղրի յենթարկում և նրանց միկիտանները արաղի յետևից ուղարկում։ Յեվ այդ բոլորի համար նրանց գրոշներ եյին վճարում, մի թեթև սխալի համար տուգանում, իսկ պատահում եր՝ գործարանից ել դուրս եյին շպրտում։ Յեվ դույզն մի բանով եր լավ բանվոր յերիտասարդության վիճակը, այն, վոր քաղաքում նրանք շուտ եյին սովորում, գրագետ դառնում և գործարանում միասնական աշխատանքի ժամանակ խմբով գործել սովորում, սովորում սարի պես կանգնել մեկ-մեկի քամակին, կամ ինչպես հիմա յեն ասում, սովորում եյին կոլեկտիվ ու կազմակերպված կերպով հանդես գալ վարպետների, ֆաբրիկանտների և ցարական իշխանության դեմ։

Յեվ պարզ ե, թե ինչու նման պայմաններում, յերբ տապալեցին ցարին,—փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ բանվոր յերիտասարդությունը կազմակերպվելու հնարավորություն ստացավ, յերիտասարդական կազմակերպությունները աճել սկսեցին, ինչպես՝ անձրևից հետո սունկը։

Սկզբնական շրջանում նրանք ծայր առան քաղաքից և ապա թափանցեցին նաև գյուղը։ Զանազան անուններ ունեյին նրանք։ Մի տեղ՝ «Աշխատանք և լույս», մի ուրիշ վայրում՝ «Փարոս», մի այլ տեղ՝ «Յերրորդ Ինտերնացիոնալի անվան յերիտասարդական միություն» և այլն։

Բուրժուազիան իսկույն և եթ գլխի ընկավ, թե ինչպիսի վտանգ եր ներկայացնում յերիտասարդական շարժումը։ Նա հասկացավ, վոր յերիտասարդները միշտ ել տաքարյուն են, վճռական ու հեղափոխական։ Այդպիսի տղերքը միշտ ել սպառնալիք կարող եյին լինել նրա հանդստի համար։ Չե՞ վոր ցարի տապալումից հետո բուրժուազիան շարունակ մտածում եր այն մասին, թե ինչպես հանդարտեց-

նի բանվորների և գյուղացիների ալեկոծված ծովը։ Յեվ ահա, նրա առանձին ներկայացուցիչներն աշխատում են յերիտասարդական շարժումն իրենց ձեռքն առնել։ «Ձեր գործը սովորելն է, — ասում եյին նրանք յերիտասարդությանը,—թող հասակավորները կռվեն, արյուն թափեն, պայքարեն, իսկ դուք սովորեցեք»։ Շեվցովը, վոր պատկանում եր բուրժուական կուսակցության և ղեկավարում յերիտասարդական «Աշխատանք և լույս» կազմակերպությունը, հենց այդպես էլ գրել է. «Թող մեր հայրերը մտածեն բուրժուազիայի դեմ հետագա հաղթանակը տանելու մասին, իսկ յերիտասարդության համար անհրաժեշտ է սովորել, առաջին հերթին»։

Շեվցովը և նրա հետ միասին վողջ բուրժուազիան ուզում եյին ուսումն առանց կռվի, այնպիսի ուսում, վոր կտրեր յերիտասարդությանը հեղափոխական գործերից։ Իսկ յերիտասարդությունն հենց դեպի փողոց եր ձգտում, կռիվների ժխորի մեջ, այնտեղ, վորտեղ ընթանում եյին ճակատամարտները։ Նա սովորել ցանկանում եր, բայց սովորել ուզում եր պայքարի մեջ և մասնակցել իր հայրերի և ավագ յեղբայրների հետ 1917 թ. հոկտեմբերին բանվորների կողմից իշխանության գրավմանը։ Յեվ 1918 թվի նոյեմբերի 29-ին, իրենց առաջին համագումարում, յերիտասարդական կազմակերպությունները վորոշեցին ընդունել բոլշեվիկների կուսակցության ծրագիրը յեվ իրենց «Կոմունիստական Յերիտասարդական Միություն» կոչել։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես եր ապրում մինչ հեղափոխությունը բանվորական և գյուղացիական յերիտասարդությունը։
2. Ի՞նչու փետրվարյան հեղափոխությունից հետո բուրժուազիան ուզում եր ղեկավարել յերիտասարդական շարժումը։

ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոմսոմոլն ինչու համար գոյություն ունի։ Ի՞նչ խնդիրներ է դնում նա իր առաջ։ Կոմյերիտմիության նպատակն էլ այն է, ինչ վոր է և՛ կոմունիստական կուսակցությանը, և վողջ բանվոր դասակարգինը։ Այդ նպատակը սոցիալիստական հասարակարգ կառուցելն է։ Ուրիշ և վոչ մի նպատակ նա չունի։ Յեվ սա հասկանալի չէ, թե ինչու։ Չէ՞ վոր յերիտասարդական շարժումը, ամբողջ բանվոր դասակարգի շարժումից առանձնացած մի ինչ վոր բան չէ, այլ այդ շարժման մի մասն է միայն։

Կոմյերիտմիության խնդիրները մեր առաջ պարզ ու մեկին ձևով դրեց Վլադիմիր Իլյիչ Լենինը: Կոմսոմոլի III համագումարում նա հանդես յեկավ և հայտարարեց.—«Յերիտասարդության խնդիրն այն ե, վորպեսզի նա սովորի կոմունիզմը»:

Թույլ տվեք, ախր այդ ինչպես: Չե՞ վոր հենց Շեվցովն ել յերիտասարդությանը սովորել եր առաջարկում: Ել ինչ տարբերություն կա այն բանի մեջ, վոր սա յե գրել, և նրա—վոր ասել ե Լենինը:

Տարբերությունը շատ խոշոր ե: Բանն այն ե, վոր սովորել կարելի յե զանազան ձևով: Ի՞նչ կրթության մասին եր խոսում Շեվցովը: Այնպիսի կրթության մասին, վորն անպետք ե բանվորների և գյուղացիության պայքարի համար: Այսինքն, թե թող փողոցներում վորոտան թնդանոթները, թող այնտեղ կռիվ լինի, մեր գործը այդ բանից հեռու մնալն ե, մենք դեռ յերիտասարդ ենք, մատղաշ, պետք ե սովորենք, իսկ յերբ սովորենք պրծնենք, այդ դեպքում գուցե մենք ել մեզ ցույց տանք:

Այդպիսի կրթությունը սուտ ե, ինքնախաբեություն: Աշխարհում մի այնպիսի սուտ չկա, վորը հին ժամանակ դասագրքերի մեջ չգտնվեր, յեթե այնտեղ մարդկային կյանքի մասին եր խոսվում: Դուք դեռ կարող ե պատահել, վոր չիմանաք թե հին դպրոցներում ինչպես եյին անցնում մեր յերկրի պատմությունը: Այն ժամանակ բանվորների և գյուղացիների ծանր վիճակի, նրանց պայքարի և տանջանքների մասին չեյին սովորեցնում, վատթար դրությունից դուրս գալու յելքը ցույց չեյին տալիս:

Սովորեցնում եյին թագավորների կյանքն ու քաջագործությունները, ապացուցում եյին, թե նրանք ինչպիսի լավ մարդիկ են յեղել, ինչպես են պատերազմել, «հաղթել» ուրիշ ժողովրդներին, և ինչպես պետք ե հնազանդ լինել նրանց: Ահա հենց այն բանի համար—վորպեսզի ցարի նշանակած նաչալստվոյին լսել, վորպեսզի նրան հնազանդ լինել, վորպեսզի բունտեր չանել, վորպեսզի վիզը ծռել,—հին ժամանակ սովորեցնում եյին: Ահա թե ինչպիսի կրթություն եր ուզում տանել բուրժուազիան յերիտկազմակերպությունները:

Կոմյերիտմիության III-րդ համագումարում Լենինը նման կրթության մասին չի խոսել: Նա խոսել է այն կրթության մասին, վորը կապված է կյանքի հետ, բանվորների եվ գյուղացիների աշխատանքի եվ պայքարի հետ:

> *«Կոմյերիտականը—ասաց նա,—պետք ե սովորի, պետք ե իմանա այն բոլոր ճշտությունները, վորը հին դպրոցն ե սովորեցնում, բայց գրքի մեջ չպետք ե թաղվի, տառակերություն չանի, այլ*

իր ուժերն ու գիտությունը տա բանվորների և գյուղացիների գործին, նոր կյանքի ստեղծման գործին»։

Ահա այսպիսի կրթությունը, որը երիտասարդությանն աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ է տալիս, սովորեցնում է նրան հասկանալ իր շրջապատի կյանքը, սովորեցնում է իր սեփական ձեռներով վերակառուցել այդ կյանքը, սա է, որ երիտասարդության լենինյան դաստիարակություն է կոչվում։

Այսպիսի միջոցով են դաստիարակվում սոցիալիստական հասարակության կառուցողները։ Այս գրքույկի մեջ մի քանի անգամ է խոսվել այն մասին, որ բանվորներն ու գյուղացիության հիմնական մասսան սոցիալիզմ են կառուցում։ Բայց սոցիալիզմ առանց գիտության, առանց կարողանալու, առանց համառ կրթության, կառուցել չես կարող։ Ձեռք բերել այդ գիտությունը—ահա թե որն է երիտասարդության խնդիրը։

Բայց գրոշ էլ չարժեն այնպիսի գիտությունները, որոնք կտրված են մասսաններից։

Կոմյերիտականը սովորում է, մասնակցելով այն հսկայական շինարարությանը, վորը կատարվում է յերկրում։ Նա սովորում է ամեն օր, օգնելով կուսակցությանն ու խորհիշխանությանը լուծելու այն խնդիրները, վորոնք կանգնած են վերջիններիս առաջ։

Ահա մի քանի թվեր. կոմյերիտմիության տասնամյա տարեդարձի ժամանակ, խորհրդային օրգաններում ընտրված կոմյերիտականների թիվը հասնում էր 100 հազարի, կոոպերացիայի վարչությունների և վերստուգիչ հանձնաժողովների կազմում—9500-ի, պրոֆմիութենական ակտիվի կազմում—130 հազարի։ Այս թվերը ցույց են տալիս, թե ինչպես է աշխատում և սովորում կոմյերիտականը։

Համարյա թե քառորդ միլիոնի չափ կոմյերիտականներ աշխատում են պրոֆեսիոնալ և կոոպերատիվ գծով։ Ահա սրանք էլ մարդիկ են, որոնք ներկայումս սովորում են և միաժամանակ խոշոր հասարակական աշխատանք են տանում, պատրաստվում են սոցիալիզմի լավագույն կառուցողները դառնալ։ Նրանց կրթությունը լոկ գրքով չի, այլ ամբողջ բանվորական գործի հետ է կապված։ Հենց այսպիսի կրթության էլ երիտասարդությանը կոչ էր անում Վլադիմիր Իլիչը։

Մեր առաջ են ահա մի քանի մարդիկ, որոնք աճել են կոմսոմոլի շարքերում, դուրս եկել նրա ծոցից, ներկայումս տանում են խոշոր և կարևոր աշխատանքներ։ Իր այս անդամների մասին պետք է վողջ կոմսոմոլն իմանա։ Ահա թե ինչու համար այս դասագրքում մենք գրում ենք դրանց մասին։

Ընկ Պոլինը—գիտական հետազոտությունների գծով աշխատում է Մոսկվայում, Ինդուստրիալ-մանկավարժական ինստիտուտում: Ընկեր Ռիբալկինան—կոմյերիտական, ներկայումս Մոսկվայի առաջին պետհամալսարանում ասպիրանտ է, աշխատում է Բուսաբանական ինստիտուտում: Նրա գիտական աշխատությունը նվիրված է թթվացող բակտերիաների ուսումնասիրությանը: Ընկ. Կալյայեվ, կոմյերիտական: Կամավոր է չոգել Կարմիր բանակում, ներկայումս աշխատում է Լուսժողկոմի Մեկրոբիոլոգիական ինստիտուտում: Նրա առաջին գիտական աշխատությունը հրատարակվել է Նորերս, գերմանական առողջապահական-գիտական ժուռնալում:

Ընկ. Միխայլով—Սոկոլնիչեսկի ռայոնի խորհրդի նախագահ (Մոսկվայում):

Ընկ. Կլյույեվ —«Պրոլետարիյ» մանածագործարանի դիրեկտոր:

Կարելի՞ չէ ասել, թե կոմսոմոլը—դա լոկ դաստիարակչական կազմակերպություն է, թե նրա գործը միայն կրթական բնույթ է կրում: Ինարկե, վոչ: Նա դաստիարակչական բնույթ կրող կազմակերպություն է, բայց միաժամանակ նայեվ բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպություն է, վորը խոշոր մասնակցություն է ցույց տալիս նրա վողջ կյանքի յեվ պայքարի բնագավառներում:

Բայց բանվոր դասակարգի քաղաքական-մարտական կազմակերպություն նա կդառնա այն դեպքում, յեթե աշխատի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Կուսակցությունը բանվոր դասակարգի ուղեղն է, նրա առաջավոր մասը: Յեվ նա չէ ղեկավարում է բանվորական կազմակերպությունների զանազան ձևերը, յեվ կոմսոմոլը բանվոր ու գյուղացի յերիտասարդության լայն շերտերը կապում է կուսակցության հետ:

Կոմսոմոլն ինչպես է անում այս բոլորը: Ինարկե, վոչ թե հրամաններ տալով: Անձնական որինակով, աշխատասիրությամբ, մարտական դիրքերում առաջինը լինելու ձգտումով կոմսոմոլը սովորեցնում է յերիտասարդությանը գնալ կուսակցության հետեվից: *Այս բանն էլ մեզ սովորեցրել է Լենինը: Նա ասել է.*

«Կոմունիստական հասարակարգ կառուցող միլիոնների մեջ դուք առաջինը պետք է լինեք. այդպիսին պետք է լինի յուրաքանչյուր յերիտասարդ տղա և յերիտասարդ աղջիկ: Առանց բանվորա-գյուղացիական յերիտասարդության վողջ մասսային կոմունիզմի այդ շինարարության մեջ ներգրավելու, կոմունիստական հասարակություն դուք չեք կառուցի...

Կոմունիստական յերիտասարդական միությունը պետք է

մի հարվածային խմբակ լինի, վորն ամեն աշխատանքի ժամանակ ցույց է տալիս իր ոգնությունը, ցուցահանում է իր ինիցիատիվան, իր նախաձեռնությունը։

Կոմունիստական յերիտասարդական միությունը պետք է այնպիսին լինի, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր հանձինս նրա տեսնի մարդկանց, վորոնց ուսմունքը կարող է նրան հասկանալի չլինել, մի ուսմունք վորին նա իսկույն և յեթ կարող է չհավատալ, բայց հանձինս նրանց կենդանի գործի, հանձինս նրանց գործունեյության, նա տեսնի, վոր իրոք սրանք այն մարդիկն են, վորոնք իրեն ցույց են տալիս ճիշտ ուղին»։

Ահա ձեզ կոմյերիտականի բարեխիղճ, լուրջ—լենինյան աշխատանքի ցայտուն որինակը։

Կոմյերիտական Բուլանովը 1921 թվի վերջին վերադառնում է ֆրոնտից Հյուսիսային Կովկասի իր հայրենի Բելյանսկոյե գյուղը։ Սովի տարիներ եյին, հարազատները բոլորը ցրվել եյին դես ու դեն, խրճիթը կրակի յեր մատնվել։

Ի՞նչ պետք եր անել։ Յեվ կոմյերիտական Բուլանովը վորոշում է կոլտնտեսություն հիմնել։ Նա գյուղից հեռանում և տեղավորվում է մի առանձին հողամասում։ Քիչ անց բատրակներից ու սակավահող գյուղացիներից 8 ընտանիք միանում են նրան. պետությունը կոլտնտեսության համար հող է հատկացնում։

«Բունտովշչիկներին» ձեռք եյին առնում,—«Բան դուրս չի գա,— ծաղրում եյին կուլակները,— չուլ եք ուփալասների մեջ ել կմնաք»։

Անցել է արդեն հինգ տարի։ Այդ ժամանակաշրջանում մի բուռն մարդիկ սկսել են նոր ձևով տնտեսություն կառուցել։ Չնայած անհաջող բերքին, յուրաքանչյուր տարի ամրապնդվում է նա։ Համերաշխ ու միղվաջան եյին աշխատում։ Անցյալ տարի ընկ. Բուլանովը հանկարծակի քաղաք գնաց և վերադարձին իր հետ մի հրաշալի տրակտոր բերեց։

Այդ տրակտորը նա գնել եր ապառիկ՝ վարկային ընկերության միջոցով։ Տրակտորը բանն ավելի հեշտացրեց և կուլակներն ավելի ու ավելի կատաղեցին։

Տնտեսության աճման հետ զուգընթաց աճեց նաև կոլեկտիվի անդամների թիվը։ Ներկայումս կոլեկտիվն ընդգրկում է 25 տնտեսություն։ Յերկու շոգեկալսիչ ունի, մի շոգեջաղաց, վորն անցյալում պատկանելիս է յեղել տեղական կուլակներից մեկին, 5 զույգ յեզ և 3 ձի։

Անցյալ տարի կոլեկտիվն իր սեփական դպրոցը կառուցեց։

Այժմ էլ կոլեկտիվի անդամներին բոլորն էլ նախանձում են, և կոլեկտիվ մտնել ցանկացողների թիվը շատ է։

Կոմյերիտական Բուլանովի գործունեությունն օրինակն է հենց այն աշխատանքի, որպիսին սովորեցրել է Լենինը։ Նա գյուղացիական տնտեսությունները համախմբել, միացրել է՝ միասնական, կոլեկտիվ աշխատանքի համար։

Կոլեկտիվի մեջ նա առաջինն է եղել, հանդիսանալով լավագույն, ամենից բարեխիղճ և ամենից դիսցիպլինար աշխատողը։ Հենց սա էլ նշանակում է լենինեց լինել։

Վերցնենք մի ուրիշ օրինակ՝ ցույց տալու, թե ինչպես է կոմսոմոլը համախմբում իր շուրջը երիտասարդությանը, երկրի առաջ ծառացած խնդիրների իրագործման համար։ Դուք գիտեք, որ մեր երկիրը թուջի (չուգունի) կարիք է զգում։ Ամեն տեսակի մեքենաներ, որոնց թվում և գյուղատնտեսական մեքենաներ մեծ քանակությամբ արտադրել մենք կարող էինք, եթե թուջի հումք շատ ունենայինք։ Մինչդեռ թուջի հսկայական կտորտանք թափթփված են պահեստներում, մարագներում, գործարանային բակերում, թափված հենց իզուր տեղը։ Կոմսոմոլը կոչ արձակեց. «Հավաքեցե՛ք մետաղի կտորտանքը, Խորհրդային գործարանները նրանցից մեքենաներ կձուլեն»։ Յեվ աշխատանքը եռաց։ Հազարավոր տոններով թուջը, որ կորչում էր իզուր տեղը, ածվեցին խորհրդային հնոցների մեջ։ Իհարկե, սրանով թուջի պակասը չվերացվեց, թուջը հիմա էլ չի բավարարում, բայց այնուամենայնիվ երիտասարդ տղերքը միահամուռ ջանքերով այդ գործում երկրին օգնելու ասպարեզում իրենց մասնակցությունը ցույց տվին։

Կամ հիշեցեք այն շաբաթօրյակները, որոնք անցյալ տարի գյուղացիներին օգնելու նշանաբանի տակ կոմսոմոլն անց էր կացնում։ Յեվ համարյա թե չկար մի կոմյերիտական բջիջ, որն իր աշխատանքով գյուղացիներին օգնության չհասներ։ Իսկ սա հենց կոմունիստական աշխատանքի օրինակն է։

Աշխատանքի մեջ առաջինը լինել, ամենից դիսցիպլինար, ամենից գիտակիցը, ամենից աշխատասերը—ահա թե ինչ է նշանակում լինել Լենինյան կոմսոմոլի անդամ։

Այս աշխատանքի հետ կապված համառ կրթությունը կոմսոմոլի շարքերում դաստիարակում է իսկական բոլշևիկի։

Կուսակցության համարյա թե չորս հարյուր հազար անդամները,—նրա կազմի մեկ քառորդը, կոմսոմոլի միջով են անցել, մասամբ հիմա էլ կոմսոմոլի շարքերում են գտնվում։

Նշանակում է՝ կուսակցության համար միությունը յերկուստեք աշխատանք է կատարում: Նախ՝ նա կուսակցությանը միացնում է աշխատավոր յերիտասարդության մասսաների հետ, այդ յերիտասարդությանը համախմբում է նրա խնդիրների իրագործման շուրջը, յեվ յերկրորդ՝ իր շարքերում կուսակցության անդամ համար կադրեր է պատրաստում:

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Լենինը յերիտասարդությանն ավանդեց ինչպես սովորել:
2. Ինչ՞պիսին պետք է լինի կոմյերիտականը:
3. Կոմսոմոլն ինչպես է պատրաստում իր շարքերում կուսակցության համար կադրեր:

ԿՈՄՍՈՄՈԼԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է

Այսպես ուրեմն, կոմյերիտմիության խնդիրն այն է, վորպեսզի սոցիալիզմի կառուցողների կադրեր պատրաստի և միաժամանակ բոլշևիկյան կուսակցության ազդեցությունը տարածի աշխատավոր յերիտասարդության շրջանում, իր շարքերում պատրաստելով կոմունիստների համար փոխարինողներ: Իսկ սա նշանակում է, վոր իր խնդիրներով կոմսոմոլը պրոլետարական, կոմունիստական կազմակերպություն է: Նա իր վողջ գործունեությամբ ոգնում է շահագործողների դեմ բանվոր դասակարգի տարած հաղթանակին, իսկ հաղթանակից հետո յեվ՝ խորհրդայնացման ամրապնդմանն ու սոցիալիստական շինարարությանը:

Հենց այս պատճառով էլ կոմկուսն է ղեկավարում կոմյերիտմիությունը: Կոմկուսը — բանվոր դասակարգի ուղեղն է, նրա առաջավոր, ամենից գիտակից մասը: Յեվ նա ղեկավարում է բոլոր բանվորական կազմակերպություններին, նրանց ճանապարհ է ցույց տալիս:

Նախորդ դրույցներից դուք գիտեք, վոր ԽՍՀՄ-ում շատ ու շատ կազմակերպություններ կան, վորոնք իրենց գործունեությամբ ոգնում են բանվոր դասակարգի կապիտալիստների դեմ տարած հաղթանակին և սոցիալիստական շինարարությանը: Յեվ կուսակցությունը, և՛ խորհրդայնությունը, և՛ պրոֆմիությունները, և՛ թե կոմսոմոլը այս ուղղությամբ են աշխատում: Իսկ ինչպես է լինում, վոր այդ կազմակերպությունների աշխատանքի մեջ անհամաձայնություններ չեն լինում, վոր նրանք համերաշխ են աշխատում, վոր այդ կազմակերպություններից և վոչ մեկը սխալ ճանապարհի վրա չի թեքվում: Իսկ այս

բանը լինում է հենց այն պատճառով, վոր բոլոր այդ կազմակերպությունները իրենց աշխատանքների ընթացքում աշխատում են կոմկուսի ցուցմունքներով։ Կոմկուսը բոլոր բանվորներին և աշխատավորներին ղեկավարում է ու ցույց է տալիս նրանց պայքարի ուղիները։

Ահա թե ինչու համար կոմյերիտմիության գծի ճշտության հիմնական նախապայմանը կուսակցության հաստատուն ղեկավարությունն է հանդիսանում։ Չնայեր կուսակցությունը յերիտասարդական շարժմանը, չղեկավարեր նրան, չօգներ նրան մշտապես, և ով գիտի, թե մենք ինչեր ասես վոր չանեյինք։ Չէ՞ վոր մենք կուսակցության հսկայական փորձը, նրա գիտությունը, նրա հեղափոխական կոփվածությունը չունենք։

Ճիշտ ճանապարհով գնալու համար կոմսոմոլն ընդունում է կուսակցության ծրագիրն ու նրա ղեկավարությունը, սա հաստատուն ու անխախտ է։ Կուսակցական ղեկավարությունը գլխավոր հենակետներից մեկն է, վորի վրա կանգնում է կոմսոմոլը։

Հիշում եք, թե իր պայքարի ընթացքում բանվոր դասակարգը ինչ նպատակի յե հետապնդում։ Այդ նպատակն իշխանության գրավումն է, ամրապնդումն ու սոցիալիստական հասարակարգի կառուցումը, այնպիսի հասարակություն, ուր շահագործում չի լինի, ուր բոլորը հավասար կլինեն, և վորտեղ կվերանա ամեն տեսակի բաժանումը դասակարգերի։

Բայց մի՞թե միայն ու միայն բանվորներն են շահագրգռված այն բանով, վորպեսզի նման հասարակություն լինի։ Վոչ։ Այդ բանով բոլոր աշխատավորներն էլ շահագրգռված են։ Բանվորները միայն ամենից լավ են գիտակցում այս բանը և աշխատավորների մյուս խավերից ավելի լավ են պատրաստված սոցիալիզմի համար պայքարելու։ Բայց և չքավոր գյուղացին յեվ կամ միջակը նույնպես շահագրգռված են այն բանով, վորպեսզի շահագործումը վերանա, վորպեսզի սոցիալիստական հավասարություն լինի։ Այս բանով շահագրգռված չեն միայն նրանք, ովքեր շահագործում են, այսինքն բուրժույները, կուլակները և ուրիշները։

Հենց այն պատճառով, վոր կոմսոմոլի նպատակներն աշխատավոր գյուղացիության լայն մասսաների շահերին չեն հակասում, հենց այս պատճառով էլ միության մեջ ընդունվում են վոչ միայն բանվորները, այլև բատրակները, չքավորները և այն միջակ-գյուղացիները, վորոնք հասարակական աշխատանքներում ստուգված են, ապացուցել են, վոր իրենք չքավորի հետ միասին կուլակի դեմ են գնում, վորոնք իրենց տնտեսությունը կոոպերատիվ ճանապարհի վրա յեն հանում։

Նշանակում է, վոր իր նպատակներով կոմսոմոլը բանվորական-պրոլետարական կազմակերպություն է, իսկ կազմով՝ բանվորագյուղացիական։ Այս բանը հետևյալ թվերից էլ յերևում է։

Կոմսոմոլի տասնամյակին (1928 թ.) նրա շարքերում մոտ յերկու միլիոն անդամ էր հաշվվում։

Այս թվերը ցույց են տալիս, վոր բանվորներն ու գյուղացիները միության անդամների հիմնական մասսան են։ Թե մեկի և թե մյուսի քանակը կոմսոմոլում հավասար են իրար։

Պատահում է, վոր միքանի կոմյերիտական գյուղացիներ հայտարարում են. «Տեսեք, մեր և բանվորների թիվը միության մեջ հավասար է։ Ել ինչու համար միության ներսում ղեկավարությունը բանվոր յերիտասարդությանը պետք է պատկանի։ Տվեք մեզ, գյուղացիներին տվեք ղեկավարությունը, չէ՞ վոր մենք շատ ենք, մենք էլ ղեկավարել ենք ուզում։

Պարզ բան է, վոր նման կոմյերիտականը մոռացել է, թե ինչու համար է ինքը միության շարքերն անցել։ Նա միություն է յեկել, վորպեսզի սոցիալիստական հասարակակարգի կառուցողը դառնալ սովորի, վորպեսզի իրեն վերադաստիարակի, վորպեսզի արմատախիլ անի իր միջից դեպի իր անկյունը, և իր սեփական հողն ունենալու ցանկությունը, վորը սովորական է գյուղացու համար նրա վողջ կյանքում։ Մի խոսքով, նա միության շարքերն է անցել, վորպեսզի կոլեկտիվիստ դառնա, իսկ այս բանը միայն այն ժամանակ կլինի, յերբ նա բանվոր դասակարգի ղեկավարությամբ աշխատի, վորովհետև բանվոր դասակարգը հանդիսանում է ամենահետևողական, ամենավճռական և ամենահեղափոխական դասակարգը։ Ախր, առաջ ավելի մանրամասն պարզեցինք, վոր բանվորության ղեկավարությամբ միայն գյուղացիները պայքարի մեջ հաղթանակ ձեռք բերին։ Յեթե այս բանը մեր միությանը վերագրենք, նշանակում է, վոր վերջինիս ղեկավարությունը պետք է նրա բանվորական հատվածին, պրոլետարական միջուկին պատկանի։

Իսկ ի՞նչ է նշանակում սա։ Արդյոք սա նշանակում է, վոր կոմիտեի մեջ գյուղացիներին, չքավորներին և լավագույն միջակներին չպետք է ընտրել, վոր իբր թե ամեն տեղ միայն ու միայն բանվորներին պետք է նստեցնել։ Իհարկե, վոչ։ Ընդհակառակը, պետք է չքավոր գյուղացիներին առաջին հերթին ղեկավարության մեջ ներգրավել, կոմիտեի կազմում և բջիջների բյուրոներում նրանց ընտրել, վորպեսզի նրանցից զարգացած և խոշոր ղեկավարներ աճեն։ Հենց այդպես էլ արվում է։

1928 թվին Միության նահանգային և գավառային կոմիտեների հարյուր անդամներից բանվորներն ու բատրակները 55 հոգի էին, իսկ գյուղացիները—25։ Նշանակում է, որ միությունը ղեկավար աշխատանքների մեջ առաջ է քաշում գյուղացիական չքավոր և մասամբ էլ միջակ յերիտասարդությանը, բայց նա իր խնդիրն համարում է այն, որպեսզի ղեկավարության գլուխն անցնեն մեծ թվով կոմյերիտական բանվորներ, որոնք գործարանում դաստիարակվել են, դիսցիպլինար են դարձել յեվ ընդունակ են ղեկավարելու, ապահովելու կոմսոմոլի մեջ կուսակցության գծի կիրառումը։

Բայց խնդիրը միայն այն չէ, թե կոմիտեյի մեջ ով է ընտրվում, բանը և՛ այն է, որպեսզի յուրաքանչյուր բջիջ իր աշխատանքի ընթացքում պրոլետարական, բանվորական գիծ կիրառի, որպեսզի նա այլ ճանապարհի վրա չշեղվի ու կուլակային բուրժուական ազդեցությունների տակ չընկնի։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչու կուսակցությունը կոմսոմոլին պետք է ղեկավարի։
2. Ի՞նչու կոմսոմոլը,—չնայած որ նրա շարքերում գյուղյերիտասարդությունը բավական շատ է,—պրոլետարական կազմակերպություն է։
3. Ինչու՞ ղեկավար աշխատանքներին կոմսոմոլը բանվոր տղերանց է առաջ քաշում։

ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆ ՄԵՐ ՏԱՆՆ Է

Յեկեք ստուգենք, թե արդյոք մեզ մոտ ամեն բան լա՞վ է, ամեն գյուղական բջիջ իսկապես ճի՞շտ գծով է առաջ գնում։ Շատ քիչ համարձակներ կլինեն, որոնք կասեն, թե իսկապես ամեն բան լավ է։ Ընդհակառակը, դեպքերը բազմաթիվ են, որոնք ապացուցում են, որ գյուղական բջիջը յերբեմն ուղիղ ճանապարհից թեքվում է, յերբեմն իրեն էլ չնկատելով այդ բանը, թե ինչպես նա աստիճանաբար բանվոր դասակարգի թշնամիների—կուլակների, տերտերի յեվ աղանդների ձեռքին խաղալիք է դառնում։

Այս բանն ամենից առաջ կոմյերիտմիության կազմին է վերաբերվում։ Գյուղում այսպիսի գիծ պետք է լինի,—աշխատիր միության մեջ ներգրավելու բոլոր բատրակներին, լայն չափով ընդգրկի՛ր չքավորներին, միջակներից քո շարքերի համար ընտրի՛ր միայն հասարա-

կական աշխատանքներում փորձված, սոցիալիստական հասարակության համար պայքարող, իրենց տնտեսությունը անհատականից կոլեկտիվացման մեջ գնելու ուղղությամբ ձգտող ամենալավերին, նրանց, վորոնք պայքարում են կուլակների դեմ. իսկ կուլակների ու նրանց համհարդների առաջ միության դռները պինդ կողպիր, վորպեսզի նրանք այդ դռնից ներս չսողան։

Ահա այս գծի կիրառումն ստուգելու համար Համ ԼԿԵՄ Կենտկոմը 300 գյուղական բջիջներ է ուսումնասիրել։ Պարզվում է, վոր այդ բջիջներում միջակը շատ հաճախ իրեն չխավոր է հայտարարում, իսկ կուլակը միջակի անվան տակ սողոսկել է այնտեղ։

Այդ բջիջներում մոտավորապես 4,1% կուլակներ են յեղել, անդամների կեսից ավելին միջակներ, վորոնցից շատերը շատ ուժեղ տընտեսություն են ունեցել։

Այս ուսումնասիրությունն ինչ է ապացուցում։ Նա ցույց է տալիս, վոր նախ և առաջ՝ պետք է մտածել հարուստների և կուլակների մասին, վորոնք միության շարքերն են սողոսկել։ Նրանցից և վոչ մեկը մեր շարքերում չպետք է լինի։ Իսկ նրանք հենց այնպես էլ `սողոսկել են և վոչ միայն մեկը, յերկուսը, այլ բավական զգալի քանակով։

Յեվ, հետո, աչքի չի ընկնում այն, վոր միջակները գյուղական բջիջներում մեծամասնություն են կազմում, մինչդեռ վորպես հիմնական գիծ, միությունը բատրակի և չքավորի ընդգրկումն է համարում։ 300 բջիջն, իհարկե, դեռևս մեր վողջ միությունը չի։ Յեթե մենք վողջ միությանը նայենք, գուցե թե այնտեղ մեր գծի նման ցայտուն աղավաղումներ չլինեն։ Բայց հենց այս ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, վոր սխալներ, և այն էլ վոչ աննշան սխալներ, միության գծի կիրառման տապարեզում, շատ ու շատ բջիջներ կատարում են։

Տեսեք թե ինչպիսի մարդկանց են ընդունել մի շարք բջիջներ։

Սմոլենսկի նահանգում, Սավինսկի բջիջում միջակներ եյին համարվել յերկու տնտեսատեր-կոմյերիտականներ, վորոնք նախկին կալվածատերերի զավակներ են, ունեն յերեքական ձի, յերեքական կով, յերկուական խոզ, 8-ական վոչխար և գյուղատնտեսական շատ ու շատ մեքենաներ։

Նույն նահանգում Ռադիոնովսկոյեյի բջիջը նախկին ուրյադնիկի տղային ընդունել է միության շարքերում վորպես բատրակի, չնայած, վոր նա ունեցել է յերկու ձի, մեկ կով և հինգ գլուխ մանր-յեղջյուրավոր անասուններ։

Բուրիաթ-Մոնղոլիայում, Զուպանսկի բջիջում, կոմյերիտական

Բոլղաշը 39 գլուխ լծկան անասուններ ունի, 14 կթու կով, 323 գլուխ զանազան անասուններ, իսկ կոմյերիտական Բազարովը՝ 31 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուններ, 8 կով և 426 գլուխ զանազան անասուններ։

Սխալ կլի՞նի կարծել, որ մեզ մոտ՝ Անդրկովկասում նման աղավաղումներ տեղի չեն ունեցել և չկան։ Ահա միքանի օրինակներ ել Խորհրդային Հայաստանից.—

Կարմիր գյուղի շրջանում, կոմյերիտմիության մեջ է ընդունվել մի կուլակի տղա, վորը 2 հոտ վոչխար ունի, և միքանի բատրակներ է պահում։

Նոր-Բայազետի Ղոզալի գյուղում միության մեջ ընդունվել է մի կուլակ, վորը ունեցել է 2 բատրակ, յերկուսն ել կոմյերիտական, բջիջի բյուրոյի վերընտրության ժամանակ ինքը քարտուղար է ընտրվում, իր բատրակներն ել բյուրոյի անդամներ, և այդ կուլակի ազդեցության տակ ընկած բատրակները—բյուրոն աշխատում է և կիրառում այն, ինչ վոր իրենց տերը—կուլակն է հրամայում։

Իջևանի շրջանի Աղդան գյուղում կոմսոմոլի մեջ է ընդունվում մի կուլակի աղջիկ, վորը սոցկազմի ստուգումից խուսափելու համար փախչում է իրենց բջիջից, գնում այլ գավառ։

Ա՛յ ձեզ կոմյերիտականներ։ Իսկ ինչու համար են նրանք միության մեջ սողոսկել։ Նրա համար, վորպեսզի միության անունով իրենց կուլակական դեմքը, իրենց մութ գործերը քողարկեն, վորպեսզի իշխանությունն իրենց ձեռքն առնեն, վորպեսզի խորհուրդների ժամանակ ել ապրեն այնպես, ինչպես ցարի և դաշնակների ժամանակ։

Վերջին տարիները շատ ու շատ ուսանելի դատական դեպքեր են յեղել, յերբ մեղադրյալի աթոռին այնպիսի կոմյերիտականներ են նստել, վորոնք կուլակների հետ միասին խեղդել, ճնշել և շահագործել են գյուղացիական մասսաներին։ Տեսնելով այս բանը, բատրակն ու չքավորը հեռացել են նման բջիջից։ Նման մի դեպքի մասին ահա ձեզ մի բատրակի նամակը.

«Սարատովի նահանգի, Սերդոբոլսկի գավառի նախկին Բեկովսկի գավառակի Նարիշկինա գյուղում, չքավորի անվան տակ կոմյերիտմիության մեջ է ընդունվել ավանտյուրիստ-կուլակ և հակահեղափոխական Գորդեյեվի աղջիկը։ Գորդեյեվը նախկին հաց մթերող է, Կիրսանով քաղաքում յերկու տուն ունի։

«Կոմսոմոլսկայա-Պրավդա» թերթի միջոցով սպասում եմ պատասխանի։ Սակայն խնդրում եմ պատասխանել «Դալնագորկից» մականվանը, վորովհետև Գորդեյեվը իր շուրջը կուլակների մի խումբ ունի, վո-

րոնք կարող են վրեժխնդիր լինել։ Ինձնից վրեժ հանելուց չեմ վախենում, դե, դասակարգային պայքար է, բայց վրեժ կլուծեն իմ ընտանիքից։ Հրդեհ տալու և կամ յեղբորս սպանելու միջոցով վրեժ կլուծեն, վորովհետև կուլակների կողմից նման փորձեր յեղել են իմ յեղբոր նկատմամբ, այն բանի համար, վոր նա սրանց քննադատել է, և ընդհանրապես նրա համար, վոր յեղբայրս նրանց մի լավ հուպ է տվել։ Ել ֆիզիկական հնարավորություն էլ չկա համբերելու։ Այն բոլորը, վոր մեր գործի ոգտին է, գաղտնի յես անում, իսկ նրանք, սատանայի պես,—մի քանիսի թուլության պատճառով,—բոլորն իմանում են»։

Այստեղ բանն այն չէ միայն, վոր միության մեջ կուլակի կամ վոճրագործի աղջիկ է սողոսկել։ Նման դեպքերը հնարավոր են։ Բանն այն է, վոր բատրակը միության մեջ սողոսկած կուլակի վրեժխնդրությունից վախենում է։ Յեվ այսպես էլ լինում է միշտ։ Միության մեջ ընկնելով, կուլակը լայն չափերով ոգտագործում է նրան իր շահերի համար։

«Բուրյաթ-Մոնղոլական հանրապետության մեջ, Տասվե գյուղում,—գրում է մի չքավոր,—բջիջ կա։ Սա կազմակերպված է տեղական կուլակի վորդու Բաման Սանդարովի նախաձեռնությամբ։ Համարյա թե յերկու տարի սա բջիջի պատասխանատու քարտուղար է յեղել։ Իր աշխատանքի ընթացքում նա բջիջում ընդունել է բոլոր կուլակների և հարուստների տղաներին, իսկ չքավորները բջիջում ընդամենը 2—3 հոգի յեն»։

Իրկուտսկի շրջանի Զերեմուխովա քաղաքում, հացամթերման անցյալ տարվա կամպանիայի ժամանակ կոմյերիտական Նիկոլայեվը հանդես յեկավ մոտավորապես հետևյալ հայտարարությամբ. «Խորհրդային իշխանությունը գյուղացիությանը ճնշում է, 107 հոդվածի ոգնությամբ մենք գյուղացիությանը պայտի ենք յենթարկում, գյուղացիության շրջանում դժգոհությունն որ-ավուր աճում է»։

Վոչ վոք նրան հակահարված չտվեց։ Իսկ անցյալ տարվա աշնանը, հենց այդ Նիկոլայեվին բջիջի քարտուղար առաջ քաշեցին։ Դե, պարզ է, վոր «գեղջուկի վիշտը լացողը» իր կողմնակիցներով աճեց, և կոմյերիտական բջիջը կուլակության ջոկատը դարձավ։

Բջիջը անհարազատ տարրերի հաշվին է աճել.—միության մեջ տերտերի 5 աղջիկներ են ընդունել և 2 հոգի յել կալվածատերերի տղա։

Ռոստովից քիչ հեռու, Կուբանում, ընկնում է մեծ կայան Տիխորեցկայան։ Կայանում կոմյերիտական բջիջ կա։ Անցյալ տարի բջիջը 70 հոգի յեր ընդգրկում։ Բջիջի քարտուղար սպիտակ բանակի սպա Պավլովի տղին եյին ընտրել՝ Պավլովն արագ իրեն հարազատ մարդկանցով եր շրջապատել։ Կոմյերիտական տոմսեր ստանում եյին կու-

լակները, տերտերների և առևտրականների տղաները։ Բջիջի դասակարգային դեմքը փոխվեց։ Այդ վողջ ժամանակը գյուղի կուլակների հետ միասին խաղաղ ու համերաշխ ապրում էր, վորի հետևանքով բոլոր բատրակները բջիջից հեռացան։ 1927 թվի վերջին բջիջում ընդամենը 28 հոգի մնացին։

— Դե, մենք այդ բջիջում ինչ պետք է անենք—ասում էյին բատրակները,—յերբ այնտեղ մեր աղաների տղաներն են նստած։ Նրանց ներկայությամբ վոչ մի բան անկեղծորեն ասել չես կարող։

«Դեկտեմբեր ամսին, մեր գյուղում (Կամենեցկի շրջան),—գրում է մի կոմյերիտական,—խորհրդի վերընտրություն տեղի ունեցավ։ Չքավորական ժողովում ձայնազուրկների հարցը քննվում էր։ Խոսում էյին կուլակներից մեկի—Մոսինի մասին։ Բոլոր չքավորները առաջարկում էյին նրան ձայնից զրկել։ Կոմյերիտականներից մեկը հանդես յեկավ կուլակին պաշտպանելու.

— Ինչու յեն նրան ձայնից զրկում.—մեքենաների համար,—ասաց նա։—Նրա համար, վոր աշխատասեր է։ Սխալ է»։

Իսկ յերբ այդ բանը ռայկոմը քննության առավ, պարզվեց, վոր Մոսինը մի քանի ռուբլիով կաշառել է այդ կոմյերիտականին։ Ահա ձեզ մի կոմյերիտական, վոր մի չերվոնեցով իրեն և իր կոմյերիտական տոմսը ծախել է։

Կուլակը միայն ինքը չի սողոսկում, այլ իր բարեկամների յերամակի հետ։ Իսկ այս բանի հետևանքով չքավորներն ու բատրակները կազմակերպությունից յետ են մղվում։ Բատրակային յերիտասարդության միայն մեկ տասներորդ մասն է կոմսոմոլում ընդգրկված, են ել հազիվ-հազ։ Իսկ մեծամասնությունը միության ազդեցությունից հեռու յեն։ Բջիջներում բատրակն ու չքավոր ղեկավար աշխատանքի ավելի քիչ են առաջ քաշվում, քան թե միջակը։

Պետք է պարզորոշ իմանալ, թե ինչու համար կուլակն ու նրա համհարզը դեպի մեզ են սողում։ Նրանց համար սա մի միջոց է իշխանությունը հասնելու, վերջինիս վրա ազդելու համար։ Նա ցանկանում է ունենալ, հարստանալ, համագյուղացիների արյունը ծծել, իսկ իշխանությունը խոչընդոտում է։ Գյուղի իշխանությունն իր ձեռքն առնել, ահա կուլակի յերազանքը։ Նա իր այդ նպատակին հասնելու համար շատ ու շատ միջոցների չի դիմում։ Յեվ այնքան, վորքան վոր կոմսոմոլը գյուղում մեծ ազդեցություն ունի,—վորովհետև կոմսոմոլը Խորհրդային իշխանության և կուսակցության ձեռնարկումների իրագործման համար գյուղում հենարան է հանդիսանում,—կուլակն իր զավակներին ու բարեկամներին միություն է ուղարկում։ Գուցե թե բախտը բանի։

Ահա թե ինչու համար միշտ և ամեն որ պետք է մտածել այն մասին, վորպեսզի գյուղական բջիջը պրոլետարական ճիշտ գիծ տանի և այդ գծից չշեղվի, կուլակների ճանկը չընկնի։ Պետք է բատրակների և չքավորների վրա հաստատուն կերպով հենվել, միության մեջ առանձնապես առաջին հերթին նրանց ներգրավել։ Կոլտնտեսությունների մեջ ընդգրկված գյուղբանվորներին և գյուղացիներին ընդգրկել։ Դեպի միությունն յեկող յուրաքանչյուր միջակին ստուգել, ընդունել միայն այն միջակին, վորը հասարակական աշխատանքներում յերևան է յեկել վորպես կոլեկտիվիստ, նրան, ով կոլեկտիվացնում, կոոպերացնում է իր տնտեսությունը, ուրիշներին էլ կոչ է անում այդ բանին, և միության մեջ սողոսկած կուլակներից ու սրանց համհարզներից ազատվել (հենց այդ բանի համար էլ այժմս կոմյերիտմիությունը պատրաստվում է իր շարքերի զտմանը)։

Յուրաքանչյուր գյուղբջիջում չքավոր և բատրակային մասի ղեկավարությունը պետք է ապահովել։

Իր վողջ աշխատանքի ընթացքում բատրակների և չքավորների շահերը հաստատակամությամբ պետք է պաշտպանել, և միջակներին համախմբել կուլակների դեմ պայքարելու, գյուղը կոլեկտիվ հիմունքներով վերակազմելու համար։ Ահա թե ինչ է նշանակում միության գյուղական բջիջում ճիշտ պրոլետարական գիծ կիրառել։

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Գյուղում ում կարելի յե միության մեջ ընդունել։
2. Ի՞նչու կուլակները կոմսոմոլի մեջ են սողոսկում։
3. Ինչո՞ւ կոմսոմոլն իր շարքերն ընդունելիս բատրակներին, չքավորներին և միջակներին, տարբեր ձևերով է մոտենում։
4. Ձեր բջիջը պրոլետարական գիծն ի՞նչպես է կիրառում։

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մեր յերկրում, յուրաքանչյուր գյուղում տոնվում է մայիսմեկյան որը։ Հավաքվում են կոմունիստները, կոմյերիտականները, պիոներներն ու գյուղացիները, կազմակերպում են միտինգ կամ դեմոնստրացիա և զեկուցում են այն մասին, թե ինչպես բանվորները մեզ մոտ և արտասահմանում պայքարել են աղաների ու կառավարության դեմ և ինչպես մեր յերկրում իրենց պրոլետարական իշխանությունն են հաստատել։

Մայիսմեկյան որը տոնում է վողջ աշխարհի բանվորությունը։ Բանվորները ցույցի յեն դուրս գալիս, կապիտալիստներին ցույց տալիս իրենց ուժը։

1929 թվի մայիսի մեկին Գերմանիայի գլխավոր քաղաք Բերլինում, բանվորները վորոշեցին նույնպես փողոցներով ցույց կազմակերպել։ Կառավարությունն այդ բանն արգելեց։ Իսկ յերբ բանվորները չլսեցին նրան, վոստիկաններն սկսեցին բանվորներին զոռով և նրանց վրա կրակելով ցրել փողոցներից։

Շատ մարդիկ վիրավորվեցին, և 30 հոգուց ավելի յել սպանվեցին։

Նման դեպքեր տեղի յեն ունեցել վոչ միայն Գերմանիայում, այլև ուրիշ յերկրներում,— Ավստրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Ռումինիայում, ամենուրեք, ուր բանվորներն սկսում են կազմակերպվել պայքարելու իրենց՝ բանվորական գործի համար։

Նայեցեք այս գրքի յետևին կպցրած քարտեզը։ Նա պատկերացնում է մեր՝ Խորհրդային յերկիրը։ Նրա շուրջը շրջագիծ է գծված, վորը բաժանում է մեզ ուրիշ յերկրներից։ Դա սահմանագիծն է։ Նրանից այն կողմն սկսվում են այն յերկրները, վորտեղ տեր ու տնորեն են հանդիսանում կապիտալիստներն ու կալվածատերերը։ Բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները և հողի խոշոր լավ շերտերը պատկանում են նրանց. ինչպես առաջ այդ ցարական Ռուսաստանումն եր։ Հենց այս կապիտալիստներից ու կալվածատերերից են կազմված նաև սրանց կառավարությունները, և վերջինս պաշտպանում է հարստների շահերը։

Արտասահմանում բանվորներն ու գյուղացիները դեռևս չեն կարողացել տապալել կապիտալիստներին ու կալվածատերերին, չեն կարողացել դեռևս նրանցից գրավել գործարաններն ու հողը և սրանց կառավարությունների փոխարեն պրոլետարիատի դիկտատուրա հաստատել։

Իսկ կապիտալիստների ու կալվածատերերի դեմ բանվորներն ու գյուղացիները պայքարում են շատ վաղուցվանից։ Շատ ու շատ դեպքերում բանը մինչև բունտ, մինչև ապստամբություն, մինչև ընդհարումների յե հասել։

1871 թվին Ֆրանսիայի գլխավոր քաղաք Պարիզում բանվորներն իշխանությունը գրավեցին և փորձեցին իրենց դիկտատուրան հաստատել։ 72 որ Պարիզում իշխանությունը բանվորներին եր պատկանում։ Բայց կապիտալիստներն աննախընթաց դաժանությամբ և ուժով ճնշեցին Պարիզի բանվորներին.—45 հազար հոգի բանտարկվեցին, 30 հազարից ավելի մարդիկ ել գնդակահարվեցին։

Իմպերիալիստական պատերազմից հետո, երբ տեղի ունեցավ պրոլետարական հեղափոխությունը—Ռուսաստանում, շատ ու շատ այլ յերկրների բանվորներն ու գյուղացիները նույնպես հեղափոխություն կազմակերպեցին և աշխատեցին տապալել կապիտալիստներին ու կալվածատերերին։

1918 թվի հունվարին բանվորական հեղափոխություն տեղի ունեցավ Ֆինլանդիայում, 1918 թվի նոյեմբերին հեղափոխություն՝ Գերմանիայում և Ավստրիայում, վորը տապալեց այդ յերկրների թագավորներին։ 1919 թվի մարտին Վենգրիայի բանվորներին հաջողվեց խորհրդային իշխանություն հիմնել։ 1920 թվականի սեպտեմբերին Իտալիայում բանվորներն սկսեցին խլել իրենց տերերից գործարաններն ու ֆաբրիկաները։ 1921թ. մարտին տեղի ունեցավ բանվորների ապստամբությունը Գերմանիայում։

Ինչպես տեսնում ենք, բոլոր յերկրներում բանվորները պայքարում են կապիտալիստների, նույնպես և կառավարությունների դեմ այնպես, ինչպես և մեր յերկրում բանվորներն ու գյուղացիները պայքարում եյին այն բանի համար, վորպեսզի տապալեն ցարական կառավարությունը, կալվածատերերին ու կապիտալիստներին։

Բոլոր յերկրների բանվորների նպատակը մեկ է.—ամբողջ աշխարհում հաստատել իրենց իշխանությունը՝ պրոլետարիատի դիկտատուրան, կազմակերպել տնտեսությունը նոր ձևով, և սոցիալիզմ կառուցել ամբողջ աշխարհում. բայց կապիտալիզմի տիրապետությունն առայժմ հաջողվել է տապալել միայն մի յերկրում—ԽՍՀՄ-ում։

Շատ կռվեցին այդ բանի համար մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները, շատ լավագույն մարտիկներ մեռան բանտերում, կախաղաններում, հեղափոխության և քաղաքացիական կռիվներում։ Բայց ԽՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատուրան պահպանվեց և ամրանում է տարեց-տարի։

Մեր յերկրում մենք սոցիալիզմ ենք կառուցում։

Իսկ մնացած բոլոր յերկրներում բանվորներին կամ չհաջողվեց գրավել իշխանությունը, և կամ չհաջողվեց պաշտպանել նրան։

Բայց ինչու այն յերկրներում, վորտեղ թեկուզ բանվորներն ավելի շատ են, թեկուզ հեղափոխական շարժումն էլ ավելի վաղ է սկսվել,—այնուամենայնիվ, մինչև այժմ էլ բանվորները չեն հաղթանակել։

Ամեն վոք գիտե, վոր յուրաքանչյուր թեկուզ ամենաչնչին գործի համար փորձ է պահանջվում։ Հեղափոխական պայքարի խնդիրներում փորձն ավելի խոշոր նշանակություն ունի։

Փարիզյան Կոմունան, յերբ փորձեր եր կատարում պրոլետարիատի դիկտատուրա հաստատել, թույլ տվեց մի շարք սխալներ, վորոնք արագացրին նրա տապալումը։ Այդ պատճառով ել մեր առաջնորդ— Մարքսն ու Լենինը շատ ուշադրությամբ ուսումնասիրում եյին Փարիզի Կոմունայի գործունեությունը, վորպեսզի չկրկնվեյին նրա սխալները։ 1917 թ. հոկտեմբերին բոլշևիկներն արդեն չկրկնեցին Փարիզի կոմունարների սխալները։

Ռուսական բանվորները նույնպես միանգամից իշխանություն ձեռք չբերին։ Պահանջվեց 1905 թվի հեղափոխությունը, իսկ դրանից հետո յել 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը, և Հոկտեմբերին միայն մենք կարողացանք նվաճել իշխանությունը։

Փարիզյան Կոմունան իր գոյությունը պաշտպանեց յերկու ամսից մի քիչ ավելի, բայց այսքանն ել մեզ բավական փորձ տվեց, վորը մենք ոգտագործեցինք Հոկտեմբերին։ Մեր բանվորական պետությունը 12 տարի յե գոյություն ունի, և այդ պատճառով ել վո՛րքան ավելի հարուստ ե մեր յերկրի փորձը։ Յեվ այս՛ փորձի խելացի ոգտագործմամբ մյուս յերկրի կոմունարները կարող են խուսափել անգամ այն աննշան սխալներից, վորոնք մենք ենք թույլ տվել։

Բայց չե՞ վոր մենք ասացինք՝ հեղափոխական շարժումն արտասահմանում սկսվել ե վաղուցվանից։ Մի՞թե մինչև հիմա յել բանվորներն ու գյուղացիները հարկ չեղած փորձը չունեն, կամ ուժ չունեն տապալելու մի բուռն կապիտալիստներին։

Բանը միայն կապիտալիստները չեն։ Յեթե վողջ դժվարությունը նրանք լինեյին, վաղուց նրանց գլորած կլինեյին մի շարք յերկրներում։ Վողջ դժբախտությունն այն ե, վոր կապիտալիստներն ունեն ուժեղ ոգնականներ։ Սրանք սոցիալ-դեմոկրատական (մենշևիկական) կուսակցություններն են, վորոնք մինչև այժմս բանվոր դասակարգի վրա վորոշ ազդեցություն ունեն։

Քաղաքացիական կռիվների փորձից մեր բանվորներն ու գյուղացիները գիտեն, թե ովքեր են մենշևիկները։ Ո՞վ չգիտե այժմս, վոր մենշևիկները գեներալների,—հենց թեկուզ Դենիկինի,—հետ միասին, ուզում եյին տապալել Խորհուրդների իշխանությունը։ Ո՞վ չգիտե, վոր այդ մարդիկ, իրենց կուսակցությունը բանվորական անվանելով, գնդակահարում եյին բանվոր-կոմունիստներին։ Բայց վորպեսզի հասկանալ մենշևիկների իսկական եյությունը, անհրաժեշտ չեղավ վոչ միայն նրանց 8 ամիս տևող թագավորությունը՝ 1927 թ. փետրվարից մինչև հոկտեմբերը, այլև քաղաքացիական կռիվները։ Քաղաքացիական կռիվների ժամանակ միայն վողջ աշխատավորությունը հասկացավ, թե մենշևիկներն ի՞նչ են ուզում և ո՞ւմ են ուզում պաշտպանել։

Ուրիշ յերկրներում յեղած մենշևիկները մերոնցից բնավ էլ լավը չեն։ Նրանք էլ ռուսական մենշևիկների նման ըստ էության կռվում են կապիտալիստների գերիշխանությունը պահպանելու համար, միայն թե վոչ ափաշկարա, ինչպես արեցին այդ ռուսական մենշևիկները քաղաքացիական կռիվների ժամանակ։ Բայց երբ բանվորները դուրս են գալիս կապիտալիստների դեմ, մենշևիկները,—կամ ինչպես իրենք են անվանում իրենց, սոցիալ-դեմոկրատները,—կանգնում են նաև ափաշկարա՝ կապիտալիստներին պաշտպանելու։

1929 թ. մայիսի 1-ի ցույցի ժամանակ, Բերլինում, վոստիկանապետ Ցերգիբելի հրամանով վոստիկանները գնդակահարում եյին բանվորներին։ Ցերգիբելը սոց.-դեմոկրատական կուսակցության անդամ է։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարները գիտեյին, վոր Ցերգիբելը կհրամայի գնդակահարել ցուցարարներին, և համաձայնվեցին բանվորների գնդակահարությանը։

Բայց կապիտալիստների պաշտպանության նման բացարձակ ձևին սոցիալ-դեմոկրատներն աշխատում են չհասնել։ Նրանք մինչև այժմս էլ աշխատում են բանվորներին համոզել, թե իրենք բանվոր դասակարգի իսկական կողմնակիցներն ու պաշտպաններն են։ Իզուր տեղը չէ, վոր այդ մենշևիկական կուսակցություններից վոմանք իրենց բանվորական են համարում, ինչպես այդ անգլիական կուսակցությունն է անում։ Կապիտալիստական յերկրներում գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեջ մեծ քանակությամբ բանվորներ կան։

Ստացվում է այն, վոր բանվորները կռվում են բանվորների դեմ և պաշտպանում են իրենց արյունխում թշնամիների—կապիտալիստների շահերը։ Առաջին հայացքից այս բանն անհասկանալի յե թվում։ Պարզվում է, վոր զանազան տեսակի բանվորներ կան։

Առաջինը—դա բոլորովին փոքրաքանակ մասը—բարձր վորակի տեր բանվորներն են, վարպետները, հսկիչները և մյուսները։ Իսկ մեծամասնությունը—դա ցածր վորակ, կամ վոչ մի վորակ չունեցող բանվորներն են։ Կապիտալիստական յերկրներում բարձր վորակի տեր բանվորները մի քանի անգամ ավելի լավ են ապրում, քան մյուսները։ Նրանք շատ ավելի յեն ստանում, քան թե մյուս բանվորները։ Նրանց յերեխաների համար հատուկ դպրոցներ են ստեղծվում, վորոնցից ապագայի համար վարպետներ են պատրաստում. կապիտալիստները թոշակատու դրամարկղներ են ստեղծում, վորտեղից կապիտալիզմին լավ ծառայած հասակավոր բանվորներին թոշակ է տրվում։ Իրենց խնայած գումարներից բարձր վորակի տեր բանվորները կա-

պիտալիստական ձեռնարկության մեջ են դնում, և այսպիսով շահագրգռվում, վորպեսզի այդ ձեռնարկության շահը մեծ լինի։ Յերբ կապիտալիստն առանձնապես մեծ շահ է ձեռք բերում,— իսկ դուք կիմանաք, թե ինչպես է կապիտալիստը գերշահ ստանում զաղութների հաշվին,— նա այդ շահի վորոշ մասը բաժին է հանում բարձր վորակի տեր բանվորներին կամ,— ինչպես նրանց յերբեմն անվանում են,— բանվոր դասակարգի վերնախավին։ Կապիտալիստը նրանց կամ աշխատավարձի հավելում է անում, կամ պարզապես նվերներ է տալիս։ Այս բանը կապիտալիստին քար ու քանդ չի անում, իսկ այս միջոցով նա դեպի իր կողմն է գրավում բանվոր դասակարգի վերնախավին։ Այս վերնախավը գործադուլի և կամ հեղափոխական շարժման ժամանակ այլևս չի կարողանում վճռականորեն պայքարել խազեյինների դեմ այնպես, ինչպես մյուս բանվորները։ Ինչպես տեսնում եք, կապիտալիստները կարողանում են բաժանումներ մտցնել բանվոր դասակարգի մեջ, բանվորների մի մասին մյուսի դեմ լարել։ Բանվոր դասակարգի շատ լավ վարձատրություն ստացող վերնախավին հեղափոխություն պետք չի։

Բայց կապիտալիստական յերկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեջ կան և մեծ քանակությամբ ցածր վորակի տեր բանվորներ։ Հապա ինչումն է բանը։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները քառասուն և ավելի տարի յե գոյություն ունեն։ Բանվորներ կան, վորոնց հայրն էլ, պապն էլ այդ կուսակցության անդամներ են յեղել։ Նա սովորել է կարծել, թե միայն սոց-դեմոկրատիան է պաշտպանում բանվորական շահերը։ Յեվ իսկապես էլ, մինչև 1914 թ. պատերազմը ուրիշ և վոչ մի բանվորական կուսակցություն գոյություն չուներ։

Սոցիալ-դեմոկրատները բանվորությանը հավաստիացնում են սոցիալիզմին հասցնել առանց հեղափոխության ու արյունհեղության։ Նրանք Խորհրդային յերկրի որինակն են ցույց տալիս, վորը սոցիալիստական շինարարությանը հասավ սովը, քայքայվածությունն ու քաղաքացիական կռիվները հաղթահարելով միայն։

Նրանք ասում են, թե զարգացած կապիտալիստական յերկրները, առանց հիվանդագին յերևույթների, սոցիալիստական կդառնան, պետության, յերկաթուղիների, ձեռնարկների ղեկավարության գործում ավելի մեծ թվով սոցիալ-դեմոկրատ բանվորների ներկայացուցիչների մասնակցության միջոցով։

Բանվորների յուրաքանչյուր գործադուլի դեպքում, նրանք աշխատում են իրենց ձեռքն առնել վերջինիս ղեկավարությունը։ Նրանք

ճոռոմ ֆրազներ են արտասանում, խոսում բանվորական գործին հավատարիմ լինելու մասին, իսկ յերբ գալիս է հարմար ժամանակը, դավաճանում են բանվորներին, նրանց անունից կապիտալիստներին ձեռնտու պայմանագրեր են կնքում։ Այսպես եղավ, օրինակ, Լեհաստանում, Լոձի ջուլհակների գործադուլի ժամանակ, Գերմանիայի Ռուրի շրջանի մետաղագործների գործադուլի ժամանակ, Անգլիայի 1927 թ. ընդհանուր գործադուլի ժամանակ և մի շարք այլ տեղերում։

Հենց այսպիսի ճանապարհով էլ սոցիալ-դեմոկրատներին հաջողվում է իրենց ցանցի մեջ գցել վոչ միայն բարձր վորակի տեր բանվորներին, այլև հաճախ անվորակավորներին։ Ամեն կիսագրագետ բանվոր անգամ գիտե, վոր կապիտալիստն իր թշնամին է, իսկ հասկանալ, թե ովքեր են սոցիալ-դեմոկրատները, շատ ավելի դժվար է։ Մենշևիկը բանվորին ներկայանալով, յերդվում է, թե ինքը բանվորների կողմն է, դե՛, չեկ ու մի հավատա նրան։ Յեվ շատ բանվորներ սոցիալ-դեմոկրատներին դեռևս հավատում են։

Այս պատճառով էլ, արտասահմանում, կոմունիստական կուսակցությունների գլխավոր խնդիրներից մեկը հանդիսանում է նրանում, վորպեսզի պայքարեն սոցիալ-դեմոկրատների դեմ։ Ամբողջ բանվոր դասակարգին պետք է ցույց տալ այդ կուսակցության իսկական դեմքը։ Մինչև վոր բանվոր դասակարգի մեծագույն մասը չիմանա, թե ինչ է իրենից ներկայացնում սոցիալ-դեմոկրատիան, այնքան ժամանակ էլ արևմուտքում պրոլետարական հեղափոխության համար պայքարելը դժվար է։

Իհարկե, համարձակությամբ կարելի յե ասել, վոր յեթե գերմանական սոցիալ-դեմոկրատ Ցերգիբելը գնդակահարում է բանվորներին, իսկ վոստիկաններին այդ քաջության համար կոնյակով է հյուրասիրում,—բոլոր բանվորները շատ շուտով կիմանան, թե ովքեր են սոցիալ-դեմոկրատները։ Բայց վոչ բոլոր սոցիալ-դեմոկրատներն այդպես բացարձակ կերպով են պաշտպանում կապիտալիստներին, ինչպես Ցերգիբելը։

Սոցիալ-դեմոկրատների մի այնպիսի խումբ էլ կա, վորը խոսքով թեկուզ դեմ է բանվորների գնդակահարությանը, իսկ գործնականում կողմնակից է գնդակահարության։ 1927 թ. Ավստրիայի Վեննա քաղաքում իշխանության գլուխն էին անցել ձախ-սոցիալ-դեմոկրատները։ Բանվորները դուրս յեկան դատարանի վորոշման դեմ, վորը բանվորներին սպանող ֆաշիստներին արդարացրել էր։ «Ձախ» սոցիալ-դեմոկրատները գնդակահարեցին նրանց այնպես, ինչպես աջ սոցիալ-դեմոկրատ Ցերգիբելը։ Այդ խմբակն իրեն սոցիալ-դեմոկրա-

տիայի մեջ ձախ ե անվանում, այլ կերպ ասած, ավելի հեղափոխական, քան այլ սոցիալ-դեմոկրատները։ Իսկ իրականում այդ խմբակը միացած մենշևիկներից միայն խոսքով ե տարբերվում։ Շնորհիվ այն հանգամանքի, որ այս խմբակն իր հետևից ավելի ճարպկությամբ ե տանում բանվորներին, քան Ցերգիբելը, շնորհիվ այն բանի, որ բանվորների համար ավելի դժվար ե իմանալ նրանց եությունը,— արտասահմանի բոլոր կոմկուսների համար անհրաժեշտ ե հատկապես ուժեղ կերպով պայքարել մենշևիկյան այս խմբակի դեմ։

Յեթե բանվոր դասակարգի զգալի մասը գնում եր մենշևիկների հետևից,« իսկ մենշևիկներն ել պաշտպանում եյին կապիտալիստներին, ել այստեղ բանվորներն ի՞նչպես կարող են հաղթանակող հեղափոխություն կազմակերպել։ Այժմս դրությունն սկսում ե փոխվել, բանվորներն սկսում են հասկանալ, թե մենշևիկներն իրենցից ինչ են ներկայացնում, և սկսում են անցնել կոմունիստների կողմը։ Ուրեմն, արտասահմանում հեղափոխական շարժման տապալումների գլխավոր պատճառը մինչև այժմս ել մենշևիկների դավաճանությունն ե հանդիսացել։

Արտասահմանում, կոմունիստական կուսակցություններն սկսեցին յերևան գալ 1919 թվին միայն։ Նրանց ժամանակ եր պետք, որպեսզի գործով ապացուցեյին, որ իրենք բանվոր դասակարգի իսկական պաշտպաններն են։

Ահա բոլոր այս պատճառներով, այսինքն նրա համար, որ սոցիալ-դեմոկրատները դավաճանել են բանվորներին, որ բանվորները հեղափոխական փորձ շատ քիչ ունեյին, որ չկային այնպիսի կոփված ու ամրակուռ կոմունիստական կուսակցություններ, ինչպես մեր յերկրում,— բոլոր այս պատճառներով մյուս յերկրներում կապիտալիստներին և կալվածատերերին տապալելը բանվորներին դեռևս չի հաջողվել։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԵՄ

Պատերազմից և հեղափոխություններից հետո կապիտալիստական բոլոր յերկրներում տնտեսությունն ուժեղ կերպով քայքայված եր։ Ջուգունի, պողպատի, մեքենաների և ուրիշ ապրանքների արտադրությունը կրճատվել եր խոշոր չափով։ Դրամը կորցրել եր իր արժեքը։ Մի խոսքով, բոլոր այդ յերկրներում նույնպիսի քայքայվածություն եր, ինչպիսին մեզ մոտ եր։

Այժմս, այդ հետ-պատերազմյան տարիներին կապիտալիստներն ել կարողացան իրենց տնտեսությունը վերականգնել։ Նրանք այժմս

իրենց գործարաններում ու ֆաբրիկաններում զանազան տեսակի մեքենաներ և ապրանքներ պատրաստում են նախապատերազմյան քանակից վոչ պակաս, իսկ վորոշ բաներ՝ նույնիսկ ավելի։

Յեվ չնայած, վոր գործարաններն ու ֆաբրիկաններն արտասահմանում աշխատում են լրիվ թափով, այնուամենայնիվ բանվորների դրությունը շատ ծանր է։

Ա՛յ, լսեցեք, թե ինչ է գրում մի յերիտասարդ բանվոր Հոլլանդիայից։

«1918 թվին, Հոլլանդիայում, արհեստի մի շարք ճյուղերում 8 ժամյա բանվորական որ էր սահմանվել։ Այդ բանն ստացան պետական և մունիցիպալ ծառայողները, մետաղագործները, կառուցողներն ու նավաստիները։ Բայց Հոլլանդական կառավարությունը վաղուց-վանից սովոր էր կիսակատար ու թերի օրենքներ հրատարակելու։ 8 ժամյա բանվորական որ նա տվեց բանվոր դասակարգի վերնախավին միայն, իսկ ներքնախավերը վոչինչ չստացան։

Բայց 1918 թվականից հետո բուրժուազիան կամաց-կամաց սկսեց ութ ժամյա բանվորական որը խլել և նրանցից, վորոնց նա տվել էր, և 1928 թվականից,—շնորհիվ սոցիալ-դեմոկրատների դավաճանության,—Հոլլանդիայում այլևս 8 ժամյա բանվորական որ գոյություն չունի։

Բանվորի դրությունն ավելի ու ավելի ծանր է դառնում։ Գործազուրկների հսկայական քանակը կապիտալիստների համար հնարավորություն է ստեղծում անընդհատ յերկարացնելու բանվորական որը։ Ներկայումս արդյունաբերության բնագավառներից շատերը 10-ից 12 ժամ են աշխատում։

Սոսկալի դրություն է։ Բանվոր դասակարգն ամբողջությամբ գտնվում է ձեռնարկատերերի իշխանության տակ։ Խազեյինն այսոր բանվորներ կընտրի, վաղը նրանց բոլորին էլ դուրս կշպրտի։ Նա բանվորների հետ վարվում է իր քեֆն ուզածի պես։ Բանվորը չունի և վոչ մի իրավունք։ Ահա թե ինչպիսի կարգեր են «քաղաքակրթված» Հոլլանդիայում։

Յեթե բանվորն աշխատանք ունի, նա պետք է վճարի հսկայական հարկեր, վորովհետև հոլլանդական կառավարության և հոլլանդական թագուհու պահպանման ծախքը յուրաքանչյուր տարի հսկայական գումարներ է նստում։ Հոլլանդական թագուհին վորպես ռոճիկ տարեկան 1.200 հազար գուլդեն (մեկ գուլդենը 80 կոպեկ է) է ստանում, նրա ամուսինը՝ 300 հազար գուլդեն, նրա մայրը՝ 500 հազար գուլդեն, նրա աղջիկը, վոր հոլլանդական գահի թագաժառանգն է՝ 500 հազար գուլդեն։

Յուրաքանչյուր մինիստր, վորը 4 տարի ծառայել է, ստանում է տարեկան 5000 գուլդեն, մինչև իր կյանքի վերջը:

Յեվ բոլոր այս հսկայական գումարները պետք է ազգաբնակչությունը տա, վորը Հոլանդիայում ընդամենը 7 միլիոն է:

Իսկ այս բանի հետ զուգընթաց, բանվորության մեծագույն մասը շաբաթական ստանում է 20-ից 30 գուլդեն, այն ժամանակ, յերբ կենսական պահանջներն անհամեմատ թանկ են: Հենց միայն բնակարանը բանվորի վրա նստում է շաբաթական 4 ու կեսից 8 ու կես գուլդեն, իսկ հաճախ յերբեմն չափազանց ավելի»:

Կապիտալիստները բարելավեցին իրենց արդյունաբերության վիճակը վոչ այնքան նրանով, վոր նոր կատարելագործված մեքենաներ մտցրին, այլ շնորհիվ այն բանի, վոր ճնշեցին բանվորներին: Չափահասների աշխատանքը դեռահասի աշխատանքով փոխարինելը կատարվում է ավելի ու ավելի մեծ չափերով, վորովհետև դեռահասներին կարելի յե ավելի քիչ վճարել: Այնպիսի յերկիրը, ինչպիսին Իտալիան է, արդյունաբերական-առևտրական ձեռնարկներում աշխատող 5 և կես միլիոն բանվորներից 215 հազարը մինչև 15 տարեկան հասակ ունեցողներն են. 495 հազարը՝ 15—18 տարեկան հասակ ունեցողները: Այսպիսով ստացվում է այն, վոր 5 բանվորից մեկը դեռահաս է, 18 տարեկանից վոչ բարձր: Դեռ մինչև հիմա յել կապիտալիստական յերկրներից շատերի մեջ աշխատավարձը դեռ նախապատերազմյան մակարդակին չի հասել, մինչդեռ ամենից անհրաժեշտ սպառման ապրանքները (հացը, մանուֆակտուրան) այժմս զգալի չափերով թանկ են նախապատերազմյան գներից: Բանվորական որը շարունակ յերկարում ու յերկարում է: Տուրքերը տարեց-տարի ավելանում են:

Շնորհիվ յերեխաների աշխատանքի գործադրության, բանվորական որվա յերկարացման և նոր մեքենաների, ֆաբրիկաներում ու գործարաններում կապիտալիստները մեծ թվով բանվորների կրճատում են: Այս պատճառով ել գործազուրկների թիվը տարեց-տարի աճում է: Ներկայումս ամբողջ աշխարհում մոտ 15 միլիոն գործազուրկ կա, իսկ իրենց ընտանիքների հետ միասին նրանք կազմում են 60 միլիոն: Նույնիսկ այնպիսի ամենահարուստ յերկրներում, ինչպիսին Ամերիկան և Անգլիան են, գործազուրկների թիվը հասնում է միքանի միլիոն հոգու:

Կապիտալիստական տնտեսությունը վերականգնվել է ֆաբրիկաներում և գործարաններում, ամեն տեսակի ապրանքներ ավելի ու ավելի շատ է արտադրվում, այս բանի համար հումույթ ավելի շատ

ե պահանջվում, կապիտալիստներն ավելի ու ավելի շատ շահ են ստանում, պետք ե վոր նրանք այդ փողը նորից շրջանառության մեջ դցեն։ Այս բոլորը կապիտալիստներին դրդում ե աչք դցել մյուս յերկրների վրա, վորպեսզի իր յերկրի սահմաններից դուրս վաճառի պատրաստի ապրանքները, գնի հումույթ և շահավետ ձեռնարկության մեջ դնի իր կապիտալները։ Հենց այս բանի համար ել կապիտալիստական յերկրների միջև պայքար ե տեղի ունենում։ Այս բանի համար ել յեղավ 1914 թվի պատերազմը։ Այս պատճառով ել անխուսափելի կերպով խոշորագույն կապիտալիստական պետությունների միջև նորից արյունահեղ պատերազմ տեղի կունենա։ Այս բանի համար ել արդեն ամբողջ ժամանակ թեթև ընդհարումներ են տեղի ունենում այդ պետությունների միջև՝ աշխատանքի զանազան մասերում։

Կապիտալիստական տնտեսությունը վերականգնված ե, բայց նա նորից և կանգնած պատերազմի և քայքայվածության ճանապարհի առաջ։

Այս պատճառով ել բանվոր դասակարգն ավելի խստագույն կերպով ե կռվում կապիտալիստների և նրանց կառավարությունների դեմ։ Ֆաբրիկաներում և գործարաններում բանվորները կոմունիստական կուսակցության բջիջներ են ստեղծում, մերկացնում են սոցյալ-դեմոկրատների արարքները, խազեյինների դեմ գործադուլներ են կազմակերպում, պահանջում են, վորպեսզի ավելացվի աշխատավարձը, և թեթևացվեն աշխատանքի պայմանները։ Վերցրեք և նայեցեք լրագիրը, և ամեն որ դուք կտեսնեք, վոր մի շարք յերկրներում տեղի յեն ունենում բանվորական խոշոր գործադուլներ՝ կապիտալիստների դեմ։

Կապիտալիստների և կապիտալիստական պետությունների դեմ պայքարելու համար բանվոր-հեղափոխականներին հալածում են, պատժում, բանտ են նետում։ Առ 1-ն հունվարի 1929 թվի կապիտալիստական յերկրների բանտերում հեղափոխական աշխատանքի համար նստած են յեղել 47 հազար հոգուց ավելի։

Կապիտալիստների դեմ մղվող այդ պայքարում բանվորներն ավելի ու ավելի համարձակ են դառնում և ավելի պարզ կերպով տեսնում, վոր պետք ե գնալ այն ճանապարհով, վորը կոմունիստներն են ցույց տալիս։

Հասկանալի յե, վոր այնպիսի դասերը, ինչպիսին ե 1929 թվի մայիսի 1-ի ցույցի գնդակահարումը Բեռլինում, բանվորներին ցայտուն կերպով ցույց են տալիս, թե ովքեր են սոցիալ-դեմոկրատները և կարող են արդյոք ոգնել նրանք բանվոր դասակարգին։

Քանի ավելի շատ պայքարեն բանվորները կապիտալիստների դեմ, այնքան ել ավելի խստորեն կտապալեն նրանց կապիտալիստները։

Այս սրված դասակարգային պայքարի մեջ կապիտալիստները այլևս չեն բավականանում նրանով, վոր ոգտվում են զորքի և վոստիկանության պաշտպանությամբ, վոր իրենց ոգտին են կազմված բուրժուական բոլոր որենքները, վոր նրանց աջակցում են դատարանը, յեկեղեցին, դպրոցը և ամբողջ պետությունը։

Բանվորներին տապալելու համար կապիտալիստները մի շարք կազմակերպություններ են ստեղծել — ֆաշիստական միություններ։ Սրանց մեջ աշխատավորներ ել կան, նույնիսկ բանվորներ, վորոնց կապիտալիստները կամ խաբում են, ոգտվելով սրանց անգիտակցությունից, կամ կաշառում են փողով և կամ գործարաններում ու հիմնարկություններում լավ պաշտոններով։ Ֆաշիստական այդ միությունները սովորում են ռազմական գործը և ոգտագործում են այն հեղափոխական շարժման դեմ կռվելու համար։ Ֆաշիստները հարձակվում են հեղափոխական բանվորների վրա, ծեծում են նրանց, ջարդում կոմունիստական կուսակցության կոմիտեները և հեղափոխական շարժման դեմ մղվող կռվում կապիտալիստների համար վորպես մարտական զորքեր են ծառայում։

Այժմ ֆաշիստներից յետ չեն մնում նաև սոցիալ-դեմոկրատները։ Հիշեցեք, թե ինչպես գնդակահարեց բանվորներին Ցերգիբելը։ Վաղուց չե, վոր Մագդեբուրգում տեղի ունեցավ գերմանական սոցիալ-դեմոկրատների համագումարը։ Ո՞վքեր եյին ներկա այդ համագումարում։ Այնտեղ կային վոստիկանության պետեր, մինիստրներ, պետական ապարատի բազմաթիվ չինովնիկներ, և այդ բոլորն ել սոցիալ-դեմոկրատներ են, վորոնք ծախվել են կապիտալիստներին, գնդակահարելով բանվորներին՝ հոգով ու հավատով կապիտալիստական պետությանն են ծառայում։

Սոցիալ-դեմոկրատները գերմանական կառավարության մեջ մինիստրական դիրքեր են գրավում և կապիտալիստների շահերի պաշտպանության համար նոր պատերազմի յեն պատրաստվում։ Վաղուց չե, վոր նրանք ձեռնարկեցին գերմանական ֆլոտի համար նոր ռազմանավի կառուցմանը, այդ բանի համար պետական գանձարկղից բաց թողնելով հսկայական գումարներ այն ժամանակ, յերբ գործազուրկ բանվորների միլիոնները տառապում են կարիքի ծովում։

Վորպեսզի բանվոր դասակարգը կարողանա հաղթել կապիտալիստներին, կոմունիստները պետք ե ձգտեն բանվորների մեծագույն

մասն իրենց հետևից տանելու։ Կոմունիստական կուսակցությունները համբերատարությամբ բանվորներին պարզաբանում են նրանց խընդիրները, մասնակցում են կյանքի պայմանների լավացման համար բանվորների մղած պայքարին, աշխատում են բանվորական մասսայական կազմակերպությունների—պրոֆմիությունների, գործարկոմների մեջ, և մերկացնում են սոցիալ-դեմոկրատներին։

Այսպիսով կոմունիստները պայքարում են այն բանի համար, որպեսզի մասսաները տանեն իրենց հետևից, որպեսզի կապիտալիստների դեմ բոլոր բանվորների միասնական ճակատ ստեղծեն։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՇՆԱԿԻՑՆ Է ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր երկրում Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ կապիտալիստների դեմ դուրս եկան ոչ միայն բանվորները, այլև գյուղացիները։

Շատերը կկարծեն, թե արտասահմանում գյուղացիներն այնպես են ապրում, ինչպես Ադամը՝ դրախտում։ Սակայն, Գերմանիայում միայն չքավոր գյուղացիների թիվը մոտ 4 միլիոնի յե հասնում։ Չքավոր և միջակ գյուղացիության պատկանող հողը շատ չնչին է։ Այսպես, օրինակ, Ֆրանսիայում, ալպիական շրջանում 40 հազար գյուղացիներ ունեն ընդամենը 2 հազար դեսյատին հող։ Պարզվում է, որ քսան տնտեսություն ընդամենը 1 դեսյատին հող ունեն։ Դե՛, տրի ու այդ հողից ստացված բերքով և՛ տուն-տեղ պահիր, և՛ հարկ վճարիր։ Իսկ հարկերն այնտեղ այնքան էլ քիչ չեն գանձվում, մանավանդ չքավորներից ու միջակներից։ Գերմանիայում կապիտալիստներն ու կալվածատերերն ընդունել են մի այսպիսի օրենք.—Յեթե դու դեսյատինից քիչ հող ունես, ուրեմն պետք է մի դեսյատինից ավելի հարկ վճարես։ Հետևանքում հարկերի ամենամեծ մասը վճարում են ոչ թե կուլակները կամ կալվածատերերը, այլ աշխատավոր ազգաբնակչությունը։ Ֆրանսիայում հարկերը նշանակվում են ըստ պատուհանների թվի, և այդ պատճառով էլ գյուղացիության մեծամասնությունն ապրում է պատուհան չունեցող մարագներում։

Արտասահմանում գյուղացիությանը մարդ հո չեն համարում։ Ահա մոտավորապես մոտիկ ժամանակներս ինչ է տեղի ունեցել Ռումինիայում. «Թագավորի աղջիկը ավտոյով զբոսնում էր։ Անտառով անցնելով նա կորցնում է իր շունը։ Նրա յենթադրությամբ շունը պետք է կորած լիներ մի գյուղի մոտերքը։ Վոստիկանությունը վրա յե հաս-

նում և պահանջում է անմիջապես ներկայացնել շունը։ Վախեցած գյուղացիները վոչ մի շան մասին գաղափար չունեյին և այդ պատճառով էլ «ներկայացնել» չեյին կարող։ Վոստիկանությունը մտրակներով ծեծում է բոլոր հասակն առած գյուղացիներին, հետո նրանց դուրս է քշում գյուղից, չթողնելով վոր նույնիսկ իրենց անասունները վերցնեն, իսկ գյուղը կրակի յե տրվում»։

Դե, արի գյուղացի ու արտասահմանի այդպիսի դրախտի մեջ ապրի։

Ձե, դառն է կյանքը, վոնց վոր ասում են՝ դառը դատի, քարից հաց քամի ու դատարկ նստի։

Տարեց-տարի գյուղացիության չքավոր մասն այլևս հնարավորություններ չունենալով մշակելու իր հողը, հեռանում է քաղաք՝ գործարան կամ ֆաբրիկ մտնելու։ Քաղաքում չքավորն աշխատանք հաճախ չի գտնում, և նրան վիճակվում է հենց թեկուզ հարուստ Ամերիկայում մեռնել քաղցից։ Վատ է նաև միջակ գյուղացու վիճակը։ Միջակ գյուղացին ցերազում է կուլակների շարքն ընկնել, կամ ինչպես առաջ ասում եյին, գյուղում «մարդ դառնալ»։ Բայց սա լինում է շատ հազվագյուտ դեպքում։ Կապիտալիզմի որով հարյուր միջակից մեկը հազիվ թե կարողանա կուլակ դառնալ, իսկ մնացածները՝ 99 հոգին դառնում են չքավոր և վերջապես ընկնում են գործարան կամ ֆաբրիկ, կամ թե չե վիճակվում է քաղցից մեռնել քաղաքի փողոցներում։

Ահա այս պատճառով էլ արտասահմանում կոմունիստներն աշխատում են բանվորության կողին ոգնության ներգրավելու գյուղացիությունը և առաջին հերթին գյուղի չքավորությունը։ Ինչու։ Դե, նրա համար, վոր չքավորությունն արտասահմանում ամենից շատ է տուժում կապիտալիզմի զարգացումից, վորովհետև չքավորությունը պրոլետարական հեղափոխության մեջ բան չունի կորցնելու։ Բայց շահում են նրանք շատ բան։ Այդ պատճառով էլ արտասահմանի կոմունիստների ամենագլխավոր խնդիրը գյուղում՝ հանդիսանում է աշխատանքը գյուղական չքավորության մեջ, գյուղական չքավորությանը պրոլետարական հեղափոխության համար նախապատրաստելը։ Պարզվում է, վոր պրոլետարական հեղափոխության մեջ բանվոր դասակարգի հետ կողք-կողքի մասնակցելու յե յելվ գյուղի չքավորությունը։ Միջակ գյուղացիության խնդիրը միքիչ այլ է։ Ձնայած այն հանգամանքին, վոր նա միշտ, ամեն որ տեսնում է, թե ինչպես են քայքայվում, վոչնչանում իր նման հարյուրավոր ու հազարավոր միջակներ, համարյա թե յուրաքանչյուր միջակ մտածում է. «գուցե թե կհաջողվի,

գուցե թե յես չեմ ընկնի չքավորության մեջ, գուցե թե յես «մարդ կդառնամ»։

Այս պատճառով էլ արտասահմանում կոմունիստական կուսակցություններին վիճակվում է համբերատար վերաբերմունքով բացատրել միջակ գյուղացիությանը նրա դրությունը կապիտալիզմի պայմաններում և թե ինչ կարող է ստանալ նա պրոլետարական հեղափոխությունից։

Կոմունիստների աշխատանքների շնորհիվ միջակ գյուղացիության վորոշ մասին հաջողվում է դարձնել պրոլետարիատի և գյուղի չքավորության դաշնակիցը պրոլետարական հեղափոխության մեջ։ Բայց չպետք է փակել աչքերը նաև այն բանի առաջ, վոր պրոլետարական հեղափոխության մոմենտին միջակների զգալի մասն սկզբնական շրջանում կոմունիստներին չպետք է նայի։ Պետք է հաշվի առնի, թե վորն է ձեռնտու՝ պրոլետարիատի դիկտատուրան, թե կապիտալիստների իշխանությունը, և թեկուզ յերկար ու բարակ մտածելուց հետո, կանցնի բանվոր դասակարգի կողմը, սակայն նա առաջին շրջանում անպայման կտատանվի։

Կուլակների մասին, իհարկե, կարելի յե և չխոսել, վորովհետև ամենքին էլ պարզ է, վոր պրոլետարական հեղափոխությունը կուլակության համար մահ է, և այդ պատճառով էլ կուլակը պրոլետարական հեղափոխության մահացու թշնամին է։ Արտասահմանի կոմունիստների խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի մեկուսացնեն կուլակներին և նրանց դեմ լարեն գյուղի չքավորությանն ու միջակներին։

ԱՐԵՎԵԼՔԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Բուրժուազիայի դեմ մղվող պայքարում պրոլետարիատի դաշնակիցներն են հանդիսանում ճնշված յերկրների (գաղութների) բանվորներն ու գյուղացիները, (ինչպիսին են Հնդկաստանը, Չինաստանը, Պարսկաստանը, Մարոկոն և այլն)։ 1920 թվին ընկեր Լենինն հաշվել է, վոր «աշխարհի ազգաբնակչության մոտ 70 տոկոսը ճընշված ժողովուրդների թվին են պատկանում»։

Կապիտալիստների համար քիչ է այն շահը, վոր նրանք ստանում են իրենց յերկրում։ Նրանք ձգտում են իրենց կապիտալներն ավելի ու ավելի մեծացնել։ Այդ պատճառով էլ նրանք աշխատում են իրենց ձեռքը թվով ավելի ու ավելի շատ յերկրներ գցել, վորտեղ հարստություն, հումույթ կամ պարզապես բանվորական ուժ կա։

Օրինակի համար, Չինաստանում է ամբողջ աշխարհի քարածխի մեկ քառորդը, այնտեղ մեծ քանակությամբ բամբակ է արտադրվում։ Չինաստանի ազգաբնակչությունը մոտ 450 միլիոն է, և նրանցից շատ շատերը կարող են եժանագին բանվորներ դառնալ։ Չինաստանը գրավելու համար կապիտալիստների միջև անընդհատ պայքար է ընթանում։ Բայց միմյանց դեմ պայքարելով, կապիտալիստները— հենց վոր գաղութային ժողովուրդներն ապստամբում են— միանում են։ Չինական մեծ հեղափոխության բուռն աճման պահին բոլոր յերկրների կապիտալիստները համախմբվեցին ընդդեմ Չինաստանի աշխատավորության, և չինական բուրժուազիայի ու կալվածատերների հետ միասին հեղափոխությունը ճնշեցին։

Ճնշված յերկրներում ժողովուրդը յերկուստեք հարստահարվում է։ Առաջին հերթին նրանց իրենց յերկրի կալվածատերն ու կապիտալիստներն են ճնշում, յեվ ապա՝ մյուս յերկրների կապիտալիստները։

Այս յերկուստեք հարստահարման շնորհիվ գաղութային յերկըրների աշխատավորության դրությունը կրկնակի ծանր է։

Բանվորներն այնտեղ 12-ից 16 ժամ են աշխատում։ Աշխատավարձն օրական մեծերի համար 15—20 կոպեկ է, իսկ փոքրերի համար՝ 5—8 կոպեկ։ Յերեխաների աշխատանքի ժամերի քանակը նույնքան է, վորչափ հասակավորներինը։ Բնակարանների փոխարեն նրանք,—կապիտալի այդ ստրուկները,—վրաններ ունեն, վորոնք աշխատանքի տեղից միքանի կիլոմետր հաճախ հեռու յեն ընկած։ 16 ժամյա բանվորական օրվանից հետո ստիպված պետք է ահագին ժամանակ վատնել տուն հասնելու և առավոտյան էլ, մեկ կամ յերկու ժամ քնելուց հետո, նորից աշխատանքի գնալու համար։ Նման կենցաղի հետևանքով գաղութային բանվորն ապրում է 30 տարուց վոչ ավելի։ Կապիտալիստները գաղութային ժողովուրդներին իրենց հողից քշել են, և ստիպում են իրենց շահերի համար աշխատել—չնչին վարձով։ Հասկանալի յե, թե ինչու կամ այս կամ այն գաղութային յերկըրներում ապստամբություններն այդքան հաճախ են լինում։

Գաղութային յերկրներում գյուղացիները բանվորներից այնքան էլ լավ չեն ապրում։ Օրինակի համար, հենց նույն Չինաստանը վեր-վերցնենք։ Չինաստանի գյուղացիության կեսը հողը կապալով է վերցնում։ Գյուղացիության ապրուստի աղբյուրը կազմում է մեկից մինչև քսան մու կազմող բոստանը (մու տարածության չափ է=$^1/_{16}$ հեկտարի)։ Գյուղացիության մեկ քառորդը 20—40 մու տարածությամբ հողամասեր ունեն։ Յեվ այս գյուղացիներին միջակ չես կարող հաշվել։ Այսպիսով Չինաստանի գյուղացիության մոտ $^3/_4$-ը չքավորու-

թյունն է։ Պարզ է, վոր հողի չնչին քանակության պատճառով քաղցը չինական գյուղացու մշտական ուղեկիցն է հանդիսանում։ Չի կարելի ասել, թե Չինաստանում հող չկա, հեղափոխության դեպքում հող այնտեղ էլ կգտնվի այնպես, ինչպես Ռուսաստանում Հոկտեմբերից հետո գտնվեց։

Այսպես է նաև մյուս գաղութների գյուղացիության դրությունը։ Միքանի տարի առաջ, Հոլլանդիային պատկանող Յավա կղզում սով էր, վորի հետևանքով մի շարք գավառներում ժողովուրդը մեռնում էր։ Բանն այնտեղ հասավ, վոր մայրերն իրենց յերեխաներին ուտելու համար ծախում էին։

Գաղութային ժողովուրդների ապստամբություններ շատ են յեղել, բայց միշտ էլ նրանք դաժանությամբ տապալվել են։ Բոլոր ապստամբությունները, վորոնք գաղութներում տեղի յեն ունենում, կապիտալիստները՝ Խորհրդային Միության կոմունիստներին են վերագրում։ Նրանք մտածում են, վոր իրենց ճնշումը վոչ միայն կենդանի մարդկանց, այլև մեռելներին կարող է վոտքի կանգնեցնել։

Միակը, վոր գաղութային ժողովուրդներին վճռական ոգնություն կարող է ցույց տալ, դա բանվոր դասակարգն է—Կոմինտերնի ղեկավարությամբ։ Արտասահմանում բոլոր կոմունիստական կուսակցությունները՝ ճնշված գաղութային ժողովուրդներին ոգնելու ուղղությամբ՝ իրենց յերկրի բանվորներին կազմակերպում են։ Բանվոր դասակարգի լայն մասսաները կապիտալիստների կողմից գաղութային ժողովուրդների շահագործումից վոչինչ չեն շահում։ Այդ պատճառով էլ բոլոր նրանք, ովքեր կապիտալիստների կողմից ճնշվում են, պետք է միասնական ճակատով պայքարեն։ Այդ պատճառով էլ գաղութատեր յերկրների բանվորները պետք է պահանջեն դուրս բերել իրենց զորքերը գաղութներից, և գաղութների հեղափոխական ապստամբությունները ճնշելու համար զենք փոխադրելուց պետք է հրաժարվեն։ Պետք է, վոր և վոչ մի աշխատավոր կապիտալիստների շահերի պաշտպանության համար գաղութ չգնա։

Այն գաղութներում, վորտեղ կոմկուս կա, նա գաղութի աշխատավորությանը կոչ է անում՝ գաղութին ճնշող յերկրի պրոլետարիատի հետ միասին պայքարել բուրժուազիայի դեմ։

Գաղութային ժողովուրդների պայքարը կապիտալիստական յերկրների հզորությունը թուլացնում է, և դրանով իսկ ոգնում կապիտալիստական յերկրներում պրոլետարիատի հեղափոխական պայքարի ծավալմանը։ Գաղութային յերկրներում հեղափոխական շարժման հաղթությունը, կապիտալիստական յերկրներում՝ պրոլետարական հեղափոխությունը զգալի չափով կարագացնեն։

Թե ինչպես են գաղութներից կապիտալիստները շահ ստանում ու տազում, այդ Վլադիմիր-Իլյիչի հետևյալ խոսքերից երևում է. «Մինչ պատերազմը հաշվում եյին, վոր երեք հարուստ երկրները,— Անգլիան, Ֆրանսիան ու Գերմանիան, հենց միայն արտասահման կապիտալի արտածումից,— էլ չհաշված մյուս եկամուտները - տարեկան 8—10 միլիարդ ֆրանկ (ֆրանկ=37 կ.) եկամուտ եյին ստանում»։ Բոլոր այդ դրամները կապիտալիստներն իրենց կարիքների համար չեն ծախսում։ Այդ դրամների մի մասը սպառազինման նախապատրաստության,— ինչպես երկրի ներսում, նույնպես և գաղութներում — հեղափոխական ելույթների տապալման համար ջոկատներ ստեղծելու վրա էր ծախսվում։

Այդ դրամների առթիվ ընկ. Լենինը գրում էր. «Հասկանալի է, վոր այդ կլորիկ գումարից հենց թեկուզ կես միլիարդ կարելի է բանվորական առաջնորդների, բանվորական արիստոկրատիայի առաջը ձգել, զանազան ձևերով կաշառելու համար»։ Եթե գաղութային երկրներում հեղափոխական շարժումն հաղթանակի, կապիտալիստական երկրների վրա հասնող կրիզիսը պրոլետարական հեղափոխությունը կարագացնի։ Բանվորների այն վերնախավը, վորը ներկայումս էլ կապիտալիստներից դրամ է ստանում, նրանցից կխզվի։ Բանվոր դասակարգի մեջ կապիտալիստներն այն ագենտները չեն ունենա, վորոնք ջլատում են ներկայումս արտասահմանում բանվորական հեղափոխական շարժումը։

Ահա թե ինչու համար կոմունիստները գաղութային երկրներում տեղի ունեցող հեղափոխական շարժմանն ամեն կերպ օգնում և վողջունում են։

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ԿԻՄ-Ը

Տեսնում ենք, վոր պրոլետարական հեղափոխությունը մասի մի շարժումով չի կատարվում։ Նա երկար ժամանակ պատրաստվում ու խնամքով կազմակերպվում է։ Հենց այս պատճառով էլ զանազան երկրների կոմունիստները պետք է համերաշխ ու համաձայնեցրած աշխատեն և զանազան կողմեր չքաշեն։

Ամբողջ աշխարհում կոմունիստների աշխատանքի ղեկավարության համար ստեղծվել է Կոմունիստական Ինտերնացիոնալը, այսինքն բոլոր կոմունիստների համաշխարհային միությունը։

Կոմինտերնը ընկեր Լենինի մտահղացմամբ է կազմակերպվել, 1919 թվին։ Կոմունիստական Ինտերնացիոնալը բոլշևիկ-կոմունիստ-

ների համաշխարհային կուսակցությունն է։ Առանձին յերկրների կո-
մունիստական կուսակցությունները Կոմինտերնի մասը, կամ ինչպես
ոտար լեզվով ասում են, սեկցիաներն են հանդիսանում։

Վորպեսզի համաձայնություն գա այն խնդիրների շուրջը, վո-
րոնք կանգնած են բոլոր յերկրների կոմունիստների և յուրաքան-
չյուր յերկրի կոմունիստների առաջ, բոլոր յերկրների կոմունիստական
կուսակցությունների ներկայացուցիչները համագումար են կազմում,
վորն ոտար լեզվով կոնգրես է կոչվում։ Նման համագումար կամ կոն-
գրես Կոմինտերնի կանոնադրության համաձայն 2 տարին մի անգամ
է գումարվում։

Կոնգրեսներում հեղափոխական շարժման ամենագլխավոր հար-
ցերն են քննվում։ Կոմինտերնի վերջին 6-րդ կոնգրեսը քննարկեց
այս հարցերը․ 1) Կոմինտերնի ծրագիրը, 2) իմպերիալիստական պա-
տերազմների վտանգի դեմ պայքարելու միջոցների մասին, 3) գաղու-
թային և կիսագաղութային յերկրների հեղափոխական շարժման մա-
սին և այլ հարցեր։

Յերբ կոնգրեսն այս հարցերը քննեց և սրանց մասին իր վորո-
շումը հանեց, այդ որից սկսած այդ վորոշումները բոլոր յերկրների կո-
մունիստների համար պարտադիր են դառնում։ Այդ վորոշումները չկա-
տարելու բոլոր փորձերը Կոմինտերնից վտարելու ճանապարհի վրա յեն
հանում։ Կոմինտերնում նման հաստատուն դիսցիպլինան անհրաժեշտ
է նրա համար, վորպեսզի ամբողջ աշխարհի կապիտալիստների դեմ
կոմունիստները վորպես մեկ մարդ դուրս գան։ Յեթե կոմունիստները
միահամուռ կերպով հանդես չգան, այդ դեպքում կապիտալիստները
նրանց առանձին-առանձին էլ կխեղդեն։

Կոնգրեսը Կոմինտերնի գործկոմ է ընտրում։ Կոմինտերնի Գործ-
կոմը ամբողջ աշխարհի կոմունիստների համար յերկու տարի շարու-
նակ՝ մի կոնգրեսից մինչև մյուսը՝ գերագույն որգան է հանդիսանում։
Կոմինտերնի Գործկոմի վորոշումները կոմունիստների համար պար-
տադիր են այնպես, ինչպես Կոմինտերնի կոնգրեսի վորոշումները։

Յուրաքանչյուր յերկրի կոմունիստական կուսակցություն Կոմին-
տերնի կոնգրեսի, ինչպես և գործկոմի վորոշումներին պետք է յենթարկ-
վի։ Կոմունիստների միահամուռ աշխատանքով կարելի յե համաշխար-
հային պատերազմը հաղթահարել։

Կոմինտերնի մեջ սեկցիայի իրավունքներով մտնում է նաև
Յերիտասարդական Կոմունիստական Ինտերնացիոնալը — ԿԻՄ-ը։ ԿԻՄ-ը
Կոմինտերնի ոգնականն է, և յերիտասարդության մեջ տարվող աշ-
խատանքի լավ ոգնականը։ Նա բոլոր յերկրների կոմունիստական յե-
րիտմիությունները համախմբում և ղեկավարում է։

ԿԻՄ-ը, ինչպես Կոմինտերնը, գումարում է համաշխարհային կոմսոմոլի կոնգրեսներ, վորտեղ յերիտասարդական շարժման կարևորագույն հարցերն են քննարկվում։ ԿԻՄ-ի կոնգրեսներում գործկոմ է ընտրվում, վորը կոմյերիտական բոլոր սեկցիաների աշխատանքները ղեկավարում է։

Մեր ՀամԼԿՅԵՄ-ը,—ինչպես մյուս յերկրների կոմյերիտմիությունները,—սեկցիայի իրավունքով մտնում է ԿԻՄ-ի մեջ։ Այսպիսով ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամը ԿԻՄ-ի անդամ է հանդիսանում։

Բոլորին էլ պարզ է, վոր մեր կոմսոմոլի դրությունը շատ անգամ ավելի լավ է, քան թե կապիտալիստական յերկրների կոմյերիտմիությանը։ Մեզ մոտ յուրաքանչյուր քայլափոխին կոմսոմոլին օգնում է վոչ միայն կուսակցությունը, այլ և պետական օրգանները։ Կապիտալիստական մի շարք յերկրներում միայն կոմսոմոլի անդամ լինելու համար կոմյերիտականները բանտի և աքսորի յեն յենթարկվում։

Կապիտալիստական յերկրներում կոմյերիտականների աշխատանքի այսպիսի պայմանների համար պետք է նրանց լավ օգնել։ Հինգ և տասը կոպեկանոցները, վորոնք մեր յերկրի կոմյերիտականներից հավաքվում են, օգնում են այլ յերկրների կոմյերիտականներին իրենց դպրոցներն ու ակումբները կազմակերպելու։

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է հիշի, վոր իրենց գյուղում աշխատելով նա օգնում է մեր յերկրին՝ սոցիալիզմը կառուցելու։ Իսկ մեր յերկիրը վողջ աշխարհի աշխատավորության համար օրինակ է ծառայելու։ Վորքան շուտ անցնենք մենք նոր տեխնիկային, վորքան շուտ վերակառուցենք մենք մեր կյանքը, մյուս յերկրների բանվորներն ու գյուղացիներն այնքան շուտ կհամոզվեն, վոր ճիշտ է այն ուղին, վորը ցույց է տվել Լենինը։

Նշանակում է՝ մեզնից յուրաքանչյուրը, գյուղում աշխատելով, համաշխարհային հեղափոխության համար պիտանի գործ է կատարում, նրա նախապատրաստությանը մասնակցում է, պայքարում է սոցիալիզմի համար, վորպես պրոլետարական հեղափոխության համաշխարհային բանակի մի զինվոր։

Կապիտալիստական յերկրների կոմյերիտական բջիջներից մեկնումեկի հետ պետք է գրավոր կապ ստեղծել։ Անհրաժեշտ է մեր աշխատանքի փորձը փոխանակել նրանց հետ։ Պետք է նրանց մեր նվաճումների մասին հայտնել։ Խորհրդային Միության նվաճումների յուրաքանչյուր հաղորդումը ավելի ու ավելի կբարձրացնի կոմունիզմի համար պայքարող յերիտասարդ մարտիկի վոգևորությունը։

Յուրաքանչյուր կոմյերիտական Լենինի ցուցմունքները պետք է հիշի.—

«Կոմյերիտական յերիտասարդական միությունը միայն այն դեպքում կարդարացնի իր կոչումը,—վոր իսկապես նա յերիտասարդ սերնդի կոմունիստական միությունն ե, յեթե նա իր ուսման, կրթության և դաստիարակման յուրաքանչյուր քայլը շահագործողների դեմ պայքարող բոլոր աշխատավորների բախտի հետ ե շաղկապում»։

ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԽՍՀՄ—ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՂԱԿՈՒՄ

Յուրաքանչյուր կոմյերիտական գիտե, վոր ԽՍՀՄ աշխարհիս յերեսին միակ յերկիրն ե, վորտեղ իշխանության գլուխը բանվորներն ու գյուղացիներն են կանգնած։

Մնացած բոլոր յերկրներում իշխանության գլուխը կամ կալվածատերերը և կամ բուրժուազիան ե կանգնած։

Մյուս յերկրների բանվորներն ու գյուղացիները, մեր յերկրի որինակը տեսնելով, աշխատում են իրենք ել կալվածատերերի ու բուրժուազիայի իշխանությունը տապալել և բանվորների ու գյուղացիների իշխանություն հաստատել։ Հենց սրանից ե, վոր բուրժուազիան ավելի շատ ե վախենում, քան թե աշխարհում մի վորևե այլ բանից։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ուրիշ յերկրներում իշխանության գլուխը կանգնած կապիտալիստներն ու կալվածատերերը Խորհրդային հանրապետությունների Միությանն ատում են։

Վողջ աշխարհի կապիտալիստները չեն կարող հաշտվել այն մտքի հետ, վոր Խորհրդային յերկիրը կապիտալիստական յերկրներից անկախ ե։ Անցյալում ցարական կառավարությունը, վորը հեղափոխական շարժումները ճնշելու և արյունահեղ կռիվների համար միշտ դրամի կարիք եր զգում, Ռուսաստանի հարստությունները նրանց գռոշի գնով ծախում եր։ Ռուսաստանում յեղած լավագույն գործարանները, հանքահորերն ու ֆաբրիկաները ոտարերկրյա կապիտալիստներին եր պատկանում. անգլիացի Ուրկարը Ուրալում պղնձի, արծաթի և վոսկու հանքեր ուներ և տարեկան միլիոնների շահ եր ստանում. ֆրանսիացի Տիրարը և ուրիշները ակցիաների միջոցով վողջ Դոնբասին եյին տիրապետում։ Անցյալում Ռուսաստանը խոշոր կապիտալիստական յերկրներից կիսով չափ եր անկախ։ Ցարական կառավարությունը տարեկան արտասահմանյան կապիտալիստներին միքանի տասնյակ ու հարյուր միլիոն ռուբլի միայն պարտքերի տոկոսներն եր վճարում։ Ներկայումս

դրությունը սուր կերպով ձախվել է. ԽՍՀՄ—դա մի այնպիսի պետություն է, վորը մնացած պետություններից ամենից քիչ է կախված։

Ցեթե դու ուշադրությամբ հենց թեկուզ «Մաճկալը» կարդում ես, տեսնում ես, թե ինչպես են խոշոր կապիտալիստական պետությունները փոքրերին մատների վրա խաղացնում, որինակ, Լեհաստանին, Ռումինիային, Պարսկաստանին, Լիտվային և այլն։ Խոշոր յերկրների կապիտալիստները միայն փոքրիկ պետություններում չե, վոր տեր ու տնորինություն են անում։ Նույնիսկ այնպիսի մի պետության մեջ, ինչպիսին Գերմանիան է, վորին հաղթեցին վերջին կռվի ժամանակ, հաղթող կապիտալիստական պետությունները տեր ու տիրականություն են անում։

Ապա թող մի ինչ վոր Անգլիա կամ Ֆրանսիա փորձեն մեզ հրամայել, վոր իրենց համար քարածուխ արտադրենք, տարեկան նրանց 2 ու կես միլիարդ մարկ (մարկը մոտ 50 կոպեկ է) փողով կամ ապրանքներով հարկ վճարենք, ինչպես ներկայումս Գերմանիային են հրամայում։ Ապա թող փորձեն հրամայել,—ինչպես այդ Լեհաստանին են անում,—մեր միջոցների մեծագույն մասը ռազմական կարիքների վրա ծախսել։

Չե, Խորհրդային Միության հանդեպ Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի կապիտալիստները նման հրամաններով հանդես գալ չեն կարող։

Մի յերրորդ պատճառ էլ կա, վորի շնորհիվ կապիտալիստները մեր Խորհրդային պետության գոյության փաստը չեն կարողանում հանդուրժել։

1917 թվի նոյեմբերին, յերբ իշխանությունը Խորհուրդներին անցավ, նրանք հայտարարեցին, վոր բոլոր պայմանագրերն ու պարտավորությունները, վորոնք ցարական իշխանությունը հանձն եր առել, վոչնչացվում են։ Յերբ այդ դեկրետն հրապարակվեց, ամբողջ աշխարհի բուրժուազիան վոտքի կանգնեց Խորհուրդների դեմ, վորովհետև այդ դեկրետով ցարական իշխանության մյուս յերկրներից վերցրած բոլոր պարտքերը վոչնչացվում եյին։ Իսկ այդ պարտքերը քիչ չեյին։ Հենց Ֆրանսիային միևնակ Ռուսաստանը միքանի միլիարդ ռուբլի յեր պարտք։

Հայտարարելով, վոր Խորհիշխանությունը ցարական պարտքերը չի վճարելու, մենք ամբողջ աշխարհի աշխատավորությանը հայտնեցինք, վոր բոլոր այն գումարները, վորոնք ցարական իշխանությունը արտասահմանից վերցրել եր, ծախսվել եյին վոչ թե բանվորների և գյուղացիների օգտին, այլ ընդհակառակը, վորպեսզի նրանց ճնշեյին։ Այսպես, որինակ, 1905 թվին ֆրանսիական բուրժուազիան ցարին փո-

խառություն տվեց, վորպեսզի վերջինս 1905—7 թվականների հեղափոխությունը ճնշեր և այդ փողերով ժանդարմներին ու իր բոլոր ոգնականներին պարգևներ տար։

Պարտք վերցրած գումարները պատերազմներ մղելու համար եյին ծախսվում, վորից աշխատավորությունն ուժեղ չափով տուժում եր։ Հապա թող ձեզնից վորևե մեկը հաշվի, թե ինչպիսի վնասներ հասցրեց պատերազմը և ինչքան վորբեր մնացին հենց ձեր գյուղում։ Քանի-քա՞նի հաշմանդամներ վերադարձան ձեր գյուղը։ Իսկ այդ կռվի մեջ նրանք իրենց վոտներն ու ձեռները ինչու համար կորցրին... Ցարը նրանց այդ բանի փոխարեն ինչ տվեց։ Ո՞վ վոր ցարիզմի որերը լավ հիշում է, նա կասի, վոր ցարական կառավարությունը, բացի մտրակից և ուրյադնիկից, ել ուրիշ բան իրենց չի տվել։

Իսկ պատերազմի համար փողը անհաշիվ չափերով եր ծախսվում։ Այսպես, պատերազմի առաջին տարին Ռուսաստանին 7 միլիարդ 300 միլիոն ռուբլի նստեց, իսկ չորրորդ տարին արդեն՝ 13 ու կես միլիարդ ռուբլի։ Դե, սրի ու կապիտալիստների հետ հաշիվ մաքրի։ Յեթե այդ փողերը յուրաքանչյուր գյուղական տնտեսության վրա բաշխենք, ամեն մեկին 2500 ռուբլի կընկնի։ Կապիտալիստները մինչև այժմս ել դեռ ուզում են, վորպեսզի մենք նրանց,—մեր արյունախում թշնամիների փոխարեն,—վճարենք։ Յեվ յերբ Խորհրդային իշխանությունը նրանց հայտարարում է, վոր ուրիշների գործի համար մենք պատասխանատու չենք, և թող նրանց հետ վերջացնեն իրենց հաշիվները, ովքեր վոր փող են վերցրել, կապիտալիստներն սկսում են ամեն կերպ ուժեղացնել իրենց պայքարը «հափշտակիչ-բոլշևիկների» դեմ։

Ուրեմն, կապիտալիստների մեր հանդեպ բռնած թշնամանքի գլխավոր պատճառն այն է, վոր նրանք վախենում են, թե իրենց յերկրի բանվորներն ու գյուղացիները տեսնելով Խորհրդային Միության աճումը, կաշխատեն իրենց կապիտալիստներին տապալել և իրենց մոտ ել Խորհրդային իշխանություն կհաստատեն։

Այս գլխավոր պատճառին կարելի յե ավելացնել նաև յերկուսը.— մեր անկախությունը, մեր ցանկությունը նրանց չնչին գներով մեր անտառանյութերը, կանեփը, վուշը և այլ մթերքները չգիջելը և կապիտալիստներին ցարական պարտքերը վճարելուց հրաժարվելը։

Ահա այս բոլոր պատճառների դրդմամբ կապիտալիստներն ամեն կերպ աշխատում են, վորպեսզի մեր յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի փոխարեն այնպիսի կարգեր ստեղծվեն, ինչպիսին մյուս կապիտալիստական յերկրներում է, վորպեսզի գործարանն ու

ֆաբրիկը կապիտալիստին վերադարձվի, վորպեսզի գյուղում կուլակը տեր ու տնօրինություն անի, վորպեսզի պետական իշխանությունն էլ նրանց պատկանի։

Քաղաքացիական կռիվների տարիներին կապիտալիստները ցարական գեներալների—Դենիկինի, Կոլչակի, Յուդենիչի, Վրանգելի և ուրիշների հետ միասին Խորհրդային իշխանության դեմ եյին պատերազմում։

Ամբողջ աշխարհի կապիտալիստները հրաշալի կերպով հասկանում եյին, վոր Խորհրդային իշխանության տապալումից հետո, իրենց յերկրներում աճող հեղափոխական շարժման հետ հաշիվներ մաքրելը նրանց համար մի քանի անգամ հեշտ կլիներ։ Նրանք գիտեյին, վոր Խորհրդային Ռուսաստանի բանվորներին և գյուղացիներին հաղթելուց հետո, նրանք Ռուսաստանում տեր ու տնօրեն եյին դառնալու ավելի մեծ չափով, քան ցարի ժամանակ եյին։

Ցարական գեներալները պետք է վոր շնորհակալություն հայտնեյին կապիտալիստներին, բանվորների և գյուղացիների դեմ իրենց ցույց տված օգնության համար։

Խորհրդային իշխանության տապալման համար սպիտակ գվարդիականներին 14 պետություններ եյին օգնում։ Համարյա թե վողջ աշխարհը բանվորների ու գյուղացիների դեմ եր կանգնել։ Անգլիան միայն 1919 թվի 6 ամիսների ընթացքում Դենիկինին 588 հրանոթներ, 12 տանկ, 1.685.522 թնդանոթի ռումբ, 160 միլիոն հրացանի փամփուշտ, 250 հազար զգեստների լրիվ կոմպլեկտ և 100 հազար զույգ կոշիկներ տվեց։ Չնայած նրան, վոր Ամերիկան Ռուսաստանից շատ ու շատ հեռու յե, բայց նա յել Անգլիայից յետ չմնաց։ Ամերիկացիները 1919 թվին 2 ու կես ամսվա ընթացքում Դենիկինին 10 հազար հրացան, 3 միլիոն փամփուշտ, 319 700 զույգ կոշիկ, 2.600 կապոց կաշի և մոտ 200 հազար հատ գրատ ուղարկեցին։

Մյուս յերկրներն էլ նույն ձևով օգնեցին Խորհրդային իշխանության դեմ կռվելու գործին։

Իսկ ինչպես յեղավ, վոր Խորհրդային Ռուսաստանը բոլոր հարձակումներին դիմացավ և քաղաքացիական կռիվներից էլ հաղթող դուրս յեկավ։

Մեր յերկրի բանվորների և գյուղացիների կողմից քաղաքացիական կռիվներում սպիտակ գվարդիականների և նրանց օգնողների դեմ տարած հաղթանակի հիմնական պատճառը, դա միասնական պայքարն եր։ Բանվորները գիտեյին, վոր յեթե հին կարգերը վերադառնան, նրանց վզին նորից ֆաբրիկանտներն ու գործարանատերերը պի-

տի նստեն։ Գյուղացիներն հասկանում եյին, վոր յեթե հին կարգերը վերականգնեյին, հողը պետք ե նորից կալվածատերերի ձեռքն անցներ։ Հենց այս պատճառով ել մեր Կարմիր Բանակը, վոր հաճախ քաղցած, բոբիկ, պատառոտված շորերով ու ուժասպառ եր լինում, սպիտակ գվարդիականներին ջարդեց։

Մեր հաղթանակի յերկրորդ և վոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող հանգամանքը, դա Արևմտյան-յեվրոպական յերկրների բանվորության կողմից մեզ ցույց տված ոգնությունն եր։ Այն ժամանակ դեպքերը հազվագյուտ չեյին, յերբ Ֆրանսիայի, Անգլիայի և այլ յերկրների բանվորները ռուսական ֆրոնտ գնալուց հրաժարվում եյին, քաջ գիտակցելով, վոր իրենց կապիտալիստների շահերի համար բանվորների և գյուղացիների դեմ կռվելու յեն ուղարկում։

Հասակավոր գյուղացիները գուցե թե հիմա յել հիշում են, թե ինչպես 1919 թվին ֆրանսիական նավաստիները Սև ծովում, ընկեր Մարտիի գլխավորությամբ,—վորը ներկայումս ֆրանսիական բանտում ե,—Խորհրդային պետության դեմ հրաժարվեցին կռվել և իրենց հայրենիքը յետ դարձան։

Այն ժամանակ դեպքերը հազվագյուտ չեյին, յերբ յերկաթուղային բանվորները մեր դեմ ռազմամթերքներ փոխադրելուց հրաժարվում եյին։

Քաղաքացիական կռիվների շրջանում, մանավանդ, կապիտալիստական յերկրներում ուժեղ հեղափոխական շարժում սկսվեց։ Բոլոր յերկրներում բանվորները պահանջում եյին մեր յերկրում բանվորների ու գյուղացիների դեմ պայքարող սպիտակ գվարդիականներին ոգնություն ցույց չտալ։

Մեր հեղափոխությանն աջակցելու համար Անգլիայում բանվորներն իրենց կոմիտեները կազմեցին։

Իրենց յերկրների հեղափոխական շարժման վախը կապիտալիստներին ստիպեց զիջելու և հրաժարվելու ռուսական սպիտակ գվարդիականներին բացահայտ կերպով ոգնություն ցույց տալուց։

Մյուս յերկրների աշխատավորները հասկանում եյին, թե Խորհրդային յերկիրն իրենից ինչ ե ներկայացնում, և դրա համար ել մեզ շարունակ ոգնում եյին։ Այս բանը չպետք ե մոռանա ե՛ վոչ մի կոմյերիտական, վորովհետև Արևմտյան-յեվրոպայի պրոլետարիատի ոգնությունը մեզ հնարավորություն տվեց 1917 թվի Հոկտեմբերին տարած մեր հաղթանակն ամրապնդել։

Քաղաքացիական կռիվների ժամանակ մեր հաղթանակին ոգնեցին առանձին գեներալների միջև տեղի ունեցող անհամաձայնու-

թյունները և առանձին կապիտալիստական երկրների միջև գոյություն ունեցող տարաձայնությունները։ Յուրաքանչյուր գեներալ ցանկանում էր առաջին հերթին ինքը աշխատավորության մայրաքաղաք Մոսկվան գրավել և ավելի մեծ իշխանություն ձեռք գցել։ Յուրաքանչյուր օտար պետություն աշխատում էր Ռուսաստանի հարստություններից ամենալավ կտորը, ամենաեժան գնով ձեռք գցել։ Յուրաքանչյուր կապիտալիստական պետություն հետևում էր այն բանին, վորպեսզի մյուս պետություններն ավելի մեծ քանակությամբ հարստությունները ձեռք չգցեն։

Ահա այս բոլոր պատճառներն այն հետևանքն ունեցան, վոր, չնայած մեզ՛ վրա 14 կապիտալիստական պետություններ եկին հարձակվել,—մենք քաղաքացիական կռիվներում հաղթող դուրս եկանք։

1920 թվին քաղաքացիական կռիվները վերջացան։ Բայց կապիտալիստներն, իհարկե, Աշխատանքի Հանրապետության գոյության փաստի հետ չհաշտվեցին։ Այն բանից հետո, երբ նրանք զինված պայքարով Խորհրդային իշխանությունը տապալել չկարողացան, տնտեսական միջոցներով վորոշեցին պայքարել մեր դեմ։

Կապիտալիստները վորոշեցին մեզ հետ և վոչ մի առևտուր չանել։ Կապիտալիստները կարծում էին, վոր եթե մենք միջոցներ չունենք կամ մեքենաներ քիչ ունենք, եթե մենք չիթ գործելու համար վոչինչ չունենք, վորովհետև արդյունաբերության համար հումույթ՝ բամբակ, կաուչուկ չունենք, եթե մենք մի շարք ուրիշ ապրանքներ չունենք, ուրեմն կարճ ժամանակից հետո նրանց առաջ մենք գլուխ կխոնարհենք ու կասենք.—«Պահանջեցեք մեզնից ինչ վոր ուզում եք, բայց միայն թե մեզ միջոցներով, մեքենաներով ու բամբակով ոգնեցեք»։ Բայց կապիտալիստների հաշիվները սխալ դուրս եկան։ Չնայած, վոր մենք խոշոր դժվարություններով, բայց և այնպես առանց արտասահմանի ոգնության ապրեցինք և կապիտալիստների ձեռքից կախում չունեցանք։

Կապիտալիստները հասկացան, վոր իրենց քաղաքականությունն իրենց վոչ մի ոգուտ չտվեց։ Դե, ուզե՛ս թե չուզես, բայց ստիպված ես Խորհրդային երկրի հետ առևտուր անել։ Այլապես ինչպե՞ս կարող ես ապրել առանց խորհրդային անտառանյութերի, առանց խորհրդային նավթի և խորհրդային վուշի։ Իսկ առանց այս ապրանքների ապրել չես կարող, կապիտալիստական երկրների գործարանների համար նրանք անհրաժեշտ են։

Խորհրդային երկիրն այնպիսի պետություն է, վորը նման նյութերով կարող է ոգնել։ Այս պատճառով էլ 1924 թվից սկսած դեպի մեր

յերկրին յեղած վերաբերմունքը փոխվում է։ Առանձին կապիտալիստական յերկրներն սկսում են մեզ հետ առևտրական պայմանագրեր կնքելու համար իրարից առաջ վազել։

Բայց մեզ հետ առևտրական հարաբերություններ սկսելով էլ կապիտալիստներն այնուամենայնիվ մեր դեմ պայքարում են։

Կապիտալիստների կողմից Խորհրդային յերկրի դեմ մղվող պայքարի իմաստն այն է, վորպեսզի առևտրի և Խորհրդային կառավարությանը փոխառություններ տալու միջոցով Խորհրդային յերկիրն իրենցից այնպիսի կախման մեջ դնեն, ինչպիսին ցարական Ռուսաստանն է յեղել։

Մենք, իհարկե, կապիտալիստներից այնպիսի փոխառություններ չենք կարող վերցնել, վորոնք մեզ՝ հանդեպ կապիտալիստների՝ ստրկական վիճակի մեջ դնեն։ Հենց այս պատճառով էլ մինչև վերջերս էլ մենք կապիտալիստների հետ և վոչ մի խոշոր փոխառություն չենք կնքել։ Կապիտալիստները մեզնից պահանջում են, վորպեսզի մենք նրանց մեր յերկրում առևտրի ազատ իրավունքներ տանք, այնպես, ինչպես այդ ցարական Ռուսաստանում էր։ Իսկ մեզ մոտ ներկայումս արտաքին առևտրի մենաշնորհ է սահմանված։

Արտաքին առևտրի մենաշնորհ, դա նշանակում է, վոր արտասահմանի կապիտալիստների հետ միայն մեր պետությունը կարող է առևտուր անել։ Կուլակը կամ նեպմանը հաց կամ ուրիշ ապրանք արտասահման արտահանել չեն կարող։ Մեր յերկրից արտասահման ապրանքներ կարող է արտահանել միայն ու միայն մեր պետությունը։ Ներմուծել էլ մեզ մոտ կարող են միայն պետական օրգանները։

Արտասահմանի այս կամ այն կապիտալիստը, առանց մեր պետության գնելուն, վոչինչ չի կարող ներմուծել։

Այսպիսի կարգ սահմանելը մեր ինչին էր պետք։

Ապա թող յուրաքանչյուրը մտածե, թե ինչ կստեղծվեր, յեթե արտաքին առևտրի մոնոպոլիան չլիներ։ Այն ժամանակ յուրաքանչյուր կուլակ ու առևտրական կարող էյին հաց գնել ու արտասահման արտահանել, չնայած վոր ներկայումս հացը մեզ էլ չի բավականանում։ Այդ դեպքում կապիտալիստներն արտասահմանից մեր յերկիրը վոչ թե մեքենաներ կներմուծեյին,—վորոնց կարիքը մենք անչափ շատ ենք զգում,—այլ՝ պատրաստի մանուֆակտուրա, կաշվեղեն, շքեղության առարկաներ—պուդրա, մետաքսե գուլպաներ, պոմադա և նման մեզ համար վոչ անհրաժեշտ ապրանքներ։ Յեթե կապիտալիստները մեր յերկիրը պատրաստի ապրանքներ ներմուծեյին, մեր յերկիրը նրանցից այնպիսի կախում կունենար, ինչպիսին վոր ցարական

Ռուսաստանն էր։ Կապիտալիստները մեր արդյունաբերության զարգացմանը հնարավորություն չէին տա, հատկապես այն գործարաններին, վորոնք մեքենաներ, ստանոկներ են պատրաստում։ Յեվ մեր հաշվին եվ նրանք կուռճանային։

Բացի այս, պետք է միշտ հիշել, վոր արտասահմանյան ապրանքները միայն վոսկի փողով կարելի յե գնել, իսկ մենք վոսկի այնքան ել շատ չունենք։ Յեթե պուդրայի ու պոմադայի համար մենք վոսկի վատնենք, այդ դեպքում պետք է առանց տրակտորի նստենք։ Իսկ դուք արդեն գիտեք, թե ինչպիսի նշանակություն ունի տրակտորը գյուղի և լավ մեքենան՝ գործարանի համար։

Արտաքին առևտրի մոնոպոլիայի շնորհիվ մեր պետությունն արտասահմանից ներմուծում է այն, ինչի վոր մեր տնտեսությունը զարգացնելու համար կարիք մենք զգում ենք, և արտահանում է այն, ինչ վոր մեզ մոտ ավելցուկ է մնում։

Կապիտալիստները հրաշալի կերպով հասկանում են, վոր արտասահմանում մեքենաներ գնելով, մենք օրեցոր ուժեղանում և կապիտալիստական յերկրներից ավելի քիչ կախումն ենք ունենում։ Յեվ իսկապես, մեր յերկրին առաջին հերթին ի՞նչ է պակասում։ Իհարկե, մեքենաներ գործարանների ու ֆաբրիկաների համար։

Մեր լայնածավալ յերկրում հարստությունը շատ շատ է, բայց ցավն այն է, վոր առանց մեքենաների մենք նրանց օգտագործել չենք կարող այնպես, ինչպես հարկն է։ Իսկ յեթե մենք մեքենաներ ունենայինք, այդ դեպքում քանի գնար, անքան մյուս յերկրների կապիտալիստների հետ ավելի քիչ գործ կունենայինք և մեր կյանքն ավելի արագ կերպով կբարելավեյինք։

Պարզվում է, վոր կապիտալիստները մեր յերկրի արտաքին մոնոպոլիայի դեմ պայքարում են, նախ այն պատճառով, վոր վախենում են, թե մենք տարեց-տարի իրենց հետ առևտուր քիչ անելով, կպակասեցնենք նրանց օգուտը։ Յերկրորդ նրա համար, վոր մենք ցարական իշխանության նման նրանց մեր յերկիրն օգտագործելու հնարավորությունը չենք տալիս։ Յեվ, վերջապես, յերրորդ պատճառը՝ արտաքին առևտրի միջոցով մեր յերկրի դրությունը բարելավելով, մենք հենց դրանով Արևմուտքի և Արևելքի բանվորներին ու գյուղացիներին դրդում ենք հեղափոխական պայքարի ուղին բռնելու։ Նոր գործարան կառուցելով, գյուղատնտեսությունը բարելավելով մենք մեր յերկիրն ամրապնդում ենք։ Մենք ցույց ենք տալիս, վոր աշխատավորներն առանց կապիտալիստների օգնության ել կարող են իրենց կենցաղը կառուցել և բարելավում են իրենց դրությունը։ Օրեցոր մեր յերկրի

դրությունն ամրապնդելով, մեր պետության աշխատավորության դրությունը բարելավելով, մենք հենց սրանով եվ արտասահմանի մեր ընկերներին ճանապարհ ենք ցույց տալիս։

Ով լրագիր կարդում է, նա հաստատ գիտե, թե արտասահմանի բանվորության պատգամավորներից վորքան շատերն են գալիս մեզ մոտ, և ինչպես ուշադրությամբ են նայում նրանք մեր յերկրում կատարվող նոր կյանքի շինարարությանը։ Յեվ ինչպիսի ուրախությամբ են բանվորներն իմանում, վոր Խորհրդային Միության աշխատավորներն առանց կապիտալիստների ոգնության եվ իրենց կենցաղը բարելավում են։

Ահա թե Գերմանական բանվորական առաջին պատգամավորությունը (1925 թ.) իր հաշվետվության մեջ ինչ է գրել.—

«Պատգամավորությունը միասնական մի կարծիքի յե յեկել, վոր Խորհրդային Ռուսաստանը փաստորեն կանգնած է այն նպատակի իրագործման ճանապարհի վրա, վոր սոցիալիզմի հիմնադիրներն են առաջադրել, վոր բանվոր դասակարգն իշխանությունն իրապես վոր իր ձեռքին է պահում, վոր նա վողջ աշխարհի յերեսին քաղաքականապես ամենից ազատ դասակարգն է, և վոր տնտեսական շինարարությունը՝ բանվորական լայն մասսաների մասնակցությամբ—սոցիալիստականի ուղղությամբ է իրագործվում։ Արևմտյան յերկրներում շատերի համար այնքան առելի թվացող պրոլետարիատի դիկտատուրան ինչպես վոր իրական բանվորական դեմոկրատիա յե հանդիսանում։ Բանվորները, գյուղացիները, ինժեներները, ուսուցիչները, տեխնիկներն ու գիտնականները ճնշող մեծամասնությամբ Խորհրդային սիստեմին և գոյություն ունեցող կառավարությանը կողմնակից են։ Յեվ սա այլ կերպ եվ լինել չի՛ կարող։ Բանվորները փաստորեն հաստատուն 8 ժամյա բանվորական որ ունեն (շաբաթական 46 ժամ), դեռահասներն ու վնասակար արդյունաբերության մեջ աշխատողներն որական միայն 6 ժամ են աշխատում։ Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը սրա նման մի բան վոչտեղից ունի։ Գյուղացիները խոշոր կալվածատերների հողերն են ստացել։ Կառավարությունը դեպի գյուղ կուլտուրա յե տանում։ Ելեկտրոկայանների հսկայական ցանցի կառուցման աշխատանքներ է տարվում։ Գեղարվեստն ու գիտությունը պրոլետարիատի գործին են ծառայում։ Վերջին տարիները բանվոր դասակարգի մեջ կուլտուրական վերելք է նկատվում։ Նրա քաղաքական գրագիտության մակարդակը նույնպես բարձր է։ Արդյունաբերության մեջ,—վորը գերմանականի հետ համեմատած դեռևս մասամբ հետամնաց է և տեխնիկապես հետամնաց, շնորհիվ ցարական ժառանգության,—ուժեղ աճում է նկատվում։

Ռուսական բանվորի դրության համար ամենակարևորը և վճռականը հանդիսանում ե այն, վոր նրա կյանքի մակարդակը վերջին յերկու տարիների ընթացքում թեև դանդաղ, բայց բարձրացել ե, և վոր մոտիկ ապագայի հեռանկարն ել պետք ե վերին աստիճանի նպաստավոր համարել»։

Գերմանիայում պատգամավորները ԽՍՀՄ դրության մասին մոտ 1500 հաշվետու ժողովներ գումարեցին։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների փորձերն՝ արգելել դեպի ԽՍՀՄ պատգամավորների մեկնումն, արդյունքներ չտվին։ Բանվորների ձգտումը դեպի ԽՍՀՄ, հատկապես „ներկայումս,—յերբ համաշխարհային կապիտալը կատաղի հարձակում ե գործում բանվոր դասակարգի և ԽՍՀՄ վրա, – աճում ե։ Վողջ աշխարհի բանվորները շատ լավ են հասկանում, վոր ԽՍՀՄ պաշտպանումը միջազգային հեղափոխական շարժման հիմնական լոզունգներից մեկն ե հանդիսանում։

Յեթե մենք մյուս յերկրների աշխատավորներին ինչպես հարկն ե կարողանանք ապացուցել, վոր բանվորներն ու գյուղացիներն առանց կապիտալիստների ավելի լավ են ապրում, այնտեղ հեղափոխությունն այնքան ել հեռու չի լինի։

Այն բոլորն, ինչ վոր մենք կարդացինք, ցույց են տալիս, թե ինչու համար կապիտալիստները մեզ այդչափ ատում են։ Նրանք անընդհատ մեր դեմ նոր կռիվների յեն պատրաստվում։ Այս բանը կապիտալիստական յերկրների բանակների աճումից ել յերևում ե։ Այսպես, 1913 թ., այսինքն արյունահեղ սպանդանոցի նախորյակին, Անգլիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և Իտալիայում ցամաքային զորամասերը 1.413 հազար հոգի եյին, իսկ 1927 թ. այդ նույն յերկրներում արդեն 1.821 հազար հոգի յեն հաշվվում։

Առաջին հայացքից 1.821 հազար թիվն այնքան ել մեծ չի թվում, բայց բանն այն ե, վոր կապիտալիստական յերկրներում մեծ թվով պահեստի զորամասեր կան, վորոնք պատերազմի դեպքում ամենակարճ ժամանակամիջոցում կարելի յե զորահավաքի յենթարկել։

Մի այսպիսի որինակ վերցնենք։ Հին, ցարական բանակում կանոնավոր զորամասերում զենքի տակ եյին 1.300 հազար հոգի, իսկ 1914—17 թվականների պատերազմի ժամանակ զորահավաքի եյին յենթարկվել 18 միլիոն հոգի։ Գերմանիայում խաղաղ ժամանակ կանոնավոր զորամասերը 750 հազար եյին, իսկ պատերազմի ժամանակ բանակում 13 միլիոն զորք կար։

Բայց կապիտալիստները վոչ միայն մշտական զորամասերի քանակն են ավելացնում, այլև ռազմական ծախսերի համար բաց թող-

նվող գումարները։ 1913 թվին, երբ կապիտալիստները հրաշալի կերպով գիտեյին, որ մոտիկ ժամանակներում պատերազմը կսկսվի, նրանք ռազմական կարիքների համար ավելի քիչ եյին ծախսում, քան ներկայումս։

Հենց նույն չորս երկրներում՝ Անգլիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և Իտալիայում ռազմական ծախսերի համար գնում եր.—

1913 թվին	1926 թվին
1 միլիարդ 986 միլիոն։	3 միլիարդ 536 միլիոն։

Առանձնապես արագ զինվում են այն փոքրիկ պետությունները, վորոնք սահմանակից են մեզ։ Խոշոր երկրների կապիտալիստները հատկապես ռազմական կարիքների համար նրանց փոխառություններ են տալիս։ Խոշոր երկրների կապիտալիստների ոգնությունը մեր հարևան փոքրիկ երկրներին—բացատրվում է նրանով, վոր այդ պետությունները մեծերի ցուցմունքով մեր դեմ պետք է դուրս գան առաջին հերթին։ Այդ պատճառով էլ այդ երկրների սպառազինումը համարյա թե որեցոր աճում է։ Այդ բանը հենց այս 2 թվական տըվյալներից երևում է. 1923 թվին Ֆինլանդիայում, Եստոնիայում, Լատվիայում, Լեհաստանում և Ռումինիայում 479 հազար հոգուց մշտական բանակ կար, իսկ 1927 թվին արդեն՝ 543 հազար հոգուց։ Սրան պետք է ավելացնել նաև այդ երկրներում Ֆաշիստական ջոկատների աճումը։ 1923 թվին ֆաշիստական ջոկատները 295 հազար հոգի եյին, իսկ 1926 թ.՝ 715 հազար։ Ինչպես տեսնում եք, աճումը բավական հիմնական է։

Բոլոր այս թվերից պարզ երևում է, վոր ամբողջ աշխարհի կապիտալիստներն ուժեղ կերպով պատերազմի յեն պատրաստվում։

Այլ բան է կատարվում մեր Խորհրդային Միության մեջ։ Մենք մեր բանակի թիվը վոչ միայն չենք ավելացնում, այլ և տարեց-տարի կրճատում ենք։ 1923 թվին մենք 703 հազար կարմիր բանակայիններ ունեյինք, իսկ 1927 թվին արդեն 562 հազար հոգի եյին մնացել։

Ուշադրությամբ նայեցեք հենց այս դիագրամին և դուք կտեսնեք. թե մեզ մոտ Կարմիր բանակում վորքան քիչ մարդ կա։

Զինվորականների թիվը—ազգաբնակության հազար հոգու դիմաց,

ԽՍՀՄ,	Ֆրանսիա,	Եստոնիա,	Լատվիա,	Լեհաստան
3,8	17	12,7	11,1	10,4

Անգլիա,	Ռումինիա,	Ֆինլանդիա,	Իտալիա
10	9,6	9,6	6

Սրանից կարելի յե միայն մի յեզրակացություն հանգել, վոր ԽՍՀՄ վոչ թե խոսքով, այլ իսկապես վոր խաղաղության համար ե պայքարում, վորն անհրաժեշտ ե վոչ միայն մեր յերկրի, այլ և ամբողջ աշխարհի աշխատավորությանը:

Մենք շատ լավ ենք հիշում, թե վորքան աշխատավորներ վոչնչացան 1914—18 թվականների պատերազմի ժամանակ: Կատակ չե ասել,—վոր վերքերից մեռնողների ու սպանվածների թիվը 10 միլիոն ե յեղել: Յեթե այդ մարդկանց շարք կանգնեցնեյինք, 3320 վերստ տարածություն կբռնեյին: Յեթե մի մարդ ցանկանար այդ շղթան դիտել, նրան շատ ժամանակ եր հարկավոր: Յեթե նա որական 50 վերստ ճանապարհ անցներ, ամբողջ շղթան դիտելու համար նրան 66,5 որ եր հարկավոր:

Վիրավորների թիվն այդ կռվում յերկու անգամ ավելի շատ եր, քան սպանվածներինը, այսինքն 20 միլիոն հոգի, վորոնցից 3 ու կես միլիոն մարդ կատարյալ հաշմանդամներ դարձան:

Աշխատավորները պատերազմի կողմնակից չեն կարող լինել. վորը կապիտալիստներն են մղում և միայն նրանց ե անհրաժեշտ: Ամեն վոք գիտե, վոր կապիտալիստներն իրենք կռիվ չեն գնում, այլ միայն բանվորներին ու գյուղացիներին են ուղարկում: Հենց գյուղի կուլակն էլ ամեն կերպ կռվից խուսափում է, ել ինչ խոսք կարող ե լինել կապիտալիստների մասին:

Գիտենալով, վոր պատերազմը վոչ թե կապիտալիստների, այլ առաջին հերթին վողջ աշխարհի աշխատավորության համար կործանիչ ե, մեր կառավարությունը վճռական միջոցների յե ձեռնարկում այն ուղղությամբ, վորպեսզի պատերազմ չծագի:

Կապիտալիստներն ել պատերազմ չցանկացողների տեսք են ընդունում: Բայց խաղաղության մասին յեղած նրանց բոլոր խոսակցությունները պետք են նրա համար, վորպեսզի իրենց յերկրների աշխատավորությունը նրանց խաղաղության համար պայքարող բարերարի տեղ ընդունի: Իրականում կապիտալիստներն աշխարհը դեպի նոր արյունահեղ պատերազմ են մղում: Նախորդ դրույցում դուք կարդացիք, վոր կապիտալիստների համար պատերազմներն անհրաժեշտ են, վորովհետև նրանց անհրաժեշտ ե ձեռք բերել իրենց կապիտալով այլ յերկրներ սողոսկելու հնարավորությունը: Նրանց հատկապես ԽՍՀՄ-ն ե շահագրգռում,—բնական խոշոր հարստություններով լի և բանվորական ուժի խոշոր քանակությամբ հարուստ յերկիրը: Նրանք Ռուսաստանում տեր ու տնորեն դառնալ շատ են ուզում, վորովհետև նրանց,—հատկապես ներկայումս, յերբ նրանց

տնտեսությունը պատերազմից հետո վերականգնել է,— անչափ անհրաժեշտ են շուկաները՝ իրենց կապիտալի և պատրաստի ապրանքների արտահանության համար։

Խոսքով կապիտալիստները խաղաղության մասին շատ են խոսում։ Դեռ 1919 թվին նրանք Ազգերի Լիգան ստեղծեցին (հայերեն թարգմանված՝ պետությունների միություն է նշանակում)։ Այդ լիգայի գլխավոր նպատակն — աշխատավորությանը հայտարարեցին կապիտալիստները — «խաղաղության սպառնացող հարցերի» քննարկության առնելն է։

Սակայն, նայած այդ Ազգերի Լիգայի մոտ տասնամյա գոյությանը, նա փաստորեն ոչինչ չի արել, որպեսզի առանձին պետությունների միջև խաղաղություն հաստատվի։ Մոտ տասը տարի է, որ Ազգերի Լիգայում առանձին պետությունների զինաթափման հարցը քննության է առնվում, բայց «մինչ այժմ էլ,— ասում է ընկեր Ռիկովը,— ոչ մի զինվոր, ոչ մի թնդանոթ, ոչ մի ռազմանավ և ոչ մի փամփուշտ կրճատել չի հաջողվել»։

Երբ մեր պետության ներկայացուցիչ ընկ. Լիտվինովը, 1927 թվի վերջին, բոլոր պետությունների լիակատար զինաթափության հարցն Ազգերի Լիգա մտցրեց, այդ առաջարկության հետ կապիտալիստական պետությունները չուզեցին համաձայնվել։ Կապիտալիստական յերկրների ներկայացուցիչները մեզ հայտարարեցին, որ նրանք ոչ թե լրիվ զինաթափության հարցը քննելու իրավունքներ ունեն, այլ միայն սպառազինումների կրճատման։ Այդ հայտարարությունից հետո ընկեր Լիտվինովի միջոցով մեր պետությունը ռազմական ուժերի կրճատման հարցն առաջադրեց։ Բայց մեր այդ առաջարկությունն էլ Ազգերի Լիգայի կողմից չընդունվեց։

Հենց սրանով էլ Ազգերի Լիգան ցույց տվեց, որ ինքը ոչ թե խաղաղության կողմնակից է, այլ, որպես կապիտալիստների միություն, իրենց յերկրների բանվորներին և գյուղացիներին հիմարացնելու համար է խաղաղության մասին խոսակցություններ ստեղծում։

Միակ յերկիրը, որը ոչ թե խոսքով, այլ իրապես խաղաղության համար պայքարում է, դա ԽՍՀ Միությունն է։

Վերջացնելով զրույցը, մեզ մնում է քննության առնել այն հարցը, թե ինչու համար ԽՍՀՄ դեմ ուժեղ կերպով պատերազմի պատրաստվելով, կապիտալիստներն այդ պատերազմը դեռ չեն սկսում։

Հիմնական պատճառն այն է, որ կապիտալիստական յերկրների բանվորներն ու գյուղացիները կապիտալիստների շահերի համար իրենց յեղբայրների — ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների դեմ պատերազմել չեն ուզում։

Դուք լսեցիք, թե ինչպիսի ուշադրությամբ են ամբողջ աշխարհի բանվորները հետևում մեր յերկրի պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության որինակին։ Յեթե կապիտալիստները ԽՍՀՄ դեմ պատերազմ սկսեն, դա կապիտալիստների դասակարգի պատերազմը կլինի բանվոր դասակարգի դեմ, վողջ համաշխարհային հեղափոխության դեմ։ Կապիտալիստները միաժամանակ պետք ե և՛ ԽՍՀՄ դեմ կռվեն, և՛ թե իրենց յերկրում հեղափոխական շարժումը խորտակեն, վորպեսզի վերջինը նրանց չխանգարի պրոլետարիատի դիկտատուրայի յերկրի հետ հաշիվներ մաքրելու գործում։

Կապիտալիստական յերկրների բանվորները, նրանց կոմունիստական կուսակցությունները կապիտալիստների կողմից Խորհրդային Միության վրա հարձակվելու վտանգը շատ լավ են հասկանում։

Կոմունիստական կուսակցությունները արտասահմանյան բանվորներին արդեն պատրաստում են այն բանին, վորպեսզի պաշտպանեն ԽՍՀՄ—առաջին յերկիրը, վորտեղ պրոլետարիատի դիկտատուրա յե հաստատված։ Կոմունիստները բանվորներին և գյուղացիներին բացատրում են, վոր կապիտալիստներն ուզում են նրանց ստիպել, վորպեսզի նրանք կապիտալիստների շահերի համար իրենց—բանվորական պետության դեմ պատերազմեն։ Կոմունիստները կապիտալիստական բանակների զինվորներին բացատրում են, վոր նրանց ստիպելու յեն պատերազմելու իրենց յեղբայրների—հեղափոխական բանվորների ու գյուղացիների դեմ։ Իսկ յեթե պատերազմ սկսվի, կոմունիստական կուսակցությունները պետք ե պայքարեն այն բանի համար, վորպեսզի կապիտալիստական բանակների զինվորները Խորհրդային Միության կողմն անցնեն, վորպեսզի կապիտալիստական յերկրների բանվորներն ու գյուղացիները, Կարմիր բանակի դեմ պատերազմելու փոխարեն, ապստամբվեն, կապիտալիստական կառավարությունները տապալեն և իրենց յերկրում ել Խորհրդային իշխանություն հաստատեն։

Մի շարք յերկրներում հեղափոխական բանվորները կոմունիստական կուսակցության ոգնող իրենց կազմակերպություններն են ստեղծում՝ կապիտալիստական պատերազմի դեմ պայքարելու համար։

Հենց այնպիսի մի միություն, ինչպիսին գերմանական Կարմիր ճակատայիններինն ե, վորը կապիտալիստների կողմից Խորհրդային Միության վրա հարձակում գործելուն դեմ ե դուրս գալիս։

Հարյուր հազարից ավելի Կարմիր-ճակատայիններ իրենց տարազով Գերմանիայի բոլոր մասերից հավաքվեցին Բերլինում։ Բերլինի ճակատայինների և Կարմիր Յունգֆրոնտի (Կարմիր յերիտասարդու-

թյան) խմբերի հետ միասին, Նրանք կիրակի, հունիսի 5-ին, 250 հազար հոգով, կուռ շարքերով անցան տրիբունի մոտով, վորտեղից նրանց ֆրանսիական և չեխոսլովակիական ճակատայինների և կոմկուսների ներկայացուցիչները վողջունեցին։

Կես միլիոնանոց բանվորական մասսան յեղբայրաբար իր ձայնը բարձրացրեց պատերազմի դեմ, վոր կապիտալիստներն են ձեռնարկում,—և հաղթական «ուռա» թնդաց ի պատասխան ճակատայինների ղեկավար կոմունիստ ընկ. Տելմանի «Մենք հեղափոխական պայքար կմղենք պատերազմի դեմ—Լենինի և Լիբկնեխտի վոգով» խոսքերին։

Միլիոնավոր գերմանական բանվորները սրտանց արձագանքեցին 250 հազար ձեռքերը վեր պարզած ճակատայինների խոսքին.

«Յերդվում եմ.

Յերբեք չմոռանալ, վոր համաշխարհային իմպերիալիզմը ԽՍՀՄ •դեմ պատերազմ է նյութում։ Յերբեք չմոռանալ, վոր վողջ աշխարհի բանվոր դասակարգի բախտը անխզելի կապված է ԽՍՀՄ հետ։

Յերբեք չմոռանալ համաշխարհային պատերազմի փորձն ու բանվոր դասակարգի տանջանքները, չմոռանալ 1914 թվի ոգոստոսի 4-ը և ռեֆորմիստների դավաճանությունը։

Միշտ և անդադար կատարել իմ հեղափոխական պարտականությունը՝ բանվոր դասակարգի և սոցիալիզմի հանդեպ։

Միշտ և անդադար պրոլետարական բոլոր կազմակերպություններում, պրոֆմիությունների և ձեռնարկության մեջ դասակարգային անհաշտ պայքարի պիոնները դառնալ։

Իմպերիալիստական բանակի մեջ, ռազմաճակատում, հեղափոխության համար աշխատել։

Տանել հեղափոխական պայքար գերմանական բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը տապալելու համար։

Ամեն միջոցներով պաշտպանել ռուսական և չինական հեղափոխությունները։

Միշտ և անդադար պայքարել հանուն ԽՍՀՄ և համաշխարհային հաղթական հեղափոխության համար»։

Ներկայումս Գերմանիայի կապիտալիստական կառավարությունը այդ միության գոյությունն արգելել է։ Բայց Կարմիր ճակատայինները, չնայած այդ արգելքներին, պետք է ապրեն և պայքարեն հանուն ԽՍՀՄ։

Ուրեմն գլխավոր պատճառը, վոր կապիտալիստներին խանգարում է մեր վրա հարձակվելու,—դա վախն է իրենց սեփական բանվորներից և գյուղացիներից։

Իրենք, կապիտալիստներն էլ իրար հետ համաձայնության գալ չեն կարողանում, նրանք էլ իրենց տարաձայնություններն ունեն։ Յուրաքանչյուր խոշոր կապիտալիստական երկիր վախենում է, որ մյուսը չուժեղանա իրենից։ Յուրաքանչյուր պետություն աշխատում է մյուսից մի կտոր հարստություն խլել։ Չինաստանն ավելի թույլ է, քան խոշոր, կապիտալիստական պետությունը, ուրեմն, բաժանիր Չինաստանը։ Գերմանիային հաղթեցիր—ստիպիր, որ նա քեզ հարկ վճարի։ Պարսկաստանը թույլ պետություն է, նրա հետ հաշվի մի նստիր, այլ պոկիր նրանից այն, ինչ որ կարելի է։ Ահա թե բոլոր երկրների կապիտալիստներն ինչպես են մտածում։

Այդ պատճառով էլ կապիտալիստական խոշոր պետությունների միջև միշտ կատաղի պայքար է տեղի ունենում. Ամերիկայի կապիտալիստներն Անգլիայի կապիտալիստների դեմ են պայքարում, Ֆրանսիայի կապիտալիստները՝ Գերմանիայի կապիտալիստների դեմ։

Այդ պատճառով էլ նոր համաշխարհային պատերազմի վտանգը կապիտալիստական պետությունների առաջ կանգնած է միշտ։

Ադանդավորները, բապտիստները և ավետարանականները և խոսքով էլ սոցիալ-դեմոկրատներն ու արտասահմանում շատերը կարծում են, թե հնարավոր է կապիտալիստներին համոզելով պատերազմից ետ կանգնեցնել։ Նրանք աշխատավորությանը համոզում են հրաժարվել ռազմական ծառայությունից և խաղաղության կոչերով կապիտալիստական կառավարություններին են դիմում։

Կոմունիստները գիտեն, որ դրանով գործին օգնել չես կարող, և վոչ էլ պատերազմը վոչնչացնել։ Լենինը սովորեցրել է՝ պատերազմի ժամանակ պետք է օգտվել այն հանգամանքից, որ միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ իրենց ձեռքը զենք են վերցնում։ Այդ զենքով պետք է իրենց եղբայր աշխատավորներին չվոչնչացնել, այլ տապալել կապիտալիստներին և պրոլետարիատի դիկտատուրա հաստատել։

Բոլոր երկրների կոմունիստներն աշխատավորությանը հենց այս բանին էլ նախապատրաստում են։

Իսկ սրա համար պետք է, որ մշտական բանակի զինվորները պատրաստ լինեն մեզ օգնելու։ Հենց այս պատճառով էլ կոմունիստներն ու կոմյերիտականները կապիտալիստական բանակներում խոշոր աշխատանք են տանում։

Ահա թե այդ աշխատանքը ինչպես է ընթանում.—1923 թվի հունվարին Ֆրանսիական կառավարությունն նախագահ Պուանկարեն մի քանի տասնյակ հազար զինվոր ուղարկեց Ռուրի շրջանը, այնտեղ,

վորտեղ կենտրոնացված են Գերմանիայի խոշոր քարածխային հանքահորերը — այսինքն գերմանական Դոնբասը։

Կոմունիստները վորոշեցին պատերազմի դեմ պայքար մղել։

Զորքերի Եսսեն քաղաքը մտնելու ժամանակ բոլոր տները գույնզգույն պլակատներով և կոչերով եյին զարդարված։

«Գերմանական բանվորներին մի կրակեք»։

«Աջակցեք գերմանական հեղափոխությանը»։

«Հետևեցեք Մարտիի և Սեծովյան նավաստիների որինակին»։

Ֆրանսերեն և արաբերեն այդ լոզունգները — մտնելու հենց առաջին պահին — զինվորների աչքին եյին ընկնում։

Ցերիտասարդությունն անխոնջ աշխատում եր, ձգտելով կապ հաստատել ֆրանսիական զինվորների հետ։ Հաջողությունները շուտով յերևան յեկան։ Բոլոր գնդերում ընդհատակյա հեղափոխական բջիջներ կազմակերպվեցին։

Զինվորներն ավելի ու ավելի մեծ չափերով եյին «պատերազմից» իրենց դժգոհությունները արտահայտում։ Նրանք կոմունիստական պլակատները պոկելուց հրաժարվում եյին։ Նրանք գերմանական բանվորների մոտ եյին հաճախում։ Զորանոցներում «Ինտերնացիոնալն» եր հնչում։ Զինվորները գերմանական բանվորների ցույցերին մասնակցում եյին։

Գեներալները կատաղում եյին։

Զորանոցներում նրանք հաճախակի «զտումներ» եյին անցկացնում, համարյա թե ամեն յերկու շաբաթը մեկ անգամ գնդերը մի տեղից մյուսն եյին փոխադրում, ազգաբնակչության քաղաքացիական մասի հետ գործ ունենալն արգելում եյին։ Վոչինչ չեր ոգնում։ Զինվորներին հեղափոխական գրականությունը դուր եր գալիս, նրանք սկսում եյին իրենց պահանջներն առաջադրել՝ սնունդի բարելավման, ծառայության ժամկետի կրճատման, զորանոցից դուրս հաճախելու և հայրենիք վերադառնալու մասին։

Ֆրանսիական կառավարությունը հուզվեց։ Հարցը քննության առնվեց պարլամենտում։ Դեռ առաջուց ել՝ հեղափոխական զինվորներին պատժելու համար՝ տեղափոխում եյին այն բատալիոնները, վորոնք աֆրիկական անապատներն եյին ուղարկվում։ Սկսվեց հեղափոխականների խնկալան հալածանքը։

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին բանտ նստեցին 120 հոգի ֆրանսիացի և գերմանացի յերիտասարդներ ու 15 ել զինվորներ։

Նրանց տանջանքների յենթարկեցին. քթի մեջ և յեղունգների տակ ասեղներ կոխեցին։ Բայց նրանք ընդհատակյա կազմակերպու-

թյունը չմատնեցին։ Կազմակերպությունը շարունակում եր աշխատել։ Յերբ պատերազմը վերջացավ, Մայնց քաղաքում մի խոշոր դատավարություն ստեղծվեց՝ պատերազմի դեմ դուրս գալու «Նախաձեռնողների» դեմ։

Դատավարության հետևանքով մի քանի զինվորներ և հեղափոխական յերիտասարդությունը ընդհանուր գումարով 233 տարի բանտարկության դատապարտվեցին։

Այսպիսով, համաշխարհային պատերազմից հինգ տարի անցած, կոմունիստական յերիտասարդությունը ցույց տվեց, վոր նա նոր պատերազմի դեպքում ձեռները ծալած նստելու չի, այլ առաջին իսկ որվանից ընդհուպ պայքարելու յե պատերազմի դեմ։

ԽՍՀՄ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղ շինարարության յուրաքանչյուր տարին մեզ մոտեցնում ե սոցիալիզմին և հզորացնում ե մեր ուժը։

Այդ պատճառով ել մեր կառավարությունն ամեն միջոց ձեռք ե առնում, վորպեսզի նոր պատերազմ բռնկելու բոլոր հնարավորությունները կանխվեն։ Իսկ մեզ շրջապատել են ամեն կողմից։ Ռումինիան առանց վորևե հիմունքի գրավել ե ԽՍՀՄ մասը կազմող Բեսարաբիան։ ԽՍՀՄ աշխարհը դեպի նոր սպանդանոց քաշել չուզեց, այլ բավականացավ միայն բողոքով՝ մեր յերկրամասի գրավման առթիվ։ Մենք հրաշալի գիտենք, վոր կապիտալիստների կողմից ճնշված Բեսարաբիայի աշխատավորությունը ԽՍՀՄ կողմն ե ուզում անցնել։ Յեվ այդ ժամանակն այնքան ել հեռու չե, յերբ Բեսարաբիայի աշխատավորությունը, ռումինական կապիտալիստների լուծը թոթափելով, ԽՍՀՄ կողմը կանցնի։ Մեզ պատերազմել են ստիպում նրանով, վոր կապիտալիստական յերկրներում մեր ներկայացուցիչներին սպանում են։ Այսպես, 1927 թվին, սպանվեց Լեհաստանի մեր ներկայացուցիչ Վոյկովը, իսկ դրանից ել առաջ Շվեյցարիայում՝ ընկ. Վարովսկին։ Կապիտալիստները դեմ են ընկնում մեր յուրաքանչյուր քայլափոխին։ Նրանք մեր արտասահմանյան ներկայացուցիչների վրա յեն հարձակվում, Խորհրդային իշխանության ներկայացուցիչներին սպանում։ Նրանք ուզում են, վոր մենք առաջինը նրանց պատերազմ հայտարարենք, վորպեսզի նրանք իրենց բանվորներին ասեն, թե՝ «Տեսնում եք, պատերազմի հանցանքը մերը չի, հանցանքը Խորհրդային յերկրինն ե, վորը ինքն ե մեզ պատերազմ հայտարարել»։

Կապիտալիստներն այդ ցանցի մեջ մեզ չեն կարող գցել։ Մեր յերկիրը խաղաղության համար պայքարել ե ու պայքարելու յե միշտ։

Մենք պատերազմելու չենք միայն այն ժամանակ, երբ կապիտալիստները մեր երկրում Խորհուրդների տապալման փորձ անեն։

Կապիտալիստների կողմից ԽՍՀՄ դեմ պատրաստվող պատերազմի վրա քիչ մանրամասն կանգ առնենք։

Կապիտալիստներն աշխատում են համաձայնության գալ միմյանց հետ, և չնայած բանվորներն ու գյուղացիները չխանգարեն, համաձայնության կգան եւ։ Կապիտալիստները թեև միմյանց դեմ են կռվում են, բայց նրանք բոլորը մեր երկրի և բանվոր դասակարգի կատաղի թշնամիներն են։ Այստեղ շատ համապատասխանում է կապիտալիստների մասին ասելու հետևյալ առածը, թե «Շունը—շնից, երկուսն էլ—մի տնից»։

1917 թվի կեսերին Անգլիան Խորհուրդների դեմ զինված պայքարի նախաձեռնողը փորձեց դառնալ։ Բայց Չինական հեղափոխությունն ու Անգլիայում հանքագործների գործադուլը կապիտալիստներին ստիպեցին Խորհրդային Միության վրա հարձակումն ավելի հարմար մոմենտի հետաձգել։

Բայց 1927 թվականից հետո էլ կապիտալիստները մեր վրա հարձակվելու խնդրի շուրջը միմյանց հետ շարունակ բանակցություններ են վարում։ Այդ հարձակումը, առաջին հերթին, մեր հարևան կապիտալիստական երկրներն են պատրաստում, ինչպիսին են՝ Լեհաստանը, Ռումինիան, Էստոնիան, Լատվիան և Լիտվան։ Ցեվ իզուր տեղը չէ, որ Լեհաստանն զգալի թվով սպիտակ գվարդիականների է հյուրընկալել իր մոտ։ Լեհաստանի այդ անպատկառության պատճառն այն է, որ նրա թիկունքին Անգլիան և ուրիշ կապիտալիստական պետություններ են կանգնած։

Կապիտալիստները ոչ միայն միմյանց հետ համաձայնության կարող են գալ, այլև հնարավոր է, որ իրենց խաղաղության մասին խոսքերով խաբեն իրենց երկրների բանվորներին։ Այդ պատճառով էլ զանազան երկրների կոմունիստները յուրաքանչյուր քայլափոխում բացատրում են, որ կապիտալիստներն այլ բան ասում և այլ բան են կատարում։ Ցավն այն է, որ կոմունիստների դեմ ոչ միայն կապիտալիստներն են հանդես գալիս, այլև այն կուսակցությունները, որոնք իրենց բանվորական են համարում—ինչպիսին են—անգլիական բանվորական կուսակցությունը, գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և ընդհանրապես բոլոր սոցիալիստական կուսակցությունները։ Այս բոլոր կուսակցությունները գտնում են, որ միայն Ազգերի Լիգան երկրիս երեսին խաղաղություն կարող է հաստատել։ Իսկ դուք արդեն գիտեք, թե Ազգերի Լիգան իրենից ինչ է ներկայացնում, հենց սրանից էլ ինքներդ կեզրակացրեք, թե իրենցից ինչ են ներկայացնում այդ սոցիալ-դեմոկրատական կուսակցու-

թյունները։ Չնայած նրան, որ այդ կուսակցությունները վաղուցվանից բուրժուազիայի պաշտպաններ են դարձել, կապիտալիստական երկրների բանվորության զգալի մասը դեռևս նրանց հետևից է գնում։ Նրանք աշխատելու են կապիտալիստների հետ միասին խաբել բանվորներին և կապիտալիստների շահերի պաշտպանության համար նրանց դեպի պատերազմ մղել։

Ստացվում է այն, որ խաղաղության համար պայքարելով, մենք միշտ պետք է պատրաստվենք պատերազմի համար։ Հենց այժմ էլ մեր երկրի տնտեսությունը բոլոր ուժերով պետք է ամրացնենք, որպեսզի մենք կապիտալիստներից ավելի ու ավելի քիչ կախում ունենանք։ Պետք է մտածենք այն մասին, որպեսզի պատերազմի սկզբին մթերած նյութեր ունենանք։

Առաջիկա պատերազմի համար բոլոր գյուղական կոմյերիտականները չեն նախապատրաստվում։ Նրանցից շատ շատերը դեռևս հրացան բռնել չգիտեն, էլ ինչ խոսք կարող է լինել հակագազերի գործածության մասին։ Իսկ վերահաս պատերազմը այնպիսին է լինելու, որը սավառնակների միջոցով հանկարծակի կարող է փոխադրվել երկրի խոր թիկունքները։

Հիմար և անպաշտպան վիճակում կլինի այն գյուղական բջիջը, որը մեր կյանքի խաղաղ շրջանում ռազմական խմբակում չի սովորել։ Նա գյուղացիությանը չի կարող ասել, թե ինչպես պետք է պաշտպանվել սավառնակից նետվող գազային ռումբից. Նա գյուղացիությանը չի կարող ասել, թե ինչպես պետք է հաղթել սավառնակներին։ Յուրաքանչյուր կոմյերիտականի խնդիրը ռազմական խմբակի մեջ մտնելն է, և թեկուզ այդ միջոցով քիչ թե շատ ռազմական գործն ուսումնասիրելը, Պաշը-Ավիաքիմի բջիջներ ստեղծելն ու նրանց աշխատանքների ղեկավարումը, որպեսզի նրանք թղթի վրա չմնան։

Գյուղացիներին պետք է բացատրել կապիտալիստների դավադրությունները մեր հանդեպ։ Յուրաքանչյուր գյուղացի պետք է որ իմանա, թե ինչու համար կապիտալիստները համառորեն մեր դեմ պատերազմել են ուզում, պետք է ցույց տալ, թե կապիտալիստները մեզնից ինչ են ուզում, և ինչպես է մեր կառավարությունը պայքարում խաղաղության համար։

Եթե գյուղական բջիջն այդ բոլորն անի, մենք առանց վախի կարող ենք կապիտալիստների կողմից մեր դեմ պատրաստվող պատերազմին դիմավորել։

Ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների հետ միասին մեր Խորհրդային Միությունը այդ կռվում կապիտալիստներին կարող է հաղթանակել և արտասահմանյան ընկերներին օգնել՝ իրենց երկրներում Խորհրդային Իշխանություն հաստատելու գործում։

БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

Առաջին զրույց.

Մեր գյուղատնտեսության հետամնացությունը. Գյուղացիական տնտեսությունը ցարական Ռուսաստանում. Գյուղի շերտավորումը կապիտալիզմի օրով. Ի՞նչ փոփոխություններ մտցրեց գյուղում Հոկտեմբերյան հեղափոխությունը. Գյուղատնտեսության զարգացումը վերջին տարիներում. Խոշոր և մանր տնտեսությունները գյուղում . . . . 3—19

Յերկրորդ զրույց

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը. Յերկու ճանապարհ գյուղի համար. Խորհրդային գյուղի շերտավորման առանձնահատկությունները. Գյուղի վերակառուցման սոցիալիստական ուղին. Ի՞նչպես բարձրացնել անհատական գյուղացիական տնտեսության բերքը. Դասակարգային պայքարը մեր գյուղում. Կուսակցության քաղաքականությունը գյուղում . . . . . 20—38

Յերրորդ զրույց.

Գյուղի ճանապարհը դեպի սոցիալիզմը. Գյուղի կոոպերացման ուղին. Կոլտնտեսական շարժում. Կուլակը պայքարում է կոլտնտեսության դեմ. Գյուղի վերակառուցման նոր ուղիները. Խորհրդային տնտեսությունները. Գյուղի վերակառուցումը . . . . 38—55

Չորրորդ զրույց

Կոմյերիտմիությունը կուսակցության օգնական է գյուղի վերակառուցման գործում

Կոմյերիտականի խոսքը. Կոմյերիտմիությունը իբրև գյուղատնտեսության կոլեկտիվականացման

գործի ազդակ. Փոքրիկ գործից մի խուսափիր. Պատրաստենք կադրեր նոր գյուղի համար. Բարձրացնել խորհրդային արտերի բերքատվությունը . . . . . . 56—76

Հինգերորդ զրույց

Քաղաքը յեվ գյուղը

Գյուղատնտեսության նշանակությունը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ. Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման փոխադարձ կախումը. Մեր արդյունաբերությունը. Մեր արդյունաբերությունն ուղղություն է ցույց տալիս և արագացնում է գյուղատնտեսական զարգացումը. Գյուղը շահագրգռված է արդյունաբերության զարգացումով . . . 77—90

Վեցերորդ զրույց

Պետարդյունաբերությունը

Մեր արդյունաբերությունը հետամնաց է. Ինչու յենք մենք այսպես հետ մնացել. Ինչպես է աճում մեր արդյունաբերությունը. Մեր նպատակն է՝ ծանր արդյունաբերության զարգացումը. Արդյունաբերության զարգացման հնգամյա պլանը. Գների իջեցում և արդյունաբերության ռացիոնալիզացիա. Վորտեղից վերցնենք միջոցներ մեր արդյունաբերության զարգացման համար . 91 108

Յոթերորդ զրույց

Պետարդյունաբերությունը

Կապիտալիստական և սոցիալիստական արդյունաբերություն. Մեր ֆաբրիկաների ու գործարանների աճումը. Գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել մեքենաների արտադրության վրա. Արդյունաբերության վրա ծախսվող դրամը. Արտադրության ռացիոնալիզացիան. Ռացիոնալիզացիան ինչ է տալիս բանվորին ու գյուղացուն. Գյուտարարություն. Արտադրողական խորհրդակցություններ. Յոթժամյա բանվորական որ. Գործազրկություն և 7-ժամյա բանվորական որ 108—131

Ութերորդ զրույց

Կուլտուրական հեղափոխությունը յեվ կոմյերիտմիության խնդիրները

Ի՞նչ ե կուլտուրական հեղափոխությունը։ Ի՞նչպիսի կուլտուրայի համար ենք մենք պայքարում։ Մեր ժամանակի «փոքր» գործերը։ Պայքար գրագիտության համար։ Հարբեցողության դեմ։ Պայքար նոր կենցաղի համար։ Աղանդների մասին . . . . 131—150

Իններորդ զրույց

Պրոլետարիատի դիկտատուրան

Յերկո՞ւ ուղի։ Ինչո՞ւ բանվորներն են ղեկավարում հեղափոխությունը։ Ի՞նչ ե պրոլետարիատի դիկտատուրան։ Բանվորների և գյուղացիների միությունը . . . . . 150—167

Տասներորդ զրույց

Պրոլետարիատի դիկտատուրան. *(Շարունակություն)*.

Մեր ուժը մասսաների մեջ ե։ Ի՞նչպես ե կառուցված Խորհրդային իշխանությունը։ Զանազան ազգությունների աշխատավորներն արդյոք թշնամի՞ յեն իրար։ Հրեատյացությունը։ Մեր թշնամի—բյուրոկրատի մասին։ Խորհուրդներն ու կուլակը . . . . . 167—187

Տասնմեկերորդ զրույց

Համկոմկուսը բանվոր դասակարգի կուսակցությունն ե

Մեր կուսակցությունը բանվորների առաջավոր ջոկատն ե։ Կուսակցությունն ու աշխատավորական մասսաները։ Պայքար յերկու ճակատում։ Դիսցիպլինա . . . . . 187—208

Տասներկույերորդ զրույց

Կոմյերիտմիության մասին

Կոմյերիտմիության առաջին քայլերը։ Վորո՞նք

են կոմերիտմիության խնդիրները. Կոմսոմոլը պրոլետարական կազմակերպություն է. Մեր թշնամին մեր տանն է . . . . . 209—225

Տասներեքերորդ գլուխ

Համաշխարհային հեղափոխության ուղիները. Արևմտյան բանվորների պայքարը կապիտալի դեմ. Գյուղական չքավորությունը բանվորների դաշնակիցն է պրոլետարական հեղափոխության մեջ. Արևելքի ճնշված ժողովուրդների պայքարը. Կոմինտերնը և ԿԻՄ-ը . . . . 225—245

Տասնչորսերորդ գլուխ

ԽՍՀՄ—կապիտալիստական օղակում. ԽՍՀՄ-ի խաղաղարար քաղաքականությունը . . 245—264

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0004770

5. Վորպեսզի կարելի լինի խմբակի անդամներին լրագիր կարդալ սովորեցնել և իր աշխատանքում օգտագործել այն տեղեկությունները, վոր լրագիրը հաղորդում է, անհրաժեշտ է հանձնարարել խմբակի անդամներին հաջորդ գրույցի համար նյութեր հավաքել վոչ միայն տեղական կյանքից, այլև թերթերից։

6. Վորպեսզի կարելի լինի ստուգել, թե խմբակի անդամներն ինչ չափով են յուրացրել կարդացած գրույցի գլխավոր միտքը, յուրաքանչյուր գրույցի վերջում գրված են հարցեր, վորոնց պետք է պատասխանել։ Ամենից լավ է ընդունել հարցերին պատասխան տալու հետևյալ կարգը. հարցը բարձր կարդացվում է, խմբի անդամները նրան հերթով պատասխանում են, այդ պատասխանները քննության են առնվում և վերջն այդ հարցի համար ընդհանուր պատասխան է մշակվում։ Այդ պատասխանը հարցի հետ միասին գրվում է պարապմունքի արձանագրության մեջ, իսկ խմբակի յուրաքանչյուր անդամ գրում է իր տետրակում։

Խմբակի անդամներն իրենց ձեռք բերած գիտելիքները պետք է աշխատեն իրենց գործնական աշխատանքում կիրառել։ Դրա համար յուրաքանչյուր պարապմունքի վերջում պետք է խմբակում քննել այն խնդիրը, թե ինչ կարող է բջիջն անել իր աշխատանքի այս կամ այն բնագավառը բարելավելու համար։

804

Գինը ~~1 ռ. 30 կ.~~ Մ (16 $^3/_4$ մ)

Ա II 22840

УЧЕБНИК ДЕРЕВЕНСКОЙ ПОЛИТЧИТКИ
ДЛЯ КОМСОМОЛЬСКИХ КРУЖКОВ

Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.